

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

*Գիտական ամսագիր*

1

2016

**Հրապարակվում է Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավոր-  
մամբ**

**Խմբագիր**

Արտակ Շաքարյան, պ. գ. թ.

**Խմբագրական կազմ**

Արթուր Աթանեսյան, ք. գ. դ.

Արսեն Ավագյան, պ. գ. դ.

Արման Եղիազարյան, պ. գ. դ.

Գարիկ Քեոյան, ք. գ. դ.

Իսաչիկ Գևորգյան, բ. գ. թ.

Համազասպ Դանիելյան, ք. գ. թ.

Արամ Դավթյան, բ. գ. թ.

Վահան Դիլանյան, ք. գ. թ.

Արթուր Դումանյան, պ. գ. թ.

Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ.

Անահիտ Խոսրոնա (ԱՄՆ), պ. գ. թ.

Արայիկ Հարությունյան, պ. գ. թ.

Տիգրան Ճորոխյան, ք. գ. թ.

Սուրեն Մանուկյան, պ. գ. թ.

Նազելի Նավասարդյան, պ. գ. թ.

Կարեն Շաքարյան, ք. գ. թ.

Այգերիմ Շիլիբեկովա (Ղազախստան), ք. գ. թ.

Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.

Ներսես Տեր-Վարդանյան, պ. գ. թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ***Սարեն Աբգարյան, Արփի Մուրադյան***

Հայաստան – ԵՄ նոր բանակցությունները Հայաստանի  
Եվրոպական ապագայի համատեքստում ..... 5

### ***Saren Abgaryan, Arpi Muradyan***

Armenia- EU new Negotiations in the context of European  
future of Armenia ..... 32

### ***Հերմինե Կարվալյան, Սոնա Փարսյան***

Հայաստանի Հանրապետությունը ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև.  
համագործակցության քաղաքական և տնտեսական  
հեռանկարներ ..... 54

### ***Hermine Katvalyan, Sona Parsyan***

Armenia between the EU and the EAEU:  
Prospects of Political and Economic Cooperation ..... 71

### ***Աննա Բարսեղյան, Աշոտ Մարգարյան***

Հայաստանի Հանրապետության արտաքին  
քաղաքականության վերանայումը ԵՄ նոր գլոբալ  
ռազմավարության համատեքստում ..... 84

### ***Anna Barseghyan, Ashot Margaryan***

Review of the Foreign Policy of the Republic of Armenia  
in the Context of the New Global Strategy  
for the European Union ..... 102

**Ինգա Վարդանյան, Մերի Մուրադյան**

Հանրային կառավարման զարգացման քաղաքական և տնտեսական չափումները եվրահիստեգրման համատեքստում..... 116

**Inga Vardanyan, Meri Murdayan**

Political and Economic Dimensions of the Public Administration Development in the Context of Eurointegration ..... 142

**Անի Եղիազարյան, Ռիմա Խալաթյան**

Արևելյան գործընկերությունը ԵՄ-ի «փափուկ ուժի» և փոխակերպման քաղաքականության համատեքստում (ԵՄ – ՀՀ փոխգործակցության օրինակով).....162

**Ani Yeghiazaryan, Rima Khalatyan**

Eastern Partnership in the context of the EU’s soft power and transformation policy (on the example of EU-Armenia cooperation).....182

**Վիկտորյա Մելքոնյան, Անի Գրիգորյան**

ՌԴ – ԵՄ «սառեցված հարաբերությունները» ՀՀ և ԼՂՀ ինտեգրման գործընթացների համատեքստում .....198

**Victoria Melkonyan, Ani Grigoryan**

Russia-EU frozen relations in the context of Armenia and Karabakh integration processes.....215

**Սաթենիկ Բարսեղյան**

Արևմուտքի և Հյուսիսի ընկալումները քաղաքական էլիտայի և հանրային շրջանակներում Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների համատեքստում ..... 229

**Satenik Barseghyan**

The Perception of the West and the North in the Political Elite and the Societal Circles in the Context of Armenian Foreign Policy Orientations..... 240

## ՀԱՅԱՍՏԱՆ – ԵՄ ՆՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ՍԱՐԵՆ ԱՐԳԱՐՅԱՆ, ԱՐՓԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

#### ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ ԿԱՐԵՆ ԲԵՔԱՐՅԱՆ<sup>1</sup>

### Նախաբան

Վերջին տարիներին Հայաստանում ընթանում էին ապագայի համար կարևոր նշանակություն ունեցող ինտեգրացիոն գործընթացներ: Մասնավորապես խոսքը վերաբերում է այն երկու գործընթացներին, որոնց առջև կանգնեց Հայաստանը՝ խորացնել տնտեսական–քաղաքական հարաբերությունները Եվրոպական միության (ԵՄ) հետ՝ ստորագրելով ասոցացման համաձայնագիրը (ԱՀ–ը) և խոր ու համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) համաձայնագիրը՝ միանալու Ռուսաստանի գլխավորած Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ): Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ հանգամանքների վրա հիմնվելով՝ Հայաստանի կառավարությունը նման որոշում կայացրեց այս ռազմավարական տեսանկյունից կարևոր հարցում: Կային բազմաթիվ պատճառներ, որոնց վրա հիմնվելով՝ Հայաստանը որոշեց միանալ Եվրասիական տնտեսական միությանը, որոնց էլ մենք կանդրադառնանք՝ հետազոտելով հարցի քաղաքական, տնտեսական և իրավական հարթությունները: Այնուհանդերձ, կմատնանշենք ԵՄ–ի հետ առկա և ապագա համագործակցության եզրերը և դրանց նշանակությունը:

Ավելի քան չորս տարի ԵՄ–ի հետ ընթացած բանակցություններից հետո Հայաստանը կայացրեց «անսպասելի» որոշում՝ դառնալ Մաքսային միության (ՄՄ) անդամ, որի հիմքերի վրա կազմավորվեց Եվրասիական տնտեսական միությունը: Միանալով ԵԱՏՄ–ին՝ Հայաստան – ԵՄ նախկին բանակցությունները մղվեցին վերանայման փուլ՝ հաշվի առնելով այն հազամանքը, որ պարտավորությունների մի մասը, որոնք Հայաստանը ստանձնելու էր ասոցացման համաձայնագրի և խոր ու համապարփակ ազատ առևտրի գոտու ստորագրմամբ, մասամբ հակասում են Հայաստանի կողմից ԵԱՏՄ–ի կազմում ստանձնած պարտավորություններին: Այսպիսով՝ Հայաստանի «Ա – Ա»–ի քաղաքականությունը բախվեց դժվարությունների, քանի որ այս երկու ինտեգրացիոն գործընթացները մասամբ

<sup>1</sup> Կարեն Բեքարյան, ֆմ. գ. թ., «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ նախագահ, Աժ պատգամավոր:

հակասում էին միմյանց: Մի քանի հանգամանքներ կարող են բացատրել, թե ինչու Հայաստանը որոշեց միանալ ԵԱՏՄ–ին: Հաշվի առնելով, որ այս կարևոր և բարդ որոշումը կայացնելու համար Հայաստանն ուներ հիմնավոր պատճառներ, դրանք ուսումնասիրելու համար մենք այս հոդվածը բաժանելու ենք երեք մասի, որոնք անդրադառնալու են հարցի (ա) քաղաքական, (բ) տնտեսական և (գ) իրավական հարթություններին: Ապա մատնանշելու ենք այն հնարավոր ուղղությունները, որոնց շուրջ Հայաստան – ԵՄ հարաբերությունները կարող են զարգանալ ապագայում՝ հաշվի առնելով առկա սահմանափակումները:

*Քաղաքական տեսանկյունը:* Վերջին երկու տասնամյակի ընթացում Հայաստան – Ռուսաստան հարաբերությունները հիմնված են եղել ասիմետրիկ փոխգործակցության վրա և հանգեցրել են մի իրավիճակի, որում Հայաստանը կախվածության մեջ է Ռուսաստանից մի շարք ուղղություններով: Այս հարաբերություններն ուսումնասիրվել են մի շարք հետազոտողների կողմից, որոնք պնդում են, որ կախվածության հիմնական պատճառը անվտանգության նկատառումներն են: Այս աշխատանքը ներառում է անվտանգության այս նկատառումները և այն քննարկում է Հայաստան – ԵԱՏՄ իտեգրացման համատեքստում: Հայաստան – ԵԱՏՄ հարաբերությունները մասնակիորեն հակադրվում են Հայաստան – ԵՄ բանակցություններին և նախանշում են Հայաստան – ԵՄ նոր բանակցությունների սկիզբը: Հետաքրքրական է, որ ԵԱՏՄ–ի պաշտոնական կայքում ներկայացված է մի պարբերություն, որտեղ ՀՀ նախագահը ներկայացնում է ինտեգրման պատճառները: Նախագահի խոսքի մեջ նշված է, մասնավորապես. «Քսան տարի առաջ, համագործակցելով Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հետ, Հայաստանը կառուցեց իր ռազմական անվտանգության համակարգը ՀԱՊԿ–ի կազմում: Այսօր մեր ՀԱՊԿ գործընկերները կառուցում են տնտեսական ինտեգրացիայի նոր հարթակ: Այսպիսով՝ լինելով այս ռազմական անվտանգության համակարգի մի մասը՝ անհնար և անարդյունավետ է առանձնացված լինել այդ աշխարհա–տնտեսական տարածքի»<sup>2</sup>:

*Տնտեսական տեսանկյունը:* Չնայած Հայաստանի ինտեգրումը ԵԱՏՄ–ին հիմնված է հիմնականում ռազմական անվտանգության պահպանման վրա<sup>3</sup>, Ռուսաստանի կողմից դե ֆակտո գլխավորվող ՀԱՊԿ–ի կողմից ՀՀ նախագահի որոշումն ուներ նաև մի շարք կարևոր տնտեսական կողմնորոշիչներ, որոնք պակաս կարևոր չէին այդ որոշումը կայացնելու համար: Երկրորդ մասը քննարկում է այս տնտեսական հարցերը՝ ցուցադրելով և

<sup>2</sup> Եվրասիական տնտեսական միության կայքէջ, <http://www.eaeunion.org/?lang=en#about-countries>, հոկտեմբերի 10, 2016:

<sup>3</sup> Caucasus Institute, Johnny Melikian, «Armenia and the Eurasian Union: from cooperation to integration», 2015 February// [http://c-i.am/wp-content/uploads/policy-brief-02\\_2015\\_ru.pdf](http://c-i.am/wp-content/uploads/policy-brief-02_2015_ru.pdf)

համեմատելով Հայաստան – ԵՄ և Հայաստան – ԵԱՏՄ տնտեսական հարաբերությունները՝ նախ համեմատելով իրավիճակը ինտեգրացիոն գործընթացներից առաջ, ապա նաև այն օգուտները, որոնք Հայաստանը կարող է քաղել ինտեգրացիայի արդյունում: Այս գլխում ցույց ենք տալիս Հայաստանի տնտեսական փոխկապակցվածությունը Ռուսաստանին և ԱՊՀ երկրներին, ԵԱՏՄ ինտեգրացիայի տնտեսական օգուտները և քննարկում տնտեսական հարաբերությունների հեռանկարները ԵՄ–ի հետ:

*Իրավական տեսանկյունը:* Աշխատանքի վերջին հատվածը քննարկում է ՀՀ – ԵՄ և ՀՀ – ԵԱՏՄ հարաբերությունների իրավական տեսանկյունը, քանի որ որպես ԵԱՏՄ անդամ՝ Հայաստանը արդեն ունի մի շարք նոր պարտավորություններ, ինչը ենթադրում է երկու ուղղություններով ստանձնած պարտավորությունների համատեղելիության ապահովում:

### 1.1. Հայաստան – ԵՄ հարաբերությունների դինամիկան ու ներկայիս փուլը

Խորհրդային Միության փլուզման արդյունքում աշխարհի քաղաքական քարտեզը կտրուկ փոփոխության ենթարկվեց, ինչն առավելապես կապված էր նախկին սովետական երկրների անկախացման հետ: Հայտնի քաղաքագետ Զբիգնև Բժեգինսկու խոսքերով 1991 թ. վերջին աշխարհում ամենախոշոր տարածքն ունեցող պետության փլուզումը նպաստեց Եվրասիայի հենց կենտրոնում «սև խոռոչի» ձևավորմանը: Նա իր «Մեծ շախմատի տախտակ» գրքում այդ իրադարձությունը համեմատում է աշխարհի քարտեզից ցամաքի՝ կենտրոնական և աշխարհաքաղաքականության տեսանկյունից կարևոր հանդիսացող հատվածի անհետացման հետ<sup>4</sup>: Սովետական կայսրության փլուզումն արագացվեց ամբողջ սովետական համակարգի սոցիալ–տնտեսական և քաղաքական լճացմամբ, թեպետ նրա «հիվանդությունների» մեծ մասը քողարկվում էր գաղտնիության և ինքնամեկուսացման համակարգի շնորհիվ, ինչն էլ, ԽՍՀՄ ինքնափլուզման տեմպերի հետ կապված, միջազգային և տեղական հանրային ցնցման առաջացման պատճառ դարձավ: Այնուամենայնիվ, փաստ է, որ յալթապոտսդամյան երկբևեռ համակարգի գլխավոր դերակատարներից մեկը՝ երբեմնի կայսրություն հանդիսացող Խորհրդային Միությունն այլևս գոյություն չունի, և հետխորհրդային տարածաշրջանն այսուհետ բաց էր Արևմուտքի համար, հատկապես՝ օգտակար հանածոների և էներգակիրներ ռեսուրսների շահագործման տեսանկյուններից: Քաղաքական առումով 20–րդ դարի վերջին տեղի ունեցած պատմական իրադարձությունը Եվրասիայի

<sup>4</sup> Збигнев Бжезински, «Великая захватная доска», 1998 г., стр. 49.

կենտրոնում իշխանության և ուժի վակուում ստեղծեց: Նոր անկախություն ձեռք բերած նախկին խորհրդային 15 հանրապետությունների առջև, որոնցից մեկն էր նաև Հայաստանը, և որին նվիրված է տվյալ հետազոտությունը, միջազգային քաղաքական դաշտում իրենց տեղի ամրագրման և ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակից դուրս գալու և ժամանակին համընթաց քայլերու խնդիր դրվեց: Ցնցումն ամբողջ համակարգի ճգնաժամ ծնեց, հատկապես, եթե հաշվի առնենք, որ այն ուղեկցվեց հին սոցիալ-տնտեսական համակարգը կործանելու փորձերով այն դեպքում, երբ տվյալ երկրները խորհրդային ռեժիմը պահպանել են ավելի քան 70 տարի, և առկա էթնոքաղաքական կոնֆլիկտների ազդեցությունը նորանկախ երկրների քաղաքական կայունության վրա:

Անկախության տարիներից սկսած՝ Հայաստանը վարում էր «կոմպլեմենտար» քաղաքականություն՝ փորձելով բարիդրացիական հարաբերություններ պահպանել Ռուսաստանի և Արևմուտքի հետ: Սկզբնական շրջանում Հայաստանը Ռուսաստանի հետ կապված էր ոչ միայն ընդհանուր խորհրդային ժառանգության, այլև անվտանգության և քաղաքականության առումներով: Քաղաքական հարթությունում Հայաստանը, 1991 թ. դեկտեմբերի 21-ից սկսած, մաս էր կազմում Խորհրդային Միության փլուզումից հետո կազմավորված Անկախ Պետությունների Համագործակցության, որով անդամ երկրները համագործակցելու էին ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում, ինչպես նաև երաշխավորում էին ստանձնել նախկին Խորհրդային Միության միջազգային պարտավորությունները: Ինչ վերաբերում է անվտանգության ոլորտին, ապա այս դեպքում Հայաստանը, 1992 թ. մայիսի 15-ին ստորագրելով հավաքական անվտանգության մասին պայմանագիրը՝ դառնալով Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) հիմնադիր անդամ, որով սահմանված են արտոնյալ պայմաններ ռազմատեխնիկական մատակարարումների համար<sup>5</sup>:

Միաժամանակ, ինչպես արդեն նշվեց, Հայաստանը համագործակցության ուղիներ էր փնտրում նաև Արևմուտքի, մասնավորապես Եվրոպական միության հետ: Սա բխում էր նաև վերջինիս շահերից՝ կայունության և անվտանգության ապահովման տեսանկյունից, և չնայած Հարավային Կովկասի երկրներն ինստիտուցիոնալ առումով առավել սերտորեն կապված էին Ռուսաստանի հետ, ԵՄ-ն շարունակում էր «երկրորդ տիպի եվրոպականացման» գործընթացը՝ խրախուսելով քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, ինչպես նաև մի շարք այլ ոլորտների բարե-

<sup>5</sup> Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը <[http://www.odkb.gov.ru/start/index\\_aengl.htm](http://www.odkb.gov.ru/start/index_aengl.htm)>



փոխումները<sup>6</sup>: Այս նպատակով 1999 թ. ուժի մեջ մտավ ԵՄ – Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիրը, որը «թույլ է տալիս իրականացնել լայնածավալ համագործակցություն քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսության, օրենսդրության և մշակույթի ոլորտներում»<sup>7</sup>:

2004 թ. Հայաստանը՝ որպես Հարավային Կովկասի հանրապետություններից մեկը, ընդգրկվեց Եվրոպական հարևանության քաղաքականությունում (ԵՀՔ), իսկ 2009 թ.<sup>8</sup> Արևելյան գործընկերության ծրագրում<sup>9</sup>: ԵՄ – ՀՀ հարաբերությունների խորացման և ամրապնդման նպատակով երկկողմ բանակցություններ էին ընթանում ՀՀ-ի և ԵՄ ներկայացուցիչների միջև՝ ասոցացման համաձայնագրի ստորագրման վերաբերյալ: Վերջինս բաղկացած էր լինելու ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական (Բոր և համապարփակ ազատ առևտրի գոտի, ԱՀ (ԲՀԱԱԳ) բաժիններից<sup>9</sup>: Սակայն 2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու որոշման մասին՝ ասելով «մենք (ՀՀ-ն և ՌԴ-ն) կարծիքներ ենք փոխանակել եվրասիական ինտեգրացիայի մասին, և ես հաստատում եմ Հայաստանի՝ Մաքսային միություն մտնելու և Եվրասիական տնտեսական միություն ձևավորելու գործընթացին միանալու ցանկությունը»<sup>10</sup>: Նախագահի ելույթն առաջին հայացքից պետք է որ անսպասելի թվար Արևմուտքի համար, և այդպես էլ եղավ: Արևմտյան մի շարք պարբերականների վերնագրեր արտացոլում էին ՀՀ նախագահի ելույթի անսպասելիությունը: Մասնավորապես «Ուոլ Սթրիթ» պարբերականը (Wall Street Journal) սեպտեմբերի 4-ին հետևյալ կերպ է մեկնաբանել Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին միանալու որոշումը. «Եվրոպական դիվանագետներն այս շաբաթ ապշել են այն բանից, որ Հայաստանը, որը շարժվում էր Եվրոպայի հետ կապերի ամրապնդման ուղով, փոխարենը միանալու է Ռուսաստանի գլխավորած Մաքսային միությանը՝ տարածաշրջանում ազդեցության ամրապնդման համար Բրյուսելի հետ պատերազմում հաղթանակը հանձնելով Կրեմլին»<sup>11</sup>: Այնուամենայնիվ, շատ քաղաքական գործիչների, վերլուծաբանների, քաղաքագետների և փորձագետների համար Հայաստանի որոշումն անակնկալ չէր, քանի որ

<sup>6</sup> Նարեկ Գալստյան, Եվրոպականացման գործընթացները Հարավային Կովկասում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 4(12), 2006 թ.:

<sup>7</sup> EU Relations with Armenia. URL՝ [http://eeas.europa.eu/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/armenia/index_en.htm)

<sup>8</sup> European Neighborhood Policy. URL՝ [http://eeas.europa.eu/enp/about-us/index\\_en.htm](http://eeas.europa.eu/enp/about-us/index_en.htm) visited at 25.08.2016.

<sup>9</sup> Eastern Partnership. URL՝ [http://eeas.europa.eu/eastern/index\\_en.htm](http://eeas.europa.eu/eastern/index_en.htm) visited at 25.08.2016

<sup>10</sup> Euronews. Armenia set to join Russia-led customs union in blow to EU. URL՝ <https://youtu.be/THaap9GlpqI> visited at 25.08.2016.

<sup>11</sup> The Wall Street Journal, EU stunned by Armenia U-Turn, Sep. 4, 2013 <http://blogs.wsj.com/brussels/2013/09/04/eu-stunned-by-armenia-u-turn/#>

գաղտնիք չէ, որ վերջինս իր անվտանգությունն ու տնտեսությունը, մասնավորապես դրա էներգետիկ ճյուղը կապում է հենց Ռուսաստանի հետ: Անվտանգության ոլորտում ՀՀ-ն և Ռուսաստանը համագործակցում են ՀԱՊԿ շրջանակում, ինչը Հայաստանին ձեռնտու է մատչելի ռազմական տեխնիկա ձեռք բերելու առումով:

Այս իրավիճակում, որտեղ անվտանգության երաշխիքները Հայաստանի համար առաջնահերթություն են, ԵՄ-ի հետ ինտեգրացիոն խոր գործընթացների հավանականությունը ԱՀ-ի տեսքով քիչ հավանական է: ԵՄ անդամ երկրներից Ֆրանսիան ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահող երկրներից մեկն է: Խումբը հիմնադրվել է 1992 թվականին, որպեսզի Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև իրականացնի հաշտարարության գործառույթ՝ տարածքային վեճերի խաղաղ լուծման միջոցով: Անգամ ԵՄ-ի նման ներգրավվածությունը այդ վեճի խաղաղ լուծման գործընթացին բավարար երաշխիքներ չեն տրամադրում Հայաստանին, քանզի 1990-ականներից սկսած՝ Մինսկի խումբը զգալի արդյունքներ չի արձանագրել: Հարավային Կովկասում ԵՄ-ի դերը որպես անվտանգության դերակատար սկսեց աճել՝ 2003 թվականից սկսած: Տարածաշրջանի տարբեր երկրներում ԵՄ-ն նշանակեց հատուկ ներկայացուցիչների և գործարկեց Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականություն (ԵԱՊԲ) առաքելությունը: Հատուկ ներկայացուցիչների գործառույթն էր աջակցել տարածաշրջանում առկա հակամարտությունների լուծմանը, ներառյալ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: ԵՀԲ և Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության միջոցով ԵՄ-ն ձեռք բերեց նաև գործիքներ՝ ներգրավվելու տարածաշրջանային հակամարտությունների լուծման մեջ<sup>12</sup>: Այսպիսով՝ ԵՄ-ի համար Հարավային Կովկասի կայունությունը կարևոր է, քանզի այն հանդիսանում է էներգատար համակարգերի միջանցք՝ հնարավորություն տալով ԵՄ-ին գտնել կասպիական տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների այլընտրանքներ<sup>13</sup>: Սակայն նկատելի է, որ ԵՄ-ն խուսափում է խորապես ներգրավվել հարցի լուծման մեջ<sup>14</sup>:

Այս դեպքում, անսպասելին ոչ թե ՀՀ նախագահի կողմից արված հայտարարության բնույթն էր, այլ դրա ժամանակային կոորդինատները: Ինչհի համար Հայաստանը, չորս տարի շարունակ բանակցություններ վարելով Եվրո-

<sup>12</sup> Anna Poghosyan. «EU's Current and Possible Role in the Nagorno-Karabakh Conflict Resolution Process» // URL՝ [http://www.academia.edu/1157957/EU\\_s\\_Current\\_and\\_Possible\\_Role\\_in\\_the\\_NagornoKarabakh\\_Conflict\\_Resolution\\_Process](http://www.academia.edu/1157957/EU_s_Current_and_Possible_Role_in_the_NagornoKarabakh_Conflict_Resolution_Process) 27.08.2016.

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> www.euractive.com, Germany has ideas for solving the Nagorno-Karabakh // URL՝ <https://www.euractiv.com/section/europe-s-east/interview/analyst-germany-has-ideas-for-solving-the-nagorno-karabakh-conflict/> visited on 27.05.2016.

պական կողմի հետ և բառացիորեն ասոցացման համաձայնագրի ստորագրման հենց նախօրեին, նման որոշում կայացրեց: Արևմտյան և հայկական փորձագետները, փորձելով տալ այս հարցի պատասխանը, հանգել են այն եզրակացության, որ ՀՀ արտաքին քաղաքականության մեջ նման կտրուկ փոփոխությունը և ժամանակային դետերմինանտը կապված են միջազգային քաղաքական գործընթացների հետ, որոնք չէին կարող անհետևանք մնալ Հարավային Կովկասի տարածաշրջանի համար: Մասնավորապես, խոսքը Ռուսաստանի և ԵՄ-ի միջև Ղրիմի շուրջ ծագած տարածայնությունների մասին է: «Եվրոնյուս» (Euronews) հեռուստաալիքի հաղորդմամբ Հայաստանի որոշումը քաղաքական խթան էր Պուտինի համար, ով փորձում էր Ուկրաինային ետ պահել դեպի ԵՄ կողմնորոշումից, իսկ հայ քաղաքագետներից Սերգեյ Մինասյանը, գտնելով, որ Բրյուսելի համար Մաքսային միությանը միանալու Հայաստանի որոշումն անսպասելի չէր, նշել է, որ Բրյուսելի բացասական արձագանքն՝ ուղղված Հայաստանի որոշմանը, հասկանալի է, և որ դա ամենևին էլ անակնկալ չէր ԵՄ-ի համար՝ հաշվի առնելով Ուկրաինայի նկատմամբ Ռուսաստանի կոշտ դիրքորոշման վաղ գնահատումները»<sup>15</sup>:

Թեպետ, քննադատները 2013 թ. Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի հետ միասին ԵԱՏՄ անդամ դառնալու մասին որոշումը որակեցին որպես ՀՀ – ԵՄ համագործակցության վերջ, ինչպես նաև «ն – ն» սկզբունքի բացառում, և չնայած սկզբնական շրջանում եվրոպական դիվանագետների հիասթափությունը մեծ էր, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում նրանք որդեգրեցին առավել մեղմ քաղաքականություն ու 2014 թ. պատրաստակամություն հայտնեցին շարունակելու Հայաստանի հետ համագործակցությունը<sup>16</sup>: Մի քանի ամիս անց՝ նոյեմբերի 3-ին, ԵՄ ընդլայնման և ԵՀԲ հարցերով գլխավոր հանձնակատար Յոհաննես Հանը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ծշմարիտյանը փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին, ըստ որի՝ Հայաստանին 2014–2017 թթ. համար 140–170 մլն եվրոյի տեսքով ռազմավարական օգնություն էր տրամադրվելու<sup>17</sup>: 2015 թ.՝ Մաքսային միություն մտնելու որոշումից 2 տարի անց, ԵՄ-ն հաստատեց Հայաստանի հետ բանակցություններ սկսելու մանդատը՝ Եվրահանձնաժողովին լիազորելով սկսել Հայաստանի հետ բանակցությունները՝ իրավական նոր հիմքի շուրջ<sup>18</sup>:

<sup>15</sup> Euronews. Armenia set to join Russia-led customs union in blow to EU. URL՝ <https://youtu.be/THaap9GlpqI>

<sup>16</sup> Caucasus Institute, Johnny Melikian, «Armenia and the Eurasian Union: from cooperation to integration», 2015 February// URL՝ [http://c-i.am/wp-content/uploads/policy-brief-02\\_2015\\_ru.pdf](http://c-i.am/wp-content/uploads/policy-brief-02_2015_ru.pdf)

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Politics.am, Աննա Բարսեղյան, «Հայաստանը կարող է դառնալ ԵՄԵԱՏՄ համագործակցության շրջափ առաջին օղակը»:

Հաշվի առնելով ՀՀ-ի կողմից ԵԱՏՄ անդամ դառնալու որոշումը (ըստ ԵԱՏՄ կանոնադրության՝ երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերը չպետք է հակասեն Միության գործունեությանը, իսկ Միության շրջանակում միջազգային պայմանագրերի և պայմանագրի հակասությունների դեպքում Միության պայմանագիրը պետք է գերակայի<sup>19</sup>), ինչպես նաև այն հանգամանքը, որ ԵՄ-ն և Հայաստանը հաջողությամբ ավարտել են հետազայում կնքվելիք իրավական համաձայնագրի շրջանակների համատեղ գնահատման ուսումնասիրությունը. նոր համաձայնագիրը, որի շուրջ բանակցությունների մեկնարկը տրվեց 2015 թ. դեկտեմբերի 7-ին՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի և արտաքին հարաբերությունների ու անվտանգության քաղաքականության հարցերով եվրահանձնակատար Ֆեդերիկա Մոգերինիի միջև տեղի ունեցած հանդիպումով, ներառելու է ինչպես քաղաքական, սոցիալական, այնպես էլ տնտեսական թեմաներ (Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու այն հատվածները, որոնք համատեղելի են ԵԱՏՄ անդամակցության հետ): Մասնավորապես հանդիպումից հետո ԵՄ արտաքին քաղաքականության ղեկավարը նշել է, որ «դա հնարավորություն կտա հաղթահարելու 2013 թ. ստեղծված անորոշության էջը .... Հայաստանի և ԵՄ-ի բանակցողների՝ ավելի քան 3 տարի տևած ինտենսիվ բանակցություններն իզուր չեն կորչի .... մենք չենք սկսելու բանակցել զրոյից, այլ մեր բանակցությունները շարունակվելու են արդեն կառուցված հիմքի վրա»<sup>20</sup>:

Նոր համաձայնագրի քաղաքական մասի՝ ներքին բարեփոխումների վերաբերող հատվածը նախատեսում է «համագործակցություն դեմոկրատական ինստիտուտների և օրենքի գերակայության կայունության զարգացման, կոնսոլիդացման ու արդյունավետության մեծացման, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների երաշխիքների ապահովման, հանրային կառավարման բարեփոխումներին և հաշվետու, արդյունավետ, թափանցիկ և մասնագիտացված քաղաքացիական ծառայություն կառուցելու ոլորտներում»:

Համաձայնագիրը նախատեսում է նաև սերտ «համագործակցություն կոռուպցիայի, կազմակերպված այլ տիպի, այդ թվում՝ վերազգային հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի ոլորտներում՝ միտված կողմերի միջև հարաբերությունների և համագործակցության զարգացմանը, ինչպես նաև՝ տարածաշրջանային խաղաղության ու կայունության ամրապնդմանը» (հոդված 2):

<sup>19</sup> EECU Charter does not allow Armenia to sign independent trade agreements with third countries Treaty on the Eurasian Economic Union, Article 6, points 2,3. URL՝ [http://www.un.org/en/ga/sixth/70/docs/treaty\\_on\\_eeu.pdf](http://www.un.org/en/ga/sixth/70/docs/treaty_on_eeu.pdf) 25.08.2016.

<sup>20</sup> Launch of the new EU-Armenia Agreement: Press Statement EU HR Mogherini // URL՝ <https://youtu.be/adLXqv8doIY> 25.08.2016.

## 1.2. ՀՀ – ԵԱՏՄ հարաբերությունների պատմական հիմքերը և ներկա զարգացումները

Ինչ վերաբերում է Ռուսաստանի գլխավորած Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությանը, ապա Հայաստանը ԵԱՏՄ անդամ երկրների հետ ունի մի շարք ընդհանրություններ՝ ներառյալ ընդհանուր խորհրդային անցյալը, անվտանգության ու տնտեսության ոլորտներում Ռուսաստանի հետ սերտ համագործակցությունը և Մաքսային միության երկրների հետ ինչպես միջպետական, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության շրջանակում համագործակցության երկարամյա փորձը: Այս հանգամանքների դիտարկման դեպքում ակնհայտորեն պարզ կդառնա, թե ինչու Հայաստանը որոշում կայացրեց անդամակցել հենց Եվրասիական տնտեսական միությանը:

ԻՍՀՄ փլուզումից հետո մի շարք նախկին խորհրդային հանրապետություններ համագործակցում էին և շարունակում են համագործակցել այնպիսի ռազմաքաղաքական կառույցների շրջանակում, ինչպիսին են ԱՊՀ-ն և ՀԱՊԿ-ը: Եթե ԱՊՀ-ն ներառում է քաղաքական և տնտեսական համագործակցություն, ապա ՀԱՊԿ-ը ռազմաքաղաքական կառույց է: Հետևապես, միաժամանակ թե՛ ՀԱՊԿ, թե՛ ԵԱՏՄ կազմում ընդգրկված Ռուսաստանի, Բելառուսի, Հայաստանի, Ղազախստանի և Ղրղզստանի տեսանկյունից այն կարելի է համարել ռազմավարական դաշինք: միջև համարվում է ռազմաքաղաքական դաշինք: Ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ հայկական կողմի հետևողական ուշադրության կենտրոնում են Կազմակերպության շրջանակներում արտաքին քաղաքական համադրմանը, պաշտպանական (ռազմական) ներուժի ուժեղացմանը և մարտահրավերների ու սպառնալիքներին հակազդմանն ուղղված նախաձեռնությունները<sup>21</sup>: Ինչպես նախատեսում է ՀԱՊԿ-ի հիմնարար պայմանագրի 4-րդ հոդվածը, «եթե ագրեսիա է իրականացվել անդամ երկրներից որևէ մեկի նկատմամբ մեկ պետության կամ պետությունների խմբերի կողմից, ապա այն պետք է ենթադրել որպես հարձակում այս պայմանագրի բոլոր անդամ երկրների դեմ: Եթե ագրեսիա է իրականացվել անդամ երկրներից մեկի նկատմամբ, ապա բոլոր այլ անդամ երկրները անհրաժեշտ օգնություն կցուցաբերեն, ներառյալ ռազմական, ինչպես նաև իրենց տրամադրության տակ գտնվող միջոցներով աջակցություն կցուցաբերեն՝ իրականացնելու կոլեկտիվ պաշտպանություն»<sup>22</sup>:

Ինչպես տեղեկացնում է ՀՀ ԱԳՆ կայքը, ՀԱՊԿ շրջանակներում պար-

<sup>21</sup> Official website of the Ministry of Foreign Affairs of the RA // URL՝ <http://www.mfa.am/hy/international-organisations/CSTO/> last visited 25.08.2016.

<sup>22</sup> Treaty on Collective Security, Article IV // URL՝ [http://www.odkb.gov.ru/start/index\\_azbengl.htm](http://www.odkb.gov.ru/start/index_azbengl.htm)

բերական ուշադրություն է դարձվում արցախյան հակամարտության խաղաղ կարգավորմանը: Մասնավորապես, ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները, միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված 2012 թ. մայիսի 15-ի հռչակագրում և 2014 թ. դեկտեմբերի 23-ի հայտարարությունում նշել են. «ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնադրոյթների հիման վրա, որոնք մասնավորապես վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը»:

ՀԱՊԿ-ին անդամակցելու առումով Հայաստանի համար առաջնային կարևորություն ունի այն հանգամանքը, որ անդամ պետությունների ռազմական բաղադրիչի ամրապնդման նպատակով Կազմակերպության շրջանակում սահմանված են արտոնյալ պայմաններ ռազմատեխնիկայի մատակարարումների համար<sup>23</sup>:

Ժամանակի ընթացքում, հաշվի առնելով ԱՊՀ անարդյունավետ գործունեությունը, քայլեր ձեռնարկվեցին առավել խոր համագործակցության ապահովման ուղղությամբ՝ Եվրասիական միություն ստեղծելու տեսլականով:

Եվրասիական տնտեսական միություն ստեղծելու գաղափարը ռուսական ղեկավար շրջանակներում ծագել է դեռևս նախորդ դարի վերջին: ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված իրավիճակում, երբ Ռուսաստանը փորձում էր պատասխանել «դեպի ռՊ է գնում Ռուսաստանը, և ինչ է Ռուսաստանը» հարցերին՝ որպես «Խորհրդային Միության փլուզման արձագանք», ռուսական իշխող դասը դիտարկում էր պատասխանի մի շարք տարբերակներ, որոնցից մեկը «մերձավոր երկրների»՝ որպես Ռուսաստանի հիմնական շահերի օբյեկտի վրա շեշտադրումն էր: Այս տարբերակի ջատագովների մի մասն առաջ էր քաշում Մոսկվայի գլխավորությամբ տնտեսական ինտեգրացիայի մոդել, իսկ մյուսները՝ նաև Եվրոպային ու Ամերիկային հավասարակշռելու նպատակով որոշակի կայսերական վերահսկողության վերականգնում<sup>24</sup>: 1990-ական թվականներից սկսած՝ Ռուսաստանը նախկին խորհրդային երկրներին փորձում էր իր ազդեցության

<sup>23</sup> <http://konservatizm.org/seminars/sotsiologiya-geopoliticheskikh-protsessov/241209050729.xhtml> last visited 25.08.2016.

<sup>24</sup> Збигнев Бжезински, «Великая захматная доска», 1998 г.

գոտում պահել, ինչպես վերևում նշվեց, 1991 թ. դեկտեմբերի 21-ին կազմավորված ԱՊՀ-ի, իսկ 1992 թ.-ից՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում քաղաքական և ռազմական սերտ համագործակցության ամրապնդմամբ:

1994 թ. մարտի 24-ին Ղազախստանի ղեկավար Նուրսուլթան Նազարբաևը, ելույթ ունենալով Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանում, առաջին անգամ հանդես եկավ Եվրասիական վերաինտեգրման նախաձեռնությամբ, որը ենթադրում էր ԱՊՀ անդամ երկրների նորովի միավորում, կարելի է ասել՝ «այլընտրանք անարդյունավետ ԱՊՀ-ին», ինչը, ըստ էության, ռուսական Եվրասիականության կոնցեպցիայի առավել չափավոր տարբերակն էր, որի հիմքում չէր դրվում ռուսների՝ որպես Եվրասիայի առաջնորդների միսիոներական դերի գաղափարը<sup>25</sup>: Նազարբաևյան Եվրասիականությունը Եվրասիական տեսության առաջին գործնական մարմնավորումն է, որն արտահայտվում է «Եվրասիական միության» դոկտրինայում<sup>26</sup>:

1996 թ. մարտի 29-ին «ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժման համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով» չորս հետխորհրդային հանրապետությունների՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարները հանդես եկան Մաքսային միություն ստեղծելու մասին հայտարարությամբ<sup>27</sup>: Հետագայում՝ 2000 թ. հոկտեմբերի 10-ին, Աստանայում ստորագրվեց Եվրասիական տնտեսական ընկերակցության ստեղծման մասին պայմանագիրը, որն ուժի մեջ մտավ 2001 թ. մայիսի 30-ին՝ բոլոր անդամ երկրների կողմից վավերացվելուց հետո: Հայաստանն այս կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ ստացավ 2003 թ. հունվարից: 2007-2010 թթ. Բելառուսը, Ղազախստանը և Ռուսաստանը ստեղծեցին Մաքսային միություն՝ ընթանալով Եվրասիական տնտեսական միություն ձևավորելու ճանապարհով: Այս ամբողջ ընթացքում՝ մինչև ՀՀ նախագահի 2013 թ. սեպտեմբերի 3-ի հայտարարությունը, առանձնակի տեղաշարժեր չէին նկատվում Մաքսային միության անդամ երկրների և Հայաստանի միջև մերձեցման առումով: Որպես պատճառ կարող է հանդես գալ այն հանգամանքը, որ հորիզոնական ինտեգրացիան Մաքսային միության առաջնահերթությունների ցուցակում չէր, բացի այդ՝ Հայաստանը մինչև Նախագահի հայտարարությունը երբևէ հանրայնորեն չի բարձրաձայնել Մաքսային

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Л. Н. Гумилёв, Проект Евразийского Союза, 24.12.2009 <http://konservatizm.org/seminars/sotsiologiya-geopoliticheskikh-protsessov/241209050729.xhtml>

<sup>27</sup> Եվրասիական տնտեսական միություն, պաշտոնական կայքէջ <http://www.evrases.com/docs/view/33>

միությանը միանալու մտադրությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերը նշված գործոնները, այդ թվում նաև Հայաստանի քաղաքացիների կախվածությունը ռուսական աշխատաշուկայից և այնտեղից եկող տրանսֆերտներից, Մաքսային միության անդամ երկրներից Ռուսաստանի հետ անվտանգության և էներգետիկայի ոլորտներում սերտ համագործակցության առկայությունից, պարզ էր, որ Հայաստանը վաղ թե ուշ նախապատվությունը տալու էր Մաքսային միությանը, չնայած այն հանգամանքին, որ Արևելյան գործընկերության երկրների շրջանում Հայաստանն ամենաակտիվ երկրներից մեկն էր բարեփոխումների անցկացման գործում<sup>28</sup>:

2013 թ. դեկտեմբերի 24-ին Մոսկվայում Գերագույն եվրասիական տնտեսական խորհրդի ժամանակ ընդունվեց «ճանապարհային քարտեզ» Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածության կազմում Հայաստանի անդամակցության մասին<sup>29</sup>, ինչից հետո ՀՀ Կառավարությունը հաստատեց ճանապարհային քարտեզի նախատեսած շուրջ 262 միջոցառումների ծրագիրը:

2014 թ. մայիսի 29-ին Աստանայում Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի ղեկավարները ստորագրեցին Եվրասիական տնտեսական միություն ստեղծելու մասին պայմանագիր, որն ուժի մեջ էր մտնելու 2015 թ. հունվարի 1-ից: Հայաստանը՝ որպես Միության պաշտոնական անդամ համարվելու էր 2015 թ. հունվարի 2-ից: Հատկանշական է, որ չնայած ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2014 թ. հունիսի 19-ին Վրաստան կատարած այցի ժամանակ նշեց, որ «որոշումը կայացվել է՝ ելնելով Հայաստանի տնտեսական և ռազմական անվտանգության նկատառումներից»<sup>30</sup>, ԵԱՏՄ-ը ենթադրում է սերտ համագործակցություն միայն տնտեսական ոլորտում:

Այսպիսով՝ Հայաստանը և ԵՄ-ն շարունակում են քաղաքական և առևտրային երկխոսությունն այն ոլորտներում, որտեղ այս երկխոսությունը համադրելի է Հայաստանի՝ ԵՏՄ-ի հանդեպ ստանձնած նոր պարտավորությունների հետ: Այսինքն, քանի որ Եվրասիական տնտեսական միությունը ենթադրում է համագործակցություն միայն տնտեսական հարթությունում, հետևաբար ՀՀ-ն և ԵՄ-ն իրավասու են համագործակցությունը շարունակելու քաղաքականության, շրջակա միջավայրի պահպանության, սոցիալ-մշակութային, առողջապահության, կրթության, ինչպես նաև տնտեսության ոլորտներում՝ պայմանով, որ երկու կառույցների նկատմամբ

<sup>28</sup> Caucasus Institute, Johnny Melikian, «Armenia and the Eurasian Union: from cooperation to integration», 2015 February // [http://c-i.am/wp-content/uploads/policy-brief-02\\_2015\\_ru.pdf](http://c-i.am/wp-content/uploads/policy-brief-02_2015_ru.pdf)

<sup>29</sup> В. Путин, Заявления для прессы по итогам заседания Высшего Евразийского экономического совета <http://www.kremlin.ru/events/president/transcripts/19918>

<sup>30</sup> Решение о вступлении в Таможенный союз принято с целью развития Армении – Саргсян <https://regnum.ru/news/polit/1815787.html> Любое использование материалов допускается только при наличии гиперссылки на ИА REGNUM. <https://regnum.ru/news/polit/1815787.html>



ստանձնած պարտավորությունները չպետք է հակասեն համատեղելիության սկզբունքին:

## 2.1. Հայաստան – ԵՄ բանակցությունների տնտեսական հարթությունները

Հայաստանի անկախացումից ի վեր ԵՄ-ն Հայաստանի հետ փոխադարձ շահավետ հարցերի շուրջ համագործակցելու հետաքրքրություն է ցուցաբերել: Այսպիսով՝ Հայաստանը ներառվել է ԵՄ-ի կողմից կազմակերպված երկու ծրագրերի՝ Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) (2004) և Արևելյան գործընկերության (ԱԷԳ) մեջ (2009): Հայաստան – ԵՄ համագործակցության հաջորդ հանգրվանը պետք է լիներ ասոցացման համաձայնագրի և խոր ու համապարփակ առևտրի գոտու պայմանագրի կնքումը: ԱԷԳ անդամ Ադրբեյջանի և Բելառուսի հետ ԽՀԱԱԳ-ի համաձայնագրի կնքումը բացառված էր ի սկզբանե:

ԱՀ և ԽՀԱԱԳ-ի հիմնական նպատակն էր կնքել քաղաքական համաձայնագիր ԵՄ-ի և ԱԷԳ անդամ երկրների միջև և ստեղծել ազատ առևտրի գոտի, որը կհանգեցներ կողմերի միջև տարիֆային և ոչ տարիֆային խոչընդոտների վերացմանը, առևտրի և ներդրումների հոսքի աշխուժացմանը: Որպես այս բանակցությունների անքակտելի մի մաս՝ անկախ հետազոտողները ուսումնասիրեցին և կազմեցին համաձայնագրերի կնքման արդյունավետության մասին զեկույցներ: Այսպիսով՝ 2008 թվականին զեկույց պատրաստվեց նաև Հայաստանի մասին<sup>31</sup>, որը հանգեց այն եզրակացության, որ ԱՀ և ԽՀԱԱԳ-ի ստորագրման միջոցով ՀՀ – ԵՄ հարաբերությունների խորացումը կողմերի համար կարող է օգուտներ բերել մի շարք առումներով, մասնավորապես՝ 1. դյուրացված մուտք դեպի ԵՄ շուկա, 2. Հայաստանի ներսում մրցակցության մթնոլորտի բարելավում, 3. ներքին արտադրության ակտիվացում, 4. ներդրումների համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծում: Հաշվի առնելով Բուլղարիայի փորձը՝ ուսումնասիրությունը նշում էր, որ մինչև 2020 թվականը ՀՀ-ի օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) կարող են աճել հինգ անգամ: Ավելին, ներքին քաղաքականության բարելավման, առավել մրցակցային միջավայրի ստեղծման և քաղաքական ռիսկերի նվազման դեպքում ՀՀ ՀՆԱ-ն կարող է աճել 3,38 – 7,95 տոկոսով<sup>32</sup>:

<sup>31</sup> “Economic Feasibility, General Economic Impact and Implications of a Free Trade Agreement Between the European Union and Armenia” Final Report, May 8, 2008. <[http://trade.ec.europa.eu/doclib/docs/2008/october/tradoc\\_141170.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2008/october/tradoc_141170.pdf)> last accessed 11 Aug 2016.

<sup>32</sup> Maliszewska, Maryla (ed.) “Economic Feasibility, General Economic Impact and implications of a Free Trade Agreement Between The European Union and Armenia”, 2008, <[http://www.case-research.eu/sites/default/files/publications/25461307\\_RC80ENvok01.09.2008\\_0.pdf](http://www.case-research.eu/sites/default/files/publications/25461307_RC80ENvok01.09.2008_0.pdf)> last

Ուսումնասիրությունը դիտարկում էր տնտեսական ինտեգրացիայի երկու մոդել՝ պարզ ազատ առևտրի գոտի և խոր առևտրի գոտի: Այս ուսումնասիրության արդյունքները խիստ լավատեսական չէին, քանզի դրանք կանխատեսում էին, որ «պարզ ազատ առևտրի գոտի ստեղծելու դեպքում Հայաստանը չէր ունենա նկատելի տնտեսական օգուտներ<sup>33</sup>»: Այնուհանդերձ, խոր ազատ առևտրի գոտին կարող էր հանգեցնել նյութական օգուտների երկար և միջին ժամկետներում և ոչ մոտ ապագայում: Մասնավորապես այն նախատեսում էր, որ երկրի վերաբրենդավորման և զարգացման շնորհիվ Հայաստանը կարելի է ներկայացնել որպես առավել կայուն շուկա ունեցող երկիր՝ հիմնված իրավունքի գերակայության և ցածր կոռուպցիայի վրա: Սակայն այն հանգամանքը, որ Հայաստանում արտադրվող ապրանքների մեծ մասի տեխնիկական տվյալները չեն համապատասխանում ԵՄ պահանջներին, և, այսպիսով, ՀՀ կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը չի կարող արտահանումներ իրականացնել դեպի Եվրոպա, ուղղակիորեն նվազեցնում է ՀՀ-ի կողմից ազատ առևտրի գոտուց ակնկալվող օգուտները:

Այս հետազոտությունը, սակայն, ունի մի շարք սահմանափակումներ, որոնց հարկ է անդրադառնալ: Նախևառաջ, այս փուլում Հայաստան – ԵԱՏՄ ինտեգրացիան դեռ կանխատեսելի չէր, ուստի ուսումնասիրությունը չի անդրադառնում նրան, թե ԵՄ-ի հետ ազատ առևտրի գոտու հաստատման դեպքում Հայաստանը ինչպիսի տնտեսական կորուստներ կարող է ունենալ: Ավելին՝ ուսումնասիրությունը նախատեսում է, որ Հայաստանի համար ԵՄ-ի հետ խոր տնտեսական համագործակցությունը կարող է դրականորեն անդրադառնալ միայն ներքին խոր քաղաքական և տնտեսական փոփոխություններից հետո: Հաշվի առնելով Հայաստանում գործող բիզնես միջավայրը, ազատ մրցակցության խնդիրները՝ բարելավման այդ գործընթացը հեշտ իրագործելի չէ:

Հաշվի առնելով այս սահմանափակումները և 146 մլն ԱՄՆ դոլարին համապատասխան նախատեսվող ՀՆԱ-ի աճը՝ հետազոտության հաջորդ մասում այն կհամեմատենք ԵԱՏՄ ինտեգրացիայի առավելությունների հետ<sup>34</sup>:

---

accessed 22 Aug 2016.

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Vinokurov, E., (ed.) “Armenia and the Customs Union: Impact of Economic Integration”, Saint Petersburg 2013, <[http://www.eabr.org/general/upload/C11%20-%20izdania/2014/%D0%90%D1%80%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F-%D0%A2%D0%A1/doklad\\_20\\_en\\_preview.pdf](http://www.eabr.org/general/upload/C11%20-%20izdania/2014/%D0%90%D1%80%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F-%D0%A2%D0%A1/doklad_20_en_preview.pdf)> last accessed 22 Aug 2016.

European Commission (EC), “EU-Armenia Deep and Comprehensive Free Trade Area” Brussels, 24 July 2013 <[http://europa.eu/rapid/press-release\\_MEMO-13-728\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_MEMO-13-728_en.htm)> last accessed 22 Aug 2016.

Այս զեկույցի եզրափակումից հետո, որը նշում էր, որ ազատ առևտրի գոտու ստեղծումը իրագործելի է, ԵՄ-ն Հայաստան ուղարկեց փաստահավաք խումբ: Այդ խմբի հիմնական առաքելությունն էր «քարտեզագրել նախապատրաստական աշխատանքները՝ սկսելու բանակցություններ ազատ առևտրի գոտի ստեղծելու Հայաստանի և ԵՄ-ի միջև»<sup>35</sup>:

Ինտեգրացիոն գործընթացները շարունակելու նպատակով Հայաստան – ԵՄ հարաբերությունների ստատուս քվոն գնահատելու համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել Հայաստանի և ԵՄ-ի միջև առկա առևտրաշրջանառությունը և ներդրումների հոսքը:

ԱՄՆ-ն և ԵՄ-ն ՀՀ-ի տարածքում հիմնական ներդրողներն են (տարեկան շուրջ 300 մլն եվրո)<sup>36</sup>: ՀՀ – ԵՄ հարաբերությունների խորացումը կարող էր բարելավել ներդրումների այս արդյունքը, քանզի ԵՄ-ի հետ քաղաքական և տնտեսական ասոցացումը կարող է ներդրողներին ցույց տալ, որ երկրում առկա են ցածր քաղաքական ռիսկեր, մրցակցության արդար կանոններ, կառավարման ժողովրդավարական համակարգ և օրենքի գերակայություն: Համապատասխանաբար ԵԱՏՄ-ի կազմի մեջ մտնելուց հետո ՀՀ հոսող ուղղակի ներդրումները 2015 թվականին նվազեցին 41 տոկոսով, եթե այն համեմատենք 2014 թվականի հետ<sup>37</sup>: Ավելին, ըստ Պյոտր Սվիտալսկիի, ով Հայաստանում եվրոպական պատվիրակության ղեկավարն է, ԵՄ-ն նաև Հայաստանի «ամենամեծ դոնորն է», որը տարեկան տրամադրում է 50 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը<sup>38</sup>:

Աղյուսակ 1: Արտացոլված է Հայաստան եկող օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան, 2006–2016 թթ.:

Հաջորդ կարևոր գործոնը, որը ցույց է տալիս ՀՀ-ի և ԵՄ-ի տնտեսական փոխկապակցվածությունը, կողմերի միջև ընթացող առևտրաշրջանառությունն է: Ըստ ներկայիս վիճակագրության՝ ԵՄ-ին է բաժին ընկնում Հայաստանի արտաքին առևտրի մեծ մասը՝ մոտ 29,7 %-ը: Հայաստանի և ԵՄ-ի միջև առևտրի դինամիկան մնացել է նույնը վերջին 10 տարիների


<sup>35</sup> Fact-finding trip heralds first steps towards stronger trade relations with Armenia” - Brussels, 17 February 2009, <[http://trade.ec.europa.eu/doclib/docs/2009/february/tradoc\\_142338.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2009/february/tradoc_142338.pdf)> last accessed Aug 11 2016.

<sup>36</sup> European Commission (EC), “Armenia Main Indicators”, 2006, <[http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc\\_111471.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_111471.pdf)>last accessed 22 Aug 2016.

<sup>37</sup> Armstat, “FDI inflow into Armenia”, 2015.

<sup>38</sup> Civilnet “Head of Eu Delegation to Armenia: Turning a New Page in Armenia-EU Relations” 2 Oct, 2015, <<http://civilnet.am/2015/10/02/eu-delegation-to-armenia-ambassador-piotr-switalski/#.V6m6GFV971V>>, last accessed 8 Aug 2015.

Դեպի Հայաստան օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը.



ընթացքում, որը հասնում է 940 մլն եվրոյի: Սակայն արտահանումների և ներկրումների համամասնությունը փոխվել է: Մասնավորապես 2005 թվականին Հայաստանը ԵՄ երկրներ էր արտահանում 514 մլն եվրո և ներկրում 420 մլն եվրո արժողությամբ ապրանքներ և ծառայություններ, ինչը հանգեցնում է արտաքին առևտրի դրական հաշվեկշռի: Սակայն առևտրի այս դրական հաշվեկշիռը ներկայումս փոփոխվել է բացասականի, քանի որ ներկայումս Հայաստանը արտահանում է 307 մլն եվրոյի ապրանքներ և ծառայություններ, ինչը 40 %-ով նվազել է, իսկ ներկրումներն աճել են ավելի քան 50 %<sup>39</sup>:


Աղյուսակ 2: Արտացոլում է Հայաստանի և ԵՄ-ի միջև առևտրաշրջանառության ծավալների դինամիկան 2005–2015 թթ.:

Ամփոփելով նշենք, որ ԵՄ-ն Հայաստանի հիմնական առևտրային և ներդրումային գործընկերն է, և ԵՄ-ի ԽՀԱԱԳ-ի հաստատումը կարող է բերել հնարավորություն՝ վարելու հավասարակշռված տնտեսական քաղաքականություն: Այն կարող էր նպաստել Ռուսաստանից Հայաստանի կախվածության նվազման: Չնայած այն հանգամանքին, որ ԱՀ-ը և ԽՀԱԱԳ-ը կարող են բերել \$146 մլն կամ ՀՆԱ-ի 3–7 % աճի, ԵՄ-ի հետ ազատ առևտրի գոտու հաստատման տնտեսական օգուտները զգալի չեն: Հակառակը, խորացնելով տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ, Հայաստանը կարող էր կորցնել այն տնտեսական հնարավորությունները, որ կարող է ընձեռել ԵԱՏՄ-ն: Այդ կորուստները կարող են լինել ավելի մեծ, քանզի ԵԱՏՄ տարածքի մեջ չընդգրկված երկրները առևտրային հարաբե-

<sup>39</sup> European Commission “European Union Trade in Goods with Armenia”, 2016, <[http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc\\_113345.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_113345.pdf)> last accessed Aug 11, 2016

ԵՄ առևտրի տեղաշարժը և հաշվեկշիռը, տարեկան ցուցանիշները 2005 - 2015

Source Eurostat Comext - Statistical regime 4



րություններ կարող են հաստատել առավել անշահավետ գներով:

Այսպիսով՝ ավելի քան երեք տարի տևած բանակցություններից հետո Հայաստանը ընդունեց Ռուսաստանի կողմից «անսպասելիորեն» ուղարկված առաջարկը՝ միանալու Բելառուսին, Ղազախստանին և Ռուսաստանին որպես Մաքսային միության անդամ: Այս ընտրությունը հենված էր խոր տնտեսական հանգամանքների վրա, որոնք նույնպես փոխկապակցված են ազգային անվտանգության հետ, և այս հանգամանքները միասին հիմք են նախագահ Սարգսյանի՝ Մաքսային միությանը միանալու որոշման համար, որը քննարկելու ենք հաջորդ գլխում:

## 2.2. Հայաստանի և Ռուսաստանի միջև առկա տնտեսական հարաբերությունները. ԵԱՏՄ-ի կարևորությունը

Այս բաժնում հիմնականում անդրադառնալու ենք ՀՀ-ի և Ռուսաստանի միջև առկա տնտեսական հարաբերություններին, քանզի ներկայիս ԵԱՏՄ երկրներից Ռուսաստանն է Հայաստանի գլխավոր գործընկերը:

Հարկ է նշել, որ Հայաստանը քաղաքականապես Ռուսաստանի հետ ուղղակի փոխկապակցվածության մեջ է, որը քննարկեցինք առաջին մասում, ինչպես նաև տնտեսական խոր փոխգործակցության մեջ:

Տնտեսական տեսանկյունից առկա են առնվազն երեք հիմնական մարտահրավերներ, որոնք Հայաստանը պետք է լուծի՝ 1. ՀՆԱ-ի վտանգավոր կախվածությունը երկիր ուղարկվող տրասֆերտներից, քանզի այլ երկրների տնտեսական անկայունությունը ուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի վրա, 2. Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանների առկայությունը, ինչը հնարավորություն է տալիս Իրանին և հատկապես Վրաստանին օգտագործելու իրենց դիրքն առավել շահավետ պայմաններով ապ-

րանքների տեղախոխում իրականացնելու նպատակով, ինչն ուղղակիորեն ազդում է գնի վրա, 3. Հայաստանում ներքին տնտեսական համակարգը խորապես կենտրոնացված է մի շարք քաղաքական և բիզնես գործիչների ձեռքում, որը հանգեցնում է հակամրցակցային գործունեության և մենաշնորհի դիրքի չարաշահման<sup>40</sup>:

Որոշ աղբյուրներ նշում են, որ Ռուսաստանը չի կարող Հայաստանին առաջարկել մեծ տնտեսական օգուտներ՝ ի համեմատություն ԵՄ–ի, և ԵԱՏՄ–ի կազմի մեջ մտնելը թելադրված էր հիմնականում անվտանգության ապահովման նկատառումներով<sup>41</sup>: Չնայած կարելի է համաձայնել, որ ԵՄ–ն կարող է տնտեսապես դրականորեն անդրադառնալ ՀՀ տնտեսության վրա, սակայն համաձայնել, որ այն ավելին է, քան ԵԱՏՄ–ի դրական ազդեցությունը, հնարավոր չէ, որը և քննարկում ենք հողվածի այս բաժնում:

Կան երեք հիմնական պատճառներ, որոնք բարձրացնում են Ռուսաստանի կարևորությունը ՀՀ տնտեսության մեջ՝ 1. Ռուսաստանը մեծ դեր է խաղում Հայաստանին էներգետիկ անվտանգության հարցում, 2. Ռուսաստանը Հայաստանին զենք վաճառող հիմնական գործընկերն է, 3. Հայաստանի աշխատուժի մի զգալի հատվածը աշխատում է Ռուսաստանում և երկիր ուղարկում տրանսֆերտներ:

Նախ և առաջ Հայաստանը էներգետիկ անվտանգության հարցում ուղղակիորեն կախված է ՌԴ–ից, քանզի հենց Ռուսաստանն է հիմնական գազ մատակարարում Հայաստան: Ռուսաստանն ունի աշխարհում բնական գազի ամենամեծ պաշարը, և Հայաստանի էներգետիկ համակարգի 80 տոկոսը կառավարվում է Ռուսաստանի կողմից<sup>42</sup>: Բնական գազը օգտագործվում է ջերմաէլեկտրակայաններում, որոնք մատակարարում են էներգիայի մոտ 40 տոկոսը<sup>43</sup>: Գազը նաև օգտագործվում է որպես բնակարանների ջեռուցման հիմնական միջոց: Ռուսաստանը նաև նավթի և բենզինի հիմնական մատակարարն է Հայաստանում, ինչն էլ Ռուսաստանին դարձնում է Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հիմնական գործընկեր:

Ռուսաստանը նաև Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերնե-

<sup>40</sup> “Armenia Country Report”, BTI 2012. [https://www.bti-project.org/fileadmin/files/BTI/Downloads/Reports/2012/pdf/BTI\\_2012\\_Armenia.pdf](https://www.bti-project.org/fileadmin/files/BTI/Downloads/Reports/2012/pdf/BTI_2012_Armenia.pdf) page 14

<sup>41</sup> Zolyan, Mikayel, “Letter From Yerevan” Carnegie Europe, Nov. 13, 2015, <<http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=61962>> Last accessed 8 Aug 2016.

<sup>42</sup> Grigoryan, Marianna, “Armenia: New Projects a Stab at Independence from Moscow?” 16 Oct 2008, <<http://www.eurasianet.org/departments/insight/articles/eav101708.shtml>> last accessed 22 Aug 2016.

<sup>43</sup> Saghabalian, Anna, “Armenian Power Utility Rules Out Price Rise”, 28 July 2008, <<http://www.azatutyun.am/a/1596529.html>> last accessed 22 Aug 2016.

րից մեկն է և զբաղեցնում է ՀՀ արտաքին առևտրի ավելի քան 25 %-ը՝ միևնույն ժամանակ իրականացնելով ավելի շատ ներկրումներ, քան ԵՄ-ն<sup>44</sup>:

Բազմիցս նշվել է, որ «Հայաստանի կողմից ասոցացման համաձայնագրի կնքումից խուսափելը հիմնականում կապված է էներգետիկ անվտանգության հետ»<sup>45</sup>: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ ԵԱՏՄ կազմի մեջ մտնելու շնորհիվ՝ Հայաստանը կարող է ոչ միայն ավելի ցածր գնով գազ, այլ նաև ռազմական տեխնիկա ներկրել Ռուսաստանից, քանի որ որպես ԵԱՏՄ անդամ պետություն՝ ստիպված չէ մաքսավճար տալ, որն էլ ուղղակիորեն նվազեցնում է գազի և ռազմական տեխնիկայի ներկրման գինը:

Հայաստանն ավելի քան 20 տարի Ադրբեջանի հետ պատերազմական իրավիճակում է՝ կապված Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման հիմնախնդրի հետ, իսկ Ռուսաստանը այս տարածաշրջանում զենք վաճառող հիմնական ուժն է: Վերջերս Ռուսաստանը Հայաստանին տրամադրեց 200 մլն դոլար արժողությամբ վարկ՝ գնելու ռազմական տեխնիկա, և եթե Հայաստանը ԵԱՏՄ անդամ չլիներ, ապա ստիպված կլիներ ներկրել միևնույն քանակության զենք՝ 20 % ավելի բարձր գնով՝ հաշվի առնելով մաքսավճարները<sup>46</sup>: Այսպիսով՝ Հայաստան ներկրվող ռազմական տեխնիկան Ռուսաստանի հետ առևտրաշրջանառության կարևոր տարրերից մեկն է:

Հարկ է նշել, որ Հայաստանի արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է, որը հիմնականում փոխհատուցվում է ներքին սպառման միջոցով, որը ֆինանսավորվում է արտասահմանում աշխատող հայ աշխատուժի տրանսֆերտների միջոցով, որի 90 %-ը գալիս է Ռուսաստանի տարածքից: Վերջին տարիներին տրանսֆերտները զբաղեցրել են Հայաստանի ՀՆԱ-ի զգալի մասը: 2007-ից 2012 թ. ընկած ժամանակահատվածում տրանսֆերտները զբաղեցրել են բյուջեի 16 %-ը<sup>47</sup>: Այսպիսով՝ այն կազմում է ՀՆԱ-ի մի զգալի հատվածը, որն էլ Հայաստանի տնտեսությունը ուղղակիորեն կախվածության մեջ է դնում Ռուսաստանի տնտեսությունից: Եթե ԵԱՏՄ-ի անդամ չդառնալով՝ աշխատուժի սահմանափակումներ դրվեին Հայաստանի առջև, ապա այն զգալիորեն բացասականորեն կանդրադառնար Հայաստանի ՀՆԱ-ի վրա: Ավելին, եթե Հայաստան – Ռուսաստան տնտեսական հարաբերություններում լինեն բացասական տեղաշարժեր

<sup>44</sup> European Commission (EC), “European Union Trade in goods with Armenia” 2016, <[http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc\\_113345.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_113345.pdf)> last accessed Aug 11, 2016

<sup>45</sup> Civilnet “Knocking on Europe’s Door, Again: Armenia to negotiate New Framework with the EU”, 14 Oct, 2015, <<http://civilnet.am/2015/10/14/knocking-on-europes-door-armenia-european-union/#.V6mxHFV97IU>> last accessed 8 Aug 2016.

<sup>46</sup> Mkrtchyan, Hasmik, “Russia Grants \$200 Million Loan to Armenia to Help Modernise Army” Reuters, 2 July 2015, <<http://uk.reuters.com/article/uk-armenia-russia-loan-idUKKCN0PC1PY20150702>> last accessed 22 Aug 2016.

<sup>47</sup> IMF, “Remittances in Armenia: Dynamic Patterns and Drivers” 2012, <<https://www.imf.org/external/country/arm/rr/2012/062012.pdf>> last accessed 22 Aug 2016.

վերոնշյալ ոլորտներից անգամ մեկում, այն կարող է աղետալի հետևանքներ ունենալ Հայաստանի համար: Այլ տեսանկյունից նայելով, եթե լիներ տնտեսական ինտեգրացիոն գործընթացներ, որոնք կարող են սերտացնել կողմերի միջև առկա հարաբերությունները, վերացնել առկա առևտրային խոչընդոտները, բարձրացնել աշխատուժի շարժունակությունը և հնարավորություն ընձեռել ներկրելու գազ, նավթ և ռազմական տեխնիկա առավել ցածր գներով, ապա այն կարող է բերել կարճաժամկետ և երկարաժամկետ կայունություն և աճ:

ԵԱՏՄ մուտքից հետո միայն բնական գազի համար տրամադրող զեղչի շնորհիվ Հայաստանը կարող է խնայել տարեկան 140 մլն դոլար: Որպես համեմատություն՝ ԽՀԱԱԳ-ի հաստատումը կարող էր հանգեցնել միայն 146 մլն դոլար աճի, այն էլ ոչ մոտ ապագայում<sup>48</sup>:

Ի հարկե նաև անհրաժեշտ է հաշվի առնել, թե ինչպիսի աշխարհաքաղաքական գործընթացների միջով է ընթանում Ռուսաստանը: Ներկայումս Ռուսաստանն ունի տնտեսական որոշ խնդիրներ, ինչը պայմանավորված է Արևմուտքի կողմից կիրառվող տնտեսական պատժամիջոցներով՝ կապված ուկրաինական ճգնաժամի հետ: Այս պատժամիջոցները ազդում են Ռուսաստանի վրա՝ հանգեցնելով արժույթի՝ ռուբլու գնանկման: Սա իր հերթին իջեցնում է Ռուսաստանի տարածքից ուղարկված տրանսֆերտների գնողունակությունը Հայաստանում: Ռուսական շուկայում առկա այս խնդիրները նաև ազդում են ազատ աշխատատեղերի քանակի նվազման և աշխատավարձերի վրա, որն էլ ուղղակիորեն ազդեցություն ունի Հայաստանի վրա:

Հայաստանյան մի շարք բարձր պաշտոնյաներ որոշակի մտահոգություններ են հայտնել Մաքսային միության և ԵԱՏՄ մուտքի վերաբերյալ: Մասնավորապես նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը նշել է հանգամանքը, որ Հայաստանը չունի ընդհանուր սահման ԵԱՏՄ երկրների հետ, և «Հայաստան մուտքի միջին մաքսավճարը կազմում է 2,4 %, իսկ Մաքսային միության երկրներում միջինում երեք անգամ ավելի բարձր է»<sup>49</sup>: Տ. Սարգսյանը նաև նշել է, որ ՄՄ մուտքից հետո միության ներսում արտադրված ապրանքները առավել մեծ պահանջարկ կվայելեն՝ շնորհիվ ցածր գների: Նաև որոշ խնդիրներ կստեղծվեն այն արտադրողների համար, ովքեր ցանկանում են առևտրային հարաբերություններ ունենալ ԵԱՏՄ-ում չներառված երկրների հետ:

ԵՄ–ի հետ ՀՀ տնտեսական հարաբերությունների զարգացման անհրաժեշտության մասին է վկայում նաև արտաքին առևտրի պահպանվող ծավալները, այսպես՝ 2003 թ. ԱՀԿ անդամակցությունից հետո Հայաստանի ապրանքաշրջանառությունը դեպի Եվրոպա և ԱՄՆ աճեց: ԵՄ երկրների բաժինը ՀՀ առևտրաշրջանառության մեջ 1999–2012 թթ. կազմել է միջինում 35 %: Հիմնական առևտրային գործընկերներ են Ֆրանսիան, Իսպանիային, Իտալիան, Գերմանիան, Նիդերլանդները և Բելգիան: ԵՄ արտահանվող հիմնական ապրանքախմբերն են պղինձը, երկաթահամաձուլվածքը և մոլիբդենը, սև մետաղներն ու հանքաքարերը, ադամանդը: Ներմուծումը ԵՄ երկրներից 2013 թ. կազմել է ՀՀ ներմուծման 26,4 %-ը, ԱՊՀ երկրներից՝ 29,7 %-ը: Թեև 2013 թ. ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում ԵՄ երկրների բաժինը 2010–ի ամենաբարձր ցուցանիշից՝ 48,3–ից, նվազել է մինչև 33,4 %, այնուհանդերձ 2013 թ. այն ավելի բարձր էր, քան ԱՊՀ երկրներինը (27,1 %)՝ ապահովելով Հայաստանի արտահանման և ներկրման ընդհանուր ծավալների 28,8 %-ը և 25,8 %-ը համապատասխանաբար (2014 թ. տվյալների համաձայն): 2015 թ. արտահանումը կրճատվել է 5,8 %-ով, ներմուծումը՝ 32,5 %-ով: Չնայած այս ամենին՝ հիմա էլ ԵՄ–ն շարունակում է լինել ՀՀ արտահանման և ներկրման ամենամեծ շուկան, որին բաժին է ընկնում ընդհանուր առևտրաշրջանառության 27 %-ը: Այստեղ ամենակարևոր նկատառումը, որը պետք է կատարել, այն է, որ ԵՄ–ն ՀՀ–ի համար արտահանման գործընկեր է (մինչդեռ այլ երկրներից և ԱՊՀ երկրներից ՀՀ–ն ավելի շատ ներմուծում է), այսինքն՝ մեր ընթացիկ հաշվեմնացորդի հնարավորինս փոքր բացասական հաշվեմնացորդ ապահովելու համար ԵՄ–ի հետ առևտրատնտեսական կապերի զարգացումը ՀՀ–ի համար հրամայական է:

ԵՄ–ի հետ համագործակցությունը կարևոր է նաև ներդրումների առումով՝ այսպես չնայած ՀՀ ներդրումային գործընկերների մեջ ամենամեծ չափաբաժինը կրկին ապահովում է Ռուսաստանը, սակայն ԵՄ երկրներից Գերմանիան, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը, Շվեյցարի-

<sup>135</sup> [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_en.htm)



ան, Իտալիան, Լյուքսեմբուրգը և ՀՀ-ում խոշոր ներդրումներ կատարող երկրներ են: ԵՄ երկրների կողմից ներդրումներ են կատարվում հանքագործական արդյունաբերության, կապի ոլորտում, քիմիական արդյունաբերության մեջ և անշարժ գույքի հետ կապված գործառնություններում, էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրության և բաշխման ոլորտում, թեև շատ փոքր ներդրումներով ԵՄ երկրները ներդրումներ են կատարել հյուրանոցային և ռեստորանային ծառայությունների և այլ ծառայությունների ոլորտում:

Այսպիսով՝ ԵՄ-ի հետ հարաբերությունների հետագա զարգացումը մեր կարծիքով անհրաժեշտ է կազմակերպել հետևյալ ուղղություններով.

1. Առևտրատնտեսական հարաբերությունների խորացում ԵՄ անդամ երկրների հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատելով մեր երկրի արտահայտված համեմատական առավելությունների գործակիցը, որն առաջարկվել է Բելա Բալասայի կողմից, և համեմատության մեջ դնելով պայմանականորեն ԵՄ երկրներից ընտրված երկրի՝ Գեմանիայի և Ռուսաստանի հետ, պարզ է դառնում, որ ՀՀ-ն առավել մեծ արտահանման համեմատական առավելություն ունի Գերմանիայի նկատմամբ, բայց չնայած այս հանգամանքին՝ որոշ ապրանքների արտահանման դեպքում առավել մեծ են ՌԴ արտահանման ծավալները, ինչպես նաև առավել մասնագիտացված է հենց ԵՄ արտահանվող ճյուղերում (տե՛ս Հավելված 1, 2), իսկ հաշվի չառնել առևտրի պայմանները արտաքին առևտուր իրականացնելիս նշանակում է հրաժարվել այն օգուտներից, որ կարող էինք ստանալ:

2. Վրաստանի հետ ազատ առևտրի գոտու ստեղծում, որի տարածքով առանց մաքսատուրքերի հայրենական ապրանքների արտահանումը ԵՄ երկրներ հնարավորություն կտա բարձրացնելու դրանց մրցունակությունը ԵՄ շուկայում:

Սահմանին ավելի մոտ գտնվող շրջանները կարելի է դարձնել ԱՏԳ-ներ և ՀՏԳ-ներ: Սա կնպաստի նաև տվյալ տարածաշրջաններում տնտեսական և առևտրային կապերի զարգացմանը օտարերկրյա, մասնավորապես եվրոպական գործարարների կողմից ներդրումային հոսքերի ավելացմանը: Կարծում եմ՝ գոյություն ունի համագործակցության լայն հնարավորություն, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ տնտեսական գոտիների կառավարման գործունեությունը սահմանվում է տվյալ պետության կողմից: Վրաստանը, որպես սահմանակից երկիր, արդեն համագործակցում է ԵՄ-ի հետ խոր համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շրջանակներում, Հայաստանն էլ՝ որպես ԵԱՏՄ անդամ, կարող է կամուրջ լինել այս երկու կառույցների միջև: Այսինքն՝ այդ գոտիները կխթանեն ինչպես ԵՄ-ից, այնպես էլ ԵԱՏՄ-ից ներդրումների ներգրավմանը՝ արտադրության կազ-

մակերպման և առավել բարենպաստ պայմաններով միություններ արտահանում կազմակերպելու համար:

Բացի այդ՝ անհրաժեշտ է կնքել համաձայնագիր, որի հիման վրա հայկական ապրանքները կհավաստագրվեն Վրաստանում և հակառակը. դա հնարավորություն կտա վրացական ապրանքների մուտքը ԵԱՏՄ շուկա և հայկական ապրանքների մուտքը ԵՄ շուկա ավելի դյուրին իրականացնելու համար:

Անհրաժեշտ է հասկանալ, որ հարևան երկրների տարավեկտոր ինտեգրումը ոչ միայն զարգացման և համագործակցության խոչընդոտ է, այլև հնարավորություն: Այդ հնարավորությունը առավելագույն կարելի է օգտագործել համապատասխան տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ճանապարհով:

3. Իննովացիոն բնագավառում ԵՄ-ի հետ համագործակցության խորացում՝ հաշվի առնելով ԵՄ շահագրգռվածությունը (Հորիզոն 2020), միաժամանակ սա հնարավորություն կտա Հայաստանին դառնալու ԵԱՏՄ-ում իննովացիոն կենտրոն: ԵՄ-ից ԵԱՏՄ տարածք հիմնականում արտահանվում են բարձր տեխնոլոգիական, էլեկտրատեխնիկական, օպտիկական, դեղագործական, թռչող ապարատներ ու այլ տիեզերական ապարատներ: ՀՀ ամենամեծ հարստությունը մարդկային կապիտալն է, սակայն մեր երկրում, ինչպես նաև ԵԱՏՄ մյուս երկրներում ԽՍՀՄ փուլումից հետո լուրջ բարձր տեխնոլոգիական հետազոտությունները քիչ են իրականացվում, հետևաբար ԵՄ օգնությամբ ՀՀ-ն կարող է ստեղծել անհրաժեշտ բազան և մասնագիտանալ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրության ոլորտում, միաժամանակ դա ձեռնտու կլինի ԵՄ-ի համար, քանի որ հնարավորություն կտա այդ ապրանքները ԵԱՏՄ շուկա հանելու առանց մաքսային վճարների և առավել պարզ ընթացակարգերով:

4. ԵՄ-ի հետ համագործակցության հարցերով զբաղվող մարմնի ստեղծում (հատկապես ուշագրավ է Վրաստանի փորձը, որտեղ գործում է Եվրոպական ինտեգրման պետական նախարարությունը), միաժամանակ սա լրացուցիչ քայլ կլինի ԵՄ-ին հավաստիացնելու, որ ՀՀ-ն հաստատակամ է ԵՄ-ի հետ համագործակցության նպատակներում:

5. Մյուս ոլորտը ԵԱՏՄ ընդհանուր նպատակների զարգացման մեջ, որտեղ Հայաստանը առաջատարի դերում է, ՏՏ ոլորտն է: Մենք այս բնագավառում ունենք ԵԱՏՄ մասշտաբով լավագույն մասնագետները և կազմակերպությունները, ունենք զարգացած կրթական և գործնական տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ, և սա նույնպես կարող է մեզ հատուկ դեր վերապահել. «2016 թ. Հայաստանի համար հնարավորությունները կարող են լինել մի քանի ասպարեզներում, օրինակ՝ ԵԱՏՄ երկրներում

մեծ պահանջարկ կա ՏՏ մասնագետների, իսկ այս ոլորտում Հայաստանը առաջատար է: Նաև Հայաստանը կարող է կարևոր գործընկեր դառնալ հատկապես Ռուսաստանի համար՝ Թուրքիայի հետ տնտեսական սահմանափակումների համատեքստում: Մենք իրատեսական ենք համարում գյուղմթերքների արտահանման քառապատկումը Ռուսաստան՝ բարենպաստ բնակլիմայական պայմանների և պետության կողմից կազմակերպչական բնույթի աջակցության դեպքում»<sup>136</sup>:

Մյուս կողմից, եթե մի կողմ դնենք այս տնտեսական գործոնը և քննարկենք քաղաքական գործոնը, ապա կտեսնենք, որ քաղաքական ինստիտուտների առումով ՀՀ-ն առավել մոտ է ԵՄ երկրներին: Այսպես, ըստ «Ֆրիդոմհաուզի» (Freedom House) «Ազատությունը աշխարհում 2016» տարեկան հետազոտության, որում ներկայացվում են աշխարհի 195 երկրում և 14 տարածքում քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների համեմատական գնահատականի «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» 2015 թ. ինդեքսները, նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ և դրանց միասնական (միջին) ինդեքսը կազմել է «4,5», համաձայն որի՝ Հայաստանը, ինչպես և նախորդ տարի, Ֆրիդոմհաուզի կողմից դիտարկվում է որպես՝ «մասնակի ազատ» երկիր, ԵՄ անդամ բոլոր երկրները «ազատ» երկրներ են, մինչդեռ ԵԱՏՄ երկրների ազատության ինդեքսների ուսումնասիրությունը վկայում է, որ ըստ Ֆրիդոմհաուզի՝ բոլոր անդամ երկրները՝ բացառությամբ Ղրղզստանի, համարվում են «ոչ ազատ երկրներ», և միայն Ղրղզստանն է, որը, ինչպես և Հայաստանը, դիտարկվում է որպես «մասնակի ազատ» երկիր<sup>137</sup>:

Կոռուպցիայի ընկալման մակարդակով ՀՀ-ն ևս ավելի զարգացած է, քան ԵԱՏՄ երկրները, այսպես Transparency International հակակոռուպցիոն կազմակերպության 2016 թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսով՝ վարկանիշում 168 երկիր է ընդգրկված: Գնահատականը տրվում է 0–100 բալային համակարգով, որտեղ 0–ն կոռուպցիայի շատ բարձր ընկալումն է, իսկ 100–ը՝ կոռուպցիայի շատ ցածր մակարդակը:

168 երկրների շարքում Հայաստանը մի շարք երկրների հետ կիսում է 95–րդ հորիզոնականը: Հայաստանում կոռուպցիայի ընկալման ինդեքսը 38 է: Ընդ որում՝ Հայաստանի հարևան երկրներից Թուրքիան 53–րդն է, Վրաստանը՝ 48–րդը, Ադրբեջանը՝ 119–րդը, Իրանը՝ 144–րդը: Ռուսաստա-

<sup>136</sup> Տե՛ս «2016–ը ոչ միայն ճգնաժամի, այլև նոր հնարավորությունների տարի է», Թ. Մանասերյան, «Սոյուզինֆո», 01.2016, Մատչելի է՝ [http://www.soyuzinfo.am/arm/analytics/detail.php?ELEMENT\\_ID=1803](http://www.soyuzinfo.am/arm/analytics/detail.php?ELEMENT_ID=1803)

<sup>137</sup> Տե՛ս Freedom in the World 2014/ The Democratic Leadership Gap. <http://www.freedomhouse.org/sites/default/files/Freedom%20in%20the%20World%202014%20Booklet.pdf>

նը վարկանիշում զբաղեցնում է 119-րդ հորիզոնականը, Ղազախստանը 113-րդն է, իսկ Բելառուսը՝ 107-րդը<sup>138</sup>:

Չնայած, որ Հայաստանը չստորագրեց ասոցացման համաձայնագիրը, սակայն մի շարք չափանիշներով Արևելյան գործընկերության երկրների շարքում առաջատար արդյունքներ էր գրանցում: Հիմա Հայաստանը մտել է մի համակարգի մեջ, որը շատ հեռու է այդ չափանիշներից և կարող է բացասական լուրջ հետևանքներ ունենալ: Տվյալ պարագայում կարևոր է, որ հայկական կողմն ինքը նախաձեռնություն ցուցաբերի և միջազգային հարաբերությունների համակարգում ներկայանա Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ֆինլանդիայի որդեգրած քաղաքականությամբ, երբ վերջինս, որի էությունն այն էր, որ Ֆինլանդիան ստիպված էր հավասարակշռություն պահպանել ՆԱՏՕ-ի և Վարշավյան պակտի երկրների հետ: Մեր դեպքում մոդել կկոչենք «արմենիզացիա»: Արմենիզացիայի մոդելն իրենից ենթադրում է եվրոպական չափանիշներին համապատասխանող ժողովրդավարական-իրավական պետություն, որն իր արժեքային համակարգով մոտ է եվրոպականին, սակայն հանգամանքների բերումով ինտեգրացիոն խմբավորման մեջ է և կապող կամուրջ է երկու բլոկների միջև:

## Վերջաբան

Ամփոփելով նշենք՝ երկխոսության՝ քաղաքական մշակույթների, միջպետական հարաբերությունների պահպանման, տնտեսական զարգացման մակարդակով, կառավարման մարմինների ենթակառուցվածքների, մասնագիտական փորձի և մի շարք այլ անհրաժեշտ ատրիբուտների առումով Հայաստանը ունի բավականին մեծ ձեռքբերումներ և ամենից մեծ փորձառությունը երկու աշխարհաքաղաքական միավորների հետ շփումներում: Հայաստանի Հանրապետությունը կարող է ստանձնել միջնորդի դերակատարություն ԵՄ – ԵԱՏՄ երկխոսական հարթակում և ունենալ լավագույն ձեռքբերումները: Ի վերջո, ինչպես նշում են պետությունների ղեկավարները, ԵԱՏՄ-ն հենց նոր հարթակ է համաշխարհային երկխոսության համար, իսկ Հայաստանը, անդամագրվելով ԵԱՏՄ-ին, չպետք է իր առջև փակված համարի ԵՄ-ի դռները: Մենք ուզում ենք ընդգծել, որ մեր երկիրը լավագույնս պատրաստ է կամուրջ պետության դերին ինչպես քաղաքական, տնտեսական, ենթակառուցվածքային, այնպես էլ աշխարհաքաղաքական և պետական կառավարման համակարգերով:

«Մենք համաձայնություն ունենք, որ մեր առջև կանգնած ընդհանուր մեծ նպատակը ընդհանուր տնտեսական և հումանիտար տարածքի ստեղծումն է

<sup>138</sup> <http://www.transparency.org/cpi2015#downloads>

Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ: Որպես դեպի այդ նպատակ շարժվելու կարևոր փուլ՝ մենք Բրյուսելի գազաթափողովում առաջարկեցինք դնել մինչև 2020 թ. Եվրամիության և Մաքսային միության միջև ազատ առևտրի գոտու ստեղծման խնդիրը»:<sup>139</sup>:

«Հ տարիների փորձը թե՛ Եվրոպական և թե՛ Եվրասիական տարածաշրջանի ինտեգրացիոն գործընթացներում կարող է հանդիսանալ ամուր հիմք այս երկխոսության մեջ մեր երկրի համար հատուկ դերակատարություն ամրագրելու համար:

ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնումը խթանելու նպատակով կարևոր է, որ Հայաստանը ներկայացնի այս մոդելի կարևորությունը՝ ցույց տալու համար, որ համագործակցել Հայաստանի հետ, բարեփոխումներ կատարել մեր երկրում նշանակում է բարեփոխումներ կատարել ավելի մեծ համակարգում:

### Հավելված

#### Աղյուսակ 1

**«Հ արտահանման հարաբերական մասնագիտացման գործակիցներն ըստ առաջատար ապրանքախմբերի, 2013 թ.»<sup>140</sup>**

Ապրանքախմբի անվանումը	Տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ (%)	Տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման մեջ (%)	Արտահանման հարաբերական մասնագիտացման գործակիցը
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	14	0,19	23,8
Հանքաքար, խարամ և մոխիր	20	0,12	15
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	12,75	0,03	21
Սև մետաղներ	10,1	0,3	3,3
Պղինձ և իրեր դրանից	6,48	0,06	7
Ալյումին և իրեր դրանից	6,5	0,5	6,5

<sup>139</sup> Տե՛ս С. Лавров: необходимо сформировать единое пространство от Лисабона до Владивостока», 10.2015, Правда – tv.ru, <http://www.pravda – tv.ru/2015/10/27/184611/sergej – lavrov – neobhodimo – sformirovat – edinoe – prostranstvo – ot – lissabona – do – vladivostoka>

<sup>140</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից [trademap.org](http://trademap.org) –ի տվյալների հիման վրա:

Ծխախոտ	4,17	0,17	21,4
Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ, դրանց մասեր	1,5	0,85	1,8
Կենդանի կենդանիներ	0,34	0,02	3,2
Աղ, ծծումբ, հող, քար, կրաքար և գեմենտ	1,08	0,04	4,3
Ձուկ և խեցգետնավորներ	2,21	0,03	3,9
Սուրճ, թեյ, մատե և այլ համեմունքներ	0,4	0,28	1,4
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	1,0	0,31	3,2
Ժամացույցներ և դրանց մասեր	0,6	0,27	3,8
Վերգետնյա տրանսպորտային միջոցներ	0,6	0,24	2,5
Ապակի և դրանից իրեր	0,8	0,39	3
Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	1,2	0,47	2,5

**Աղյուսակ 2**

**Հայաստանի, Գերմանիայի և Ռուսաստանի ԱՀԱ-ն<sup>141</sup>**

Ապրանքախմբի անվանումը	Հայաստան	Գերմանիա	Ռուսաստան
Կենդանի կենդանիներ	0,56	- 0,09	- 0,98
Ձուկ և խեցգետնավորներ	0,63	- 0,45	0,02
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	0,51	- 0,13	- 0,77
Հանքաքար, խարամ և մոխիր	0,98	- 0,93	0,87
Սև մետաղներ	0,07	- 0,02	0,55
Պղինձ և իրեր դրանից	0,93	0,04	0,74
Ոչ թանկարժեք այլ մետաղներ	0,98	- 0,19	0,52
Ժամացույցներ և դրանց մասեր	0,25	- 0,09	- 0,95

<sup>141</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից [trademap.org](http://trademap.org)-ի և [armstat.am](http://armstat.am)-ի տվյալների հիման վրա:

## ARMENIA BETWEEN THE EU AND THE EAEU: PROSPECTS OF POLITICAL AND ECONOMIC COOPERATION

*HERMINE KATVALYAN, SONA PARSYAN*

*SCIENTIFIC ADVISER SERGEY MINASYAN, PHD<sup>142</sup>*

### Introduction

The current character of integration processes, globalization and development of international relations destines the states to enter regional structures. This becomes peremptory for many aspects of state governance, including political, economic and strategic ones.

From the point of view of integration processes, the post-Soviet area is a district topic of research, given its cultural and historic strong ties, and solid fraternal base of interstate relations. The study of integration processes at post-Soviet area reaches us to a conclusion that Custom Union, United economic area and the Eurasian Economic Union of today are bringing onboard an integrational megaproject for post-Soviet countries. This transnational management body, a subject to international law, will create united systems for economic cooperation and become a player in international business.

During the years of independence, the Republic of Armenia adopted multilateral foreign policy, and integration both with post-Soviet area and the European Union were priorities in international relations. Armenia faced many issues in post-Soviet period. Those problems were connected with the geopolitical location of the country, absence of independent bodies for running the economy and foreign policy as the result long-term Soviet socialistic joint system, Armenians spread throughout the world, and a range of post-war and intrastate issues.

Post-Soviet Armenia embarked on the journey of forming the nation state and its further development, however it lacked necessary infrastructures to ensure fluent transformation from communistic soviet system to self-governing nation state model. At the same time, popular nationalistic forces tended to lean towards pro-European political line. However, Armenia was not prepared enough to reach the required European standards in economy, politics, human rights and educational infrastructures. Our country began

---

<sup>142</sup> Sergey Minasyan, Doctor of Political Sciences, Deputy Director and Head of Political Studies Department at the Caucasus Institute in Yerevan, Armenia.

actively getting included in multi-level assistance programmes, and efficiently solidified new development vectors. With assistance and funds from Europe, Armenia developed and introduced several subsystems into state systems: All these should have prepared the Republic of Armenia for EU membership and reserve the place of our country in European joint market, political systems, international and transnational structures.

The political leadership of the country successfully ran the policy of double standards until 2015. On one hand, Armenia as a member CSI, CSTO had full-scale participation in various integrative initiatives on post-Soviet area: political, economic, security etc. On the other hand, the priority of Armenian foreign policy has been the integration to European geopolitical area, and the efforts have brought many results. Armenia-EU cooperation has always been at the core of Armenian foreign policy. This cooperation basically serves to deepening of political relations and trade ties with EU, as well as the aim of reform and development of democratic and legal state institutions in Armenia.

### **Armenia-EU cooperation before September 2013**

There were times when the establishment of economic relations between Armenia and the EU, strengthening of the ties and priority of development of integration processes were the basic vectors of Armenia's involvement into the world economy.

The first and most important step of this process is the Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States (PCA) signed on April 22, 1996 in Luxemburg. The agreement entered into force on July 1, 1999, and symbolized the basis for the development of EU-Armenia relations. The main aim of the PCA is to provide an appropriate framework for the political dialogue between the Parties allowing the development of political relations, to support the Republic of Armenia's efforts to consolidate its democracy and to develop its economy and to complete the transition into a market economy, to promote trade and investment and harmonious economic relations between the Parties and so to foster their sustainable economic development, to provide a basis for legislative, economic, social, financial, civil scientific, technological and cultural cooperation.

According to the PCA, the Parties accorded to one another most-favoured-nation treatment in all areas in respect of customs duties and charges applied to imports and exports, goods originating in the Republic of Armenia should be imported into the Community free of quantitative restrictions and vice versa, the mutual protection of intellectual, industrial and commercial property rights,



and Armenia got right to use the general system of EU privileged treatment<sup>143</sup>.

The PCA, in particular, stated that:

1. The Republic of Armenia's international trade shall be conducted in conformity with the rules of the WTO (article 45),
2. Goods originating in the Republic of Armenia shall be imported into the Community free of quantitative restrictions, except textile products falling under Chapters 50 to 63 of the Combined Nomenclature, products covered by the Treaty establishing the European Coal and Steel Community or those products that can cause or threaten to cause injury to domestic producers of like or directly competitive products (Articles 12, 14, 18, 18).
3. The Community and its Member States shall grant treatment no less favourable than that accorded to any third country for the establishment of Armenian companies and shall grant to subsidiaries of Armenian companies established in their territories a treatment no less favourable than that granted to any Community companies, in respect of their operation (Article 23).
4. The EU supports the pursuance of agrarian reform, the modernisation, privatisation and restructuring of agriculture, the agro-industrial and service sectors in the Republic of Armenia, and development of domestic and foreign markets for Armenian products (Article 53).
5. The Parties undertake to apply effectively the principle of unrestricted access to the international maritime market and traffic on a commercial basis (Article 32).
6. The Parties shall aim to develop and strengthen small and medium-sized enterprises and their associations and cooperation between SMEs (Article 62).
7. The Parties undertake to authorise, in freely convertible currency, any current payments between residents of the Community and of the Republic of Armenia (Article 41).
8. The Community shall provide the Republic of Armenia with technical assistance (Articles 43, 49)<sup>144</sup>.

On April 29, 2004 The Government of the Republic of Armenia adopted the decree on organization of activities to prepare a National plan on implementation of the PCA.

Another important step towards integration to European institutions was the membership of Armenia to the Council of Europe in 2001.

---

<sup>143</sup> Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:21999A0909\(01\)](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:21999A0909(01))

<sup>144</sup> Ibid.

On May 12, 2004 the EU adopted Strategy paper on European Neighborhood Policy, and in June 2004 Armenia was included in ENP. The Action Plan for ENP was signed with the EU in November 2006. The Eastern Partnership aimed to increase cooperation of 27 member states of the EU with six post-Soviet European states: Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine. All Eastern partnership countries were offered to sign Association Agreements that were distinct from each other according to cooperation obligations and targets of the countries. They constitute a plan of reforms that will bring the partner countries closer to the EU by aligning their legislation and standards to the EU ones, and harmonizing processes in different areas.

Multilateral cooperation in the Eastern Partnership takes place across a wide array of issues: 1. strengthening institutions and good governance, 2. developing market opportunities through economic integration and trade agreements, 3. ensuring energy security, and 4. enhancing mobility and contacts between people.

ENP assumed that EU relations with its neighbors will be based upon common values, in particular rule of the law, good governance, human rights, including minority rights, development of relations, market economy and sustainable growth. It aimed the establishment of a new-level relations with the neighbors of the EU, deepening and enlargement of cooperation<sup>145</sup>.

ENP foresees development of trade relations, financial and economic assistance, gradual participation in various EU policies and programmes.

ENP aims development of bilateral relations, in particular, in energy sphere, like implementation of joint projects for more efficient and mutually beneficial energy supply and transit, as well as encouragement of investments to secure fertile environment for the development of energy sphere.

On 14 June 2004, the Council of the European Union decided to launch the European Neighborhood Policy for Armenia, Azerbaijan and Georgia and that was a significant step to further deepen relations between the EU and the Southern Caucasian states.

On 14 June 2004, the Council of the European Union approved the reports concerning the three countries. According to the reports, the Council of the European Union accepted the Action plan with Armenia, envisioned for 3-5 years<sup>146</sup>.

The EU-Armenia Action Plan was a political document laying out the strategic

---

<sup>145</sup> Eurointegration: funding and implementation (Experience of Eastern European and CIS countries), AEPLAC, Yerevan, 2005, p. 27 (in Armenian).

<sup>146</sup> ENP Action Plan concept [https://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action\\_plans/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](https://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf)

objectives of the cooperation between Armenia and the EU. Execution of the ENP Action Plan contributed to the implementation of PCA provisions, establishing ties in new areas, and encouraged and supported Armenia's further integration into the European economic and social structures. It furthermore helped to devise and implement policies and measures to promote economic growth and social cohesion, to reduce poverty and to protect the environment.

Since 2007, European Neighborhood and Partnership Instrument (ENPI) substituted TACIS and the budget of ENP in 2007-2013 was around 14,929 mln Euro for 16 countries.

Since independence of Armenia, TACIS programme through legal reforms supported transition to market economy, legislative approximation to the EU and Armenia's membership to WTO. Through support to private sector and SMEs, TACIS also assisted to the economic recovery of Armenia. Agricultural Cooperative Bank, thanks to the food aid from TACIS and European Agricultural Guidance and Guarantee Fund, supported the improvement of agricultural production. In 2002-2006, the support of TACIS to Armenia focused on institutional, legal and administrative reforms, as well as follow up of assistance to mitigate social results of transitional period. TACIS showed significant support to the implementation of Poverty reduction strategy adopted in 2003<sup>147</sup>.

Armenia-EU talks on Association agreement were officially launched in 2010. The Agreement was to substitute the PCA since its provisions were already outdated for Armenia-EU relations. Deep and Comprehensive Free Trade Agreement (DCFTA) was an integral part of the Association Agreement. The characteristic of that agreement was approximation of Armenian economy to the EU standards, and latter was contributing considerable aid for this aim. DCFTA was regulating only Armenia-EU trade and economic relations. Having signed DCFTA, Armenia would have opportunity to secure free movement of goods and services in the trade with the EU. According to the provisions of that Agreement neither Armenia, nor the EU would charge import taxes, technical barriers (not related to tariffs) would be decrease in bilateral trade.

At the same time, the Republic of Armenia would be free to continue its independent trade and economic policy with other countries, charge duty taxes, implement other measure, keeping favorable trade regime with CSI countries (based on current bilateral Free Trade Agreement), continue its trade and economic negotiations with third countries, as well as retain its independent membership in WTO.

---

<sup>147</sup> See European Commission working paper. European Neighbourhood Policy. Report on Armenia, 2005

However, in September 2013, the President of Armenia announced that the Republic of Armenia wants to join the Custom Union formed between Russian Federation, Kazakhstan and Belarus. On October 10, 2014, Armenia's membership to EAEU was signed in Minsk, and Armenian joined EAEU as a full member starting January 1, 2015.

### **EAEU membership**

The treaty on Armenia's accession the Eurasian Economic Union (EAEU) entered into force on January 2, 2015. Armenia became a full member of the EAEU in addition to Belarus, Kazakhstan and Russia<sup>148</sup>. With the entrance to EAEU, Armenia became a part of a joint market with around 170 mln population, and assumed corresponding commitments. According to the accession treaty, the representatives of Armenia are fully included into the activities of the governance bodies of the Union. The President of Armenia became a member of the Supreme Eurasian Economic Council, and the prime minister became a member of the Intergovernmental Council. Armenia, like the other member states, is represented by three members at the Eurasian Economic Commission.

Like other economic unions, EAEU was also established on the basis of a Customs Union that fully functions between Belarus, Kazakhstan and Russia since July 1, 2011.

The Armenian membership has the following characteristics:

- absence of immediate border;
- in contrast with other members of Custom union, much less custom taxes with third party countries given Armenia's membership to WTO;
- and differences in the structure of economy, in contrast to oil exporting Russia and Kazakhstan.

Shortly after the announcement on Armenia's joining the Customs Union a road map for Armenia was prepared and approved on December 24, 2013 at the Supreme Eurasian Economic Council. Road map was actually a comprehensive action plan to make the accession of Armenia to Customs Union and EAEU possible. Out of total 267 activities of the road map the Republic of Armenia should have completed 126 'before attaining the membership'. All the activities have been implemented. Separate provisions regarding those activities were included in the accession treaty.

<sup>148</sup> See Agreement on Accession of the Republic of Armenia to the Treaty on the Eurasian Economic Union, dated May 29, 2014, accessible at <https://docs.eaeunion.org/en-us/Pages/DisplayDocument.aspx?s=bef9c798-3978-42f3-9ef2-d0fb3d53b75f&w=632c7868-4ee2-4b21-bc64-1995328e6ef3&l=540294ae-c3c9-4511-9bf8-aaf5d6e0d169&EntityID=7297>

In general, the implementation of the road map brought to approximation of Armenian national legislation to the legal base of Eurasian Economic Union. In this regard, Armenia succeeded to intensively adapt to various EAEU systems of custom services, doing business, domestic trade etc. There are still various actual problems that are conditioned by different issues, for example fluctuations in the result of disproportion of currency units, non-regulated relations in supply systems of energy resources and operationalization of legal norms on regulations of employment opportunities.

Unlike DCFTA, EAEU prescribes establishment of joint customs/economic zone in the member states. Joint customs zone assumes identical approach towards goods imported to the member state's customs zone, meaning uniform rates of customs duties and non-tariff regulation. Transportation of goods through the territory of the Union is not subject to border prohibitions and formalities. However, in case of marketing of those goods in the EAEU member-countries, those goods should be subject to the internal procedures of taxing and requirements of standardization.

Armenia, as a member to EAEU, has committed to adhere to trade-economic policy of that union, in particular, EAEU guarantees identical approaches to customs rates, import and export formulations, standardization, sanitation, and anti-dumping.

**Let us discuss the consequences of joining EAEU.** The consequences of membership to integrated groups are usually firstly reflected in the reorientation of import trends, as well as the possible price effects on certain products. Overall, the impact of accession to Eurasian Economic Union on the reorientation of imports is still not significant, though there is some movement regarding certain products. For example, while Russia had only 26 percent of share in petrol imports of Armenia in 2012, this share increased to 67 percent in 2015.

From the point of view of prices, non-application of customs duties for the gas imported from Russia has significant meaning. If Armenia were not EAEU member, the current price of imported gas would be on the level of 2013 that is around 280 USD for one thousand cubic meters. The share of Armenia in the total amount of collected customs duties to the Eurasian Economic Union is 1,13 %.

In 2015, for the period up to August Armenia received from the EAEU customs duties about 88 million. USD. If Armenia were not a member of EAEU, the customs duties for the same period would have been about 70 million US dollars.

The membership did not have positive effect of foreign investments. The results from the first quarter of 2015 show that FDIs have drastically declined, and the share of Russia in FDIs has also decreased. In January-June 2015 FDIs have reduced for nearly 60 percent in comparison with the same period of 2014. Meanwhile, investments from Russia decreased by 90 percent.

Usually integration expectations result in additional interest over the country, positively impacting on investments. However, in case of Armenia, EAEU membership did not result in this. However, reduction in investments should not be witnessing negative effect of Armenia's membership to EAEU, since the accession coincided with the very negative phenomena in Russian economy.

If we compare the first half of 2015 with the same period of 2014, we will see that Armenia has lost about 40 percent of remittances<sup>149</sup>. EAEU membership has not formed conducive environment for money transfers yet.

The accession of Armenia to EAEU has not secured any serious economic development so far, consequently, the Republic of Armenia that puts its efforts in strengthening its security component both politically and economically, should be proactive in cooperating with other bodies and unions.

### **Armenia-EU cooperation prospects**

Despite EAEU membership, Armenia-EU cooperation goes on. Armenian Government has signed 'Support to Armenia in development of SME sphere' financial agreement with the EU to encourage trade (import and export) between Armenian and European SMEs, Generalised Scheme of Preferences (GSP+) privileged trade regime is being continued: There are renewed negotiations between Armenia and the EU to sign new agreement to replace the PCA. Around 6,500 Armenian goods can enter EU market with zero or decreased customs duties. Instead, the Republic of Armenia would improve its functions and accountability reports to the European Commission regarding implementation of around 27 international conventions of the United Nations, ILO and few other environmental ones. Negotiations for Armenia's participation to the EU's biggest Research and Innovation Programme HORIZON 2020 have been concluded in 2015. HORIZON 2020 provides 80 mln euro funding in the field of research and innovation<sup>150</sup>.

The sustainable volume of foreign trade signals the need to develop

---

<sup>149</sup> Assessing the impact of the Eurasian Economic Union membership on the Armenian economy in the first half of 2015, a report, 46 pages, Avag Solutions LTD, Ministry of International Economic Integration and Reforms of the Republic of Armenia, January 2016 (in Armenian)

<sup>150</sup> [http://eas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_en.htm](http://eas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_en.htm)

Armenia-EU economic relations. Thus, after Armenia's WTO membership the volume of trade with Europe and the USA increased. The share of EU countries in Armenia's trade was pretty steady during 1999-2012: 35 percent in average. The main trade partners were France, Spain, Italy, Germany, the Netherlands and Belgium. The main goods to export to the EU were copper, metallic alloy, molybdenum, ferrous metals, ores, and diamonds. Import from the EU countries in 2013 amounted to 26.4 percent, while CIS was 29.7 percent. Although in 2013 the share of EU countries in Armenia's trade balance got reduced to 33.4 percent from 48.3, it was still higher than the share of CIS (27.1 percent), securing 28.8 percent and 25.8 percent of total export and import balances respectively (according to 2014). In 2015 the export decreased by 5.8 percent, and import decreased by 32.5 percent. Despite all this, the European Union is still the largest market for Armenian export and import and has the share of 27 percent. Here, the most important consideration is that the EU is Armenia's export partner (while Armenia imports more from other countries and CIS), that is to say, it is imperative for Armenia to ensure the development of trade and economic relations with the EU for the aim of ensuring a small negative balance in our current account credit.

Cooperation with the EU is important also from investments aspect. Although Russia is the main investment partner for Armenia, however, Germany, France, United Kingdom, Switzerland, Italy, and Luxemburg have also done large-scale investments. EU countries invest in the mining industry, telecommunications, chemical industry, real property, generation of electrical energy through gas, hot air and steam and its distribution network. Other small scale EU investments include hospitality and restaurant services.

Thus, the further development of relations with the EU must be organized in the following vectors:

1. The deepening of trade relations with EU member states, taking into account the factor that the evaluation of the ratio of our country's comparative advantages (proposed by Bela Balassa) and comparison with an arbitrarily selected EU country (Germany) and Russia, shows that in export Armenia has comparative advantage over Germany however despite that several goods are still being exported to Russia in larger volumes. Also, Armenia is more specialized in few items to export to the EU (see annexes 1 and 2). Meanwhile, disregard of foreign trade conditionalities means giving up the benefits that we could get.

2. Creation of free trade zone with Georgia. This will enable Armenia to export Armenian goods to the EU countries without customs taxes thus increasing competitiveness in the EU Market.

The areas close to the border can be announced as Free Economic Zones or Special Economic Zones. This will facilitate to the development of economic and trade relations in the given region, in particular to the increase of investments by European business. We believe that there is vast opportunities for cooperation, in particular, taking into account that the modus operandi of those economic zones are regulated by the state. Georgia, as neighboring country is already cooperating with the EU in the frames of DCFTA, and Armenia as EAEU member can become bridges between those two institutions. Hence, those zones will stimulate investments both from the EU and the EAEU for the objective of organization of production and export of goods on better terms.

In addition, an agreement should be signed to certificate Armenian goods in Georgia and vice versa, so Georgian goods can enter EAEU market, and Armenian goods are welcomed in the EU market.

It is necessary to understand that integration of neighboring countries in opposing vectors is not impediment to development and cooperation, but an opportunity that can be maximally utilized through development of economic policy and its implementation.

3. Strengthening of cooperation with the EU in the sphere of innovation taking into account the motivation of the EU (HORIZON 2020). This also can be a chance for Armenia to become an innovation hub in the EAEU. The EAEU countries import from the EU mostly high tech, electrical, optical, pharmaceutical, aircraft and other spacecraft. The larges resources of Armenian is human capital, however after the collapse of the Soviet Union very little high tech research is taking place in Armenia, as well as in other EAEU countries. Therefore, with the support from the EU, Armenia can create the necessary basis and get specialized in the production of high tech goods. This will be beneficial for the EU as well, since it will enable to export those goods to the EAEU market without customs payments and with easier regulations.

4. Establishment of special body responsible for cooperation with the EU. Here the experience of Georgian Ministry for European Integration is especially worthy of attention. That will be an addition step to ensure the EU that Yerevan is determined in its objectives of cooperating with Brussels.

5. In the EAEU Armenia is having a leading role in IT sphere. Armenia has the best specialists and organizations in the EAEU. We have developed educational and practical IT sphere, and this can secure a special role for Armenia. '2016 can be a year of opportunities for Armenia in several spheres, for example, there is large demand of IT specialists in the EAEU countries whereas Armenia has a leading role here. Also, Armenia can become an important partner



especially for Russia, given its limited economic relations with Turkey. We do think that quadrupling agricultural export to Russia is realistic, in case of favorable weather conditions and logistic support from the state<sup>151</sup>.

From another aspect, if we put aside the economic factors and start discussing the political point of view, we'll see that Armenia is much closer to the EU with its political institutions. Thus, according to 'Freedom in the World 2016' annual research of 'Freedom House' (that is the standard-setting comparative assessment of global political rights and civil liberties in 195 countries and 15 related and disputed territories) Armenia was recognized as 'partly free' country with 4,5 mark steady for the last two years. All the EU countries are 'free', whereas study of the markings of the EAEU countries shows that all of them are marked as 'not free' with exception of Kyrgyzstan which is marked 'partly free'<sup>152</sup>.

Armenia is also more developed than other EAEU countries on the level of corruption perception. The 'Corruption perception Index 2016' study by Transparency International includes research of 168 countries. The CPI currently ranks countries "on a scale from 100 (very clean) to 0 (highly corrupt). Armenia is sharing the 95<sup>th</sup> rank with CPI of 38. The neighbors of Armenia have the following rankings: Turkey – 53, Georgia – 48, Azerbaijan – 119, Iran – 144, Russia – 119, Kazakhstan – 113, and Belarus – 107<sup>153</sup>.

Despite Armenian did not sign the Association Agreement, in several criteria Armenia is recording leading results among Eastern Partnership countries. Now Armenia has entered into a system that is far from those criteria and that can have devastating effect. In this case, it is of utmost importance to be proactive and come up with a foreign policy stance that was adopted by Finland after WWII. Finland had to keep balance between NATO and Warsaw pact countries. Let's call this model 'Armenisation'. Armenisation model suggests a democratic country with rule of law that corresponds to European criteria, that is close to European value system however due to circumstances has found itself in an integration group and is a connecting bridge between two blocks.

<sup>151</sup> See 2016 is a year of not only crisis but also of new opportunities, T. Manaseryan, Soyuzinfo, 01.2016, accessible at [http://www.soyuzinfo.am/arm/analytics/detail.php?ELEMENT\\_ID=1803](http://www.soyuzinfo.am/arm/analytics/detail.php?ELEMENT_ID=1803)

<sup>152</sup> See Freedom in the World 2014/ The Democratic Leadership Gap.  
<http://www.freedomhouse.org/sites/default/files/Freedom%20in%20the%20World%202014%20Booklet.pdf>

<sup>153</sup> <http://www.transparency.org/cpi2015#downloads>

## Conclusion

Armenia has considerable achievements in political dialogue of cultures, maintenance of international relations, economic development, infrastructure of governing bodies, professional experience and other attributes, also it has the largest experience in relations with both geopolitical units. The Republic of Armenia can assume the role of broker in the platform of EU-EAEU dialogue and bring the best possible results. Eventually, the heads of states declare that the EAEU is a new platform for global dialogue, thus Armenian membership to the EAEU should not close the doors of the EU. We want to underline that our country with the political, economic, infrastructural, geopolitical and state governing systems is the best positioned for the role of bridging state.

‘We have agreement that the great vision is the establishment of common economic and humanitarian space from Lisbon to Vladivostok. As an important milestone towards that vision, during Brussels summit we have proposed the objective of creation of free trade zone between the European Union and Customs Union by 2020’<sup>154</sup>.

The experience of Armenia can be used to be the solid ground for regional integration processes both at the EU and the EAEU, thus reserving a special role for our country.

For the aim of boosting the cooperation with the EU, Armenia should present the importance of this model thus showing that cooperation with Armenia and support to the reforms in our country is actually contribution in a much larger system.

## Annex

**Table 1**

### **Relative specialization coefficients of RA export according to leading commodity: year 2013<sup>155</sup>**

<b>Name of commodity/goods</b>	<b>Share in RA export (%)</b>	<b>Share in world export (%)</b>	<b>Coefficient of relative export specialization</b>
Alcoholic and non-alcoholic drinks and vinegar	14	0,19	23.8
Ores, slag and ash	20	0.12	15

<sup>154</sup> See S.Lavrov: It is necessary to form a single space from Lisbon to Vladivostok, 10.2015, Правда-tv.ru, <http://www.pravda-tv.ru/2015/10/27/184611/sergej-lavrov-neobhodimo-sformirovat-edinoe-prostranstvo-ot-lissabona-do-vladivostoka>

<sup>155</sup> Calculated by the author based on data trademap.org

Natural or artificial pearls, precious and semi-precious stones, precious metals	12.75	0,03	21
Ferrous metals	10,1	0.3	3,3
Copper and articles thereof	6.48	0.06	7
Aluminum and articles thereof	6,5	0,5	6,5
Tobacco	4.17	0,17	21.4
Aircraft, spacecraft, and parts thereof	1,5	0,85	1,8
Live animals	0,34	0 ,02	3,2
Salt, sulfur, earth, stone, limestone and cement	1.08	0.04	4.3
Fish and crayfish	2.21	0.03	3.9
Coffee, tea, mate and spices	0,4	0,28	1,4
Processed food from vegetables, fruits, nuts, and plant parts	1,0	0,31	3,2
Watches and parts	0,6	0,27	3.8
Ground vehicles	0,6	0,24	2,5
Glass and glass items	0,8	0,39	3
Vegetables and other fodder roots	1,2	0,47	2.5

**Table 2.****Trade comparative advantages of Armenia, Germany and Russia<sup>156</sup>**

<b>Name of commodity/goods</b>	<b>Armenia</b>	<b>Germany</b>	<b>Russia</b>
Live animals	0,56	-0,09	-0,98
Fish and crayfish	0,63	-0,45	0,02
Alcoholic and non-alcoholic drinks and vinegar	0,51	-0,13	-0,77
Ores, slag and ash	0,98	-0,93	0,87
Ferrous metals	0,07	-0,02	0,55
Copper and articles thereof	0,93	0,04	0,74
Other non- precious metals	0,98	-0,19	0,52
Watches and parts	0,25	-0,09	-0,95

<sup>156</sup> Calculated by the author based on data trademap.org and armstat.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԵՄ ՆՈՐ ԳԼՈՐԱԼ ՈԱԶՄՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

## ԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ, ԱՇՈՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ ԹԵՎԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ<sup>157</sup>

### Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** ԵՄ-ի ներսում նկատվող խմորումները, Եվրոակապիտի աճը, Brexit-ը և այդ ալիքի հնարավոր տարածումը, գաղթականների անկանոն հոսքը դեպի ԵՄ երկրներ, Արևելյան հարևանության գոտում նախապես հոչակած քաղաքական գծից շեղվելը, Ուկրաինայում ընթացող պատերազմը, պաշտոնական Մոսկվայի հետ հարաբերությունների սրումը, ահաբեկչությունների շքերթն ու գլոբալ անվտանգության ներկայիս սպառնալիքները ԵՄ-ին կանգնեցրել են միանգամայն նոր ներքաղաքական ու արտաքին քաղաքական մարտահրավերների առջև: Դրանց դիմակայելու և միության հետագա գործունեությունը չվտանգելու համար անհրաժեշտ էր նոր քաղաքական կուրս, որի հիմնադրություններն իրենց ամփոփումը գտան 2016 թ. հունիսին հրապարակված ԵՄ նոր գլոբալ ռազմավարության մեջ: Այս փաստաթուղթը մեծ կարևորություն է ներկայացնում ոչ միայն միության անդամ երկրների, այլև ԵՄ հարևանության գոտու երկրների համար: Փաստաթղթի ուսումնասիրությունը և հիմնական քաղաքական շեշտադրումների վրա ուշադրություն դարձնելը խիստ կարևոր է Հայաստանի համար, որը ԵՄ-ի հետ հարաբերությունների վերակառուցման ու նոր առաջնորդող փաստաթուղթ ստորագրելու նախաշեմին է: Այս տեսանկյունից մեր ընտրած հետազոտության թեման չափազանց կարևոր է Հայաստանի համար և գիտական ոլորտում կարող է հանդիսանալ ԵՄ նոր գլոբալ ռազմավարության ուսումնասիրության նախադեպը՝ մեծացնելով աշխատանքի գիտական արժեքը:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Աշխատանքում օգտագործել ենք թեմային ուղղակիորեն կամ մասնակիորեն առնչվող մի շարք հրապարակումներ՝ հոդվածներ, պաշտոնական ամփոփագրեր և փաստաթղթեր, ինչպես նաև հիմնախնդրի ուսումնասիրությամբ զբաղվող տարբեր հեղինակների մի շարք ուսումնասիրություններ: Փորձել ենք նաև օգտագործել առավելապես սկզբնաղբյուր (առաջնային աղբյուր) պաշտո-

<sup>157</sup> Թևան Պողոսյան, Աժ պատգամավոր, 2000-2012 թթ. Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն:

նական փաստաթղթեր: Մասնավորապես ամբողջ աշխատանքը ԵՄ նոր գլոբալ ռազմավարության վերլուծություն է, որն էլ, կարելի է ասել, ամենից հաճախ կիրառված առաջնային աղբյուրն է<sup>158</sup>: Հիմք ենք ընդունել նաև Եվրոպական անվտանգության, Եվրոպական հարևանության վերափոխված քաղաքականության, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունների օգտագործումը:

Քանի որ թեման բոլորովին նոր է միջազգային գրականության մեջ, առայժմ չկան գրքեր և ծավալուն աշխատություններ՝ նվիրված Նոր ռազմավարության վերլուծությանը, օգտվել ենք առաջատար վերլուծական կենտրոնների մասնագետների վերլուծական հոդվածներից: Այս թեմային, ըստ մեր կատարած ուսումնասիրության, ամենից շատ անդրադարձել է «Քարնեգի Եվրոպա» վերլուծական կենտրոնը, որի հրապարակումներին բազմիցս հղում ենք տվել<sup>159</sup>: Մինչդեռ հայ մասնագիտական շրջանակներում թեման բոլորովին նոր է ու պակաս ուսումնասիրված:

**Հետազոտության նպատակը և խնդիրները, հիպոթեզը:** Սույն հետազոտության նպատակն է բացահայտել Եվրոպական նոր գլոբալ ռազմավարության հիմնական շեշտադրումները և հարևանության քաղաքականության գոտու, մասնավորապես Հայաստանի հետ հարաբերություններում դրանց ազդեցությունը:

Այդ նպատակին հասնելու համար սահմանել ենք հետևյալ խնդիրները՝

Տալ ԵՄ-ի հետ տարվող ՀՀ արտաքին քաղաքականության վերջին տարիների պատճառահետևանքային համառոտ բնութագիրը:

Փորձել ԵՄ նոր գլոբալ ռազմավարությունը ուսումնասիրել ու գնահատել ՀՀ ազգային շահերի տեսանկյունից:

• Արժևորել և համեմատել Եվրոպական անվտանգության ռազմավարության և ԵՄ նոր գլոբալ ռազմավարության հիմնական նմանությունները, տարբերությունները, արտաքին քաղաքականության հայեցակարգում կատարված փոփոխությունները:

• Վերհանել և գնահատել նոր գլոբալ ռազմավարության մեջ հարևանության քաղաքականության գոտուն վերաբերող հիմնական դրույթները և դրանց հնարավոր ազդեցությունը ԵՄ հարևանության քաղաքականության վրա: Աշխատանքում առաջ ենք քաշել հետևյալ հիպոթեզը՝ Եվրոպական նոր գլոբալ ռազմավարության ներքո ԵՄ-ն չի հրաժարվի հարևանության քաղաքականությունից, այլ հարևանների հետ համագործակցությունը կլինի ավելի պրագմատիկ և իրատեսական:

<sup>158</sup> A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, 29 June 2016.

<http://www.iss.europa.eu/publications/detail/article/a-global-strategy-for-the-european-unions-foreign-and-security-policy/>

<sup>159</sup> <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=64003>

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Ելնելով առաջադրված նպատակներից ու խնդիրներից՝ հետազոտության օբյեկտ ենք սահմանել ԵՄ նոր գլոբալ ռազմավարությունը և դրան համապատասխան իրականացվող քաղաքականությունը, իսկ առարկան՝ այդ քաղաքականության հնարավոր ազդեցությունը ՀՀ – ԵՄ հարաբերությունների վրա:

**Հետազոտության մեթոդաբանական հենքը:** Աշխատանքի համար տեսական և մեթոդական հիմք են ժամանակակից քաղաքագիտության հիմնարար մեթոդները և ընդհանուր գիտական մեթոդները: Աշխատանքը հիմնականում գրվել է հետազոտության տեսական – հայեցակարգային մոտեցումների (համեմատական, համակարգային, գործառութային, գլոբալիստիկայի, ժամանակաշրջայնացման մեթոդ – մոտեցումներ), էմպիրիկ մեթոդների (փաստաթղթերի վերլուծություն, դիսկուրս – վերլուծություն, բովանդակային վերլուծություն, հերմենևտիկա) և ընդհանուր տրամաբանական մեթոդների (վերլուծություն, ինդուկցիա, մոդելավորում, դասակարգում) հիման վրա:

**Հիմնական եզրահանգումներ:** Ուսումնասիրելով և գնահատելով փաստաթղթի հիմնական դրույթները, դրանց առնչությունը հարևանության գոտու երկրների, մասնավորապես Հայաստանին՝ եկել ենք հետևյալ եզրակացության.

- ՀՀ արտաքին քաղաքական և ազգային անվտանգության ռազմավարությունները կարիք ունեն վերանայման՝ համապատասխանելու համար համաշխարհային զարգացումներին և հանրապետության անվտանգությանը սպառնացող ներկայիս մարտահրավերներին.
- Հայաստանը ԵՄ–ի հետ հարաբերություններում պետք է կարողանա բարձրացնել շահավետության գործակիցը.
- ՀՀ–ն պետք է նախաձեռնողականություն ցուցաբերի երկրում՝ խթանելու ներքաղաքական բարեփոխումներին ուղղված ԵՄ ծրագրերի արդյունավետ իրականացումը.
- Արցախյան հակամարտությունը՝ որպես տարածաշրջանային հակամարտություն, պետք է պահել ԵՄ–ի ուշադրության ծիրում.
- ԵՄ–ն ներքաղաքական խնդիրների լուծումը և անվտանգության ապահովումը կապում է արտաքին քաղաքական մարտահրավերներին համարժեք պատասխան տալու հետ.
- ԵՄ–ն նորմատիվային արտաքին քաղաքականությունից անցում է կատարում ռեալպոլիտիկ քաղաքականության.
- ԵՄ–ն արտաքին քաղաքական զինանոցում փափուկ ուժի կիրառումից բացի զարկ է տալու նաև խելացի ուժին.
- ԵՄ քաղաքականությունը հարևանության գոտում խարսխված է լինելու ոչ միայն արժեքների, այլ նաև շահերի վրա:

## Հայաստանը դիվանագիտական խաչմերուկներում

Հայաստանի համագործակցությունը Եվրոպական միության հետ մշտապես եղել է ՀՀ արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից: Այդ համագործակցության հիմնական բաղադրատարրերն են երկկողմ քաղաքական հարաբերությունները, առևտրատնտեսական կապերը, ինչպես նաև ՀՀ-ում ԵՄ աջակցությամբ իրականացվող ժողովրդավարական ինստիտուտների կայացման, պետական համակարգի բարեփոխման ու կատարելագործման գործընթացները: Հաշվի առնելով ԵՄ-ի հետ ՀՀ ներկայիս ունեցած խոր և համապարփակ համագործակցության միտումները՝ կարելի է պնդել, որ ՀՀ տնտեսական ու քաղաքական զարգացումն առանց Եվրոպական կառույցների հետ համագործակցության ահնարին է: Եվրաինտեգրման համատեքստում շատ կարևոր է լինել ավելի նախաձեռնողական, քանի որ աշխատանքների հնարավոր պասիվացումը կարող է բերել մի շարք անցանկալի երևույթների, այդ թվում՝ ՀՀ ներքին բարեփոխումների կուրսի դանդաղեցման, ինչն անշուշտ մեծ հարված կհասցնի հայաստանյան քաղաքական մշակույթի ձևավորմանը:

ՀՀ-ն մշտապես փորձել է հավասարակշիռ արտաքին քաղաքականություն վարել՝ հնարավորինս համադրելով ինտեգրացիոն տարբեր ուղղություններ: Որքանով է դա հաջողվել, դժվար է գնահատականներ տալ: Հայկական դիվանագիտության հեղինակությունը վնասեց հատկապես Մաքսային միությանը միանալու նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը, ինչը զրոյացրեց 2010-ից ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաների հետ բանակցվող ասոցացման համաձայնագրի ստորագրման ողջ գործընթացը: 2013 թ. սեպտեմբերի 3-ի արտաքին քաղաքական շրջադարձը, մասամբ նաև դրան հաջորդած ուկրաինական քաղաքական ճգնաժամի հայտնի դեպքերը որոշակի ժամանակով դանդաղեցրին ՀՀ Եվրաինտեգրման գործընթացը:

Պետք է հասկանալ, որ այս անակնկալ որոշումը պայմանավորված չէր բացառապես տնտեսական գործոններով, քանի որ Հայաստանի առևտրային ամենախոշոր գործընկերը եղել և մնում է ԵՄ-ն: Փոխարենը նման որոշումը կրում է ռազմական և էներգետիկ անվտանգության հնարավոր անուղղակի սպառնալիքներին տրված բնական արձագանքի բնույթ, ինչը, բարեբախտաբար, լավ են հասկանում Եվրոպացի գործընկերները: Չէ որ Սարգսյանը չէր կարող մերժել Պուտինի առաջարկը: Թվում է, թե կարելի է եզրակացնել, որ զիջումների գնալու միջոցով Հայաստանը փորձեց պաշտպանել իր առաջնային շահերն ու ամենից կարևորը՝ ԼՂՀ տարածքային ամբողջականությունը, ինչը չի կարելի պնդել Ուկրաինայի պարագայում: Մյուս կողմից՝ այս պնդումները կառուցված էին կարճաժամկետ հաշվարկ-

ների վրա, քանի որ քաղաքական մակարդակում ԼՂՀ տարածքային ամբողջականության, ինչպես նաև հնարավոր պատերազմի ելքը զսպելու երաշխիքներ չտրվեցին պաշտոնական Մոսկվայի կողմից: Սա մեծապես ապացուցվեց նաև ԼՂ բնակչության նկատմամբ ադրբեջանական վերջին ագրեսիվ գործողությունների ժամանակ, որոնց ընթացքում թե՛ ՀԱՊԿ և թե՛ պաշտոնական Մոսկվայի կողմից ՀՀ անվտանգությանը սատար կանգնելու որևէ երաշխիքներ չտրվեցին: Ճիշտ է, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում ՀՀ անդամակցությունը որոշակի ռազմական և քաղաքական անվտանգություն է ապահովում, սակայն ԼՂ հակամարտության գոտում այն զսպիչի դերակատարում այդպես էլ չունի: Սեփական տարածքում անվտանգության պահպանման քողի տակ օտարերկրյա ռազմաբազաները հյուրընկալող Հայաստանը շարունակում է արցախյան փխրուն հրադադարի պահպանման հարցում ապավինել միմիայն իր բանակի ներուժին: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կենդանի ապացույցն է այն փաստի, որ տարածաշրջանային անվտանգությունը շարունակում է մնալ որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական հիմնական առաջնահերթությունը:

Արցախ-ադրբեջանական հակամարտության շուրջ վերջին զարգացումները սկետեցին ողջ միջազգային հանրության ուշադրությունը: Խաղաղության կոչերով հանդես եկան ԵՄ արտաքին քաղաքականության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, ինչպես նաև ՌԴ ԱԳՆ Սերգեյ Լավրովն ու իր ամերիկացի գործընկեր պետքարտուղար Ջոն Քերին<sup>160</sup>: Եվ դա բնական է, չէ՞ որ Արցախյան կոնֆլիկտը պարզապես հակամարտություն չէ, այլ պոտենցիալ սպառնալիք Կասպյան ավազանի նավթի և գազի հանքաարդյունաբերությանը, ինչը միջազգային ակտորների ուշադրության կենտրոնում է: Նույնիսկ Հայաստանի ռազմավարական գործընկեր Ռուսաստանը, ով Արցախյան հակամարտության կողմերի հետ վարում է երկակի խաղ՝ զինելով երկու կողմերին էլ, հանդես եկավ ռազմական գործողություններն անմիջապես դադարեցնելու կոչով: Լիովին այլ կերպ արձագանքեց հարևանների հետ զրո խնդիր ունեցող Թուրքիան, որի նախագահը հրապարակավ երդվեց մինչև վերջ աջակցել դաշնակից Ադրբեջանին՝ Հայաստանի դեմ պայքարում<sup>161</sup>:

<sup>160</sup> Ստաուտս քվոն անընդունելի է: Մոգերինին կոչ է անում ԼՂ շուրջ առկա իրավիճակը վերածել խաղաղության: <https://armenpress.am/eng/news/843264/status-qua-is-unacceptable-mogherini-urges-to-transmute-situation-in-nagorno-karabakh-into-opportunity.html>

Բան Կի Մունը կոչ է անում դադարեցնել կոիվը: [http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=53601#\\_V=d62xTF7FI](http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=53601#_V=d62xTF7FI)

Լավրովն ու Քերին քննարկել են ԼՂ շուրջ առկա իրավիճակը: Տես <http://vz.ru/news/2016/4/4/803464.html>

<sup>161</sup> Էրդողանը խոստանում է սատարել Ադրբեջանին ԼՂ հակամարտությունում: Տես <http://>



Իսկ ինչ էր տալու Հայաստանին բացառապես պրոտեկտորատական արտաքին քաղաքական կողմնորոշումը, եթե Հայաստանի անկախության 25 տարիների ընթացքում ԵՄ-ն այդպես էլ ջանքեր չգործադրեց քաղաքական հարթակում համապատասխան լծակների կիրառմամբ կարգի հրավիրելու Ադրբեջանին, ինչպես նաև ստիպելու Թուրքիային դադարեցնել ՀՀ շրջափակումը: Այս ամենի արդյունքում բնական է, որ հայկական իշխանությունների մոտ զգալի չափով պակասեց ՀՀ անվտանգությունը ԵՄ-ի հետ կապելու հնարավոր տեսլականը: Սա բացատրվում է նաև մինչ այս 2008 թվականին տեղի ունեցած ռուս-վրացական հնգօրյա պատերազմի դեպքերով, երբ ԵՄ-ն ռազմական տեսանկյունից սատար չկանգնեց Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանմանը՝ Կովկասյան տարածաշրջանում զգալիորեն Ռուսաստանին զիջելով իր դիրքերը:

Ստեղծված իրավիճակում Երևանին մնում էր մեկ ելք՝ չլրկնել ուկրաինական սցենարը, որը հայ ժողովրդի համար հղի կլիներ տարածքային կորուստներով: Առանց ասոցացման համաձայնագրի ազատ առևտրի բաղադրիչի ինչպիսի՞ն կարող էր լինել ՀՀ-ԵՄ քաղաքական համաձայնագիրը: Արդյո՞ք այն կունենար հայ ժողովրդի անվտանգությունն ապահովող քաղաքական և ռազմական բաղադրիչներ: Այս հարցերի պատասխանների բացակայությունն ու անորոշ ապագան ստիպեցին Հայաստանին էլ ավելի ինտեգրվելու Ռուսաստանի հետ՝ որպես իր անվտանգության հիմնական երաշխավորի: Նման իրավիճակին անպատրաստությունը լրացուցիչ հող պետք է նախապատրաստած լինի ԵՄ-ի համար իր նոր գլոբալ ռազմավարությունում ռազմական աջակցության, կոշտ կամ խելացի ուժի կիրառման, ճկուն քաղաքականության դրսևորման բաղադրիչների ներդրման համար:

Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությունը և հետագայում էլ Եվրասիական տնտեսական միության անդամ դառնալը ռուս-հայկական դարավոր գործակցության համատեքստում ցույց են տալիս, թե որքան կարող է վնասվել Հայաստանի միջազգային հեղինակությունը: Արդյունքում տևական ժամանակով սառեցվեց ՀՀ-ի հետ ԵՄ համագործակցության ողջ ներուժը: Բացի այդ՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայում Ղրիմի վերաբերյալ քվեարկության ժամանակ Հայաստանը հայտնվեց մի շարք ավտորիտար երկրների շարքում՝ սպասարկելով ՌԴ արտաքին քաղաքական շահերը<sup>162</sup>: Հայաստանին չի հաջողվում համոզել Ռուսաստանին՝ զսպելու իր քաղաքական մենաշնորհի բացառիկությունը, երբ խաղատախտակին են դրված հայ ժողովրդի համար կենսական ու ազգային շահեր: Նման դեպքերը գալիս են ապացուցելու այն պարզ իրողու-

[www.haaretz.com/middle-east-news/1.712357](http://www.haaretz.com/middle-east-news/1.712357)

<sup>162</sup> Հայաստանը սատարում է ՌԴ-ին Ուկրաինայի շուրջ ՄԱԿ քվեարկության ժամանակ: <http://www.azatutyun.am/a/25312111.html>

թյունը, որ երբեմն արտաքին քաղաքականությունը ուղեկցվում է որոշակի դոկտրինների կամ հայեցակարգերի բացակայությամբ: ՀՀ թույլ տված անդառնալի դիվանագիտական սխալները ոչ միայն պակասեցնում են արտաքին ճակատում մանևրելու հնարավորությունները, այլև լուրջ հարվածի տակ են դնում Հայաստանի ունեցած միջազգային վարկն ու հեղինակությունը: Նման հարևանություն ունեցող երկրի շահերը սպասարկելու համար պետք է ունենալ մանրակրկիտ կազմած արտաքին քաղաքական դոկտրին, այլ ոչ թե իրավիճակային հայեցակարգ:

Մյուս կողմից՝ չպետք է անտեսել այն կարևորագույն հանգամանքը, որ արտաքին քաղաքականությունը ներքինի արտացոլումն է: Իսկ այսօր բազում խնդիրներ կուտակած Հայաստանի Հանրապետությունը թերահունում է չեզոքացնել իր պետականությանը ապառնացող արտաքին լրջագույն վտանգները: Դիվանագիտական ողջ ռեսուրսներն այսօր կենտրոնացված են Ադրբեյջանի հակահայկական նախաձեռնությունների չեզոքացման կամ ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի վրա: Եվ զարմանալի չէ այն, որ մի շարք փորձագետներ պաշտպանում են այն տեսակետը, համաձայն որի՝ ՀՀ դիվանագիտության ամենահաջողված նախաձեռնությունը ցայսօր մնում է կոմպլեմենտարիզմի քաղաքականությունը, որի սաղմնային դրսևորումներից էր 1991–92 թթ. ՀՀ օգնությունների ստացման դիվերսիֆիկացիան, երբ ռազմական օգնությունը գալիս էր Ռուսաստանից, պետականակերտման համար գումար՝ ԱՄՆ–ից, պարեն ու հումանիտար օգնություն բնակչության համար՝ Եվրոպացիներից, իսկ Ադրբեյջանի դեմ մարտնչող բանակի համար վառելիք՝ Իրանից<sup>163</sup>:

2013 թ. սեպտեմբերյան անակնկալ որոշումը Հայաստանի արտաքին քաղաքականության տարիների բազմավեկտորայնությանը (կոմպլեմենտարիզմին) տրված ՌԴ անհանդուրժողական վերաբերմունքն էր: Պուտինյան կամ / կամ սկզբունքը լիովին խարխլեց միջազգային երկու հարթակներում Հայաստանի ինտեգրման բոլոր հնարավորությունները, որոնք այս և մի շարք այլ հանգամանքների բերումով դարձան իրարամերժ: Ռուսական մենաշնորհի բացառիկությունը զրկեց Հայաստանին իր արտաքին քաղաքականության ամենաարդյունավետ գործիքակազմից, ինչպիսին էր կոմպլեմենտարիզմի քաղաքականությունը: Փոխարենը այն դրեց նոր հաջողությունների սկիզբը ՌԴ–ի կողմից ստրատեգիական խորք համարվող տարածաշրջանում, ինչը նախկին վարչապետ Անդրեյ Կոզիրյովն այլ կերպ անվանում է Մերձավոր հարևանություն<sup>164</sup>:

<sup>163</sup> Հայաստանի արտաքին քաղաքականության մի քանի հայեցակարգային հիմքեր: Տե՛ս [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2227](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2227)

<sup>164</sup> Մերձավոր հարևանություն: Տե՛ս <http://www.nytimes.com/1994/05/22/magazine/on-language-the-near-abroad.html>

Եվ թվում է, թե ճիշտ կլինի այն պնդումը, որ ԵՄ ներկայիս Արևելյան ճգնաժամը սկսվեց հենց Հայաստանում, ինչին համարժեք պատրաստ չեղան պատասխանել Եվրոպական իշխանությունները: Հայաստանը դարձավ փորձագիտական խաղատախտակ Մաքսային (հետագայում արդեն՝ Եվրասիական միության) և Եվրոպական միության միջև: Սակայն ի սկզբանե պարզ էր, որ այդ երկու միությունների իրական կոմպլսնձորը Ուկրաինան էր, իսկ Հայաստանը պարզապես խուսափեց դառնալ աշխարհաքաղաքական հակասությունների կիզակետը:

Այսօր, ՀՀ համար ստեղծվել է բացառիկ հնարավորություն իր արտաքին քաղաքական դոկտրինը դարձնելու առավել ճկուն ԵՄ գլոբալ նոր ռազմավարության համատեքստում: Դրանով հնարավորության նոր դռներ կբացվեն վերադառնալու արտաքին քաղաքականության առավել արդյունավետ բազմավեկտորայնությանը, բարձրացնելու ժողովրդի ինքնագիտակցությունը և առաջնորդելու իշխանություններին՝ վերականգնելու ՀՀ ինքնիշխանությունն ու միջազգային հեղինակությունը: Իր հերթին, անհրաժեշտ է, որպեսզի Եվրոպական միությունը գիտակցի, որ իր արևելյան ճգնաժամը սկսվել է հենց Հայաստանում, և որպեսզի ԵՄ գլոբալ նոր ռազմավարությունը չձախողի արտաքին քաղաքականության մարտահրավերներին դիմակայելու գերագույն առաջադրանքը, այն պետք է լինի առավել ճկուն՝ հիմնված քաղաքական հարթակներում կոշտ ուժի և փափուկ ուժի կիրառման վրա՝ նպատակ ունենալով ընդլայնելու բարեփոխումների և ֆինանսական աջակցությունների տրամադրման աշխարհագրությունը: Այլ կերպ ասած՝ ԵՄ-ն պետք է կիրառի կոշտ և փափուկ ուժերի կոմբինացված խելացի ուժի տարբերակը: Սա ենթադրում է նաև ԵՄ ակտիվացում Արցախի շուրջ խաղաղության պահպանման հարցում, քանի որ խոսքը թեկուզև չճանաչված, այնուամենայնիվ դեմոկրատական արժեքների վրա հիմնված Արցախի պետականության ամրապնդման ու նրա ժողովրդի ինքնորոշման իրավունքի ապահովման մասին է: Քաղաքացիական հարթակներում ԵՄ-ն կարիք ունի մեծացնելու իր՝ առանց այն էլ հսկայական ներգրավվածությունը՝ նպատակ ունենալով էլ ավելի ակտիվացնելու ժողովուրդների միջև փոխվստահության և երկխոսության մթնոլորտը: ԵՄ-ի ակտիվ մասնակցությունը տարածաշրջանում կնվազեցնի ՌԴ քաղաքական բացառիկության մենաշնորհը: Ահա նաև այսպիսի խնդիրների լուծմանը պետք է ուղղված լինի ԵՄ գլոբալ նոր ռազմավարությունը՝ օգնելու փոքր ու խոցելի երկրներին՝ ընտրելու իրենց եվրոպական ապագան:

## ԵՄ նոր գլոբալ ռազմավարությունը և եվրոպական հարևանության գոտին

2016 թ. հունիսի 28-ին՝ «Brexit»-ից ընդամենը օրեր անց և ՆԱՏՕ-ի Կարշավյան գագաթաժողովի նախօրեին, ԵՄ արտաքին ու անվտանգության քաղաքականության բարձրագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոզերինին պաշտոնապես ներկայացրեց ԵՄ նոր գլոբալ ռազմավարությունը (ԵԳՌ), որն այժմ համարվում է ԵՄ-ի անվտանգության ու արտաքին քաղաքականության գլխավոր փաստաթուղթը<sup>165</sup>: Փաստաթղթի մշակման աշխատանքները սկսվել են դեռևս 2013 թ. դեկտեմբերից և, բնականաբար, այն յուրահատուկ մի ներկայանակ է, որն իր մեջ ներառում է բոլոր սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնց հետ ԵՄ-ն բախվել է վերջին շրջանում: Փաստաթղթի մշակման մեկնարկը համընկավ ուկրաինական ճգնաժամի, Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացման ու պատժամիջոցների կիրառման ժամանակահատվածի հետ: Այս ընթացքում սկսվեց սիրիական պատերազմի հետևանքով դեպի ԵՄ ներգաղթյալների հսկայական ու անկառավարելի հոսքը, ինչը շարունակվում է նաև հիմա՝ լրացուցիչ բարդություններ ստեղծելով ԵՄ գերակշիռ անդամ երկրների ներքաղաքական կյանքում: Պատկերն ամբողջական է դարձնում ահաբեկչությունների շքերթը, որը ցնցեց ԵՄ անվտանգային միջավայրը: Նոր փաստաթղթում այս բոլոր խնդիրների լուծումներին առանձնակի տեղ է հատկացված:

2003 թ. նախկին գլխավոր հանձնակատար Խավիեր Սոլանայի պատրաստած Եվրոպական անվտանգության ռազմավարության (այսուհետ՝ ԵԱՌ) նախաբանում նշվում էր. «Եվրոպան երբեք չի եղել այսքան ծաղկուն, այսքան անվտանգ և այսքան ազատ: 20-րդ դարի առաջին կեսի բռնությունը իր տեղը զիջել է եվրոպական պատմության մեջ աննախադեպ խաղաղության և կայունության ժամանակահատվածին»<sup>166</sup>: Այսօր նման միտքը միանգամայն հեգնական է հնչում:

Չնայած երկու փաստաթղթերն էլ ներկայացնում են ԵՄ-ի արտաքին և անվտանգության քաղաքականության հիմնական ուղիվածքը, սակայն միանգամայն տարբեր հայեցակարգեր են. փոխվել է անվտանգության միջավայրը, սպառնալիքներն ու առաջնահերթությունները: Փորձենք զուգահեռներ անցկացնել երկու փաստաթղթերի միջև ու համեմատական վերլուծության միջոցով պարզել, թե որոնք են երկու փաստաթղթերի առաջ-

<sup>165</sup> A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, 29 June, 2016.

<http://www.iss.europa.eu/publications/detail/article/a-global-strategy-for-the-european-unions-foreign-and-security-policy/>

<sup>166</sup> A secure Europe in a better world, European security strategy, 12 December 2003, Brussels, p.1, <http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf>

նահերթությունների տարբերությունները: Եվրոպական գլոբալ ռազմավարությունն ավելի երկար է, քան ԵԱՌ–ը, սակայն ԵԱՌ–ում շահեր բառը հանդիպում է 36 անգամ (նախաբան և ամբողջական տեքստ), իսկ վերջին փաստաթղթում՝ ընդամենը երեք անգամ: Սա ցույց է տալիս փաստաթղթերի տարբեր ուղղվածությունները: Վերջին փաստաթղթում 30 անգամ հիշատակվում է ԵՄ քաղաքացիներ և նրանց շահեր, անվտանգություն ու կարիքներ եզրը, մինչդեռ նախորդ փաստաթղթում՝ ընդամենը երեք անգամ: Փաստաթղթի ուսումնասիրությունը, որին հետագայում էլ կանդադարեցնանք, թույլ է տալիս եզրակացնել, որ ԵԳՌ–ն ունի ներքին ուղղվածություն, և այն նախնառաջ փորձում է խոսել սեփական քաղաքացիների հետ և արձագանքել նրանց պահանջներին:

Ընդամենը 14–էջանոց փաստաթղթում՝ ԵԱՌ–ում, առանձնացվում էր հինգ հիմնական մարտահրավեր, որոնց արժանվույնս պատասխան տալով՝ ԵՄ–ն կկարողանար ստեղծել ավելի անվտանգ աշխարհ և Եվրոպա: Պատահական չէ, որ փաստաթուղթը կոչվում է «Անվտանգ Եվրոպա ավելի լավ աշխարհում»: Ըստ ռազմավարության՝ ԵՄ–ի, ինչպես նաև ամբողջ աշխարհի համար գլոբալ սպառնալիք են համաաշխարհային ահաբեկչությունը, զանգվածային ռջնչացման զենքի տարածումը, տարածաշրջանային հակամարտությունները, կազմակերպված հանցավորությունը, պետությունների քաղաքական անկարողությունը և դրանց ինստիտուցիոնալ-գործառնական կազմալուծումը («ձախողված պետություններ»)՝<sup>167</sup>: Նշված հիմնախնդիրների լուծումն առաջարկվում է հետևյալ ձևաչափով.

- ԵՄ–ի անմիջական հարևան երկրներում կայուն զարգացման և արդյունավետ պետական կառավարման համար պայմանների ստեղծում:

- Համաաշխարհային կարգի պահպանում՝ հիմնված արդյունավետ համագործակցության բազմակողմ մեխանիզմների վրա:

- Պայքար հին և նոր սպառնալիքների դեմ և բոլոր տեսակի հակամարտությունների կանխարգելում<sup>168</sup>:

50–ից ավելի էջ ունեցող նոր փաստաթուղթը կենտրոնանում է ԵՄ–ի հինգ գլխավոր առաջնահերթությունների վրա: Դրանք են՝

- ԵՄ–ի սեփական կամ ներքին անվտանգություն:

- Արևելյան և Հարավային հարևանության գոտում պետական ու հասարակական ճկունություն:

- Հակամարտությունների և ճգնաժամերի նկատմամբ միասնական մոտեցում:

<sup>167</sup> A secure Europe in a better world, European security strategy, 12 December 2003, Brussels, p. 6–7, <http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf>

<sup>168</sup> Տես նույն տեղում, էջ 8:

- Համագործակցության վրա հիմնված տարածաշրջանային կարգ կամ կայուն տարածաշրջանային կարգ:
- 21-րդ դարի արդյունավետ գլոբալ կառավարում<sup>169</sup>:

Այսինքն, եթե հետևենք ռազմավարության ողնաշարին, ստացվում է, որ ԵՄ-ն սկսում է իր ներքին խնդիրների լուծումը, անվտանգության ապահովումը, ամրապնդում է հարևանության գոտին, ճկուն գործակցության հնարավորություններ է ստեղծում նաև հեռավոր հարևանների հետ, անցում է կատարում միասնական արտաքին քաղաքականությանը: Վերջինս ենթադրում է համատեղ պայքար գլոբալ մարտահրավերների ու ճգնաժամերի դեմ, ինչը մինչև հիմա ԵՄ թույլ կետերից էր:

Եվրոպական նոր ռազմավարությունն արդեն իսկ շարժել է բազմաթիվ վերլուծաբանների և քաղաքական գործիչների հետաքրքրությունը, ովքեր զերծ չեն մնացել համապատասխան գնահատականներ տալուց: Անդրադառնալով նոր ռազմավարությանը՝ Խ. Սոլանան նշում է. «Գլոբալ ռազմավարությունը սահմանում է հստակ նպատակներ, հաշվի է առնում անցյալի սխալները, և այն խորապես խարսխված է ԵՄ-ի այսօրվա իրականության վրա: Այն կոչ է անում ավելի միացյալ և պատասխանատու ԵՄ-ի, որը միակ պատասխանն է եվրոսկեպտիզմի հաղթահարմանը<sup>170</sup>:

Իսկ ահա «Քարնեգի Եվրոպա»-ի վերլուծաբան Շտեֆայն Լեհնը, ով մասնագիտացված է ԵՄ-ի հետլիսաբոնյան արտաքին քաղաքականության ու ԵՄ-ի անդամ երկրների հարաբերությունների ուսումնասիրության մեջ, շեշտում է. «Նոր ռազմավարության իրական ուժը դրա համակողմանի բնույթն է: Այն ճանաչում է, որ ԵՄ-ն ներքին և արտաքին քաղաքականությունների հարցերում պետք է ավելի միասնական դառնա: Այն մտադրություն ունի ԵՄ-ի զարգացման քաղաքականությունն ավելի ճկուն և փոխկապակցված դարձնելու մեր ռազմավարական առաջնահերթությունների հետ»<sup>171</sup>:

Անդրադառնանք արտաքին քաղաքականության ոլորտում կատարված նորամուծություններին, որոնք էլ կդառնան նոր ռազմավարության առաջնորդող սկզբունքները: ԵՄ-ն իր առաջիկա տարիների արտաքին քաղաքականության սկզբունք է հռչակել պրագմատիկությունը: Առաջին անգամ

<sup>169</sup> StEU Shared Vision, Common Action: A Stronger Europe, A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, June 2016, p. 9, [https://eeas.europa.eu/top\\_stories/pdf/eugs\\_review\\_web.pdf](https://eeas.europa.eu/top_stories/pdf/eugs_review_web.pdf)

<sup>170</sup> J. Solana, The EU's Bold New Strategy, Jul 21, 2016 <https://www.project-syndicate.org/commentary/european-global-strategy-foreign-security-policy-by-javier-solana-2016-07>

<sup>171</sup> S. Lehne, The EU Global Strategy, a Triumph of Hope Over Experience, Carnegie Europe, July 4 2016, <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=64003>

ԵՄ–ն իր փաստաթղթերում հղում է կատարում շահերին՝ նշելով, որ ԵՄ անդամ երկրների շահերը և արժեքները պետք է քայլեն միասին՝ ձեռք ձեռքի տված: «Աշխարհում մեր արժեքները տարածելու շահ ունենք: Միևնույն ժամանակ մեր հիմնարար արժեքները ներդրված են մեր շահերի մեջ»<sup>172</sup>:

Ինչպես նշում է իսպանական Կանխատեսումների և վերլուծությունների գրասենյակի վերլուծաբան Ռիկարդո Լոպես Արանդան, «Սկզբունքային պրագմատիկության հայեցակարգը, համաձայն որի՝ ԵՄ–ի գործողությունների հիմքում պետք է ընկած լինեն ԵՄ–ի և նրա քաղաքացիների շահերը, այլ ոչ թե ԵՄ–ի՝ ավելի լավ աշխարհի ուղղությամբ գնալու իդեալիստական հավակնությունների շրջանակը: Հայեցակարգային տեսանկյունից այս մոտեցումը տարբերվում է ԵՄ–ի՝ որպես նորմատիվ ուժ գաղափարից, որի գործողությունների հիմքում ընկած պետք է լինեն ավելի շատ արժեքները, քան շահերը, սակայն վերջնական նպատակը, գոնե տեսական մակարդակում, պետք է նույնը լինի՝ ավելի լավ աշխարհի կառուցելը»<sup>173</sup>:

«Քարնեգի Եվրոպա»–ի տնօրեն Ժան Տեխաուն, անդրադառնալով պրագմատիկության սկզբունքային դրսևորումներին, նշում է. «Փաստաթուղթն ապշեցնում է կրճատված և ավելացված հավակնությունների միջև լավ հավասարակշռությամբ: Այն հիմնվում է սկզբունքային պրագմատիկության վրա՝ հիմքում դնելով ռեալիզմը, որն այդքան անհրաժեշտ է ԵՄ–ին»<sup>174</sup>:

Մեկ այլ վերլուծաբան Սվեն Բիսքոփն, անդրադառնալով վերոնշյալ դրույթին, նշում է, որ ԵՄ–ն արտաքին քաղաքականության ոլորտում վերադարձել է ռեալպոլիտիկ սկզբունքին՝ միաժամանակ շեշտելով, որ ժողովրդավարության վրա ավելի քիչ շեշտադրում կա: Այս կապակցությամբ վերջինս նշում է. «Եվրոպական հարևանության և դրան հարակից շրջանում ժողովրդավարությունը այլևս պարտադիր պայման չէ: ԵՄ–ն կաջակցի ժողովրդավարության հաջողությանը, որտեղ որ կարիք լինի: Լրացուցիչ ջանքեր չի գործադրի ռեժիմների փոփոխության հասնելու համար այն երկրներում, որ չեն ցանկանա սերտ համագործակցել իր հետ»<sup>175</sup>:

Այսպիսով՝ ամփոփելով կարելի է հստակ ընդգծել, որ ԵՄ–ն նորմատիվային ուժից ցանկանում է անցում կատարել ռեալպոլիտիկ քաղաքականությանը: Նորմատիվային է համարվում այն քաղաքական ուժը, որը հոչա-

<sup>172</sup> Shared Vision, Common Action: A Stronger Europe, A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, June 2016, p 16, <http://www.iss.europa.eu/uploads/media/EUGS.pdf>

<sup>173</sup> R. Lopez – Aranda, The EU global strategy in three concepts, 8 August 2016, <http://www.exteriores.gob.es/Portal/es/SalaDePrensa/RedesSociales/Blogreflexionesexteriores/Paginas/20160808.aspx>

<sup>174</sup> Jan Techau, The EU's New Global Strategy: Useful or Pointless?, 1 July 2016, <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=63994>

<sup>175</sup> S. Biscop, The EU Global Strategy: Realpolitik with European Characteristics, Security Policy Brief, N 75, June 2016, <http://www.egmontinstitute.be/wp-content/uploads/2016/06/SPB75.pdf>

կում է նորմատիվային արտաքին քաղաքական նպատակներ և դրանց փորձում է հասնել նորմատիվային գործիքակազմով<sup>176</sup>: Ռեալպոլիտիկ քաղաքականության պարագայում չի հռչակվում ո՛չ նորմատիվային արտաքին քաղաքականություն և ո՛չ էլ խոսվում է դրանց նորմատիվային գործիքակազմով հասնելու մասին: Պրոյեկտելով այս տեսությունը ԵՄ-ի նոր ռազմավարության վրա՝ պարզ է դառնում, որ ԵՄ-ն խոսում է պրագմատիկ հաշվարկված քաղաքականության մասին, ժողովրդավարությունը չի դարձնում հարաբերություններ կառուցելու և զարգացնելու գրավական, իր հարևանությունն ու աշխարհը տեսնում է այնպիսին, ինչպիսին կա: Պատրաստ է նման միջավայրի պայմաններում կառուցելու իր արտաքին քաղաքականությունը: Հետևաբար, արդարացի է այն պնդումը, որ ԵՄ-ն գոնե ռազմավարության մակարդակով հայտարարում է ռեալպոլիտիկ ուժ դառնալու մասին: Առայժմ վաղ է դատել, թե այն որքանով արտաքին քաղաքական դրսևորումներ կստանա, սակայն Արևելյան գործընկերության երկրների և հատկապես Հայաստանի համար այս դրույթը մեր կարծիքով այնքան էլ ցանկալի չէ: Խորհրդային միության փլուզումից հետո առաջացած պետություններն առայժմ չեն հասել գիտակցական այնպիսի մակարդակի, որ սեփական երկրի բարեկեցիկ ապագայի բաղադրատոմսը փորձեն գտնել իսկապես ժողովրդավար, ազատ և ինքնիշխան պետությունների կառուցման մեջ: Այս տեսանկյունից մինչ այժմ մեծ դերակատարություն ուներ ԵՄ-ն, ով «մտրակի և քաղցրաբլիթի քաղաքականության» և «ավելին ավելիի դիմաց» սկզբունքի միջոցով մեծապես նպաստում էր որոշակի ոլորտներում ժողովրդավարական առաջընթաց գրանցելուն: Եթե ԵՄ-ն ավելի քիչ ուշադրություն դարձնի հարևանության գոտում ժողովրդավարության տարածմանը, ապա բացառված չէ, որ այս տարածաշրջանը և հատկապես Արևելյան գործընկերության երկրները, որոնք նաև ՌԴ-ի շահերի կիզակետում են, ընկնեն ռուսական քաղաքական մշակույթի ավտորիտար ազդեցության տակ և հետընթաց գրանցեն ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտներում: Հաշվի առնելով նման անցանկալի սցենարների տարածումը՝ ԵՄ-ն չպետք է թուլացնի հարևանության գոտում ժողովրդավարական արժեքները տարածելուն ուղղված ջանքերը: Մեր կարծիքով առավել ցանկալի է, որ պրագմատիզմը լինի ԵՄ-ի արտաքին քաղաքականության համեմունքը, ո՛չ հիմնական համը:

Հաջորդ կարևոր սկզբունքը, որը հատկապես ուղենշային դեր ունի հարևանության քաղաքականության շրջանակներում, ճկունություն կամ առաձգականություն հասկացությունն է, որը բնութագրվում է որպես դե-

<sup>176</sup> Nathalie Tocci, Who is normative foreign policy actor, Centre for European policy studies, Brussels, 2008, p. 77.



մոկրատիայի, օրենքի գերիշխանության և կայունության նվազագույն մակարդակի պայմաններում պետությունների և հասարակությունների բարեփոխվելու, ներքին և արտաքին ճգնաժամերին դիմակայելու և վերականգնվելու կարողություն:

Համաձայն ռազմավարության՝ ԵՄ-ն պետք է նպաստի անդամ երկրներին, նրանց անմիջական հարևանների և ընդհանրապես միջազգային հանրության ճկունությանը: «Կարելի է պնդել, որ սա ավելի շատ պաշտպանողական հասկացություն է, քան տրանսֆորմատիվ, սակայն կարելի է նշել նաև, որ այն ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բարեփոխումների գաղափարը<sup>177</sup>: Սա պրագմատիկ քաղաքականություն իրականացնելու հերթական դրսևորումներից է, որը թերևս ամենաշատ քննադատությունների է արժանացել: Օրինակ՝ նշվում է, որ ճկունությունը բնութագրվում է որպես փոփոխվելու կարողություն՝ թողնելով, որպեսզի արժեքները հետևի դռնից ներս մտնեն:

Միքայել Հանիսչը արդարացիորեն նշում է. «Եթե ենթադրվում է, որ ամեն ինչ և յուրաքանչյուր ոք պետք է ճկուն լինեն, ապա ճիշտ է ավելացված արժեքը: Ո՛չ պարզ է, թե որքան հեռու է հայեցակարգը գնում, ո՛չ էլ, թե որտեղից կարող են ծագել գործողությունների առաջարկությունները»:

Տրիդրիխ Էբերտ հիմնադրամից Յոխեն Ստեինհիլբերը ճկունություն պարադիգմը տեսնում է, «որպես մի մանթրա, որը սպառնում է դառնալ այլընտրանք փոխակերպվող մոտեցումներին»<sup>178</sup>:

Նախկինում ճկունության սկզբունքի բացակայության պայմաններում ԵՄ-ի համար իր հարևանների հետ հարաբերություններ հաստատելու և դրանք խորացնելու համար առաջնային պայման էր դեմոկրատական ոլորտում արձանագրվող առաջընթացը, սակայն համաձայն Մոգերինիի ուրվագծած արտաքին քաղաքականության, որտեղ տրվում է առաջնահերթություն ճկունություն հասկացությանը, կարելի է նաև գործակցության մեջ մտնել և սերտ առևտրային հարաբերություններ հաստատել այն երկրների հետ, որոնք ամեննին էլ չեն կիսում եվրոպական արժեքները: Հանուն արդարության՝ հարկ է նկատել, որ նախկինում էլ ԵՄ-ն սերտ գործակցում էր ավտորիտար ռեժիմներ ունեցող պետությունների հետ, ինչպիսին, օրինակ, Ադրբեյջանն է: Ներկայումս, սակայն, ամրագրելով այդ սկզբունքը արտաքին քաղաքականության հիմնական փաստաթղթում, ստեղծվում է ավելի ազատ գործելու հնարավորություն:

<sup>177</sup> R. Lopez – Aranda, The EU global strategy in three concepts, 8 August 2016, <http://www.exteriores.gob.es/Portal/es/SalaDePrensa/RedesSociales/Blogreflexionesexteriores/Paginas/20160808.aspx>

<sup>178</sup> Annegret Bendiek, The Global Strategy for the EU's Foreign and Security Policy, August 2016, [http://www.swp-berlin.org/fileadmin/contents/products/comments/2016C38\\_bdk.pdf](http://www.swp-berlin.org/fileadmin/contents/products/comments/2016C38_bdk.pdf)

«Քարնեգի Եվրոպա»-ի տնօրենի կարծիքով փաստաթղթի առավելությունն է ԵՄ-ի հարևանության քաղաքականությունից լռելյայն հրաժարվելը: Մեր կատարած ուսումնասիրությունից ելնելով՝ կարող ենք փաստել, որ արդարացիորեն է նշում Ժ. Տեչահուն, որ Եվրոպական հարևանության քաղաքականությունը հիշատակվում է ընդամենը մի քանի անգամ: Կոնցեպտուալ առումով այն փոխարինվել է ճկունություն տերմինով, որը ԵՄ-ի անմիջական հարևանության գոտում առաջնորդող սկզբունք է: Վերջինիս կարծիքով մեծ բացթողում է, որը փաստաթղթում չի նշվում հարևանության գոտում ԵՄ-ի գործունեության փոփոխվող օրակարգը<sup>179</sup>:

Առանձնացրել ենք ԵՄ գլոբալ ռազմավարության այս երկու կարևոր սկզբունքները, որոնք մեր կարծիքով առավելագույն ազդեցություն կունենան Եվրոպական հարևանության գոտում և հատկապես Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ-ի վարած քաղաքականության վրա:

ԵՄ-ն հարևանության գոտում իր վարած քաղաքականության փոփոխման մեկնարկը տվեց դեռևս 2015 թ. նոյեմբերի 18-ին ԵՀՔ վերանայված քաղաքականության ռազմավարությամբ: Հաշվի առնելով անցյալի դասերը և նախկինում ստեղծված իրավիճակը՝ ԵՄ-ն նոր փաստաթղթի անկյունաքարն էր դարձրել կայունության սկզբունքը, որով էլ առաջնորդվելու է հարևանների հետ հարաբերություններում<sup>180</sup>:

Երկկողմ հարաբերություններն, համաձայն այդ փաստաթղթի, կառուցվելու են ոչ թե բոլորի համար մշակված միասնական սցենարով, այլ յուրաքանչյուրի հետ՝ ըստ իր նկրտումների և գերակայությունների: Միաժամանակ մեծ ուշադրություն է հատկացվելու տարածաշրջանային համագործակցությանն ու համատեղ ծրագրերին: Այդ նպատակով ներմուծվեց «Թեմատիկ շրջանակների» ձևաչափը, որում ներգրավվելու են մի քանի գործընկեր երկրներ միաժամանակ: Գործընկեր երկրների հետ տարբերակված հարաբերությունների սկզբունքն արտահայտվելու է նաև ԵՀՔ ամենամյա զեկույցներում: Ամեն տարի գործընկեր երկրներից յուրաքանչյուրի համար հրապարակվող առաջընթացի զեկույցներին այսուհետ փոխարինելու է մեկ միասնական զեկույց ամբողջ ԵՀՔ տարածաշրջանի համար, և երկրներից յուրաքանչյուրի համար՝ իր ստանձնած պարտավորությունների կատարումը գնահատող պարբերաբար թողարկվող զեկույց: Հարաբերությունների հիմքում, ինչպես ԵՄ գլոբալ ռազմավարության դեպքում, դրվեց ճկունության սկզբունքը:

Չնայած վերը նշված որոշ հեղինակների դիտարկումներին, թե ԵՄ-ն

<sup>179</sup> Jan Techua, The EU's New Global Strategy: Useful or Pointless? Carnegie Europe, July 1, 2016, <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=63994>

<sup>180</sup> ԵՀՔ վերանայում, 20 նոյեմբեր, 2015, <http://eunewsletter.am/hy/%D5%A5%D5%B0%D6%84-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4/>

մոռացության է տվել հարևանության գոտին, ԵՄ գլոբալ ռազմավարության մեջ նշվում է. «Մենք քաղել ենք անցյալի դասերը. մեր հարևանների և գործընկերների թուլությունը մեր սեփական տկարությունն է: Այսպիսով՝ մենք ներդրում կկատարենք հաղթանակ – հաղթանակ լուծումների վրա և առաջ կշարժվենք այն պատրանքից, թե միջազգային քաղաքականությունը կարող է լինել խաղ գրոյական գումարով»<sup>181</sup>:

Վերջին 3 տարիների իրադարձությունները ԵՄ–ի համար ևս մեկ ապացույց պետք է լինեն, որ հարևանության գոտին անտեսելը և միայն միության շրջանակներում պարփակվելը աղետալի հետևանքներ կարող են ունենալ հենց ԵՄ–ի համար: Որքան կայուն և զարգացած է հարևանության գոտին, այնքան մեծ է ԵՄ–ի անխափան զարգացման հավանականությունը: Ավելի լին՝ նոր ռազմավարության մեջ ԵՄ–ն ցանկանում է խորացնել համագործակցությունը ոչ միայն հարևանների, այլ նաև հարևանների հարևանների հետ, կամ ինչպես ԳՌ–ի մեջ է նշվում՝ լայնացված հարևանության գոտու հետ: Սա նշանակում է, որ ԵՄ–ն այսուհետ ոչ միայն կխորացնի համագործակցությունը Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների հետ, այլ կփորձի կայունությանն ուղղված քաղաքականություն վարել նաև Կենտրոնական Ասիայում և Կենտրոնական Աֆրիկայում՝ այս կերպ շաղկապելով ներքին և արտաքին անվտանգությանն ուղղված քայլերը:

Բացի այդ՝ Ռազմավարության նախաբանում Մոգերինին հստակ ուղերձներ է ուղարկում, որ ԵՄ–ն ցանկանում է վերանայել աշխարհում իր տեղն ու դերը և օգտագործել այն հսկայական ներուժը, որը նրան ընձեռում է աշխարհի երկրների գերակշռ մասի թիվ մեկ առևտրային գործընկեր լինելը: ԵՄ–ն աշխարհի այն եզակի միավորումներից է, որը փափուկ ուժի կիրառման հսկայական և կարելի է պնդել ամենամեծ ներուժն ունի: Սակայն վերը նշված ուղերձում ԵՄ բարձրագույն հանձնակատարը հստակ ընդգծում է, որ աշխարհի տարբեր անկյուններում գործընկերներն ավելին են սպասում ԵՄ–ից, մասնավորապես անվտանգության ապահովման ոլորտում: Դատելով Ռազմավարության բովանդակությունից՝ ԵՄ–ն ցանկանում է փափուկ ուժից վերածվել խելացի ուժի: Իհարկե, հաշվի առնելով ՆԱՏՕ–ի գործոնն ու անցյալի նախորդ ոչ այնքան հաջող փորձերը: Դա պակաս հավանական է, քանի որ Ռազմավարության մեջ ներկայացված քայլերն այնքան էլ վստահություն չեն ներշնչում: Սակայն կարևոր է արձանագրել այն փաստը, որ ԵՄ–ն ցանկանում է աշխարհում մեծացնել իր ազդեցությունն ու ներկայությունը:

<sup>181</sup> Shared Vision, Common Action: A Stronger Europe, A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, June 2016, p. 4, <http://www.iss.europa.eu/uploads/media/EUGS.pdf>

## Վերջաբան

ԵՄ-ն ընդունել է ներքաղաքական և արտաքին քաղաքական մարտահրավերներին դիմակայելու, հարևանների հետ հարաբերություններում առաջնորդվելու նոր ռազմավարություն, ուստի Հայաստանը՝ որպես ԵՀԲ և Արևելյան գործընկերության անդամ երկիր, պետք է իր արտաքին քաղաքականությունը և մասնավորապես ԵՄ-ի հետ հարաբերությունները կառուցի ստեղծված նոր իրավիճակի հրամայականով՝ փորձելով առավելագույնս շահավետ դարձնել երկկողմ գործընկերությունը: Հայաստանի արտաքին քաղաքականությունը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հետ չպետք է կառուցվի ԵՄ-ի հետ համագործակցության հսկայական ներուժը նվազեցնելու հաշվին: Նոր աշխարհակարգին ու գլոբալ անվտանգության մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ են պարբերաբար թարմացվող արտաքին քաղաքական դոկտրին և անվտանգության ռազմավարություն: ԵՄ-ի կողմից իրականացվող բարեփոխումները Հայաստանում, ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների համակարգի ներդրումը մի պահ անգամ իրավունք չունեն ծախողվելու, քանի որ այն տարիների հսկայածավալ աշխատանք ու տասնյակ միլիոնավոր եվրոներ է և ամենից կարևորը՝ փոխադարձ վստահության ու համատեղ աշխատանքի փորձ: ԵՄ նոր գլոբալ ռազմավարությունը Հայաստանին հնարավորություն է տալիս վերանայելու իր արտաքին քաղաքականության հիմնական բաղադրատարրերը: Եթե նախկինում Հայաստանը ՌԴ-ի մեջ տեսնում էր միայն իր անվտանգության երաշխավորին, ապա ԵՄ-ի ի հայտ գալուց հետո վտանգավոր միտումներ են նկատվում ՌԴ-ից տնտեսական միակողմանի կախվածության առումով: Նախկին դիվանագիտական սխալները չպետք է կրկնվեն: ԵՄ արտաքին քաղաքականության փոխակերպման նոր պայմաններում Հայաստանի համար ստեղծվում են բացառիկ հնարավորություններ՝ դիվերսիֆիկացնելու իր արտաքին քաղաքական շահերն ու առաջնահերթությունները: ՀՀ-ն պետք է նախաձեռնողականություն ցուցաբերի՝ խթանելու ԵՄ-ի օգնությամբ Հայաստանում իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրերի արդյունավետ անցկացմանը: Հաշվի առնելով ԵՄ արտաքին քաղաքականության մեջ փափուկ ուժից խելացի ուժին անցումը՝ Հայաստանը պետք է փորձի Արցախյան հակամարտության լուծումը պահել ԵՄ ուշադրության ծիրում: Այդ ուղղությամբ հաջողությունների հասնելու համար պետք է ակտիվացնել ԵՄ-ի հետ միջխորհրդարանական կապերը, անհատական շփումները, պարբերաբար կազմակերպել եվրոպացի գործընկերների այցեր Արցախի Հանրապետություն՝ փորձելով այն ճանաչելի դարձնել որպես պետականաշինության ու ժողովրդավարության ուղով ընթացող երկիր, բայց ոչ

Երբեք հակամարտության գոտի: Արցախյան հակամարտության լուծման բանալին կգտնվի, եթե հանձինս ԵՄ-ի ու նրա նոր գլոբալ ռազմավարության՝ Հայաստանը կարողանա գտնել հնարավոր պատերազմից խուսափելու համար լրացուցիչ զսպման ու կանխարգելման մեխանիզմներ: Այդ նպատակով ԵՄ բարեփոխումները պետք է ծառայեցվեն ՀՀ-ում իրական ներքաղաքական բարեփոխումների իրականացմանը, հզոր տնտեսության կառուցմանը և բանակային ռեֆորմների կենսագործմանը, որն էլ տարածաշրջանում կայունության ապահովման գրավականներից մեկը կարող է դառնալ:

# REVIEW OF THE FOREIGN POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF THE NEW GLOBAL STRATEGY FOR THE EUROPEAN UNION

*ANNA BARSEGHYAN, ASHOT MARGARYAN*

*ACADEMIC ADVISOR TEVAN POGHOSYAN<sup>182</sup>*

## Introduction

### Relevance of the topic

Domestic developments in the EU, the growth of Euroscepticism, Brexit and possible spread of this wave, the irregular flow of migrants to the EU countries, deviation from the previously declared political line in Eastern partnership area, the war in the Ukraine, the strained relations with Moscow, series of terrorist acts and current threats to global security have brought the EU in front of completely new domestic and foreign policy challenges. There was a need for a new political course to tackle those challenges and not to endanger the further activities of the union. The EU's New Global Strategy, published in June 2016, includes the main principles of that course. This document is of utmost importance not only for the members of the union but also for the countries situated in the European neighborhood. Study of the document and paying attention to its main political accents is very important for Armenia, a country that is recovering its relation with the EU and is on the eve of signing a new leading document. From this point of view, this topic is of paramount importance for Armenia and can be the precedent of academic study of the new global strategy for the EU, thus increasing the academic value of this paper.

### Academic base of the paper

We have used a number publications that have direct or partial relation to the topic: articles, official briefs, and documents, as well as various studies analysing the topic. We have also tried to use mostly official documents as primary sources. In particular, the paper itself represents an analysis of the New Global Strategy for the European Union and accordingly this is the most used source<sup>183</sup>. Essential sources also include the European security strategy, EaP renewed policy and Armenian national security strategy.

---

<sup>182</sup> Tevan Poghosyan, Member of the Parliament, Executive Director of the International Center for Human Development in 2000-2012.

<sup>183</sup> A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, 29 June 2016 <http://www.iss.europa.eu/publications/detail/article/a-global-strategy-for-the-european-unions-foreign-and-security-policy/>

Since the topic is completely new in the international literature, there are still no books and voluminous studies regarding the New Global Strategy, and we mostly used analytical papers of leading think tanks. Our study shows that the topic is mostly reflected in the works of Carnegie Europe think tank that have the most citations in this paper<sup>184</sup>. Meanwhile, this topic is completely new in Armenian expert circles and is much less studied.

### **The goal of the study, its objectives and main hypothesis**

The goal of this study is to discover the main accents of the new EU global strategy and their impact on ENP zone, in particular EU relation with Armenia.

The following objectives will serve the goal:

- Present a brief cause-effect analysis of Armenian foreign policy towards the EU during the recent years;
- Study the EU New Global Strategy and value it from the aspect of Armenian national interests;
- Compare the main similarities and differences of European Security Strategy and the EU New Global Strategy, and the changes in foreign policy concept.
- Analyse and evaluate the main theses on the Neighborhood Policy in the EU New Global Strategy and their possible impact on ENP.

Our hypothesis for the paper is the following: with the EU New Global Strategy, the EU will not give up the Neighborhood Policy, instead the cooperation with its neighbors will be more pragmatic and realistic.

### **The object and the subject of the research**

Given the goal and objectives of the paper, the object of the research is the EU New Global Strategy and according policy, while the subject of the research is its possible impact on Armenia-EU relations.

### **The methodology of the research**

Principal methods of modern political science and general academic methodology constituted the theoretical and methodological basis for this paper. The research was mainly carried through theoretical-conceptual approaches (comparative, systemic, functional, global, periodization methods and approaches) and methodologies of general logic (analysis, induction, modelling, and classification).

### **Main conclusions**

In the result of research and evaluation of the main theses of the document, their relation to the neighborhood policy countries and in particular to Armenia, we have arrived at the following conclusions:

- There is a need to review Armenian foreign policy and National security

<sup>184</sup> <http://carnegiEAEurope.eu/strategieurope/?fa=64003>

strategy in order to correspond to the global development and current challenges threatening the security of the republic;

- Armenia should be able to increase the profitability ratio in the relations with the EU;
- Armenia should be proactive in effectual implementation of the EU programmes that aim to boost domestic policy reforms;
- Artsakh conflict as a regional one should be kept in the attention span of the EU;
- The European Union connects the solution to domestic policy issues and security problems with the tantamount response to foreign policy challenges.
  - The EU makes a shift from normative foreign policy to real politik;
  - The EU will add the smart power toolkit to the soft power application in its foreign policy;
  - The European Neighborhood policy will be based not only on values but also on interests.

### **Armenia on the diplomatic crossroads**

The cooperation of Armenia with the European Union has always been a pivotal vector of Armenian foreign policy. Main components of that cooperation are bilateral political relations, trade and economic ties, as well as reform processes of democratic institutions and state system in Armenia supported by the EU. Taking into account the trends of current deep and comprehensive cooperation between the EU and Armenia, we can claim that the economic and political development of Armenia without cooperation with European structures is impossible. In the context of Eurointegration it is very important to be more proactive, since possible inertia in activities might bring various unwelcome results, like slowing down of the domestic reform course in Armenia that will highly impact the development of Armenian political culture.

The Republic of Armenia has always tried to run balanced foreign policy by combining different integration vectors as much as possible. It is difficult to evaluate the success of this. The reputation of Armenian foreign policy was damaged especially by the announcement of the President Serzh Sargsyan on accession to the Customs Union. This announcement made null and void all the process of negotiations with high officials from the EU regarding signing of the Association Agreement. The U-turn in foreign policy on September 3, 2013 and partially the following political crisis in the Ukraine slowed down the Eurointegration process of Armenia for some time.

This surprising decision was not conditioned by merely economic factors since the largest trade partner of Armenia was and still is the EU. On the contrary,



this decision has characteristics of natural response to possible indirect threats upon military and energy security, and fortunately this is well comprehended by European partners. Sargsyan could not decline Putin's proposal, could he? As it seems the conclusion is that through concessions Armenia did the best to defend its primary interests and most importantly the territorial integrity of NKR which is not possible to claim in the case of the Ukraine. From the other hand, those claims were built upon short-term estimations since on the political level the official Moscow did not give any guarantees of NKR territorial integrity or restraints of the outcomes of a possible war. This was proved during the last aggressive Azerbaijani actions towards NKR population during which neither CSTO nor official Moscow gave any guarantees to support the security of the Republic of Armenia. Truly, Armenia's membership to the The Collective Security Treaty Organization gives certain military and political security, however, it does not play the constraint role in the NKR conflict. Even though Armenia hosts foreign military bases with the pretext of guaranteeing the security within its borders, however Yerevan relies only upon own army potential in preserving the fragile ceasefire in Artsakh. The conflict of Nagorno Karabakh is the live evidence of the fact that regional security continues to stay as the pivotal priority of the foreign policy of the Republic of Armenia.

The recent developments around Artsakh-Azerbaijan conflict have invited the attention of the whole international community. Urges for peace were voiced by the High Representative of the European Union for Foreign Affairs Federica Mogherini, Secretary-General of the United Nations Ban Ki-moon, as well as Minister of Foreign Affairs of Russia Sergey Lavrov and his US counterpart State Secretary John Kerri<sup>185</sup>. And that's natural, since Artsakh conflict is not a mere one, but a potential threat to the oil and gas industry of Caspian basin, and the latter is in the center of attention of international players. Even Russia, the strategic partner of Armenia, that is playing a double game by arming both sides, did call to stop the military actions immediately. A completely other response came from Turkey, the country of 'zero problems with neighbors'. The president of that country publicly vowed to back its ally Azerbaijan in the conflict with Armenia till the end<sup>186</sup>.

<sup>185</sup> Status quo is unacceptable: Mogherini urges to transmute situation in Nagorno-Karabakh into opportunity <https://armenpress.am/eng/news/843264/status-qua-is-unacceptable-mogherini-urges-to-transmute-situation-in-nagorno-karabakh-into-opportunity.html> ; As Nagorno-Karabakh violence flares, Ban urges 'immediate end to fighting', <http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=53601#.V-d62xTF7FI>

Lavrov and Kerry discussed the current situation around NK , see <http://vz.ru/news/2016/4/4/803464.html>

<sup>186</sup> Turkey's Erdogan Vows to Back Azerbaijan in Nagorno-Karabakh Conflict

Hence, what would give to Armenia its exclusively pro-European foreign policy if during the 25 years of Armenia's independence the EU did not make any effort on political platforms to restrain Azerbaijan and to make Turkey to stop the blockade of the Republic of Armenia? After all it is natural that Armenian authorities less and less envisioned linking Armenia's security with the EU. Another explanation is the five-day Russian-Georgian war when the European Union did not support the territorial integrity of Georgia in military terms and significantly yielded its position in the Caucasus to Russia.

In the given situation Yerevan has only one way out that is not to repeat the Ukrainian scenario which would bring territorial losses to Armenians. What format could have Armenia-EU political agreement without the free trade component of the Association Agreement? Would it have political and military components to guarantee the security of Armenian nation? The absence of answers to those questions and indefinite future made Armenia to integrate more with Russia as its main guarantor of security. Unpreparedness to such situation prepared ground for the EU to get equipped with military assistance, hard or smart power application, and resilient policy making components in its new global strategy.

Armenia's membership to the Customs Union and the Eurasian Economic Union in the context of centuries-long Russian-Armenian partnership show how Armenia's international reputation can be harmed. As a result, all the potential of Armenia-EU cooperation was frozen for a while. Moreover, Armenia found itself in the list of a number of authoritarian countries while serving the foreign policy goals of Russia during the voting on the Crimea at the United Nations General Assembly<sup>187</sup>. Armenia is not successful at urging Russia to restrain its exceptionalism in political monopoly when vital and national interests of Armenian nation are at stake. These case are to prove the simple reality that sometime foreign policy is run without certain doctrines or conceptual frameworks. The irrevocable diplomatic mistakes of the Republic of Armenia not only limit maneuverability in the foreign policy arena but also seriously threaten international credit and reputation of Armenia. A country in such a neighborhood should have a thoroughly developed foreign policy doctrine to serve its interests, instead of a situational framework.

From the other point of view, we should not neglect the most important factor, domestic politics. Foreign policy is a reflection of domestic one, whereas

---

<http://www.haaretz.com/middle-east-news/1.712357>

<sup>187</sup> Armenia supports Russia during the UN vote on Ukraine, <http://www.azatutyun.am/a/25312111.html> (in Armenian)

nowadays the Republic of Armenia has piled multiple domestic problems and is not able to neutralize very serious external threats to its statehood. All the diplomatic means are focused on neutralizing anti-Armenian initiatives of Azerbaijan of the process of the international recognition of the genocide. And it is not surprising at all that a number of experts defend the point of view that complementarism policy was so far the best diplomatic initiative of Armenia. One of the embryonic manifestations of complementarism was aid diversification in 1991-1992: military assistance came from Russia, support for the state-building came from the USA, food and humanitarian aid provider was Europe, and Iran supplied with the fuel for the army fighting against Azerbaijan<sup>188</sup>.

The surprise decision of September 2015 was because of the intolerance of the Russian Federation towards multivector (complementary) foreign policy of Armenia. The 'or/or' principle of Putin completely vanished all the opportunities for Armenia to get integrated into two international platforms, since those became contradictory. The exceptionalism of Russian monopoly deprived Armenia of the most effective toolbox of its foreign policy, the policy of complementarism. Instead, it signaled the start of new achievements in the region considered as strategic depth by the Russian Federation, a region that was named as the Near Abroad by ex-foreign minister Andrey Kozyrev<sup>189</sup>.

It might be right to claim that the current Eastern crisis of the EU started actually in Armenia when European authorities were not able to give comparable response. Armenia became experimental playground between Customs Union (later the EAEU) and the European Union. Nevertheless, it was clear from the beginning that the real apple of discord was the Ukraine, while Armenia could avoid putting itself in the epicenter of geopolitical contradictions.

Today, with the New Global Strategy of the European Union, the republic of Armenia has exceptional opportunity to make its foreign policy doctrine more resilient. It would open new doors of return to more effective multivector foreign policy, increase self-awareness of the population and to lead the authorities to restore the independence and international reputation of Armenia. In its turn, the European Union also needs to grasp that its Eastern crisis started with Armenia and in order to prevent the failure of the EU new global strategy in its main task of resisting to foreign policy challenges, the strategy must be more flexible and use both hard and soft powers on political platforms with the aim of broadening the geography of reforms and financial assistance. In

---

<sup>188</sup> Several conceptual foundations of the Armenian foreign policy, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2227](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2227)

<sup>189</sup> See more at <http://www.nytimes.com/1994/05/22/magazine/on-language-the-near-abroad.html>

other words, the EU must use the smart power which is a combination of hard and soft ones. It assumes also proactiveness from the EU in preservation of peace around Artsakh, since it is about solidification of Artsakh's statehood that is not recognized but nevertheless is based on democratic values and also guaranteeing the right of its people to self-determination. On the civil society platforms the EU must increase its already large presence in order to more intensify the atmosphere of mutual trust and dialogue between the nations. More active participation of the EU will decrease the Russian monopoly of political exceptionalism. These are the tasks for the New Global Strategy of the European Union in the frames of supporting the small and vulnerable states to opt for their European future.

### **The New Global Strategy of the EU and European Neighborhood area**

On June 28, 2016, just few days after Brexit and on the eve of NATO summit in Warsaw, the High Representative of the European Union for Foreign Affairs Federica Mogherini officially presented the New Global Strategy (NGS) of the EU. This strategy is now considered as the main document on EU's security and foreign policy<sup>190</sup>. The development of the document started back in December 2013, and naturally, it is a unique palette that includes all the threats and challenges that EU have encountered recently. The start of the development of the paper coincided with the Ukrainian crisis, worsening of the relations with Russia and the sanction regime with the latter. During that time period an enormous and uncontrollable flow of migrants from Syria started to flood the EU and continues so nowadays, creating additional domestic policy problems for most of the EU countries. The picture becomes complete with the series of terrorist strikes that shook the security environment of the EU. The new document provides separate attention to the solution of all those challenges.

The preface of European Security Strategy (ESS) developed by previous High Representative Javier Solana in 2003 stated: 'Europe has never been so prosperous, so secure nor so free. The violence of the first half of the 20th Century has given way to a period of peace and stability unprecedented in European history'<sup>191</sup>. Today such idea sounds quite ironic.

Despite both documents represent main outlines of EU's foreign and security policy, however these are completely different frameworks: security

<sup>190</sup> A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, 29 June 2016. <http://www.iss.europa.eu/publications/detail/article/a-global-strategy-for-the-european-unions-foreign-and-security-policy/>

<sup>191</sup> A secure Europe in a better world, European security strategy, 12 December 2003, Brussels, p. 1, <http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf>

environment has changed, so have the threats and priorities. We will try to draw parallels between the two documents and with the help of comparative analysis we will seek to understand the differences in priorities out forth in the both documents. European global strategy is longer than ESS, however the word ‘interests’ occurs in ESS 36 times (preface plus the main text), whereas the recent document uses the word only three times. This is an indicator of different vectors of the documents. The recent strategy 30 times uses the terms ‘EU citizens and their interests’, ‘security and needs’, whereas the first document names them only three times. The study of the NGS shows that it has more domestic vector and first of all tries to speak to own citizens and respond to their needs.

ESS within its only 14 pages differentiated five main challenges, the solution of which would enable the EU to create more secure world and Europe. It is not accidental that the document is named ‘A Secure Europe in a Better World’. According to the strategy, global terrorism, proliferation of weapons of mass destruction, regional conflicts, organized crime, lack of good governance and failed states are threatening the EU as well as the whole world<sup>192</sup>. The strategy proposes the following solutions to the above-mentioned challenges:

- Promote sustainable growth and better governance in the European immediate neighborhood countries;
  - Upholding world order depending on an effective multilateral system
  - Struggle against old and new threats and prevention of all kinds of conflicts<sup>193</sup>.

The new document that has more than 50 pages focuses on five main priorities for the EU, which are:

- The Security of the Union;
- State and Societal Resilience to the East and South;
- An Integrated Approach to Conflicts;
- Cooperative Regional Orders;
- Global Governance for the 21st Century<sup>194</sup>.

Thus, if we follow the structure of the strategy, the European Union starts with the solution of its domestic issues, security, strengthens the neighborhood

---

<sup>192</sup> Ibid, p. 6-7.

<sup>193</sup> Ibid, p. 8

<sup>194</sup> Shared Vision, Common Action: A Stronger Europe, A Global Strategy for the European Union’s Foreign And Security Policy, June 2016, p.9, [https://eeas.europa.eu/top\\_stories/pdf/eugs\\_review\\_web.pdf](https://eeas.europa.eu/top_stories/pdf/eugs_review_web.pdf)

ring, creates flexible partnership opportunities also for distant neighbors, and then passes to united foreign policy. The latter suggests joint fight against global challenges and crises which is until now the weak points of the EU.

Many analysts and politicians have showed interest towards the new European strategy and evaluated it. Javier Solana reflecting on the new strategy notes: ‘The Global Strategy defines clear objectives, considers the mistakes of the past, and is deeply anchored in the EU’s present-day reality. It calls for a more responsible, united, and credible EU – the only response capable of overcoming Euroscepticism’<sup>195</sup>.

The analyst of Carnegie Europe Stefan Lehne, who is specialized in post-Lisbon foreign policy of the EU and intra-union relationship of member states, writes: ‘The real strength of the new strategy lies in its comprehensive scope. It recognizes that the EU must become more joined up across internal and external policies. The need to overcome institutional stovepipes and bring all the EU’s instruments together in a coordinated way is systematically worked into the entire text. Particularly welcome—because long overdue—is the intention to make the EU’s development policy “more flexible and aligned with our strategic priorities.”’<sup>196</sup>

Let us reflect to the innovations in the foreign policy that will become the guiding principles of the new strategy. The EU has declared pragmatism as a principle of its foreign policy for years ahead. For the first time, the EU refers in his documents to interests, stating that the interests and values of the EU member countries should go hand in hand. ‘We have an interest in promoting our values in the world. At the same time, our fundamental values are embedded in our interests’<sup>197</sup>.

As Ricardo Lopez Aranda from the Spanish Office of Analysis and Prediction mentions: ‘the concept of principled pragmatism, according to which the interests of the EU and of its citizens must lie at the core of EU action, albeit within the framework of the “idealistic aspiration of the EU to move towards a better world.” Conceptually, this approach differs from the idea of the EU as a normative power (whose actions have values rather than interests at their center), but the final aim, at least in theory, should be similar in both approaches (help to build a better world).’<sup>198</sup>

<sup>195</sup> J. Solana, The EU’s Bold New Strategy, Jul 21, 2016 <https://www.project-syndicate.org/commentary/european-global-strategy-foreign-security-policy-by-javier-solana-2016-07>

<sup>196</sup> S. Lehne, The EU Global Strategy, a Triumph of Hope Over Experience, Carnegie Europe, July 4 2016 <http://carnegieEAEUrope.eu/strategieurope/?fa=64003>

<sup>197</sup> Shared Vision, Common Action: A Stronger Europe, A Global Strategy for the European Union’s Foreign And Security Policy, June 2016, p 13

<sup>198</sup> R. Lopez-Aranda, The EU global strategy in three concepts, 8 August 2016, <http://www.exteriores>.

The director of Carnegie Europe Jan Techau reflecting on the manifestations of principled pragmatism writes: ‘The document strikes a fine balance between reduced and increased ambition. It establishes the concept of “principled pragmatism,” anchoring its prescription in a realism that is direly needed in the EU.’<sup>199</sup>

Another analyst Sven Biscop comments that the EU has returned to the real politik in its foreign policy, underlining that at the same time there is much less emphasis on democracy: ‘democratization no longer is a compulsory part of the package (for ENP and adjacent region). The EU will support democracies where they emerge, for “their success”. As many others don’t wish closer relations with the EU, the EUGS will not put the emphasis on changing their regimes’<sup>200</sup>.

Hence, the EU wants to make a shift from normative power to real politik. Normative is the political power that declares normative foreign policy objectives and tries to achieve them with normative toolbox<sup>201</sup>. In case of real politik, normative foreign policy and objectives are not declared, and normative toolbox is also not referred to. By projecting this theory to the new strategy of the European Union, it becomes clear that the EU speaks about pragmatic policy, does not make democracy as prerequisite for establishing and developing relations, sees its neighborhood and the world as they are. The EU is ready to forge its foreign policy in this environment. Consequently, the EU at least on strategy level declares shift real politik. It is early to evaluate if this declaration will be manifested in foreign policy, but we think that this thesis is not that desirable for the Eastern partnership countries and Armenia, in particular. The countries that emerged after the collapse of the Soviet Union have not achieved such level of awareness that would seek the recipe for the prosperous future of their country in creation of really democratic, free and independent states. From that point of view the EU had very big say until now, and it highly contributed to promotion of democracy in certain spheres with its ‘carrot and stick policy’ and ‘more for more’ principle. If the EU pays less attention to the promotion of democracy in its neighborhood, that region and especially the EaP countries will fall under the influence of Russian authoritarian politic culture and mark degradation in the spheres of democracy and human rights. Taking

---

[gob.es/Portal/es/SalaDePrensa/RedesSociales/Blogreflexionesexteriores/Paginas/20160808.aspx](http://gob.es/Portal/es/SalaDePrensa/RedesSociales/Blogreflexionesexteriores/Paginas/20160808.aspx)

<sup>199</sup> Jan Techau, ‘The EU’s New Global Strategy: Useful or Pointless?’, 1 July 2016, <http://carnegieEAEurope.eu/strategieurope/?fa=63994>

<sup>200</sup> S. Biscop, ‘The EU Global Strategy: Realpolitik with European Characteristics’, Security Policy Brief, N 75, June 2016 <http://www.egmontinstitute.be/wp-content/uploads/2016/06/SPB75.pdf>

<sup>201</sup> Nathalie Tocci, ‘Who is normative foreign policy actor’, Centre for European policy studies, Brussels, 2008, p.77

into account the spread of that unwelcome scenario, the EU should not lessen its efforts to promote democratic values in the neighborhood. We think that pragmatism becomes not the main taste of the EU foreign policy but its flavor.

The next important principle that has especial milestone role in the frames of neighborhood policy is the resilience defined as the ability of states and societies to reform, withstand and recover from domestic and international crises, on the basis of a minimum level of democracy, rule of law and sustainable development.

According to the Strategy, the EU should contribute to the resilience of Member States, their immediate neighborhood and the international community as a whole. 'It can be argued that this is a defensive concept more than a transformative one, but one can also consider that it encompasses the idea of reform, both domestic and international'<sup>202</sup>. This is yet another manifestation of pragmatic policy that was the most criticized one. For example, critics say that resilience is characterized as ability to change, letting that the values enter from the backdoor.

Michael Hanisch rightly queries its benefits: 'If everything and everyone is supposed to be resilient, where is the added value? It is neither clear how far the concept extends, nor what recommendations for action can be derived from it'. Jochen Steinhilber of Friedrich-Ebert Stiftung sees the resilience paradigm as a "mantra" that threatens to become "an alternative to transformative approaches"<sup>203</sup>.

In the past, in the absence of the principle of resilience, the EU's precondition to establish and develop relations with its neighbors was record of progress in democracy building, however according to the foreign policy outlined by Mogherini and prioritizing resilience, the EU can start partnership and establish close trade relations also with the countries that do not share European values whatsoever. To say the truth, the EU does have a record of cooperation with authoritarian regimes, for example, with Azerbaijan. However, currently, prescribing this principle in the main foreign policy document gives more freedom of action.

According to the director of Carnegie Europe, another strength is the silent farewell to the EU's European Neighborhood Policy. We also can confirm that J. Techau is right and The ENP is mentioned a few times. Conceptually, it is

<sup>202</sup> R. Lopez-Aranda, The EU global strategy in three concepts, 8 August 2016 <http://www.exteriores.gob.es/Portal/es/SalaDePrensa/RedesSociales/Blogreflexionesexteriores/Paginas/20160808.aspx>

<sup>203</sup> Annegret Bendiek, The Global Strategy for the EU's Foreign and Security Policy, August 2016. [http://www.swp-berlin.org/fileadmin/contents/products/comments/2016C38\\_bdk.pdf](http://www.swp-berlin.org/fileadmin/contents/products/comments/2016C38_bdk.pdf)



replaced by resilience as the new guiding principle of the EU's relationship with its immediate surroundings. According to the Techau the document also has its flaws since the new strategy does not analyze the structural reasons for the fairly spectacular failure of the EU's transformative agenda in its neighborhood<sup>204</sup>.

Thus, we have identified these two important principles from the NGS that will have the largest impact on European neighborhood and especially on the policy of the EU towards EaP.

The EU initiated the changes to its policy toward neighboring ring with the review of ENP on November 18, 2015. Taking into account the lessons from the past, the ENP made stabilisation a main political priority in its relation with the neighbors<sup>205</sup>.

According to the document, bilateral relations would be built not on a one-fits-all developed scenario, but will be tailored according to the ambitious and priorities of each. At the same time more attention would be given to regional cooperation and joint projects. For this aim the format of Thematic Objectives will be used and thus several partner countries will be included at the same time. The principle of differentiated relations with partner countries will be reflected in annual ENP reports. Hereinafter, instead of progress report that were published every year for the each partner country, now there will be one joint ENP report and also periodic reporting of implementation of commitments by each country. The principle of resilience is in the basis of the relations, like it was the case with NGS.

Despite comments of the above-mentioned authors regarding the EU's farewell to ENP, the New Global Strategy states the following: 'We have learnt the lesson: my neighbour's and my partner's weaknesses are my own weaknesses. So we will invest in win-win solutions, and move beyond the illusion that international politics can be a zero-sum game'<sup>206</sup>.

The events of the last three years should be yet another evidence for the EU the neglecting the neighborhood area and self-isolating in the Union can bring catastrophic results for the EU itself. The more stable and developed is the neighborhood area, the higher is the probability of unhindered development of the EU. Moreover, in its new strategy the EU expresses desire to deepen its cooperation not only with the neighbors but also with the neighbors of the

<sup>204</sup> Jan Techua, The EU's New Global Strategy: Useful or Pointless? Carnegie Europe, July 1, 2016, <http://carnegiEAEurope.eu/strategieurope/?fa=63994>

<sup>205</sup> ENP Review, 20 November 2015, <http://eunewsletter.am/hy/%D5%A5%D5%B0%D6%84-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4/>

<sup>206</sup> Shared Vision, Common Action: A Stronger Europe, A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy, June 2016, p. 4 <http://www.iss.europa.eu/uploads/media/EUGS.pdf>

neighbors or surroundings. It means that the EU hereinafter will deepen its relations not only with ENP member states but also will try to run policies in Central Asia and Central Africa, thus linking the domestic and foreign securities.

In addition, in the preface of the NGS, Mogherini sends clear messages that the EU wants to reconsider its place and role in the world and use that huge potential of being the first trading partner for almost every country in the globe. The EU is one of the few unions that has enormous and maybe the largest potential of soft power. However, in the above-mentioned message the High Representative of the European Union for Foreign Affairs clearly articulates that the partners in the different corners of the world wait more from the EU, in particular in the area of security. Evaluating the content of the Strategy, the EU wants to make a shift from soft power to a smart one. Certainly, taking into account the factor of NATO and the not-so-successful experiences from the past, this has little probability, since the steps prescribed in the Strategy do not inspire confidence. However, it is important to record the fact that the European Union wants to increase its influence and presence in the world.

## Conclusion

The EU has adopted the new Strategy to resist to domestic and foreign policy challenges, and to be guided in its relations with the neighbors, so Armenia, as a member country of ENP and EaP, should devise its foreign policy and relationship with the EU, in particular, based on the imperative of the new situation, trying to make the bilateral partnership as productive as possible. The foreign policy of Armenia with the members of the Eurasian Economic Union should not be built on the expense of reducing the enormous potential of cooperation with the EU. Armenia needs periodically updated foreign policy doctrine and security strategy in order to resist to the new world order and global security challenges. The reforms supported by the EU in Armenia, establishment of democratic values and the system of institutions have no right of even small-scale failure because it represents voluminous work of multiple years, tens millions of euros and most importantly mutual trust and mutual work experience. The New Global Strategy of the EU gives opportunity to Armenia to review the main components of its foreign policy. If in the past Armenia considered Russia only as its security guarantor, after its membership to the EAEU, there are dangerous trends of one-sided economic dependence from Russia. The previous diplomatic mistakes should not be repeated. In the new circumstances of transformed foreign policy of the EU, there are new exceptional

opportunities for Armenia to diversify its foreign policy interests and priorities. Armenia should be proactive in effective implementation of institutional reform programs supported by the EU. Taking into account the shift in EU foreign policy from soft to smart power, Armenia should try to keep the solution of Artsakh problem in the attention span of the EU. In order to register achievements in this vector, Armenia should intensify its interparliamentary relations with the EU, personal contacts, periodically organize visits of European partners to Artsakh Republic, doing its best to position it as a country proceeding in the way of state-building and democracy and not as a conflict zone. The key to the resolution of Artsakh conflict will be found if Armenia is able to find additional restraint and prevention mechanisms which might be the EU and its New Global Strategy. For this objective, the EU supported reforms should be used to foster the implementation of real domestic reforms in Armenia, building of powerful economy and reforming the army. This process can be one of guarantees to upholding the stability in the region.

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԸ ԵՎՐԱԽՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**ԻՆՊԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՄԵՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ Բ. Գ. Թ., ԴՊՑԵՆՏ  
ԱՐՈՒՄՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ<sup>207</sup>**

### ՆԱԽԱԲԱՆ

Գլոբալացման գործընթացների և ժողովրդավարական սկզբունքների արմատավորման պայմաններում կարևոր հիմնահարցերից է արդյունավետ կառավարումը, ինչը ենթադրում է կառավարման համակարգի գործունեության թափանցիկություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն: Վերջիններս երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման գործոններն ու երաշխիքն են:

Մի շարք մասնագետների կարծիքով պետությունների ի հայտ գալը պայմանավորված է ռեսուրսների սակավությամբ և անհրաժեշտությամբ՝ ունենալ մեկ միասնական մարմին, որը կիրականացնի հանրային նշանակության բարիքների հավասարաչափ բաշխումը բոլորի միջև<sup>208</sup>: Այս թեզը կարելի է համարել հիմնավորված՝ հաշվի առնելով պետական ապարատի ներկայիս կառուցվածքն ու գործառույթները: Ժամանակակից համաշխարհային տնտեսությունը միջազգային մակարդակով համագործակցություն է պահանջում՝ բազմաթիվ խնդիրների հաղթահարման համար<sup>209</sup>: Օրակարգային է առաջին անհրաժեշտության սպառման առարկաներ արտադրելու կարողության հիմնահարցը, որի ապահովման բացակայությունը կարող է բերել մարդկային կապիտալի ու տեխնոլոգիական հնարավորությունների կորստի՝ հանգեցնելով արտաքին միջավայրից կախվածության<sup>210</sup>: Այսօր, ինչպես փաստում են միջազգային տնտեսագիտական հետազոտությունները, զարգացած երկրները ձգտում են «կապ հաստատել» զարգացող երկրների հետ ինչպես միջազգային քաղաքական ու տնտեսական համատեքստում ռազմավարական դիրքերի ամրապնդման, այնպես էլ առևտրատնտեսական համագործակցության նպատակով՝ արտահանման շուկայի

<sup>207</sup> Արուսյակ Ալեքսանյան, ք. գ. թ., Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն:

<sup>208</sup> Joseph E. Stiglitz., Economics of the Public Sector, W. W. Norton & Company, 2000, 3th edition.

<sup>209</sup> Robert J. Carbaugh., International economics. South-Western Cengage Learning, 2009, 12th edition.

<sup>210</sup> Robert M. Dunn Jr., John H. Mutti. International economics. Routledge, 2000, 5th edition.

ստեղծման ու հումք–ռեսուրսների ձեռքբերման համար:

Որևէ տնտեսություն, անկախ տնտեսական հզորության մակարդակից, այսօր ի վիճակի չէ զարգանալու մեկուսացված: Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով Ասիական ու Եվրոպական քաղաքակրթությունների խաչմերուկում, միաժամանակ պատերազմական իրավիճակի սպառնալիքի ներքո, արտաքին առևտրատնտեսական կապերում ձգտում է պահպանել հարաբերական չեզոքություն՝ համագործակցության եզրեր գտնելով և՛ Արևմուտքի, և՛ Արևելքի հետ:

Եվրոպական կառույցների հետ համագործակցությունը, եվրաինտեգրման գործընթացները Հայաստանի արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից են: Այդ համագործակցության շրջանակում իրականացվել են հանրային կառավարման ոլորտի համակարգային բարեփոխումներ, որոնց ուսումնասիրությունը, չափումը և գնահատումը կնպաստեն ոլորտի հետագա զարգացմանն ուղղված քաղաքականության մշակմանը: Այսպես՝ հողվածի շրջանակում կատարված հետազոտության նպատակն է՝ իրականացնելով համապատասխան քաղաքական և տնտեսական չափումներ՝ գնահատել հանրային կառավարման ոլորտի զարգացումների մակարդակը:

Հարցն առավել արդիական է դառնում 2013 թ. Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու որոշման հետ կապված, որին հաջորդեց ԵՄ–ի հայտարարությունը ասոցացման համաձայնագրի նախաստորագրման անհնարինության մասին: Վերջինիս առնչությամբ աշխատանքում կատարված չափումներն ու գնահատականներն անդրադառնում են նաև 2013 թ. նախորդող և հաջորդող տարիների ցուցանիշների համեմատական վերլուծությանը՝ որոշման հետևանքով հանրային կառավարման ոլորտում առաջացած փոփոխությունների բնույթն ու հետևանքները արձանագրելու նպատակով:

## 1. ՀԱՅԱՍՏԱՆ – ԵՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հանրային կառավարումը՝ որպես գիտություն, ձևավորվել է 20–րդ դարում: Այն քաղաքագիտության ճյուղ է, որի ուսումնասիրության առարկան կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների գործունեությունն է:

«Հանրային կառավարում» եզրույթը բավականին բազմաշերտ է: Դրա հստակ սահմանումը մասնագիտական շրջանակներում տարակարծությունների և քննարկումների առարկա է դարձել: Ըստ բազմաթիվ հեղինակների՝ այս

գիտությունը Մեծ Բրիտանիայի, Ամերիկայի և Ֆրանսիայի ձեռքբերումն է<sup>211</sup>:

Վուդրո Վիլսոնը առաջիններից էր, ով հանրային կառավարումը որակեց որպես նոր գիտակարգ: Նա 1887 թ. հեղինակեց իր նշանավոր «Հանրային կառավարման գիտությունը» աշխատությունը: Գրքում առաջին անգամ գիտական մակարդակով հստակ տարանջատվում են հանրային կառավարման տեսանկյունները, որի համար Վուդրո Վիլսոնին շնորհվել է հանրային կառավարման հայր կոչումը<sup>212</sup>: Չնայած աշխատությունն ի սկզբանե լայն ընդունելություն չգտավ, Վիլսոնն իր նախագահության տարիներին կարողացավ կյանքի կոչել գրքում արժարժված հիմնահարցերը՝ դնելով կայուն հանրային կառավարման համակարգի հիմքը: Աշխատության մեջ հստակ նշվում է, որ հանրային կառավարումը՝ որպես գիտություն, ձևավորվել է անհրաժեշտությունից ելնելով: Այսպիսով՝ հանրային կառավարումը կարելի է բնութագրել որպես գիտություն՝ կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի փոխհարաբերությունների մասին:

Հանրային կառավարման տեսական և պրակտիկ տեսանկյունները արդյունավետ է ուսումնասիրել հայաստանյան բարեփոխումների փորձի հիման վրա՝ Եվրոպական արժեքների որդեգրման համատեքստում:

Հայաստան – ԵՄ փոխհարաբերությունների հիմքը դրվել է Գործընկերության և համագործակցության համաձայնագրով<sup>213</sup>, որը ստորագրվել է 1996 թ. և ուժի մեջ մտել 1999 թ.: Համաձայնագրի հիմնական առաքելությունը առավել սերտ համագործակցությունն է տնտեսական, սոցիալական, քաղաքական ու մի շարք այլ ոլորտներում, իսկ նպատակը՝ Հայաստանի ժողովրդավարացումն է:

Հայաստան – ԵՄ հարաբերությունները նոր փուլ թևակոխեցին 2004 թ., երբ հունիսի 17–18–ը կայացած Եվրոպական միության գագաթաժողովում որոշվեց Հայաստանը Հարավային Կովկասի մյուս երկրների հետ մեկտեղ ընդգրկել Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) մեջ:

ԵՀՔ–ի միջոցով բարելավվել են ռեգիոնալ և ենթառեգիոնալ համագործակցության առկա ձևերը, ստեղծվել են լուրջ հիմքեր դրանց հետագա կատարելագործման համար: Այս համագործակցությունը հնարավորություն է տալիս ամրապնդելու կայունությունն ու անվտանգությունը, նպաստելու հակամարտությունների լուծմանն ուղղված ջանքերին: Սույն փաս-

<sup>211</sup> Леонид В. Смовгунов, Анатолий П. Альгин. Государственная политика и управление: Учебник, М., РОССПЭН, 2006.

<sup>212</sup> Woodrow Wilson. The Study of Administration. Political Science Quarterly, No. 2, 1887, pp. 197-222.

<sup>213</sup> “Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part”, April 22, 1996, // [www.eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:21999A0909\(01\)\\_](http://www.eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:21999A0909(01)_) (accessed 20.09.2016).

տաթուղթը պարունակում է երաշխիքներ ռեգիոնալ համագործակցության և ինտեգրման խորացման վերաբերյալ՝ դրանք դիտարկելով որպես ընդլայնված ԵՄ–ի արտաքին սահմանների մոտակայքում ծագող որոշ խնդիրների լուծման ուղիներ<sup>214</sup>:

Այս կարևորագույն հանգամանքները հաշվի առնելով՝ 2006 թ. նոյեմբերին ընդունվեց Եվրոպական հարևանության քաղաքականության գործընկերությունների ծրագիրը<sup>215</sup>: Ծրագիրն առնչվում է ժողովրդավարացման, մարդու իրավունքների, սոցիալ–տնտեսական բարեփոխումների, էներգետիկայի, հակամարտությունների և մի շարք այլ հիմնահարցերի: ԵՀԲ–ն նախատեսված է կանխարգելելու Եվրոպայում նոր բաժանարար գծերի առաջացումը՝ անդամ պետություններին առաջարկելով սերտ համագործակցություն քաղաքական, տնտեսական, անվտանգության մշակութային և այլ ոլորտներում: Անդամ պետությունները հնարավորություն են ունենում առանց որևէ խոչընդոտի մասնակցելու ԵՄ–ի կողմից առաջարկվող բազմաթիվ ծրագրերի:

Համաձայն Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի ազգային զեկույցի<sup>216</sup> (2010 թ.)՝ ընդհանուր առմամբ 2006–2010 թթ. Հայաստանում առաջընթաց է արձանագրվել քաղաքական երկխոսությունների և բարեփոխումների, դատական համակարգի թափանցիկության ուղղություններով, ինչպես նաև մաքսային և սահմանային հսկողության ոլորտներում: Զեկույցում մանրամասն նշվում է նաև, որ Հայաստանը 2010 թ. դրությամբ պահպանում է շրջահայաց մակրոտնտեսական քաղաքականությունը և իրականացրել է մի շարք կառուցվածքային միջոցառումներ՝ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը մեղմացնելու նպատակով: Ցավոք, ակնհայտ բարեփոխումներ չեն արձանագրվել ոստիկանության, անվտանգության և դատախազության համակարգերում:

Եվրոպական միության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության բարձրագույն ներկայացուցչությունը հրապարակել է նաև «Հարևանությունը խաչմերուկում Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը 2013 թ.» փաստաթուղթը<sup>217</sup>: Տվյալ

<sup>214</sup> Communication from the Commission: European Neighborhood Policy. Strategy Paper. Brussels, 12.5.2004 // [http://www.europarl.europa.eu/meetdocs/2004\\_2009/documents/com/com\\_com\(2004\)0373\\_com\\_com\(2004\)0373\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/2004_2009/documents/com/com_com(2004)0373_com_com(2004)0373_en.pdf) (accessed 18.09.2016).

<sup>215</sup> European External Action Service, European Neighborhood Policy// [www.eeas.europa.eu/topics/european-neighbourhood-policy-enp\\_en](http://www.eeas.europa.eu/topics/european-neighbourhood-policy-enp_en) (accessed 18.09.2016).

<sup>216</sup> Համատեղ աշխատանքային զեկույց. Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը 2010 թ. Հայաստանի ազգային զեկույց. [www.transparency.am/assets/files/11.pdf](http://www.transparency.am/assets/files/11.pdf) (մուտք՝ 18.09.2016):

<sup>217</sup> Տե՛ս «Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը Հայաստանում 2013 թ. առաջընթաց և առաջարկվող գործողություններ», Աշխատակազմի համատեղ աշխատանքային փաստաթուղթ. Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության

փաստաթուղթը ներկայացնում է 2013 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ԵՄ – Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում գրանցված առաջընթացը:

Համաձայն Եվրոպական հարևանության քաղաքականության 2010–2015 թթ. ազգային զեկույցի՝ Հայաստանում այս համագործակցության շրջանակներում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր: Ձեկույցում նաև մանրամասն անդրադարձ է կատարվում Հայաստանում 2009–2020 թթ. տրանսպորտի ոլորտի զարգացման ռազմավարությանը: Ինչ վերաբերում է ենթակառուցվածքային քաղաքականությանը, Հայաստանն առաջընթաց է արձանագրել Հյուսիս – Հարավ ճանապարհային միջանցքի (2009–2017 թթ.) և Երևան – Թբիլիսի երկաթգծի վերականգնման հարցերում:

Հայաստան – ԵՄ փոխհարաբերությունները նոր զարգացում ստացան Արևելյան գործընկերության շրջանակներում: Այսպես՝ 2009 թ. մայիսին Պրահայի գագաթաժողովի շրջանակներում մեկնարկեց ԵՄ արևելյան հարևանների համար նախատեսված Արևելյան գործընկերության ծրագիրը: ԵՄ-ն և իր արևելյան 6 գործընկերները, ներառյալ Հայաստանը, մեկնարկեցին երկարաժամկետ հավակնորդ քաղաքականություն, որը նպատակ ուներ աջակցելու այդ երկրներում լայնածավալ քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացմանը: Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցությունն իրականացվում է չորս տարբեր թեմատիկ պլատֆորմների միջոցով.

1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն,

2. տնտեսական ինտեգրում և համապատասխանեցում ԵՄ քաղաքականության հետ,

3. էներգետիկ անվտանգություն,

4. մարդկանց միջև շփումներ:

ԱլԳ-ի շրջանակներում ծավալված համագործակցությունն ուղղված էր նաև Հայաստանի և ԵՄ-ի միջև ասոցացման համաձայնագրի, ինչպես նաև դրա մասը կազմող խոր և համապարփակ ազատ առևտրի հաստատման շուրջ համաձայնագրի կնքմանը: ՀՀ – ԵՄ բանակցությունները ասոցացման համաձայնագրի շուրջ մեկնարկել են 2010 թ. հուլիսին, իսկ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ՝ 2012 թ. հունիսին: Արդեն 2013 թ. հուլիսին Հայաստանը և ԵՄ-ն ավարտեցին բանակցությունները նշված համաձայնագրի շուրջ՝ կապված Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու որոշման հետ. Հայաստանը ստանձնում էր միջազգային նոր հանձնառություններ<sup>218</sup>: Եվ չնայած համաձայնագրի չստո-

պաշտոնական կայք՝ [www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu\\_armenia\\_armenia\\_enp\\_2013\\_progress\\_report\\_hy.pdf](http://www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu_armenia_armenia_enp_2013_progress_report_hy.pdf) (մուտք՝ 19.09.2016):

<sup>218</sup> Տես ՀՀ ԱԳՆ-ի պաշտոնական կայք՝ <http://www.mfa.am/hy/country-by-country/eu/> (մուտք՝



րագրման որոշմանը՝ Հայաստանը և ԵՄ-ը շարունակում են քաղաքական և առևտրային երկխոսությունն այն ոլորտներում, որտեղ դրանք համադրելի են Հայաստանի՝ ԵԱՏՄ-ի հանդեպ նոր պարտավորությունների հետ:

2013 թ. նոյեմբերին Վիլնյուսում կայացած Արևելյան գործընկերության գագաթաժողովի ժամանակ ԵՄ-ն և Հայաստանը հանդես են եկել հայտարարությամբ՝ երկկողմ հարաբերությունների ապագա ձևաչափերի ձևավորման վերաբերյալ: 2013 թ. վավերացվել են մուտքի արտոնագրերի դյուրացման և ռեադմիսիայի մասին համաձայնագրերը, որոնք ուժի մեջ են մտել 2014 թ. հունվարի 1-ից:

Ինչ վերաբերում է պետական կառավարման բարեփոխումներին, ապա այս ոլորտում սահմանափակ առաջընթաց է գրանցվել: Այս ամենին զուգահեռ դեռևս նկատվում է անվստահություն պետական կառույցների հանդեպ: Համագործակցության շրջանակներում կառավարությունը մտադիր է շարունակել բարձրացնել տեղական կառավարման դերը տարածաշրջանային զարգացման ռազմավարության շրջանակներում, այդ թվում՝ ստեղծել Տարածաշրջանային զարգացման հիմնադրամ, որին ԵՄ-ը աջակցություն է ցուցաբերում:

## 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՄ ԾՐԱԳՐԵՐԸ

Եվրամիության անդամության թեկնածու և հավանական թեկնածու երկրների ջանքերը խրախուսելու և վերջիններիս հետ կնքված միջազգային համաձայնագրերի դրույթների պատշաճ իրագործումն ապահովելու նպատակով ԵՄ-ն սկսեց այդ երկրներին ցուցաբերել ֆինանսական աջակցություն, ինչը նոր ուժ հաղորդեց անդամության նախապատրաստական և բարեփոխումներ իրականացնող աշխատանքներին:

ԵՄ-ի կողմից կիրառվող գործիքների շրջանակներում Հայաստանը արդյունավետ օգտվում է առաջարկվող և ներկայացվող տարատեսակ ֆինանսական աջակցությունից, որոնց միակ և հիմնական նպատակն է բարեփոխել պետական կառավարման համակարգը՝ այն համապատասխանեցնելով ԵՄ չափանիշներին:

Առաջին ծրագիրը, որին Հայաստանը մաս է կազմել, մոտ 100 մլն եվրո ընդհանուր արժեքով «ՏԱՍԻՍ»-ն էր: Սա առաջին քայլն էր հայաստանյան օրենսդրությունը ԵՄ-ի հետ մերձեցնելու հարցում: Այն հիմնականում ուղղված էր շուկայական տնտեսության անցմանն ուղղված բարեփոխումների իրականացմանը: «ՏԱՍԻՍ»-ը նպաստել է Հայաստանի տնտեսա-

կան միջավայրի բարելավմանը՝ մասնավոր հատվածին և միջին ու փոքր ձեռնարկություններին աջակցելու միջոցով:

Արդեն 2002–2006 թթ. «ՏԱՍԻՍ» ծրագրի աջակցությունը Հայաստանին կենտրոնացել է ինստիտուցիոնալ, իրավական և վարչական աջակցության վրա:

1991–2006 թթ. «ՏԱՍԻՍ»-ի գործողությունների ընդհանուր արժեքը կազմել է 10 մլն եվրո՝ իր մեջ ընդգրկելով տարբեր ոլորտներ. մարդասիրական, մակրոտնտեսական, միջուկային անվտանգության ապահովում և այլն<sup>219</sup>:

Եվրոպական հարևանության և գործընկերության շրջանակներում 2007 թ. սկսվեց ֆինանսական աջակցության առաջին ծրագրերից մեկը, որն այդ ընթացքում տրամադրվեց 17 երկրների, այդ թվում նաև Հայաստանին:

Եվրոպական միության շահառու երկրները<sup>220</sup> օգտվում են ներքոնշյալ ֆինանսական աջակցության գործիքներից:

**Տեխնիկական աջակցության և տեղեկատվական փոխանակման գործիք (ԹԱՅԵՔՍ):** Առաջին անգամ այս ծրագիրը գործարկվել է 2006 թ.<sup>221</sup>: Այն Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքների ներքո իրականացվող ծրագիր է, որի հիմնական խնդիրն է տեխնիկական օժանդակության և խորհրդատվության տրամադրումը շահառու երկրներին՝ ազգային օրենսդրությունը ԵՄ օրենսդրության դրույթների հետ ներդաշնակեցման, ինչպես նաև այդ օրենսդրության իրագործման և արդյունավետության գործարկման նպատակով:

2007–2009 թթ. «Թայեքս» ծրագրի ընդհանուր ֆինանսական աջակցությունը կազմել է 11,5 միլիոն եվրո<sup>222</sup>՝ արդեն 2010 թ. հասնելով մինչև 98,2 միլիոնի<sup>223</sup>:

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են «Թայեքս»-ի շրջանակներում իրականացված ծրագրերը 2015 թ. դրությամբ Հայաստանի և մի շարք շահառու այլ երկրների համար:

<sup>219</sup> Communication from the Commission: European Neighborhood Policy. Strategy Paper. Brussels, 12.5.2004 // [http://www.europarl.europa.eu/meetdocs/2004\\_2009/documents/com\\_com\\_com\(2004\)0373\\_/com\\_com\(2004\)0373\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/2004_2009/documents/com_com_com(2004)0373_/com_com(2004)0373_en.pdf) (accessed 18.09.2016).

<sup>220</sup> Շահառու երկրներն են ԵՄ անդամության թեկնածու և հավանական թեկնածու երկրները, ինչպես նաև Եվրամիության հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված երկրները:

<sup>221</sup> TAIEEX and Twinning Activity Report 2015 // [http://ec.europa.eu/enlargement/pdf/taieex/20160804-taieex-activity-report-2015\\_en.pdf](http://ec.europa.eu/enlargement/pdf/taieex/20160804-taieex-activity-report-2015_en.pdf) (accessed 18.09.2016).

<sup>222</sup> Տես Եվրամիության պաշտոնական կայք՝ [www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu\\_armenia/newsletter\\_n1\\_eng.pdf](http://www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu_armenia/newsletter_n1_eng.pdf) (մուտք՝ 29.08.2016 թ.):

<sup>223</sup> Տես նույն տեղում:

## Աղյուսակ 1

### «Թայբքս» ծրագիրը Հայաստանում և շահառու այլ երկրներում (2015 թ.)<sup>224</sup>

Երկրներ	Փորձագիտական առաքելություն	Ուսումնական այցելություններ	Թրեյնինգներ
Հայաստան	2	1	1
Ուկրաինա	52	28	30
Վրաստան	21	6	6
Ադրբեջան	14	12	9
Մոլդովա	16	22	10
Բելառուս	1	6	5

«Թվինինգ»<sup>225</sup> ծրագիրը Հայաստանում մեկնարկել է 2007 թ.: Այն ուղղված է Հայաստանի պետական կառավարման մարմինների միջև գործընկերային համագործակցության վրա: Այս ծրագրի շնորհիվ հնարավորություն է ստեղծվել, անդամ երկրների օրենսդրության փորձը ուսումնասիրելով, հայաստանյան օրենսդրությունը համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությանը: Հայաստանում իրականացվել է ավելի քան 13 «Թվինինգ» ծրագիր, մի քանիսն ընթացքի մեջ են: «Թվինինգ» ծրագրի գործարկման շրջանակը բավականին լայն է և ընդգրկում է հետևյալ 5 բաղադրիչները՝ մաքսային օրենսդրություն, մաքսային ընթացակարգեր, գործարար միջավայրի հետ հարաբերություններ ու լիազորված տնտեսական օպերատորների ներդրում, մաքսային համակարգում գործող ռիսկերի կառավարման համակարգ և հետբացթողումային ընթացակարգերի բարելավում:

Հայաստանի մաքսային ծառայության հզորացմանն ուղղված 24-ամսյա ԵՄ «Թվինինգ» ծրագիրը<sup>226</sup>, որի բյուջեն կազմել էր 1 մլն եվրո, մեկնարկել էր 2012 թ. սեպտեմբերին՝ նպատակ ունենալով զարգացնել շահառու երկրներում համապատասխան կառույցները դասընթացների, վերակազմավորման ու ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու միջոցով: Հայաստանում ծրագրի շահառու կառույցներն էին պետական եկամուտ-

<sup>224</sup> TAIEX - Eu Member States Flash Report. Half-yearly statistics // [https://www.urm.lt/uploads/default/documents/uzienio\\_politika/TAIEX/S1-2015.pdf](https://www.urm.lt/uploads/default/documents/uzienio_politika/TAIEX/S1-2015.pdf) (accessed 18.09.2016).

<sup>225</sup> Institution building in the framework of European Union Polices Common Twinning Manual. Revision 2012 // [www.ec.europa.eu/enlargement/pdf/financial\\_assistance/institution\\_building/2012/manual\\_may\\_2012.pdf](http://www.ec.europa.eu/enlargement/pdf/financial_assistance/institution_building/2012/manual_may_2012.pdf) (accessed 18.09.2016).

<sup>226</sup> ՏՆԱ ՀՀ Մաքսային ծառայության պաշտոնական կայք՝ <http://www.customs.am/Content.aspx?itn=csiRTwinning> (մուտք՝ 02.10.2016 թ.):

ների կոմիտեն, ֆինանսների նախարարությունն ու էկոնոմիկայի նախարարությունը:

«Թվինինգ» կառավարության անդամներին հնարավորություն է տալիս համագործակցելու ԵՄ անդամ երկրների անմիջական գործընկերների հետ և սովորելու նրանց փորձի հիման վրա:

2014 թ. սեպտեմբերին սկսված հանրային հատվածի կառավարիչների վերապատրաստման «Թվինինգ» ծրագրի երկամյա գործունեության արդյունքներն են.

1. Ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտի 5 նոր մշակված նախագծերի և ներքին աուդիտի վերաբերյալ իրավական ակտերի և կանոնակարգի բարելավման առաջարկություններ, ինչը հնարավորություն կընձեռի ավելի արդյունավետ ներդրելու և կիրառելու պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) համակարգը,

2. «Թվինինգ» ծրագրի ընթացքում ներքին աուդիտի ոլորտում 14 և ֆինանսական կառավարման ու հսկողության ոլորտում 9 վերապատրաստված և հավատարմագրված ուսուցողներ, որոնք իրենք ներդրում կունենան Հայաստանում ՊՆՖՀ համակարգի զարգացման գործում, ինչպես նաև ՊՆՖՀ ոլորտի բարեփոխումների ընթացքը առավել արդյունավետ համակարգելու նպատակով Հայաստանին ֆինանսական կառավարման համակարգի կարողությունների զարգացում:

**ՍԻԳՄԱ**<sup>227</sup>: Կառավարման բարելավմանն ուղղված ծրագիր է, որը Հայաստանում գործում է 2008 թ.–ից: Ցայսօր 5 նախագիծ է իրականացվել պետական գնումների, ֆինանսական վերահսկողության, պետական կառավարման, հանրային–մասնավոր համագործակցության և լիցենզավորման ոլորտներում:

Հայաստանում միջսահմանային համագործակցության «Թայքս» և «Սիգմա» ծրագրերի իրականացմանը աջակցելու նպատակով 2008 թ. ծրագրերի կառավարման գործակալություն է ստեղծվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո:

Դրա շրջանակում իրականացված խոշորագույն ծրագիրը Հայաստանի Քաղաքացիական ծառայության (ՔԾԽ) համակարգի զարգացմանն ուղղված աշխատանքներն են: ԵՄ «Սիգմա» ծրագիրը համագործակցում է ՀՀ ՔԾԽ–ի հետ 2009 թ.–ից, երբ փորձագիտական խումբը համակողմանի ուսումնասիրել և գնահատել է Հայաստանում քաղաքացիական ծառայության համակարգը՝ նկարագրելով դրա ուժեղ և թույլ կողմերը:

Համակարգի կատարելագործման նպատակով «Աջակցություն Հայաստանում քաղաքացիական ծառայության բարեփոխումների» ծրագրի շրջա-

<sup>227</sup> Sigma. A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU. Armenia and Sigma // <http://www.sigmaxweb.org/countries/armenia-sigma.htm> (accessed 30.09.2016).

նակում տեղական և միջազգային փորձագետների ներգրավվմամբ ԵՄ-ն օժանդակում է ՀՀ ՔԾԽ-ին, քաղաքացիական ծառայության եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրմանը, ինչպես նաև բարեփոխումների իրականացմանը մեթոդական և փորձագիտական աջակցություն ցուցաբերելու հարցերում:

**Ոլորտային քաղաքականության աջակցության ծրագիր (SPSP)<sup>228</sup>:** Ծրագիրն աջակցում է ՀՀ կառավարությանը պետական հատվածի քաղաքականության իրականացման հարցում:

**Շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարման թեմատիկ ծրագիր՝ ներառյալ էներգետիկայի վերաբերյալ (EBRTP)<sup>229</sup>:** Ծրագիրն ուղղված է շրջակա միջավայրի և բնական պաշարների կառավարման խնդիրների լուծմանը:

**Բյուջետային աջակցության ծրագիր:** Ծրագրի ֆինանսավորման շրջանակներում առանձնացվող հիմնական ուղղությունը աջակցությունն է գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը: 2013 թ. ֆինանսական աջակցությունը կազմել է 25 մլն եվրո:

**2010–2015 թթ. ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող վերակառուցման ծրագրերը<sup>230</sup>:** ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանը արտոնյալ պայմաններով վարկավորվում է Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) կողմից: Բացի այդ՝ ՀՀ Կառավարությունը դրամաշնորհներ է ստանում ԵՄ հարևանության ներդրումային գործիքների միջոցով:

Ստորև ներկայացնում ենք վերակառուցման և ենթակառուցվածքների բարելավման ծրագրերը.

• **Հյուսիս – Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր:** Այն խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է, որի նպատակն է միջազգային բարձր ստանդարտներին բավարարող 556 կմ ընդհանուր երկարությամբ Մեղրի – Երևան – Բավրա ավտոճանապարհի միջոցով երկրի Հարավը կապել Հյուսիսի հետ: Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս ծրագիրը կյանքի կոչելու համար պայմանագրեր են կնքվել Ասիական զարգացման և Եվրոպական ներդրումային բանկերի հետ, որոնց համաձայն՝ ծրագրի ավարտի թիրախային ժամկետներ են սահմանվել 2017 և 2019 թթ.: Ծրագրի հաշվարկային արժեքը կազմել է 1,5 մլրդ ԱՄՆ դոլար<sup>231</sup>:

<sup>228</sup> EU-Armenia, Eastern Partnership. Supporting Reforms, Promoting Change.

<sup>229</sup> Տես Ծանոթություն ԵՄ-ի աջակցության և զարգացման ծրագրերն Հայաստանում, սեպտեմբեր, 2011 թ.:

<sup>230</sup> Տես ՎՋԵԲ-ի պաշտոնական կայք՝ [http://www.ebrd.com/home\\_\(մուտք\) 28.09.2016](http://www.ebrd.com/home_(մուտք) 28.09.2016);

<sup>231</sup> Տես Հյուսիս – Հարավ ճանապարհային միջանցքի ներդրման ծրագրի պաշտոնական կայք՝ [www.northsouth.am/](http://www.northsouth.am/) (մուտք՝ 25.09.2016):

• **Հայաստանի փոքր քաղաքների ջրամատակարարման ծրագրի ճարտարագիտական նախագիծ և տեխնիկական վերահսկողություն:** Այս ծրագիրն ուղղված էր շուրջ 300.000 բնակչի համար խմելու ջրի որակի բարձրացմանը՝ հասցնելով այն միջազգային չափանիշներին: Ծրագրի շրջանակներում ԵՆԲ-ն և ՎԶԵԲ-ը տրամադրել են յուրաքանչյուրը 6,5 մլն եվրո գումարի չափով վարկային միջոցներ: Ծրագրի իրականացման վերջնաժամկետն էր 2015 թ.<sup>232</sup>:

• **Բագրատաշեն, Բավրա, Գոգավան անցակետերի արդիականացման ծրագիր**<sup>233</sup>: Ծրագիրն ուղղված էր Հայաստանի պետական սահմանին «Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան» անցակետերը օրինական հատող մարդկանց և ապրանքների շարժի դյուրացմանը, ինչպես նաև սահմանների համալիր կառավարումը միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը:

Ծրագրի ֆինանսավորման նպատակով ՎԶԵԲ-ը տրամադրել է 10,3 մլն եվրո, ԵՆԲ-ը՝ 30,316 մլն եվրո դրամաշնորհ: Ծրագրի իրականացման վերջնաժամկետն է 2015 թ.:

Վերոնշյալ ծրագրերն առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար ՀՀ Կառավարությունն ընդունեց Եվրոպական հարևանության և գործընկերության շրջանակներում իրականացվելիք «Թվինիզ», «Թայեքս» «Սիգմա» և այլ գործիքների ներքո ծրագրերի արդյունավետ կատարումն ապահովելու N 605-Ն որոշումը<sup>234</sup>:

Համագործակցության շրջանակներում 2014 թ. նոյեմբերի 3-ին կնքվել է ՀՀ – ԵՄ փոխըմբռնման հուշագիր, որով սկիզբ է դրվել Եզակի աջակցության շրջանակին (Single Support Framework)՝ 140–ից 170 մլն եվրո ծավալով (2014–2017 թթ.):

Եզակի աջակցության շրջանակը Հայաստանին ԵՄ-ի կողմից աջակցության տրամադրման ծրագրային փաստաթուղթ է: Դրանով սահմանվել են աջակցության տրամադրման 3 գերակա ուղղությունները.

1. մասնավոր սեկտորի զարգացում,
2. հանրային կառավարման բարեփոխումներ,

<sup>232</sup> Տե՛ս Հայաստանի փոքր քաղաքների ջրամատակարարման ծրագրի ճարտարագիտական նախագիծ և տեխնիկական վերահսկողություն: Աշխատանքային նախագիծ: Հատոր III: Շրջակա միջավայրի կառավարման պլան // [www.armwater.am/files/adb/EBRD/armenian/emp/10.%20CHAMBARAK-EMP-ARM.pdf](http://www.armwater.am/files/adb/EBRD/armenian/emp/10.%20CHAMBARAK-EMP-ARM.pdf) (մուտք՝ 25.09.2016):

<sup>233</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Բագրատաշեն, Բավրա և Գոգավան պետական սահմանային անցման կետերի արդիականացում» ծրագիրը:

<sup>234</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 29 մայիսի, 2009 թ. N 605-Ն որոշում «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող «Թինինգ», «Թայեքս», «Սիգմա» և այլ գործիքների ծրագրային առաջարկները և հայտերը պատրաստելու, ներկայացնելու և հաստատված ծրագրերն իրականացնելու մասին» // [www.arlis.am/DocumentView.aspx?docid=51825](http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=51825) (մուտք՝ 25.08.2016):

3. արտադրության ոլորտի բարեփոխումներ:

Այս փաստաթղթով նախատեսվում է նաև լրացուցիչ աջակցություն հանրային ինստիտուտների արդիականացման և քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման համար:

2014–2020 թթ. ԵՄ հարևանության քաղաքականության ֆինանսավորման հիմնական գործիքն է Եզակի աջակցության շրջանակը, որը փոխարինելու է 2007–2013 թթ. գործող Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքին (European Neighborhood and Partnership Instrument):

2014 թ. նոյեմբերի 3–ին նաև հաստատվել էր գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ոլորտային աջակցության ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը՝ 25 մլն եվրո ծավալով: Այն հաստատվել էր 2013 թ.՝ որպես ՀՀ – ԵՄ ամենամյա գործողությունների ծրագրի մաս:

Համեմատության մեջ դիտարկենք Եզակի աջակցության շրջանակը ԱԳ 6 երկրների համար:

**Աղյուսակ 2**

**Եզակի աջակցության շրջանակը ԱԳ երկրների համար**

ԵՐԿՐՆԵՐ	Եզակի աջակցության շրջանակներում ֆինանսական աջակցությունը (մլն եվրո, եթե այլ բան նշված չէ)	
	2011–2013	2014–2017
Հայաստան	157,3	140–170
Մոլդովա	273,1	335–410
Ուկրաինա	470,1	11 մլրդ
Ադրբեջան	122,5	77–94
Բելառուս	Կասեցվել է	71–89
Վրաստան	180,29	335–410

Վերլուծելով աղյուսակի տվյալները՝ ակնհայտ է դառնում, որ 2011–2013 թթ. և 2014–2017 թթ. համեմատած մյուս պետությունների հետ՝ ամենամեծ ֆինանսական աջակցությունը ստացել է Ուկրաինան՝ համապատասխանաբար 470,1 մլն և 11 մլրդ եվրո: Մասնավորապես 2014–2017 թթ. աջակցությունը տրամադրվել է այլ սկզբունքով՝ հաշվի առնելով Ուկրաինայում ֆինանսական ճգնաժամը: Նվազագույն աջակցությունը տրամադրվել է Բելառուսին նախորդ աջակցության կասեցումից հետո: 2014–2017 թթ. առավել աջակցություն են ստացել ասոցացման համաձայնագիրը

ստորագրած և վավերացրած պետությունները:

Այս ամենը փաստում է, որ 2014–2017 թթ. համար նախատեսված ֆինանսական աջակցությունը տրամադրվում է տարբեր սկզբունքներով՝ հաշվի առնելով ֆինանսական և քաղաքական իրադարձությունները, դրանց ճգնաժամի հետևանքները վերոնշյալ երկրներում:

### **3. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԸ**

Հանրային կառավարման զարգացումը գնահատվում է մի շարք ցուցանիշներով: Այդ ցուցանիշները հաշվարկվում են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից երկրի կառավարման զարգացման միտումները գնահատելու, ինչպես նաև այլ պետությունների հետ համադրելու համար: Հետազոտության շրջանակում հանրային կառավարման զարգացման քաղաքական չափումների համար օգտվել ենք Համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող 6 ինդեքսներից՝ «Համաշխարհային կառավարման ցուցանիշներից» (տես աղյուսակ 3): Ներկայացվող ցուցանիշները գնահատվում են 0–100 բալային սանդղակով, որում բարձր միավորները բնորոշում են հանրային կառավարման առավել բարձր արդյունավետությունը:



**Աղյուսակ 3**

**«Հանրային կառավարման համակարգը բնութագրող ցուցանիշները (1996–2015)»<sup>235</sup>**

Տարեթիվ	ՈԼՈՐՏՆԵՐ					
	Հաշվետվողականություն	Քաղաքական կայունություն և բռնության բացակայություն	Կառավարման արդյունավետություն	Կարգավորման որակ	Օրենքի գերակայություն	Կոռուպցիայի կարգավորում
1996	43,06	54,81	59,22	62,44	49,52	67,48
1997						
1998	51,67	39,42	50,97	65,37	52,86	44,17
1999						
2000	49,76	38,94	50,00	62,44	49,52	51,46
2001						
2002	43,06	56,73	62,14	63,41	50,95	48,06
2003	40,19	70,19	61,17	66,34	53,33	48,54
2004	41,15	60,58	66,02	65,85	48,10	47,09
2005	38,76	59,62	60,68	62,93	51,43	44,66
2006	32,06	51,92	56,31	67,32	47,62	44,66
2007	31,58	63,94	52,17	68,60	48,10	40,10
2008	29,19	58,85	58,94	68,12	53,59	42,03
2009	30,19	69,34	64,29	70,00	48,58	47,62
2010	30,19	61,79	60,48	69,52	47,64	42,18
2011	32,24	58,02	61,79	69,81	49,07	44,81
2012	35,98	62,74	62,74	72,17	50,00	48,11
2013	36,45	61,79	65,57	67,92	52,80	51,89
2014	37,75	47,87	60,77	67,94	54,07	51,67
2015	36,76	51,18	60,29	70,81	53,59	51,20

Տվյալները ցույց են տալիս, որ Եվրոպական միության առաջարկած ծրագրային համագործակցությունը դրական ազդեցություն է ունեցել հան-

<sup>235</sup> Տես Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home> (մուտք՝ 28.09.2016):

րային կառավարման ոլորտների բարեփոխումների վրա: Էական առաջընթաց է գրանցվել 2010 թ. սկսած հատկապես կառավարման արդյունավետության և կառավարման որակի բարձրացման ոլորտներում: Հենց այս ոլորտներում են հիմնականում իրականացվել ԵՄ առաջարկած ծրագրերը, և ստացել են բավականին մեծ ֆինանսական միջոցներ: Տվյալներից պարզ է դառնում, որ դեռ շատ անելիքներ ունենք հաշվետվողականության դաշտում, որում ներառված են զանգվածային լրատվամիջոցների, խոսքի ազատությունը և կոռուպցիայի դեմ պայքարը: Դրական տեղաշարժ է գրանցվել իրավունքի գերակայության ապահովման ոլորտում: Անհնար է չնկատել, որ դրական միտումը շարունակվել է մինչև 2013–2014 թթ., որից հետո սկսվել է համագործակցության ոլորտների վերանայման գործընթացը՝ պայմանավորված Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամությամբ: Սա նշանակում է՝ չնայած նրան, որ շարունակվելու է ԵՄ համագործակցությունը Հայաստանի հետ, այնուհանդերձ հետագա տարիների համար կնկատվի համագործակցության ոլորտների կրճատում: Սակայն այս տարիներին համագործակցության շնորհիվ իրականացված բարեփոխումները բեկումնային էին հանրային կառավարման գերակա ոլորտների համար, որոնք մեծ դրական ազդեցություն են ունեցել նաև տնտեսական զարգացման վրա:

#### 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԸ

Վերջին տասնամյակներում միջազգային հեղինակավոր կազմակերպություններն առաջարկում են մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա կազմված համաթվեր, որոնք առավել բազմակողմանի գնահատական են տալիս երկրին՝ և՛ կատարողականի, և՛ երկրի կողմից ընձեռվող հնարավորությունների մասին:

Հանրային ոլորտի բազմաշերտ ու ճյուղավոր կառուցվածքն ուսումնասիրելու և իրականացված միջոցառումները բնութագրելու համար հողվածում հետազոտվում և ներկայացվում են մի շարք ինդեքսներ, որոնք առանձին մեթոդաբանությամբ գնահատում են առկա իրավիճակը սեկտորում: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել հետևյալ ցուցանիշներին՝

- Տնտեսական ազատության ինդեքս (The Index of Economic Freedom)
- Համաշխարհային մրցունակության ինդեքս (The Global Competitiveness Index)
- Գործարար ակտիվության ինդեքս (Doing Business)

**Տնտեսական ազատության ինդեքսը** (The Index of Economic Freedom) հաշվարկվում է ԱՄՆ–ի «ժառանգություն» հիմնադրամի կողմից՝ սկսած

1995 թվականից: Չեկույցում տնտեսական ազատությունը սահմանվում է որպես յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունք ղեկավարել իր աշխատանքային ուժը և սեփականությունը<sup>236</sup>: Ինդեքսը գնահատվում է 0 – 100 բալային սանդղակով, որում 100–ը բնորոշվում է որպես «առավելագույն ազատության մակարդակ», իսկ 0–ն՝ «ազատության բացարձակ բացակայություն»<sup>237</sup>: Տնտեսական ազատության ինդեքսը հաշվարկվում է 4 ենթաինդեքսներում խմբավորված տասը տարրերից:

### Աղյուսակ 4

#### Տնտեսական ազատության ինդեքսի դինամիկան 2006 – 2015 թթ.<sup>238</sup>

		2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
<b>Ընդհանրացված գնիտկն</b>		68,6	69,9	69,9	69,2	69,7	68,8	69,4	68,9	67,1	67,0
<b>Օնենքի գերակայություն</b>	Սեփ. իրավունքի պաշտ.	30,0	35,0	35,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	20,0	20,0
	Կոռուպցիայից ազատ.	29,0	29,0	30,0	29,0	27,0	26,0	26,0	26,7	36,0	37,0
<b>Կառավարության չափ</b>	Հարկաբյուջ. ազատ.	89,7	89,0	90,0	89,3	89,2	89,3	88,0	86,5	84,4	83,8
	Կառավարութ. ծախսումներ	90,8	86,4	89,7	90,9	85,7	74,9	82,1	81,3	82,8	80,7
<b>Կարգավորման արդյունավետություն</b>	Գործարարության ազատ.	80,8	81,3	83,7	83,4	82,2	87,8	87,6	83,1	82,7	77,5
	Աշխատանքի ազատ.	70,3	68,2	66,3	70,6	75,9	76,6	77,1	78,5	64,3	62,2
	Դրամավարկային ազատ.	80,3	84,6	77,8	72,9	76,0	73,1	73,0	77,0	70,6	72,8

<sup>236</sup> Սահմանումը տես «Ժառանգություն» հիմնադրամի պաշտոնական կայքում սույն հղմամբ՝ <http://www.heritage.org/index/about> (մուտքը՝ 01.09.2016 թ.), Frequently Asked Questions բաժնում, Q.1. What is economic freedom? Հարցի ներքո:

<sup>237</sup> Տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը տես հետևյալ հղմամբ՝ <http://www.heritage.org/index/about> (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>238</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից «The Heritage Foundation»-ի պաշտոնական կայքում հրատարակվող Տնտեսական ազատության ինդեքսի 2007 – 2016 թթ. հաշվետվությունների հիման վրա, <http://www.heritage.org/index/> (մուտք՝ 01.09.2016 թ.):

Բաց շուկաներ	Առևտրի ազատ.	85,6	85,0	86,4	80,5	85,5	85,4	85,4	85,5	85,4	85,6
	Ներդրումների ազատ.	60,0	70,0	70,0	75,0	75,0	75,0	75,0	70,0	75,0	80
	Ֆինանսական ազատ.	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70

Ներկայացված ժամանակահատվածում ՀՀ-ն պահպանել է «չափավոր ազատության» (moderately free) իր մակարդակը: Ակնհայտորեն խիստ տատանումներ որևէ ցուցանիշի մասով չեն գրանցվել, բացառապես 2011 թվականի Կառավարության ծախսերի գնահատականի, որը 2010 թ. կազմել է 85,7, ապա 2011 թ. կտրուկ նվազել մինչ 74,9՝ արդեն 2012-ին կազմելով 82,1: Կառավարության ծախսերը տնտեսական անկման պայմաններում գործարար ակտիվության խթանիչ ուժն են, եթե դրանք ներառում են ենթակառուցվածքների<sup>239</sup> և մարդկային կապիտալի կատարելագործման ծախսերը: Հարկային եկամուտների զգալի մասը սովորաբար բաշխվում են վարչական ծախսերի իրականացման համար: 2011 թ. կառավարության ծախսերի գնահատականի նվազումը կարելի է բացատրել այդ ժամանակաշրջանում առաջացած արտաքին պարտքի՝ ՀՆԱ 50 %-ի շեմին հասնելու սպառնալիքով, ինչը բացասաբար է ազդել գնահատականի վրա՝ մատնանշելով ֆինանսական միջոցների ոչ ռացիոնալ օգտագործումը:

Կոռուպցիոն ռիսկերի և սեփականության իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակը, որ բարձրաձայնվում է տարբեր ամբիոններից, այստեղ առավել խոսուն է ստացված խիստ ցածր գնահատականներով՝ ի տարբերություն մյուս ցուցանիշների: Այս ոլորտները տևական ժամանակ բարելավման փուլում են ՀՀ և արտաքին գործընկերների համատեղ ծրագրերի շրջանակներում: 01.2013 – 01.2014 ընթացքում 198,920.00 եվրոյի ընդհանուր ֆինանսավորմամբ «Հանրային ոլորտում կոռուպցիայի ռիսկերի իրավիճակային վերլուծություն» է իրականացվել «Application Européenne De Technologies Et De Services Sàrl» ընկերության կողմից, որի արդյունքում հաղթահարման մոդելներ են առաջարկվել պատասխանա-

<sup>239</sup> Ինչպես ցույց է տալիս վիճակագրության, մասնավորապես՝ ՀՀ Կառավարությանն ու ԿԲ-ին տրամադրված արտաքին վարկերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունը, նման ծախսերը մեզ մոտ հիմնականում ֆինանսավորվում են արտաքին աղբյուրներից: Տես «Գործող վարկային պայմանագրեր» բաժնում «ՀՀ կառավարությանը և Կենտրոնական բանկին տրամադրված արտաքին վարկերի պայմանները 31.12.2015թ. դրությամբ» ֆայլը ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <http://minfin.am/index.php?cat=79&lang=1> (մուտք՝ 30.09.2016 թ.):

տու համապատասխան մարմիններին<sup>240</sup>: Աշխատանքներ են իրականացվել նաև սեփականության, մասնավորապես մտավոր սեփականության ինստիտուտի զարգացման հարցում: «Kongeriget Danmarkroyaume Du Danemarkkingdom Of Denmark» ընկերության կողմից 01.2012 – 01.2014 ժամանակահատվածում իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հզորացումը» (Strengthening the Enforcement of Intellectual Property Rights in the Republic of Armenia) ծրագիրը՝ ուղղված մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ու ադմինիստրատիվ զարգացմանը<sup>241</sup>:

2016 թ. գեկույցում, այնուամենայնիվ, չնայած հաջողությամբ իրականացված նախագծերին, սեփականության իրավունքը, կոռուպցիան, ինչպես նաև աշխատուժի ազատությունը շարունակում են մտահոգիչ մնալ, մինչդեռ ոգևորիչ են պետական ֆինանսների և բաց շուկաների համար արված որակումները որպես 2015 թ. նշանակալի ձեռքբերում:

Ամփոփելով՝ հարկ է ընդգծել, որ Ինդեքսը նշանակալի անկում է գրանցել 2013 թվականից հետո, ինչը կարելի է մեկնաբանել քաղաքական լուրջ քայլերով, որ ձեռնարկեց և իրականացրեց ՀՀ պետական ապարատը՝ դառնալ Մաքսային միության (այնուհետև ԵԱՏՄ) անդամ և դադարեցնել ԵՄ ասոցացման գործընթացը<sup>242</sup>: Ինդեքսի դինամիկան տրված է ստորև գծապատկերում՝


<sup>240</sup> Տե՛ս ՀՀ-ում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք՝ [http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list\\_of\\_projects/308819\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list_of_projects/308819_en.htm) (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>241</sup> Տե՛ս ՀՀ-ում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք՝ [http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list\\_of\\_projects/279997\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list_of_projects/279997_en.htm) (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>242</sup> Պայմանագիր ՀՀ՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին, տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=95214>, բնօրինակը՝ [https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia\\_11102014](https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia_11102014) (մուտք՝ 01.09.2016 թ.):

**Գծապատկեր 1**

**Տնտեսական ազատության ինդեքսի ընդհանրացված գնահատականի դինամիկան 2000 – 2015 թթ.<sup>243</sup>**



**Համաշխարհային մրցունակության ինդեքսը** (The Global Competitiveness Index) հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից՝ սկսած 2005 թվականից: Ձեկույցում մրցակցայնությունը սահմանվում է որպես ինստիտուտների, քաղաքականության և գործոնների համախումբ, որոնք որոշում են տնտեսության արտադրողականությունը, որն իր հերթին կանխորոշում է երկրի պոտենցիալ զարգացման մակարդակը<sup>244</sup>: Ինդեքսը գնահատվում է 1 – 7 բալային սանդղակով, որտեղ 7–ը բնորոշվում է որպես «առավել մրցակցային», իսկ 1–ը՝ «նվազագույն մրցակցային»: Երկրների մրցունակության ինդեքսը բաղկացած է 12 ենթաինդեքսներից՝ խմբավորված 3 կատեգորիաներում:

<sup>243</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից «Ժառանգություն հիմնադրամ» («The Heritage Foundation») վերլուծական կենտրոնի պաշտոնական կայքում հրատարակվող Տնտեսական ազատության ինդեքսի 2000–2015 թթ. վիճակագրական տվյալների հիման վրա // <http://www.heritage.org/index/> (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>244</sup> Սահմանումը տես «Համաշխարհային տնտեսական ֆորում»-ի պաշտոնական կայքում սյն հղմամբ՝ <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2015-2016/faqs/>, Frequently Asked Questions բաժնում, General questions relating to the Global Competitiveness Index ենթաբաժնում, How does the report defines competitiveness? հարցի ներքո (մուտք՝ 01.09.2016 թ.):

**Աղյուսակ 5**

**Համաշխարհային մրցունակության ինդեքսի միտումները  
2006 – 2015 թթ.<sup>245</sup>**

Ցուցանիշ		2006	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Հիմնական պայմաններ	Հաստատություններ	3,44	3,50	3,49	3,50	3,65	3,90	3,98	3,82	3,78
	Ենթակառուցվածքներ	2,66	2,87	3,25	3,46	3,75	3,71	3,81	3,83	3,72
	Մակրոտնտեսական կայունություն	4,33	4,73	4,78	4,23	4,19	4,50	4,88	4,62	4,71
Արդյունավետության գործոններ	Առողջապահություն և տարրական կրթություն	6,40	5,06	5,00	5,37	5,37	5,53	5,46	5,33	5,35
	Բարձրագույն կրթություն և վերապատրաստումներ	3,58	3,43	3,46	3,66	4,01	4,22	4,18	5,20	4,26
	Ապրանքային շուկայի արդյունավետություն	3,60	3,75	3,65	3,72	3,88	4,22	4,34	4,37	4,46
	Աշխատուժի շուկայի արդյունավետություն		4,57	4,61	4,61	4,71	4,72	4,49	4,20	4,30
	Ֆինանսական շուկայի զարգացվածություն		3,68	3,79	3,60	3,76	3,97	3,91	3,71	3,53
	Տեխնոլոգիական պատրաստվածություն	2,81	2,56	2,86	2,96	3,43	3,40	3,74	3,72	3,67
	Շուկայի չափ		2,48	2,69	2,50	2,57	2,62	2,73	2,75	2,81

<sup>245</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից «Համաշխարհային տնտեսական ֆորում»-ի (World Economic Forum) պաշտոնական կայքում հրատարակվող Համաշխարհային մրցունակության ինդեքսի 2006-2015 թթ. հաշվետվությունների հիման վրա, <http://reports.weforum.org/> (մուտք՝ 01.09.2016 թ.):

Նորարարության և կատարելագործման գործոններ	Գործարարության զարգացվածություն	3,34	3,30	3,35	3,33	3,43	3,70	3,82	3,73	3,65
	Նորամուծություններ	3,00	2,77	2,71	2,63	2,74	2,89	2,99	2,95	3,02

Տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում հետզհետե բարելավվել են «Հիմնական պայմաններին» վերաբերող ցուցանիշները:

Որքան էլ զարմանալի է, «Նորարարության կատարելագործման գործոնների» ոլորտը Հայաստանի թույլ օղակներից է, թեպետ, օրինակ, «Գլոբալ նորարարական ինդեքս»-ի 2015 և 2016 թթ. զեկույցներում<sup>246</sup> անընդմեջ ՀՀ-ն Չինաստանի, Հնդկաստանի, Վիետնամի և այլ առաջատարների հետ որակվել է որպես «նորարարական գերազանցիկ» (innovation outperformers):

Համաշխարհային տնտեսական ֆորումի վերլուծություններում Հայաստանը դիտարկվում է ցածր միջին եկամուտ ունեցող երկրների շարքում<sup>247</sup>, իսկ համեմատական վերլուծություններում ներկայացվում է որպես ԱՊՀ անդամ երկիր<sup>248</sup>:

Համաձայն պաշտոնական կանխատեսումների՝ 2017 թ. Հայաստանը պետք է գտնվի 65–70 տեղում՝ ունենալով միջազգային մրցունակության ընդհանուր հենանիշի արժեքը 4,20–4,25 միջակայքում, իսկ 2025 թ. դրությամբ՝ 50–55 տեղում՝ ընդհանուր հենանիշի արժեքով 4,35–4,40 միջակայքում<sup>249</sup>:

<sup>246</sup> Ինդեքսի մասին մանրամասն տեղեկատվությունը, ինչպես նաև զեկույցները հասանելի են Նորարարությունների համաշխարհային ինդեքսի պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <https://www.globalinnovationindex.org/about-gii/history> (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>247</sup> ՀՀ բնութագիրն ըստ «Համաշխարհային տնտեսական ֆորում»-ի վերջին հրապարակման տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2015-2016/economies/#economy=ARM> (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>248</sup> ՀՀ տնտեսությունը ԱՊՀ կազմում ինֆորաֆիկ ներկայացմամբ տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2015-2016/top-10-infographics/> (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>249</sup> «Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ծրագիր», ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442–Ն որոշում:



**Գործարար ակտիվության ինդեքսը** (Doing Business Index) հաշվարկվում է Համաշխարհային բանկի կողմից՝ սկսած 2004 թվականից: Ձեկույցում հիպոթետիկ ՓՄՁ-ի օրինակով գնահատվում է բիզնես գործունեության հնարավորությունները երկրում՝ սկսած դրա հիմնումից մինչ փակումը: Ինդեքսը 10 ցուցանիշների հիման վրա գնահատում է շուրջ 150-ից ավելի երկրներ և դասակարգում դրանք: Դասակարգմամբ ստացված հորիզոնականն էլ այդ ցուցանիշի կտրվածքով երկրի ստացած գնահատականն է:

## Աղյուսակ 6

### Գործարար ակտիվության ինդեքսի միտումները 2006 – 2015 թթ.<sup>250</sup>

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ընդհանուր գնահատական	34	39	44	44	48	55	32	37	45	35
Բիզնեսի հիմնում	46	47	66	21	22	10	11	6	4	5
Շինարարական թույլտվության ստացում	n/a	n/a	42	72	78	57	46	79	81	62
Էլ. էներգիայի ստացում	n/a	n/a	n/a	n/a	n/a	150	101	109	131	99
Սեփականության գրանցում	2	2	5	5	5	5	4	5	7	14
Վարկի ստացում	65	36	28	43	46	40	40	42	36	42
Ներդրողների պաշտպանություն	83	83	88	93	93	97	25	22	49	49

<sup>250</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից «Doing Business»-ի պաշտոնական կայքում հրապարակվող Գործարար ակտիվության ինդեքսի 2007–2016 թթ. հաշվետվությունների հիման վրա // <http://www.doingbusiness.org/reports/global-reports/doing-business-2016> (մուտք՝ 01.09.2016 թ.):

Հարկերի վճարում	148	143	150	153	159	153	108	103	41	41
Առևտուրը սահմաններից դուրս	119	118	143	102	82	104	107	117	110	28
Պայմանագրերի կնքում	18	64	61	62	63	91	91	112	119	29
Քիզնեսի լուծարում	40	42	47	49	54	62	63	76	69	71

Հատկանշական է 2013 թ. հետո գրանցված անկումը մի շարք ցուցանիշների կտրվածքով՝ էլեկտրաէներգիայի ստացում, հարկերի վճարում, ներդրողների պաշտպանություն և, որ առավել կարևոր է, սահմաններից դուրս առևտրի կազմակերպում, այն է՝ ներկրում – արտահանումը: Հատկանշական է, որ ԵՄ-ի հետ ասոցացման նախաշեմին ԵՄ «Թվինինգ» ծրագրի շրջանակներում արտահանման և ներմուծման վարչարարական ընթացակարգերի դյուրացման 24-ամյա ծրագիր էր նախատեսվել<sup>251</sup>, որը ԵԱՏՄ անդամակցումից հետո<sup>252</sup>, շուրջ մեկ տարի արդեն ընթացքում լինելով, դադարեցվեց: Ծրագիրը պետք է մեկ պատուհանի սկզբունքը հիմներ միջսահմանային մաքսային անցակետերում, պարզեցնել հաշվետվությունների ներկայացման գործընթացը, սակայն ցավոք չիրականացավ: Այսպես, քիզնեսի կենսացիկլի բարելավման առումով հատկանշական բարեփոխումներ են իրականացվել վերջին տարիներին. 2009 թ. ներդրվեց կազմակերպությունների գրանցման էլեկտրոնային համակարգը, վերացվեց քիզնեսի նվազագույն կանոնադրական կապիտալի չափը<sup>253</sup>, 2011 թ. սկսել է գործել «մեկ պատուհանի սկզբունքը»՝ իրավաբանական անձանց գրանցման համար բավական է այցելել ՀՀ արդարադատության նախարարության կազմում գործող ԻԱ պետական գրանցման ռեգիստրի գործակալություն<sup>254</sup>:

<sup>251</sup> Ծրագրի բովանդակային ուղղվածության մասին մանրամասները հասանելի են ՀՀ մաքսային ծառայության պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <http://www.customs.am/Content.aspx?itn=cslRTwinning> (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>252</sup> Պայմանագիր ՀՀ՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին, տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=95214>, Ինօրինակը՝ [https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia\\_11102014](https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia_11102014) (մուտք՝ 01.09.2016 թ.):

<sup>253</sup> Էլեկտրոնային գրանցման համակարգի մասին տե՛ս ՀՀ Կառավարության էլեկտրոնային ռեգիստրի պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <https://www.e-register.am/am/> (մուտք՝ 30.09.2016 թ.):

<sup>254</sup> Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ Կառավարության պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝

Կարևոր է նաև վարկավորման ցուցանիշը, քանի որ վարկն ամբողջ աշխարհում համարվում է տնտեսական ակտիվության խթանման կարևորագույն գործոնը: 2013–2014 թթ. գնահատականի անկումը կարելի է բացատրել 2014 թ. սեպտեմբերից սկզբնավորված փոխարժեքի խիստ շոկային տատանումներով, երբ վարկավորումն առհասարակ կանգ առավ:

Ռուսաստանի դերն ու ազդեցությունը Հայաստանի քաղաքական և սոցիալ–տնտեսական կյանքում բավականին մեծ են, և հավանաբար բնական էր 2015 թ. արդեն պաշտոնապես Մաքսային միությանը (այնուհետև ԵԱՏՄ–ին) ՀՀ անդամակցության<sup>255</sup> փաստը, ինչը հանգեցրեց ԵՄ–ի հետ ասոցացման համաձայնագրի չստորագրմանը: Վերջինս հիմք հանդիսացավ ՀՀ – ԵՄ և ՀՀ – ԵԱՏՄ անդամ պետությունների հետ համագործակցության նոր փուլի ձևավորման համար: Հատկանշական է, որ այդուհետ ԵՄ–ն շարունակեց գործուն պահել ՀՀ–ի հետ կնքված մի շարք համաձայնագրեր<sup>256</sup>: Մասնավորապես Հայաստանը 2009–2013 թթ. օգտվել է ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» (GSP+) արտոնյալ առևտրային ռեժիմից, ինչը հնարավորություն է ընձեռել շուրջ 6400 հայկական ծագման ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանելու զրոյացված կամ նվազեցված մաքսատուրքերի դրույքաչափերով: Եվրոպական հանձնաժողովի որոշմամբ Հայաստանն ընդգրկվել է այն 10 երկրների շարքում, որոնք հնարավորություն են ստացել 2014 թ. հունվարի մեկից օգտվելու վերանայված (վերանայման արդյունքում խստացվել էին ռեժիմից օգտվելու պայմանները) GSP+ ռեժիմի նոր փուլից<sup>257</sup>:

<http://report.gov.am/?id=14> (մուտք՝ 01.09.2016 թ.):


<sup>255</sup> On October 10, 2014, during the meeting of the SEAEC, in Minsk the Treaty on accession of the Republic of Armenia to the Treaty on the EAEU (dated May 29, 2014). The above-mentioned Treaty became an act of international legal formalization of a new member accession to the Union on January 2, 2015. <https://mfa.gov.by/en/organizations/membership/list/aa16658947a49c28.html>, [https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia\\_11102014](https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia_11102014) .

<sup>256</sup> Պաշտոնական հաղորդումը ԵՄ պատվիրակության պաշտոնական էջից հետևյալ հղմամբ՝ [http://eeas.europa.eu/delegations/libya/896/armenia-and-the-eu\\_en](http://eeas.europa.eu/delegations/libya/896/armenia-and-the-eu_en), (մուտք՝ 01.10.2016 թ.):

<sup>257</sup> Մանրամասները ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <http://www.mineconomy.am/arm/43/gortsaruyt.html> (մուտք՝ 30.09.2016 թ.):

**Գծապատկեր 2**

**ՀՀ – ԵՄ արտահանման և ներկրման միտումները  
2005 – 2015 թթ.<sup>258</sup>**



Ինչպես ակնհայտ է դառնում գծապատկերից, 2009 թ. հետո արտահանման ծավալների զգալի մեծացման միտում է գրանցվել, որը, սակայն, 2013 թ. հետո սկսել է նվազել:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի նորագույն պատմության մեջ 2011–2013 թթ. բարեփոխումների առումով անկասկած ամենաինտենսիվ ժամանակաշրջանն է եղել և մեծ առաջընթաց է գրանցել տարբեր ոլորտներում՝ ԵՄ-ի կողմից նախաձեռնած բարեփոխումներն իրականացնելու արդյունքում: Այս նշանակալի ջանքերը բազմիցս գնահատվել են ԵՄ-ի կողմից: Հիմնական ֆինանսավորվող ուղղություններն են եղել հանրային կառավարման կառույցների արդյունավետության բարձրացումը, առևտրային և ներդրումային ոլորտի, սոցիալ-տնտեսական և այլ բարեփոխումներ:

Համագործակցության և հողվածում ներկայացված ծրագրերի իրականացման ողջ ընթացքում տեղի են ունեցել պետական կառավարման համակարգի գործառնության բարեփոխումներ: Այդ բարեփոխումների շնորհիվ նախարարություններն այսօր իրականացնում են իրենց բնագավառի քաղաքականության ձևավորման, մոնիթորինգի և համակարգման գործառնությունները, իսկ ծառայությունների մատուցման, կանոնակարգման

<sup>258</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից <http://ec.europa.eu/> վիճակագրական տվյալների հիման վրա (մուտք՝ 01.09.2016 թ.):

և վերահսկողական ու տեսչական գործառույթների իրականացման իրավասությունները հիմնականում փոխանցվել են նախարարություններում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով ստեղծված գործակալություններին և տեսչություններին:

Նշված փոփոխությունները հանգեցրին կրկնվող գործառույթների որոշակի հատվածի վերացմանը:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունքում հստակեցվեցին նաև նախարարությունների կանոնադրությունները, միասնականացվեցին նրանց աշխատակազմերի կառուցվածքները. ստեղծվեցին վարչություններ, քարտուղարություններ և բաժիններ:

Հաշվի առնելով Հայաստանի՝ ԵԱՏՄ-ի հանդեպ նոր պարտավորությունները՝ 2015 թ. հոկտեմբերի 12-ին Արտաքին հարաբերությունների խորհուրդը լիազորեց Եվրոպական հանձնաժողովին և Բարձր ներկայացուցչին սկսել բանակցությունները Հայաստանի հետ նոր, պարտադիր իրավական ուժ ունեցող, համալիր համաձայնագրի շուրջ, ինչպես նաև տրամադրեց համապատասխան բանակցային մանդատը: Բանակցությունների պաշտոնական մեկնարկը տրվեց 2015 թ. դեկտեմբերի 7-ին: Նոր համաձայնագիրը կփոխարինի գործող ԵՄ – Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագրին<sup>259</sup>: Այս փաստերը վկայում են, որ Արևելյան գործընկերությունը ներկայումս բարդ ժամանակներ է ապրում, և դյուրին չի լինելու արդյունավետ և բազմակողմանի լուծումներ գտնել համագործակցությունը արդյունավետ շարունակելու համար: Շատ տարբեր քաղաքական հարթակներում ակտիվ քննարկումներ են տեղի ունենում, որոնց հիմնական նպատակն է բացահայտել, թե որ ոլորտներում է հնարավոր շարունակել համագործակցությունը՝ չհակասելով Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանի ստանձած նոր պարտավորություններին: Սա նշանակում է, որ Հայաստանը շարունակում է համագործակցությունը ԵՄ-ի հետ որպես Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ: Այժմ երկկողմ հարաբերությունների օրակարգում առաջնային հարցերից մեկը Հայաստան – Եվրամիություն նոր իրավական հիմքի ձևավորումն է: Այս առումով և՛ Եվրամիությունը, և՛ Հայաստանը միակարծիք են, որ կարևոր է վերանայել հարաբերությունների հիմքերը:

<sup>259</sup> Տես Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության պաշտոնական կայք՝ [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_hy.htm) (մուտք՝ 18.06.2016 թ.):

## POLITICAL AND ECONOMIC DIMENSIONS OF THE PUBLIC ADMINISTRATION DEVELOPMENT IN THE CONTEXT OF EUROINTEGRATION

**INGA YARDANYAN, MERI MURDAYAN**

**ACADEMIC ADVISOR ARUSYAK ALEKSANYAN<sup>260</sup>, PHD, ASSOC. PROF.**

### **Introduction**

In the context of globalization and democratization good governance becomes an important priority. Hence, transparency, publicity and accountability of the ruling system are the guarantors and factors political and socio-economic development of a country.

According to a number of experts, emergence of states is conditioned by scarce resources and the necessity to have a single body to implement equal distribution of public good among all<sup>261</sup>. We deem this thesis as legitimate given the structure and functionality of the current state apparatus. The world economy of today demands cooperation on international level for coping with multiple issues<sup>262</sup>. The issue of the ability to produce essential consumer items is on the top of the agenda, since the absence of the relevant supply can bring to loss of human capital and technological opportunities leading to dependence from external environment<sup>263</sup>. Today, as international economic studies confirm, developed countries strive to 'link' with developing ones in order to strengthen the strategic positions in international politics and economic context, but also for the aim of trade and economic cooperation by creating market for export and resource for getting raw materials.

Any economy irrelevant of how high is its level of economic power is not able to develop isolated nowadays. The Republic of Armenia, being located on the crossroad of Asian and European civilizations, at the same time being under threat of war, strives to keep relative neutrality in its trade-economic relations through finding cooperation opportunities with both West and East.

Cooperation with European structures, Eurointegration processes are

---

<sup>260</sup> Arusyak Aleksanyan, PhD in Political Sciences, Center for European Studies, Yerevan State University.

<sup>261</sup> Joseph E. Stiglitz., Economics of the Public Sector, W. W. Norton & Company, 2000, - 3rd edition.

<sup>262</sup> Robert J. Carbaugh., International economics. South-Western Cengage Learning, 2009, - 12th edition.

<sup>263</sup> Robert M. Dunn Jr., John H. Mutti. International economics. Routledge, 2000, - 5th edition.

the main vectors of Armenian foreign policy. System reform of public administration have been implemented within the frames of that cooperation. Study and evaluation of those reforms will support further development of the policy. Thus, the goal of this study is to implement corresponding political and economic measurements and evaluate the level of developments in public administration.

The topic is more burning after the 2013 decision of Armenia to access to the Customs Union, followed by the EU's announcement that pre-signature of the Association Agreement is impossible. In relation with the latter, the measurement and evaluations in this study include also the comparative analysis of indicators from 2013 and preceding and succeeding years with the objective to note the effects and the essence of the changes in public administration due to the decision.

## **1.Armenia - EU cooperation. Historical overview**

Public administration became an academic discipline in 20th century. It's a branch of political sciences and studies management of governmental/public bodies and organization.

The term 'public administration' is pretty multilayer. A clear definition is debatable and not finally agreed among professional circles. According to multiple academics, this discipline is the achievement of Great Britain, the USA and France<sup>264</sup>.

Woodrow Wilson is considered the father of public administration. He first formally recognized public administration in an 1887 article entitled "The Study of Administration" where he clearly defined the aspects of public administration<sup>265</sup>. Although his concepts were not welcomed at first, during his presidency Wilson was able to put his concepts into practice, thus creating a sound base of the public administration system. He clearly mentioned in his article that public administration became an academic discipline out of necessity. Thus, public administration can be characterized as a discipline on relationship of the ruling subject and the object ruled.

Theoretical and practical aspects of public management are efficient to study on the example of the experience of Armenian reforms in the context of

---

<sup>264</sup> Леонид В. Смовгунов, Анатолий П. Альгин. Государственная политика и управление: Учебник, М.: РОССПЭН, 2006.

<sup>265</sup> Woodrow Wilson. The Study of Administration. Political Science Quarterly, No. 2, 1887, pp. 197-222.

adopting European values.

Armenia-EU relations were established with Partnership and Cooperation Agreement<sup>266</sup> signed in 1996 and entered into force in 1999. The main mission of the Agreement was closer cooperation in economic, social, political and a number of other areas, and the goal was democratization of Armenia.

Armenia-EU relations entered into a new phase on June 17-18, 2004 when the EU summit decided to include Armenia, in line with other South Caucasus states, into European Neighborhood Policy (ENP).

ENP supported to improve current formats of regional and sub regional cooperation, and create solid ground for their further perfection. This cooperation brought opportunities to strengthen sustainability and security, promote efforts for conflict-resolution. The mentioned document contains guarantees on deepening of integration and regional cooperation, viewing those as methods to solve several issues present near the EU external borders<sup>267</sup>.

Taking into account those significant factors, ENP Action Plan was adopted in November 2006<sup>268</sup>. The Plan relates to the issues of democratization, human rights, social-economic reforms, energy, conflicts etc. ENP is designed to prevent emergences on new dividing line in the Europe, by offering to the member states close cooperation in political, economic, security, cultural and other spheres. Member states have opportunities to participate freely in multiple programs offered by the EU.

According to 2010 Country report on Armenia's Implementation of the European Neighborhood Policy<sup>269</sup>, during 2006-2010 Armenia made some progress in the area of political dialogue and reform, enhancing transparency in the court system, as well as in the area of customs and border management. Report also mentioned that Armenia maintained prudent macroeconomic policies and introduced several structural measures to mitigate the impact of the economic crisis. Unfortunately, no obvious progress was made in the area of policing, the security services and the Prosecutor's office.

High Representative of the European Union for Foreign Affairs and Security

<sup>266</sup> "Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part", April 22, 1996, // [www.eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:21999A0909\(01\)](http://www.eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:21999A0909(01)) (accessed 20.09.2016).

<sup>267</sup> Communication from the Commission: European Neighborhood Policy. Strategy Paper. Brussels, 12.5.2004 // [http://www.europarl.europa.eu/meetdocs/2004\\_2009/documents/com/com\\_com\(2004\)0373\\_/com\\_com\(2004\)0373\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/2004_2009/documents/com/com_com(2004)0373_/com_com(2004)0373_en.pdf) (accessed 18.09.2016).

<sup>268</sup> European External Action Service, European Neighborhood Policy// [www.eeas.europa.eu/topics/european-neighbourhood-policy-enp\\_en](http://www.eeas.europa.eu/topics/european-neighbourhood-policy-enp_en) (accessed 18.09.2016).

<sup>269</sup> Implementation of the European Neighborhood Policy in 2010, Country report: Armenia, Brussels, 25/05/2011 SEC(2011) 639, <http://www.enpi-info.eu/library/content/armenia-progress-report-2010> (accessed 18.09.2016):



Policy published also ‘Implementation of the European Neighborhood Policy in Armenia Progress in 2013 and recommendations for action’ document<sup>270</sup>. It presents the progress of Armenia in implementation of ENP from January 1 to December 31, 2013.

According to ENP 2010-2015 National report, Armenia implemented multiple programs in the frames of this cooperation, including the strategy of transportation development in 2009-2020. In the area of infrastructures, Armenia had progress in renovation Yerevan-Tbilisi railway and construction of North-South road corridor (2009-2017).

Armenia-EU relationship were boosted in the framework of Eastern Partnership. Prague summit in 2009 gave start to the EaP program for EU’s six Eastern neighbors, including Armenia. The long-term ambitious policy aimed to support the implementation of expansive political and socio-economic reforms. Multilateral cooperation in EaP was implemented through four thematic platforms:

Platform 1. Democracy, good governance & stability;

Platform 2. Economic integration & convergence with EU policies;

Platform 3. Energy security;

Platform 4. People-to-people contacts.

The cooperation in the frames of EaP was directed to signature of Association Agreement (AA) and DCFTA between Armenia and the EU. Armenia-EU negotiations on AA were launched in July 2010 and those on DCFTA – in June 2012. Already in 2013, Armenia and the EU stopped the negotiations in the result of Armenian decision to join the Customs Union and taking new international commitments<sup>271</sup>. And despite the decision of not signing the agreements, Armenia and the EU continue political and trade dialogue in those areas that are compatible with the new commitments of Armenia within the EAEU.

During the Vilnius EaP summit in November 2013, the EU and Armenia announced establishment of new format of bilateral relations. The EU-Armenia Visa Facilitation and Readmission Agreements were ratified in 2013 and entered into force on January 1, 2014.

As for the reforms public administration, they continued to have limited

<sup>270</sup> See Implementation of the European Neighborhood Policy in Armenia Progress in 2013 and recommendations for action, Joint Staff Working Document, [www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu\\_armenia/armenia\\_enp\\_2013\\_progress\\_report\\_en.pdf](http://www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu_armenia/armenia_enp_2013_progress_report_en.pdf) (accessed 19.09.2016):

<sup>271</sup> See the official website of the Ministry of Foreign Affairs of RA, <http://www.mfa.am/hy/country-by-country/eu/> (accessed 18.06.2016);

progress. There is also lack of trust towards state structure, in parallel to this. In the framework of cooperation, the government aims to continue promotion of the role of local authorities within the frames of regional development strategy, including establishment of Fund for Regional Development, supported by the EU.

## 2. EU Programmes targeting Development of Public Administration

In order to encourage the efforts of the potential and actual candidates for EU membership and to ensure due implementation of provisions of the international agreements signed with them, the European Union started providing financial aid to those countries. This further boosted activities to implement reforms and prepare for membership.

In the frames of the toolbox applied by the EU, Armenia successfully uses offered various financial assistance that has one and only objective of reforming the governance system approximating it to EU standards.

The first programme that Armenia participated was TACIS that amounted to 100 mln Euro in total. That was the first step to approximate the Armenian legislation to the EU. It was mainly directed at implementation of reforms to shift to the market economy. TACIS supported the improvement of the economic environment in Armenia by assisting the private sector and SMEs.

Already in 2002-2006, TACIS support was targeting institutional, legal and administrative areas of Armenia.

In 1991-2006, the total expenditure of TACIS amounted to 10 mln Euro, including various areas from humanitarian assistance to macroeconomy and nuclear safety<sup>272</sup>.

One of the first financial assistance programs in the frames of European neighborhood and partnership started in 2007 and provided financial assistance instruments to 17 countries<sup>273</sup>, including Armenia. Those instrument are the follows.

### TAIEX. Technical Assistance and Information Exchange instrument

TAIEX was first launched in 2006. Its aim is to provide candidates and potential candidates for EU membership, and the EU's eastern and southern neighbors, with technical know-how and legislative expertise<sup>274</sup>.

<sup>272</sup> Communication from the Commission: European Neighborhood Policy. Strategy Paper. Brussels, 12.5.2004 // [http://www.europarl.europa.eu/meetdocs/2004\\_2009/documents/com/com\\_com\(2004\)0373/\\_com\\_com\(2004\)0373\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/2004_2009/documents/com/com_com(2004)0373/_com_com(2004)0373_en.pdf) (accessed 18.09.2016).

<sup>273</sup> The beneficiary countries were the EU membership candidate countries and possible candidate countries, as well as ENP countries.

<sup>274</sup> TAIEX and Twinning Activity Report 2015 // <http://ec.europa.eu/enlargement/pdf/taieux/20160804->

While in 2007-2009, the total financial assistance of TAIEX amounted to 11,5 mln Euro<sup>275</sup>, it reached to 98,2 mln Euro<sup>276</sup> already in 2010.

The table below presents the TAIEX programs implemented by 2015 for Armenia and several other beneficiary countries.

**Table 1**

**TAIEX programs in Armenia and other beneficiary countries.  
(2015)<sup>277</sup>**

Countries	Expert missions	Study tours	Trainings
Armenia	2	1	1
Ukraine	52	28	30
Georgia	21	6	6
Azerbaijan	14	12	9
Moldova	16	22	10
Belarus	1	6	5

**Twinning**<sup>278</sup> programme was launched in Armenia in 2007. It targeted partnership cooperation between public institutions in Armenia. It supported study of the legislation of the member states for approximation of Armenian legislation to the EU. More than 13 Twinning projects have been implemented in Armenia, few others are in progress. The area of Twinning projects is considerable wide. In the area of customs reforms, it includes the following five components: customs legislation, customs procedures, establishment of favorable conditions for business and introduction of authorized economic operators, risk management system in customs administration and improvement of post-clearance procedures.

The EU funded Twinning Project “Support to the State Revenue Committee for strengthening of Customs control procedures and enforcement in the

---

taieex-activity-report-2015\_en.pdf (accessed 18.09.2016).

<sup>275</sup> See the official website of the EU, [www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu\\_armenia/newsletter\\_n1\\_eng.pdf](http://www.eeas.europa.eu/delegations/armenia/documents/eu_armenia/newsletter_n1_eng.pdf) (accessed 29.08.2016);

<sup>276</sup> Ibid.

<sup>277</sup> TAIEX - Eu Member States Flash Report. Half-yearly statistics // [https://www.urm.lt/uploads/default/documents/uzienio\\_politika/TAIEX/SI-2015.pdf](https://www.urm.lt/uploads/default/documents/uzienio_politika/TAIEX/SI-2015.pdf) (accessed 18.09.2016).

<sup>278</sup> Institution building in the framework of European Union Polices Common Twinning Manual. Revision 2012 // [www.ec.europa.eu/enlargement/pdf/financial\\_assistance/institution\\_building/2012/manual\\_may\\_2012.pdf](http://www.ec.europa.eu/enlargement/pdf/financial_assistance/institution_building/2012/manual_may_2012.pdf) (accessed 18.09.2016).

Republic of Armenia” was launched in September 2012<sup>279</sup>. With one mln Euro budget and 24-month project length, the objective of the project was to support the State Revenue Committee (SRC) to strengthen the Armenian customs by developing modern customs control procedures and enforcement according to the best practices of EU Member States. The beneficiaries of the project in Armenia were State revenue Committee, Ministries of Finance and Economy.

Twinning aims to improve the capacity of public administrations in the Neighborhood and Enlargement regions by establishing direct, on-the-ground-cooperation between peers of beneficiaries and of EU Member States.

The results of the two-year Twinning project on trainings of public servants launched in September 2014 are as follows.

1. Five new drafts of laws and other documents relevant to internal audit to recommend proposals that promote a modern Public Internal Financial Control (PIFC) system, adapted to the Armenian public sector needs and meeting international standards.

2. 14 trainers on internal audit and 9 trainers on financial administration and control to build capacity of the relevant departments of the Ministry of Finance for further development of PIFC system.

#### SIGMA<sup>280</sup>

SIGMA has been supporting Armenia since 2008 in improving good governance. Five projects have been implemented in the areas of public procurement, financial control, civil service, public-private partnership and licensing.

To assist with the implementation of the CBC, TAIEX, Twinning and SIGMA projects in Armenia, a Programme Administration Agency (PAA) was established under the Ministry of Economy in 2008. The largest project implemented in the frame of this, was support to the Civil Service Council (CSC) on reforming the civil service system. SIGMA program cooperates with Armenian CSC since 2009 when an expert group comprehensively studied and assessed the civil service system in Armenia, highlighting its strong and weak aspects. For the objective of improving the system, the EU with the assistance from local and international experts, supports the CSC of RA to study the best practice of European countries in civil service, and provides methodological support and expertise during the reform process.

<sup>279</sup> See the official website of RA Customs Service, <http://www.customs.am/Content.aspx?itn=cslRTwinning> (accessed 02.10.2016թ.);

<sup>280</sup> Sigma. A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU. Armenia and Sigma // <http://www.sigmaweb.org/countries/armenia-sigma.htm> (accessed 30.09.2016).

### **Sector Policy Support Program (SPSP)<sup>281</sup>**

The program supports the Government of Armenia to implement public policies.

#### **Environment and Natural Resources Thematic Project**

The Project aims to support solutions of environment and natural resources management<sup>282</sup>.

#### **Budget support programme**

This programme mainly targets agriculture and rural development. The budget of the programme in 2013 was 25 mln Euro.

#### **Reconstruction projects implemented in 2010-2015 with EU funding<sup>283</sup>**

In the framework of cooperation with the EU, Armenia has privileged credits from European Investment Bank (EIB) and The European Bank for Reconstruction and Development (EBRD). In addition, the Government of Armenia receives grants from ENP investment instrument.

We present the reconstruction and infrastructure improvement projects below.

#### **“North-South Road Corridor Investment Program”**

“North-South Road Corridor Investment Program” is a major infrastructure project which aims at connecting the Southern border of the country with its Northern point by means of 556 km-long Meghri- Yerevan - Bavra highway. The highway will also provide serious development opportunities for all communities from the North to the South of Armenia. For the construction of this highly important strategic road contracts have been signed with the Asian Development Bank (ADB) and European Investment Bank (EIB) for the implementation of the Program and the target completion dates are 2017 and 2019 respectively. The estimated cost of the Program is 1.5 billion USD<sup>284</sup>.

#### **Armenian Small Municipalities Water Project**

This Project aims at improvement of municipal water supply for 300,000 inhabitants bringing it to international standards. EIP and EBRD both provided credits for this project 6.5 mln Euro each. The deadline of this project was 2015<sup>285</sup>.

<sup>281</sup> EU-Armenia, Eastern Partnership. Supporting Reforms, Promoting Change.

<sup>282</sup> See Introduction to the EU support and development programmes in Armenia, September 2011;

<sup>283</sup> See the official website of EBRD, <http://www.ebrd.com/home> (accessed 28.09.2016);

<sup>284</sup> See the official website of the North-South Road Corridor Investment Program, [www.northsouth.am/](http://www.northsouth.am/) (accessed 25.09.2016);

<sup>285</sup> See Armenian Small Municipalities Water Project: engineering design and technical supervision, Working layout, Volume III, Environment management plan, [www.armwater.am/files/adb/EBRD/armenian/emp/10.%20CHAMBARAK-EMP-ARM.pdf](http://www.armwater.am/files/adb/EBRD/armenian/emp/10.%20CHAMBARAK-EMP-ARM.pdf) (accessed 25.09.2016);

### **Modernization of Bagratashen, Bavra, Gogavan border supervision crossing point areas<sup>286</sup>**

The project aims facilitation of passage of people and goods through Bagratashen, Bavra, and Gogavan border supervision crossing point areas, as well as bringing the border management to international standards. The project is funded both by EBRD (10.3 mln Euro) and EIP (30.316 mln Euro) with implementation deadline in 2015.

The Government of Armenia adopted the decision N 605-n for more effective management and administration of the above-mentioned projects in the frames of Twinning, TAIEX, SIGMA and other instrument of ENP<sup>287</sup>.

In the frames of the cooperation, Armenia and the EU have signed a MoU on November 3, 2014 thus establishing the Single Support Framework with budget of 140-170 mln Euro (2014-2017). This is a programme document on providing support to Armenia from the EU and it outlines three priority sectors of support:

1. Private sector development,
2. Public administration reform,
3. Justice sector reform.

This document also envisions additional support to modernization of public institutions and development of civil society.

For 2014-2020, the Single Support Framework came to substitute European Neighborhood and Partnership Instrument that was active in 2007-2013.

On November 3, 2014 the funding agreement on 25 mln Euro assistance to agriculture and rural development was signed. It was included in 2013 to the Armenia-EU Annual Action Plan.

Let us compare Single Support Framework for six EaP countries.

<sup>286</sup> See 'Modernization of Bagratashen, Bavra, Gogavan border supervision crossing point areas' project;

<sup>287</sup> See the RA Government decision N 605-n on May 29, 2009 on 'Preparation of project proposals and applications, submission and implementation of approved projects under ENP instruments Twinning, TAIEX, SIGMA and others', [www.arlis.am/DocumentView.aspx?docid=51825](http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=51825)(accessed 25.08.2016) (in Armenian);

**Table 2****Single Support Framework for EaP countries**

COUNTRIES	Financial support in the frames of Single Support Framework (mln Euro if no other note)	
	2011-2013	2014-2017
<b>Armenia</b>	157,3	140-170
<b>Moldova</b>	273,1	335-410
<b>Ukraine</b>	470,1	11 bln
<b>Azerbaijan</b>	122,5	77-94
<b>Belarus</b>	suspended	71-89
<b>Georgia</b>	180,29	335-410

Study of the table reveals that the highest financial assistance was provided to the Ukraine 470.1 mln Euro in 2011-2013 and 11 bln Euro in 2014-2017. Although, the 2014-2017 assistance was provided to the Ukraine considering the financial crisis in the country. Minimal assistance was provided to Belarus, after the initial suspension. In 2014-2017, the countries that have signed and ratified the Association Agreement, received the most of the funding.

This shows that the financial assistance prepared for 2014-2017 was provided using different principles, taking into account financial and political events and their effects on the above-mentioned countries.

#### **4. Political Dimensions of the Development of Public Administration**

Development of public administration is assessed through a number of indicators. Those indicators are calculated by renowned international organizations for the assessments and comparison of countries in good governance trends. For this paper, we have used six indexes of Worldwide Governance indicators of the World Bank (see table 3). The presented indicators have a scale of 0-100, the higher indicator the more effective is governance.

**Table 3****Armenia Governance Indicators (1996-2015)<sup>288</sup>**

Year	Dimensions					
	Voice and Accountability	Political Stability and Absence of Violence	Government Effectiveness	Regulatory Quality	Rule of Law	Control of Corruption
1996	43,06	54,81	59,22	62,44	49,52	67,48
1997						
1998	51,67	39,42	50,97	65,37	52,86	44,17
1999						
2000	49,76	38,94	50,00	62,44	49,52	51,46
2001						
2002	43,06	56,73	62,14	63,41	50,95	48,06
2003	40,19	70,19	61,17	66,34	53,33	48,54
2004	41,15	60,58	66,02	65,85	48,10	47,09
2005	38,76	59,62	60,68	62,93	51,43	44,66
2006	32,06	51,92	56,31	67,32	47,62	44,66
2007	31,58	63,94	52,17	68,60	48,10	40,10
2008	29,19	58,85	58,94	68,12	53,59	42,03
2009	30,19	69,34	64,29	70,00	48,58	47,62
2010	30,19	61,79	60,48	69,52	47,64	42,18
2011	32,24	58,02	61,79	69,81	49,07	44,81
2012	35,98	62,74	62,74	72,17	50,00	48,11
2013	36,45	61,79	65,57	67,92	52,80	51,89
2014	37,75	47,87	60,77	67,94	54,07	51,67
2015	36,76	51,18	60,29	70,81	53,59	51,20

<sup>288</sup> See the official website of World Bank, <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home> (accessed 28.09.2016);



The data analysis shows that the programme cooperation with the European Union has had positive effect on governance reforms. Since 2010, considerable progress has been recorded especially in the areas of effective governance and increasing the quality of governance. The EU programmes have been implemented especially in these areas and have received considerable funding. Data shows that Armenia has much to do in the area of accountability, including mass media, freedom of speech and fight against corruption. There is positive change in the area of role of law. The positive trend did continue until 2013-2014, and afterwards there has been a review of cooperation given the membership of Armenia to the Customs Union. It means that despite EU-Armenia cooperation will go on, nevertheless, there will be decrease in cooperation during next years. However, thanks to this cooperation, the reforms were critical for public governance areas and had large positive impact on economic development.

## 5. Economic Dimensions of Public Administration

During last decades renowned international organizations present indexes based on macroeconomic indicators that give more comprehensive assessment of both the performance of the country and the offered by it.

We have studied and presented a number of indexes for the objective of studying and assessing multilayer and branchy structure of public administration. Each index measures the situation in given sector with distinct methodology. In particular, we have considered the following indexes:

- The Index of Economic Freedom,
- The Global Competitiveness Index,
- Doing Business.

The Index of Economic Freedom has been calculated by U.S. based Heritage foundation since 1995. The report defines economic freedom as the fundamental right of every human to control his or her own labor and property<sup>289</sup>. Countries are graded on a scale of 0 to 100 where 100 defines 'the highest level of freedom', and 0 is 'total absence of freedom'<sup>290</sup>. Economic freedom is measured based on 10 quantitative and qualitative factors, grouped into four broad categories of economic freedom:

---

<sup>289</sup> For the definition see the official website of The Heritage Foundation, <http://www.heritage.org/index/about> (accessed 01.09.2016);

<sup>290</sup> For the methodology of Economic Freedom Index see <http://www.heritage.org/index/about> (accessed 01.09.2016);

Table 4

Dynamics of Economic freedom index in 2006 – 2015<sup>291</sup>

		2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
<b>Overall score</b>		68,6	69,9	69,9	69,2	69,7	68,8	69,4	68,9	67,1	67,0
Rule of law	Property rights	30,0	35,0	35,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	20,0	20,0
	Freedom from corruption	29,0	29,0	30,0	29,0	27,0	26,0	26,0	26,7	36,0	37,0
Limited Government	Fiscal spending	89,7	89,0	90,0	89,3	89,2	89,3	88,0	86,5	84,4	83,8
	Government spending	90,8	86,4	89,7	90,9	85,7	74,9	82,1	81,3	82,8	80,7
Regulatory efficiency	Business freedom	80,8	81,3	83,7	83,4	82,2	87,8	87,6	83,1	82,7	77,5
	Labor freedom	70,3	68,2	66,3	70,6	75,9	76,6	77,1	78,5	64,3	62,2
	Monetary freedom	80,3	84,6	77,8	72,9	76,0	73,1	73,0	77,0	70,6	72,8
Open markets	Trade freedom	85,6	85,0	86,4	80,5	85,5	85,4	85,4	85,5	85,4	85,6
	Investment freedom	60,0	70,0	70,0	75,0	75,0	75,0	75,0	70,0	75,0	80
	Financial freedom	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70

<sup>291</sup> The table was prepared by the authors based on the statistical data of 2007-2016 Economic Freedom Index reports published on the official website of The Heritage Foundation, <http://www.heritage.org/index/> (accessed 01.09.2016);

During the timeframe presented, Armenia kept its ‘moderately free’ level. There were no obviously severe fluctuations for any indicator except the government spending for 2011: in 2010 it was 85.7, then in 2011 – 74.9, and in 2012 again 82.1. Government spending during economic crisis are incentive power for business activity if they include expenditure on improvement of infrastructure<sup>292</sup> and human capital. Considerable part of tax incomes, usually, is used for administrative expenditure. The decrease of the indicator on government spending in 2011 can be explained by the danger of the external debt approaching the 50% of GDP that negatively affected the grade indicating non-rational use of financial means.

The corruption risks and low level of private property protection that is being voiced from many platforms here are more expressive with their low grades in contrast with other indicators. These spheres were in the process of improvement within the frames of joint projects between Armenia and partners for long time. During 01/2013 – 01/2014 a ‘Situational Study of Corruption Risks in Public Sphere’ implemented by ‘Application Européenne De Technologies Et De Services Sàrl’ company with funding of 198,920 Euro, and in the result corresponding bodies were advised on models to overcome the problem<sup>293</sup>. The institute of property, and especially intellectual property was also supported in development. In 01/2012-01/2014 ‘Kongeriget Danmarkroyaume Du Danemarkkingdom of Denmark’ company implemented Strengthening the Enforcement of Intellectual Property Rights in the Republic of Armenia project aimed to develop administration and raise awareness on intellectual property<sup>294</sup>.

However, in the 2016 report, in spite of successfully implemented projects, Property rights, Corruption, as well as Labor freedom keep staying worrying, meanwhile the grades for Limited government and Open markets are motivating achievements.

As a conclusion, we should stress that the Index considerable decreased after 2013. This was affected by serious political steps e.g. when Armenia became a member of the Customs Union (later EAEU) and quitted the EU association process<sup>295</sup>. The dynamics of the index is in the table below.

<sup>292</sup> Statistics shows that study of most of the credits to the Government of Armenia and the Central Bank are external. See the official website of the RA Ministry of Finances, section ‘Current credit agreements’, filename ‘Conditions of external credits lent to the Government of Armenia and the Central Bank as of 31.12.2015’, <http://minfin.am/index.php?cat=79&lang=1> (accessed 30.09.2016);


<sup>293</sup> See the official website of the EU delegation to Armenia, [http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list\\_of\\_projects/308819\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list_of_projects/308819_en.htm) (accessed 01.09.2016);

<sup>294</sup> See the official website of the EU delegation to Armenia, [http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list\\_of\\_projects/279997\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/projects/list_of_projects/279997_en.htm) (accessed 01.09.2016);

<sup>295</sup> Agreement on the Accession of Armenia to the EAEU, May 29, 2014, see Armenian version on

Figure 1

### Dynamics of overall grade of the Economic Freedom index in 2000 - 2015<sup>296</sup>



**The Global Competitiveness Index** has been calculated by the World Economic Forum since 2005. The Global Competitiveness Report defines competitiveness as the set of institutions, policies and factors that determine the level of productivity of an economy, which in turn sets the level of prosperity that the country can achieve<sup>297</sup>. The Index has 1-7 grades where 7 stands for 'more competitive' and 1 is for 'less competitive'. The report analyses competitiveness along 12, and these are, in turn, organized into three subindices in line with three main stages of development.

the official website of Armenian legal information system <http://www.arlis.am/documentview.aspx?docid=95214>, the original in Russian [https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia\\_11102014](https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia_11102014) (accessed 01.09.2016);

<sup>296</sup> The figure was prepared by the authors based on the statistical data of 2000-2015 Economic Freedom Index reports published on the official website of The Heritage Foundation, <http://www.heritage.org/index/> (accessed 01.09.2016);

<sup>297</sup> For definition see the official website of World Economic Forum <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2015-2016/faqs/> (accessed 01.09.2016);

**Table 5****Trends in Global Competitiveness Index in 2006 – 2015<sup>298</sup>**

Indicator		2006	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Basic requirements	Institutions	3,44	3,50	3,49	3,50	3,65	3,90	3,98	3,82	3,78
	Infrastructure	2,66	2,87	3,25	3,46	3,75	3,71	3,81	3,83	3,72
	Macroeconomic environment	4,33	4,73	4,78	4,23	4,19	4,50	4,88	4,62	4,71
Efficiency enhancers	Health and primary education	6,40	5,06	5,00	5,37	5,37	5,53	5,46	5,33	5,35
	Higher education and training	3,58	3,43	3,46	3,66	4,01	4,22	4,18	5,20	4,26
	Goods market efficiency	3,60	3,75	3,65	3,72	3,88	4,22	4,34	4,37	4,46
	Labour market efficiency		4,57	4,61	4,61	4,71	4,72	4,49	4,20	4,30
	Financial market development		3,68	3,79	3,60	3,76	3,97	3,91	3,71	3,53
	Technological readiness	2,81	2,56	2,86	2,96	3,43	3,40	3,74	3,72	3,67
	Market size		2,48	2,69	2,50	2,57	2,62	2,73	2,75	2,81
Innovation and sophistication factors	Business sophistication	3,34	3,30	3,35	3,33	3,43	3,70	3,82	3,73	3,65
	Innovation.	3,00	2,77	2,71	2,63	2,74	2,89	2,99	2,95	3,02

Study of the data shows that during the mentioned time-frame the indicators of 'General conditions' gradually improved.

It is surprising that 'Innovation and sophistication' area is a weak link in

<sup>298</sup> The table was prepared by the authors based on the 2006-2015 reports on Global Competitiveness Index published on the official website of World Economic Forum, <http://reports.weforum.org/> (accessed 01.09.2016);

Armenian, although ‘Global innovation index’<sup>299</sup> of 2015 and 2016 listed Armenia, China, Vietnam, India and other leading countries as ‘innovation outperformers’.

The research papers of World Economic Forum views Armenia as low income country<sup>300</sup>, and in comparative studies mentions as CIS member country<sup>301</sup>.

According to official forecasts, in 2017 Armenia will be in 65-70<sup>th</sup> position, will have 4.20-2.25 benchmark of global competitiveness, and in 2025 will be in 50-55<sup>th</sup> position with 4.35-4.40 benchmark<sup>302</sup>.

**Doing Business Index** is a World Bank Group flagship publication since 2004. The report assesses opportunities for doing business in a country from starting a business till resolving insolvency on a hypothetical SME case. The index covers 10 indicator sets and more than 150 economies and classifies them, thus creating a grading scale for countries.

**Table 6**

**Trends of Doing Business Index 2006 – 2015<sup>303</sup>**

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
<b>Overall</b>	34	39	44	44	48	55	32	37	45	35
<b>Starting business</b>	46	47	66	21	22	10	11	6	4	5
<b>Dealing with Construction Permits</b>	n/a	n/a	42	72	78	57	46	79	81	62
<b>Getting Electricity</b>	n/a	n/a	n/a	n/a	n/a	150	101	109	131	99
<b>Registering Property</b>	2	2	5	5	5	5	4	5	7	14

<sup>299</sup> More information about the index, as well as the reports are available at the official website of Global Innovation Index, <https://www.globalinnovationindex.org/about-gii#history> (accessed 01.09.2016);

<sup>300</sup> Overview of Armenia according to Global Economic Forum, <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2015-2016/economies/#economy=ARM> (accessed 01.09.2016);

<sup>301</sup> Infographics regarding RA economy in CIS, <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2015-2016/top-10-infographics/> (accessed 01.09.2016);

<sup>302</sup> “The perspective development plan of the Republic of Armenia in 2014-2025”, RA Government decision N442-n on March 27, 2014;

<sup>303</sup> The table was prepared by the authors using the Business activity index 2007-2016 reports published at Doing Business official website <http://www.doingbusiness.org/reports/global-reports/doing-business-2016> (accessed 01.09.2016);

<b>Getting Credit</b>	65	36	28	43	46	40	40	42	36	42
<b>Protecting Minority Investors</b>	83	83	88	93	93	97	25	22	49	49
<b>Paying Taxes</b>	148	143	150	153	159	153	108	103	41	41
<b>Trading Across Borders</b>	119	118	143	102	82	104	107	117	110	28
<b>Enforcing Contracts</b>	18	64	61	62	63	91	91	112	119	29
<b>Resolving Insolvency</b>	40	42	47	49	54	62	63	76	69	71

The decrease in a number of indicators after 2013 (getting electricity, paying taxes, protecting minority investors and most importantly trading across borders, i.e. export and import) is noteworthy. There was a plan for 24-month project<sup>304</sup> on facilitation of import-export administrative procedures in the frames of EU twinning programme on the eve of association with the EU. However, after one year of life, it was stopped due to Armenian EAEU membership<sup>305</sup>. The project envisioned creating a one window principle at customs offices of border crossing point areas, simplifying reporting procedure.

Recent years were marked with essential changes for improvement of business life-cycle. In 2009 electronic registration of organization was launched, the minimum authorized capital for establishment of business was abolished<sup>306</sup>. Starting from 2011 a 'single window principle' for registration of legal entities was introduced by Ministry of Justice<sup>307</sup>.

Credit rates are also important, since crediting is globally considered to be the most important factor in stimulating economic activity. The decrease of 2013-2014 grading is explained with the severe shock fluctuations of exchange rate starting in September 2014 when the crediting was totally stalled.

The role and influence of Russia on the political and social-economic life in Armenian is considerably large and it is quite natural that the fact of

<sup>304</sup> The content of the project can be found at the official website of Customs Service of the Republic of Armenia <http://www.customs.am/Content.aspx?itn=csIRTwinning> (accessed 01.09.2016);

<sup>305</sup> Agreement on the Accession of Armenia to the EAEU, May 29, 2014, see Armenian version on the official website of Armenian legal information system <http://www.arlis.am/documentview.aspx?docid=95214>, the original in Russian [https://docs.eaunion.org/docs/en-us/0047297/itia\\_11102014](https://docs.eaunion.org/docs/en-us/0047297/itia_11102014) (accessed 01.09.2016);


<sup>306</sup> More on electronic registration system see Official website of the Electronic register of the Government of Armenia <https://www.e-register.am/am/> (accessed 30.09.2016) (in Armenian),

<sup>307</sup> For more see Official website of the Government of Armenia <http://report.gov.am/?id=14> (accessed 01.09.2016) (in Armenian);

Armenia’s membership<sup>308</sup> to the Customs Union and later to the EAEU lead to not signing the Association Agreement with the EU. These developments caused establishment of a new phase in Armenia-EU and Armenia-EAEU relations. It is remarkable that nonetheless the EU kept in force several agreements signed with Armenia<sup>309</sup>. In particular, in 2009-2013 Armenia used Generalised Scheme of Preferences (GSP+) trade regime incentives that opened the door to export around 6,400 goods made in Armenia to the EU market with zero or minimal customs. With the decision of the European Commission Armenia was included in the list of those 10 countries that were given opportunity to be involved in the new phase of the reviewed GSP+ regime<sup>310</sup>.

Figure 2

Trends of EU-Armenia import-export in 2005 – 2015<sup>311</sup>



As the table shows, the volume of export considerable rose after 2009, but began decreasing after 2013.

<sup>308</sup> On October 10, 2014, during the meeting of the SEAEC, in Minsk the Treaty on accession of the Republic of Armenia was signed to the Treaty on the EAEU (dated May 29, 2014). The above-mentioned Treaty became an act of international legal formalization of a new member accession to the Union on January 2, 2015. <https://mfa.gov.by/en/organizations/membership/list/aa16658947a49c28.html>, [https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia\\_11102014](https://docs.eaeunion.org/docs/en-us/0047297/itia_11102014) ;

<sup>309</sup> EU delegation to Armenia, [http://eeas.europa.eu/delegations/libya/896/armenia-and-the-eu\\_en](http://eeas.europa.eu/delegations/libya/896/armenia-and-the-eu_en), (accessed 01.10.2016);

<sup>310</sup> For the details see the official website of the RA Ministry of Economy, <http://www.mineconomy.am/arm/43/gortsaruyt.html> (accessed 30.09.2016) (in Armenian);

<sup>311</sup> The figure was prepared by the authors based on statistical data obtained from <http://ec.europa.eu/> (accessed 01.09.2016);



## Conclusion

Undoubtedly, 2011-2013 was the most intensive period in the new history of Armenia and was marked with considerable progress in various areas in the result of implementation of the reforms supported by the European Union. Those significant efforts have been appreciated by the EU. The main areas funded were raise of effectiveness of governance institutions, trade and investment, social-economic and others.

During the whole process of the cooperation and implementation of the programmes mentioned in this paper, public administration system was being reformed. Thanks to those improvements the ministries nowadays implement functions of coming up with respective policies, monitoring, coordination, whereas the functions of service provision, regulation and inspection are generally passed to agencies and inspectorate that have been separated from the ministries.

Due to those changes, the issue with duplication of functions was mostly resolved.

In the result of reforms in public administration system, the charters of the ministries were clarified, the structures of their staff were brought to uniformity: departments, secretariats, sections etc.

Given the new commitments of Armenia towards the EAEU, the Foreign Affairs Council of the EU commissioned the Council of the European Union and the High Representative to start negotiations with Armenia around new, legally binding and comprehensive agreement, as well as empowered with mandate for the negotiations. The negotiations were official launched on December 7, 2015. The new agreement will substitute the current Partnership and Cooperation Agreement between Armenia and the EU<sup>312</sup>. These facts show that Eastern Partnership is presently in uneasy situation and it will be hard to find effective and multilateral solutions for efficiently upholding the cooperation. Active discussions at very different political platforms aim to find out in what areas it will be possible to continue cooperation without contradicting to the new commitments that Armenia undertook with its EAEU membership. It means that Armenia continues its cooperation with the EU as a full member of the EAEU. Now, one of priority items on the agenda is the establishment of the new legal foundation for Armenia-EU relationship. In this regard, both the EU and Armenia agree that it is important to review the basis for relations.

---

<sup>312</sup> See the official website of the EU Delegation to Armenia, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_hy.htm) (accessed 18.06.2016).

# ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ–Ի «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԵՎ ՓՈՒՍԱԿԵՐՊՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (ԵՄ – ՀՀ ՓՈՒՍԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

## ԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, ՌԻՄԱ ԽԱԼԱԹՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ Բ. Գ. Թ., ԴՊՑԵՆՏ ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ<sup>313</sup>

### Ներածություն

2004–2007 թթ. ընդլայնման արդյունքում Եվրոպական միության (ԵՄ)՝ մինչ այդ հիմնականում անվտանգ սահմանները փոփոխվեցին և մոտեցան անկայուն տարածաշրջաններին, որի հետևանքով ԵՄ արտաքին քաղաքականության (ԱՔ) վեկտորում լուրջ հավելումներ մտցվեցին: Նպատակ ունենալով ստեղծել անվտանգության գոտի՝ ԵՄ հարևանությամբ գտնվող պետություններում անհրաժեշտ էր ստեղծել լավ կառավարվող հասարակական–քաղաքական համակարգեր, որը կնվազեցներ ԵՄ սահմանների մոտ անկայունության հավանականությունը: Նոր մարտահրավերներին դիմակայելու համար ներդրվեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որի իրագործման հիմնական գործիքը Եվրոպականացումն է: Հանդես գալով որպես ժողովրդավարացում՝ «Եվրոպական» չափանիշներով, Եվրոպականացումը ԵՄ «փափուկ ուժի» դրսևորումն է: 2008 թ. նախկին ԽՍՀՄ 6 երկրների հետ (Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա) ԵՄ մերձեցման համար որպես ԵՀՔ ներդրվեց Արևելյան գործընկերությունը (ԱԳ): ԱԳ մասնակից պետությունների համար Եվրոպականացումը ձեռք բերեց առաջնային և կարևորագույն նշանակություն քաղաքական համակարգերի ժողովրդավարական կերպափոխման տեսանկյունից:

Այս համատեքստում յուրօրինակ են ԵՄ – ՀՀ հարաբերությունները: ՀՀ–ն, չունենալով ԵՄ–ին անդամակցելու նպատակ, ի տարբերություն Մոլդովայի, Ուկրաինայի և Վրաստանի, մշտապես ակտիվ և համակողմանի համագործակցել է ԵՄ–ի հետ: Իսկ, ի տարբերություն Բելառուսի և Ադրբեջանի, ՀՀ–ն՝ չունենալով ընդհանուր սահման ԵՄ–ի հետ, պատրաստվում էր ստորագրել խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) մասին պայմանագիրը: Սակայն 2013 թ. սեպտեմբերի 3–ի՝ Մաքսային միությանն (ՄՄ) անդամակցելու որոշումը փոփոխություններ մտցրեց ոչ միայն

<sup>313</sup> Նարեկ Գալստյան, ք. գ. թ., ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ:

ԵՄ-ի հետ ՀՀ հարաբերությունների զարգացման հետագա շրջանակի, այլև ԵՄ արևելյան քաղաքականության մեջ ընդհանրապես՝ առաջ քաշելով ԵՄ ԱԲ տարբերակման մոտեցումը:

Ելնելով վերոնշյալից՝ սույն ուսումնասիրության գլխավոր **նպատակներ** են սահմանվել՝

1. ԵՄ – ՀՀ փոխգործակցության օրինակով վերհանել ԱԳ շրջանակներում ԵՄ-ի՝ որպես փափուկ ուժի փոխակերպման քաղաքականության հիմնախնդիրներն ու հեռանկարները:

2. Պարզել, թե ինչպես և որքանով է ՀՀ եվրոպականացման վրա ազդել ԵՄ – ՀՀ գործընկերությունը ԵՀԲ և ԱԳ շրջանակներում:

Այս նպատակներին հասնելու համար սահմանել ենք հետազոտական հետևյալ **խնդիրները՝**

1. բացահայտել ԵՄ-ի՝ որպես փափուկ, նորմատիվային և փոխակերպող ուժի արտաքին քաղաքականության յուրահատկությունները,

2. վերհանել ԱԳ նշանակությունը ԵՄ-ի արտաքին անվտանգային քաղաքականության համատեքստում,

3. վերհանել եվրոպականացման՝ որպես ԵՄ-ի փոխակերպող ուժի դրսևորման առանձնահատկություններն ԱԳ շրջանակներում,

4. ԵՄ – ՀՀ փոխգործակցության օրինակով վերհանել ԵՄ-ի փոխակերպման քաղաքականության (եվրոպականացման) արդյունքները, խնդիրները և հեռանկարները:

Ձևակերպված խնդիրներից առաջինի լուծման նպատակով ուսումնասիրության համար օգտագործվել է բովանդակային վերլուծության մեթոդը, երկրորդ և երրորդ խնդիրների լուծման նպատակով՝ պատմահամեմատական և բովանդակային վերլուծության մեթոդները, իսկ չորրորդ խնդրի լուծման նպատակով՝ համակարգակառուցվածքային և բովանդակային վերլուծության մեթոդները:

Հետազոտության **օբյեկտն** ԱԳ շրջանակներում գործընկեր պետությունների հետ ԵՄ-ի փոխգործակցությունն է, **առարկան**՝ այդ համատեքստում ԵՄ-ի կողմից փոխակերպման՝ եվրոպականացման քաղաքականության առանձնահատկությունները, որոնք քննվել են ՀՀ օրինակով:

## 1. Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը

Ելնելով քննվող հիմնախնդրի բազմաչափությունից՝ հետազոտությունը կառուցել ենք մեթոդական հինգ մոտեցումների վրա, որոնք պատճառահետևանքային կապով սերտորեն կապակցված են, ավելին՝ բխում են մեկը մյուսից: Դրանցից առաջինը ԵՄ-ի արտաքին քաղաքականության յուրահատկությունն է՝ դրա բազմաչափ բովանդակությունը, մշակող և

իրագործող ինստիտուտների, ինչպես նաև կիրառվող մեթոդների ու ընթացակարգերի բազմազանությունը, որտեղ ԵՄ-ն ներկայանում է որպես առանձնահատուկ, ոչ սովորական ԱԲ դերակատար: Երկրորդը նորմերի դերն է ԵՄ-ի արտաքին քաղաքականության մեջ, մասնավորապես ԵՄ-ն որպես նորմեր «արտահանող» արտաքին քաղաքական դերակատար: Մեթոդական երրորդ մոտեցումը ԵՄ-ի «փափուկ ուժն» է, չորրորդը՝ նրա «փոխակերպող ուժը»՝ ԵՄ-ի ունակությունը փոխակերպելու գործընկեր պետության իրավական, տնտեսական և քաղաքական համակարգը, իսկ վերջինը՝ այդ փոխակերպման էությունը՝ եվրոպականացումը:

### 1.1. ԵՄ-ի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները

ԵՄ-ի՝ որպես արտաքին քաղաքական դերակատարի էությունն ակադեմիական շրջանակներում ամենավիճահարույց թեմաներից է, և ինչպես նկատում է Ֆեդերիկա Բինդին, դրա վերաբերյալ առկա է երեք հիմնական տեսակետ՝ ա) ԵՄ ԱԲ չկա, երեք չի լինի և չպետք է լինի, բ) ԵՄ ԱԲ-ն այսօր կորցրել է իր նշանակությունը, սակայն պետք է լինի, եթե Եվրոպայի պետությունները ցանկանում են իրականացնել իրենց արտաքին քաղաքական նպատակները և գ) ԵՄ ԱԲ-ն անհրաժեշտ է, թեև Եվրոպական առաջնորդները հաճախ խուսափում են օգտագործել այդ եզրույթը՝ կարծելով, թե այն կվախեցնի իրենց հասարակություններին կամ կնվազեցնի իրենց ազդեցությունը<sup>314</sup>: Սվեն Բիսկոպի և Ժան Ժոել Անդերսոնի համոզմամբ Եվրոպան անկարող է լինել մեկ միասնական սուբյեկտ միջազգային դիվանագիտական թատերաբեմում: Եվ չնայած ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը (ԸԱԱԲ) վերջին տարիներին հասել է որոշակի հաջողությունների, իսկ ԵՄ-ն արդեն կարող է իրավամբ համարվել «իրական դերակատար», այդուհանդերձ դա բոլորովին չի նշանակում, որ ԵՄ-ն արդյունավետ դերակատար է<sup>315</sup>:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ ԵՄ-ն ավանդական արտաքին քաղաքական դերակատար չէ. միջազգային թատերաբեմում նրա վարքը նման չէ ո՛չ միջազգային կազմակերպությունների, ո՛չ էլ ազգային պետությունների վարքին, բայց միաժամանակ ընդհանրություններ ունի թե՛ մեկի, թե՛ մյուսի հետ: Մասնավորապես ԵՄ-ի ԱԲ-ն բավական ընդարձակ ու ընդգրկուն

<sup>314</sup> Bindi, F. and Shapiro, J. (2010). EU Foreign Policy: Myth or Reality? In: F. Bindi, ed., *The Foreign Policy of the European Union. Assessing Europe's Role in the world*. Washington, D.C.: Brookings Institution, p 339.

<sup>315</sup> Biscop, S. and Andersson, J. (2008). The ESS and the United States, Conclusion, In: Biscop, S. and Andersson, J. ed., *The EU and the European security strategy. Forging a global Europe*. London: Routledge., p. 167.

է և, ըստ էության, ներառում է նրա գործառնության մի քանի ոլորտների (արտաքին առևտրային քաղաքականության, անդրեվրոպական ցանցերի, էներգետիկ և կրթական քաղաքականությունների արտաքին չափումների, Շենգենի գոտու, ներգաղթի քաղաքականության, սահմանների պաշտպանության, ընդլայնման ու միջազգային համագործակցության) անվտանգային, արտաքին քաղաքական և համագործակցային չափումները: Եվ չնայած ԵՄ ԱԲ-ի միջուկը ԸԱԱԲ-ն է, սակայն այն ընդգրկում է նաև հակամարտությունների կանխարգելման, հակասահաբեկչության, էներգետիկ դիվանագիտության, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության, մարդու իրավունքների և ժողովրդավարացման, միգրացիայի, միջուկային անվտանգության և այլ ոլորտներ: Ինչպես գրում է Կնուդ Էրիկ Յորգենսոնը, որոշ մարդիկ նախընտրում են կենտրոնանալ ԵՄ ԱԲ-ի այն ոլորտների վրա, որոնք ԵՄ-ի վերագգային ինստիտուտների ենթակայության ներքո են, ինչպիսին են առևտուրը, զարգացման աջակցությունը, ընդլայնման ու հարևանության քաղաքականությունը, իսկ մյուս մասը կենտրոնանում է ԸԱԱԲ-ի և Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ԸԱՊԲ) վրա, քանի որ այս ոլորտները մոտ են այն տեսակ խնդիրներին, որոնք ասոցացվում են արտաքին քաղաքականության հետ<sup>316</sup>: Ինչպես նկատում ենք, ԵՄ-ի ԱԲ տիրույթն ունի տարբերակված ինստիտուտացում. համապատասխան գործառնությունները բաշխված են ԵՄ-ի տարբեր ինստիտուտների, առաջին հերթին՝ ԵՄ-ի խորհրդի և հանձնաժողովի միջև:

Ըստ Քրիստոֆեր Բիքերթոնի՝ անդամ երկրների նպատակներին զուգահեռ ԵՄ ԱԲ-ն համարվում է ԵՄ երեք հիմնական ինստիտուտների՝ ԵՄ-ի խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի ու Եվրոպական խորհրդարանի միջև հարաբերությունների փոփոխության արդյունք: Հեղինակը ԵՄ-ի ԱԲ-ի առանձնահատկություն է համարում այն, որ այս ինստիտուտներից յուրաքանչյուրը ձգտում է ամրապնդել իր դերը որոշումների կայացման գործում, և դրա հետևանքով ԵՄ ԱԲ արդյունքները հաճախ նկատելիորեն անարդյունավետ են, քանի որ հետևանք են ներքին քաղաքական պայքարի<sup>317</sup>: ԵՄ-ի ԱԲ-ում իր ուրույն դերն ունի Արտաքին գործողությունների եվրոպական ծառայությունը, որը Լիսաբոնի պայմանագրով դարձավ հիմնական ուղղորդող մարմին և ԵՄ-ի դիվանագիտական և տարբեր ինստիտուտների հավակնությունների հավաքական ներկայացուցչությունն ար-

<sup>316</sup> Jorgenson, K. E. (2004), European Foreign policy: Conceptualising the Domain. In: Carlsnaes, W., Sjursen, H. and White, B. ed., *Contemporary European foreign policy*. London: Sage., p. 36.

<sup>317</sup> Bickerton, C. (2011), The politics of Performance: Turf Wars in Common Security and Defence Policy, In: *Bickerton, C. ed., European Union foreign policy*. Basingstoke: Palgrave Macmillan., p. 57.

տերկրում և Բրյուսելում:

Տարբերակված են նաև արտաքին հարաբերությունների ոլորտներում որոշումների ընդունման մեթոդները և ընթացակարգերը<sup>318</sup>: Այսպես, Եվրոպական խորհրդին է վերապահված սահմանելու ԵՄ-ի ռազմավարական շահերը, որոշելու նպատակները և ամրագրելու ընդհանուր ուղենիշներ ԸԱԱԲ-ի, այդ թվում՝ պաշտպանության վերաբերյալ հարցերի համար, և Խորհրդին է վերապահված ձևավորելու ԸԱԱԲ-ն՝ որոշումներ ընդունելով դրա սահմանման և իրականացման համար (Հոդված 26)<sup>319</sup>: Լիսաբոնի պայմանագիրը սահմանեց, որ ԸԱԱԲ-ն մնում է ԵՄ-ի քաղաքականության մի մաս, որը տարանջատված է Միության մյուս գործողություններից: ԸԱԱԲ-ն ենթակա է հատուկ կանոնների և ընթացակարգերի, որոնք պետք է սահմանվեն և իրագործվեն Եվրոպական խորհրդի ու Խորհրդի միաձայն ընդունմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք չեն նախատեսվում պայմանագրերով (Հոդված 24)<sup>320</sup>: Լիսաբոնի պայմանագրով սահմանվեց նաև Արտաքին գործողությունների եվրոպական գործակալության ստեղծման անհրաժեշտությունը: Որպես հիմնական գործառույթներ սահմանվում էին ամրապնդել ԵՄ-ի դիրքերը համաշխարհային թատերաբեմում և հնարավորություն տալ ԵՄ-ին պաշտպանելու իր շահերն ու արժեքներն ավելի արդյունավետ:

## 1.2. ԵՄ-ն որպես «փափուկ ուժ», «նորմատիվային դերակատար» և «փոխակերպող ուժ»

ԵՄ արտաքին քաղաքականության առանձնահատկություններից է նաև այն, որ նա հանդես է գալիս միաժամանակ որպես «փափուկ» ու «փոխակերպող ուժ» և նորմատիվային դերակատար: Ինչպես նկատում է Ջոզեֆ Նայրը, «փափուկ ուժի» գործողությունները հիմնվում են երեք հիմնական «գրավչությունների» վրա՝ ա) նրա մշակույթն այն ոլորտներում, որտեղ նա հրապուրիչ է մյուսների համար, բ) նրա քաղաքական արժեքները, եթե դերակատարը հետամուտ է դրանց պահպանմանը և իր ներքին, և արտաքին հարաբերություններում, գ) նրա արտաքին քաղաքականությունը, երբ գործընկերներն այն համարում են լեգիտիմ, իսկ դերակատարին՝ բա-

<sup>318</sup> Գալստյան, Ն. (2012), ԵՄ անվտանգության և պաշտպանության քաղաքականություն, Դասախոսության նյութեր, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն:

<sup>319</sup> Herlin-Karnell, E. and Konstadinides, T. (2014), EU constitutional principles of housekeeping rules in EU external variable geometry. In: Blockmans S. ed., *Differentiated integration in the EU from the inside looking*, Brussels, p. 46.

<sup>320</sup> The Treaty on the functioning of the European Union, Declaration concerning the common foreign and security policy, 2012, <http://eur-lex.europa.eu/legal-content/en/ALL/?uri=CELEX%3A12012E%2FTXT>.

րոյական հեղինակության կրող<sup>321</sup>: ԵՄ-ի պարագայում հստակ նկատելի է «փափուկ ուժ»-ի կիրառումը, քանի որ ԵՄ ԱԲ-ում չկա կոշտ ուժին բնորոշ գործիքակազմ, և ԵՄ-ն գործընկերների հետ հարաբերություններում առավելությունը տալիս է համոզելու և գայթակղելու «փափուկ» մեթոդներին:

ԵՄ-ն դիտարկվում է նաև որպես նորմատիվային դերակատար, որի արտաքին քաղաքական նպատակները և դրանց իրագործման մեթոդները բնույթով նորմատիվային են ու հիմնված միջազգային նորմերի վրա: Նատալի Տոչին նկատում է, որ մի կողմից՝ ԵՄ-ն հակված է նորմատիվայնության, երբ հարաբերությունները երրորդ պետությունների հետ համեմատաբար հավասարակշռված են և զարգանում են փոխհամաձայնեցված պայմանագրերի շրջանակներում, մյուս կողմից՝ ուժը և մասնավորապես հարաբերական ուժը թվում է վճռորոշ գործոն՝ նորմատիվ ազդեցություն առաջացնելու համար<sup>322</sup>:

Ինչպես նշում է Ռիչարդ Ուիթմանը, միջազգային թատերաբեմում ԵՄ-ի դերակատարության հիմքում ընկած են հիմնարար փաստաթղթերով սահմանված նորմերն ու սկզբունքները, և ԵՄ-ի նորմատիվ ուժը խարսխված է ավանդական մոտեցումների, ամբողջատիրական ու պետականակենտրոն հայացքների մերժման վրա<sup>323</sup>: ԵՄ-ի նորմատիվային նպատակն իր և երրորդ պետությունների միջև հավասարակշռված հարաբերություններն են, որոնք կունենան փոխհամաձայնեցված պայմանագրային հիմք, նորմատիվային մեթոդները՝ այդ նորմերի ու չափորոշիչների արտահանումն ու միջազգայնացումը, իսկ սպասված նորմատիվային արդյունքը հենց այդ «արտահանված» նորմերի միջոցով երրորդ երկրների փոխակերպումն է՝ եվրոպականացումը՝ իհարկե միայն «փափուկ ուժի» զուգահեռ գործադրմամբ:

Որոշ հեղինակներ նկատում են, որ ԵՄ-ին անդամակցության թեկնածու, ինչպես նաև եվրոպական ծայրամասում գտնվող գործընկեր պետությունների հետ փոխհարաբերություններում ԵՄ-ի արտաքին քաղաքականության մեջ գնալով ավելի մեծ նշանակություն է տրվում որոշակի նորմերի «արտահանմանը» և միջազգայնացմանը: Դա հիմնականում արտահայտվում է այդ երկրների իրավական, քաղաքական, կառավարման և տնտեսական համակարգերի եվրոպականացման աջակցության մեջ, և հենց այս

<sup>321</sup> Nye, J. (2004). *Soft power. The means to success in the world politics*. New York: Public Affairs, p. 5.

<sup>322</sup> Tocci, N. (2008), The Interplay between the Three Dimensions of Normative Foreign Policy. In: Tocci, N and Hamilton, D. ed., *Who is a normative foreign policy actor? The European Union and its Global Partners*. Brussels: Centre for European Policy Studies. p. 5-6.

<sup>323</sup> Whitman, R. (2011), Norms, Power and Europe: A New Agenda for Study of the EU and International Relations. In: Richard Whitman R. ed., *Normative power Europe. Empirical and theoretical perspectives*. Houndmills, Basingstoke: Palgrave Macmillan, p. 5.

ինաստով էլ ԵՄ–ն նաև «փոխակերպող ուժ» է<sup>324</sup>: Գործընկեր, թեկնածու, ինչպես նաև անդամ երկրներին փոխակերպելու այդ քաղաքականությունը հենց ԵՄ–ի «փափուկ ուժի» դրսևորումն է, և փոխակերպումն իրականացվում է նորմատիվային հիմքի վրա: ԵՄ «փափուկ ուժի», «փոխակերպող ուժի» և «նորմատիվայինության» կապը դրսևորվում է նրանում, որ իր ԱԲ զինանոցում ունենալով գերազանցապես «փափուկ» գործիքներ՝ միջազգային թատերաբեմում ԵՄ–ն հանդես է գալիս որպես «փափուկ ուժ»: Դրա կիրառման ուղղություններից կամ ձևերից մեկը փոխակերպման քաղաքականությունն է՝ գործընկերներին փոխակերպելը: Իսկ այդ գործընթացի հիմքում ընկած են ԵՄ–ի դավանած, որդեգրած նորմերը:

### 1.3. Եվրոպականացումը որպես ԵՄ–ի փոխակերպող ուժի դրսևորում

Եվրոպականացումը՝ որպես ԵՄ–ի փոխակերպման ուժի դրսևորում, արտահայտվում է ինչպես ԵՄ «ներսում»՝ ԵՄ չափանիշներին անդամ և թեկնածու պետությունների համապատասխանեցման ձևով, այնպես էլ ԵՄ–ից «դուրս»՝ գործընկեր պետությունների հետ հարաբերություններում: Երկրորդ դեպքում եվրոպականացման գլխավոր նպատակը ԵՄ–ի անմիջական հարևանությամբ կայունության գոտու ստեղծումն է՝ հարևան երկրների հասարակական–քաղաքական համակարգերի փոխակերպման միջոցով: Այդ գլխավոր նպատակադրությունն ամրագրված է նույնիսկ 2003 թ. ընդունված Եվրոպական անվտանգության ռազմավարության (ԵԱԲ) մեջ, որի համաձայն՝ «Եվրոպայի շահերից է բխում, որ նրան սահմանակից երկրները լինեն լավ կառավարվող: Արյունոտ հակամարտություններում ներքաշված հարևանները, թույլ պետությունները, որտեղ ծաղկում է կազմակերպված հանցավորությունը, անկենսունակ հասարակությունները կամ բնակչության արագ աճը սպառնալիք են Եվրոպայի համար»<sup>325</sup>:

Եվրոպականացումը բարդ, բազմաբովանդակ և բազմամակարդակ գործընթաց է, որը ներառում է ինչպես նորմատիվ–իրավական, այնպես էլ տնտեսական, քաղաքական և, ինչն առավել կարևոր է, սոցիալ–մշակութային բաղադրիչներ: Ինչպես նշում են որոշ հեղինակներ, եվրոպականացումը տեղի է ունենում երեք հիմնական մակարդակներով: Առաջինը նորմատիվ–իրավական՝ օրենսդրական համակարգի մոտարկումն է, համապատասխանեցումը եվրոպական կառույցների չափանիշներին: Երկրորդն ինստիտուցիոնալն է, երբ ստեղծվում են առաջին մակարդակում կատար-

<sup>324</sup> Գալստյան Ն. (2012), ԵՄ անվտանգության և պաշտպանության քաղաքականություն: Դասախոսության նյութեր, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն:

<sup>325</sup> A Secure Europe in a Better World – European Security Strategy. Brussels, 12 December 2003.



ված փոփոխություններն ապահովող և հսկող ինստիտուցիոնալ կառույցներ: Երրորդը սոցիոմշակութայինն է՝ հանրային գիտակցության և վարքի փոփոխությունը<sup>326</sup>:

Մասնագիտական գրականության մեջ «եվրոպականացում» եզրույթն ընդհանուր առմամբ օգտագործվում է՝ բնորոշելու «ավելի եվրոպական դառնալու»<sup>327</sup> գործընթացը: Եվրոպականացման ավելի նեղ սահմանում տալիս է Ռոբերտ Լադրիչը՝ շեշտադրելով գործընթացի քաղաքական ասպեկտը: Նա եվրոպականացումը ներկայացնում է որպես «քաղաքականության ուղղության և ձևի աստիճանական վերակողմնորոշման գործընթաց այնքան ժամանակ, մինչև Եվրոպական հանձնաժողովի քաղաքական և տնտեսական դինամիկան դառնան ազգային քաղաքականության և դրա մշակման տրամաբանական կազմակերպման մաս»<sup>328</sup>:

Կլաուդիո Ռադալլին ավելի է զարգացնում եվրոպականացման սահմանումը՝ ներառելով ոչ միայն քաղաքական, այլ նաև նորմատիվ-իրավական, արժեքային, ինստիտուցիոնալ-համակարգային ասպեկտները: Ըստ նրա՝ եվրոպականացումը «գործընթաց է, որը ներառում է պաշտոնական և ոչ պաշտոնական կանոնների, ընթացակարգերի, քաղաքական հարացույցների, ոճերի, «ինչ-որ բան անելու ուղիների», համընդհանուր համոզմունքների և նորմերի (ա) կառուցումը, (բ) դիֆուզիան և (գ) ինստիտուցիոնալացումը, որոնք առաջին հերթին սահմանվել և համախմբվել են ԵՄ քաղաքականության գործընթացում, ապա ներառվել ներքին (ազգային և ենթազգային) խոսույթներում (դիսկուրսներում), քաղաքական կառույցներում և հասարակական քաղաքականություններում»<sup>329</sup>:

Այս սահմանումն առավել համապատասխան է սույն հետազոտության նպատակին ու խնդիրներին, քանի որ այն շեշտադրում է քաղաքական կանոնների ու վարքի և ֆորմալ, և ոչ ֆորմալ փոփոխությունները: Ուստի հենց այս մոտեցումն էլ կիրառվում է ուսումնասիրության մեջ՝ բացահայտելու, թե ինչպես է եվրոպականացումը տարածվել և ինստիտուցիոնալացվել ՀՀ-ում:

Իսկ ահա Ֆրանկ Շիմելֆեննինգը և Ուլրիխ Սեդելմայերը եվրոպակա-նացման երեք գործիք են առաջ քաշում.

- արտաքին խթանիչներ՝ արտաքին օժանդակություն և խրախուսում

<sup>326</sup> Գալստյան, Ն. (2012), Եվրոպական ինտեգրման տեսություն և պատմություն, Դասախոսություն, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն:

<sup>327</sup> Harmsen, R. and Wilson, T. (2000), Introduction; Approaches to Europeanization, in R. Harmsen and T. M. Wilson eds. Europeanization; Institutions, Identities and Citizenship, Yearbook of European Studies 14, pp. 24.

<sup>328</sup> Ladrech, R. (1994), Europeanization of Domestic Politics and Institutions: The Case of France, Journal of Common Market Studies, Vol. 32, N. 1, pp. 69.

<sup>329</sup> Radaelli, C. (2003), The Europeanization of Public Policy, in Featherstone K, ed., The Politics of Europeanization, Oxford University Press, pp. 31.

(ֆինանսական, տեխնիկական և այլն),

- սոցիալական ուսուցում՝ եվրոպական արժեքների և ուղու որդեգրում,
- փորձի կրկնօրինակում՝ պետությունն ինքնակամ որոշում է համապատասխանեցնել ազգային նորմերը ԵՄ չափանիշներին<sup>330</sup>:

Համաձայն Ջեֆրի Չեքելի՝ եվրոպականացումը գործում է երկու հիմնական մեխանիզմներով<sup>331</sup>: Առաջինը փոխալսմանավորումն է, որի դեպքում պետությունը պարտավոր է իրականացնել որոշակի քաղաքական գործողություններ, որտեղ դրական արդյունքի դեպքում սպասվում են խրախուսումներ, իսկ պայմաններից շեղումը կարող է հանգեցնել պատժամիջոցների: Երկրորդը սոցիալականացումն է, որի հիմքում ընկած է եվրոպական արժեքների և ուղու ընդունումը, ինչպես նաև սերտ համագործակցությունը եվրոպական ինստիտուտների հետ և եվրոպականին համապատասխանեցրած քաղաքական ինստիտուտների ստեղծման պայմանը<sup>332</sup>:

Սոցիալականացումը ԵՄ շրջանակներում ենթադրում է «բազմաթիվ անհատական և ինստիտուցիոնալ կապեր, ինչն անխուսափելիորեն ծառայում է որպես եվրոպականացման մեխանիզմ»<sup>333</sup>: Այս համատեքստում սոցիալականացումը հետևանքների տրամաբանությունից վերահճում է նպատակահարմարության տրամաբանության: Ինչպես նշում է Ջուդիթ Կելլին, ԵՄ ԵՀԲ-ն հաճախ դիտարկվում է որպես արևելյան հարևանների սոցիալականացում՝ ԵՄ նորմատիվային սկզբունքների ակտիվ կիրառմամբ<sup>334</sup>:

Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ ԵՄ-ն առավել արդյունավետ է նորմերի «փափուկ» արտահանման հարցում, որն արտահայտվում է անդամակցության թեկնածու, իսկ որոշ դեպքերում՝ նաև գործընկեր պետությունների նորմատիվային փոխակերպման՝ եվրոպականացման գործում: Ինչպես նշում է Նարեկ Գալստյանը, այս համատեքստում էլ հենց ԵՄ-ն դիտարկվում է նաև որպես իր անդամ և հատկապես թեկնածու պետու-

<sup>330</sup> Schimmelfennig, F. and Sedelmeier, U. (2005). Introduction: Conceptualizing Europeanization of Central and Eastern Europe. In: F. Schimmelfennig and U. Sedelmeier, ed., *The Europeanization of Central and Eastern Europe*. New York: Cornell University Press, pp. 8-10.

<sup>331</sup> Սույն հետազոտության մեջ մենք հիմք ենք ընդունել հենց այս մոտեցումը ԵՄ – ՀՀ գործակցության շրջանակներում ՀՀ եվրոպականացման ուղղությունները քննելու համար:

<sup>332</sup> Checkel, J. (2000), Compliance and Conditionality, ARENA Working Papers, WP 00/18, [http://www.sv.uio.no/arena/english/research/publications/arena-working-papers/1994-2000/2000/wp00\\_18.htm](http://www.sv.uio.no/arena/english/research/publications/arena-working-papers/1994-2000/2000/wp00_18.htm)

<sup>333</sup> Smith, N. R. (2011), Europeanization Through Socialization? The EU's Interaction With Civil Society Organizations in Armenia, *Demokratizatsiya, The Journal of Post-Soviet Democratization*, p. 388, [https://www.gwu.edu/~ieresgwu/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU\\_DEMO\\_19\\_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf](https://www.gwu.edu/~ieresgwu/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU_DEMO_19_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf) (12.09.16)

<sup>334</sup> Kelley, J. (2006). New Wine in Old Wineskins: Promoting Political Reforms through the New European Neighbourhood Policy. *JCMS: Journal of Common Market Studies*, [online] 44(1), p.39. Available at: <http://graduateinstitute.ch/files/live/sites/iheid/files/shared/summer/1A2011/SH1.pdf> [Accessed 28 Sep. 2016].

թյունների քաղաքականությունը փոփոխելու ունակ «փոխակերպող ուժ»<sup>335</sup>:

Մայքլ Էմերսոնն ու Գերգանա Նուտչևան իրենց հերթին եվրոպականացումը ներկայացնում են որպես ժողովրդավարացման ձգողական մոդել: Հեղինակները գտնում են, որ կան ժողովրդավարացման «կենտրոններ», որոնք բնորոշվում են բարձր զարգացած ժողովրդավարական քաղաքական համակարգերով և այլ պետություններում ունեն մեծ հեղինակություն: Ըստ այդմ, ԵՄ-ն ձգողական ուժ է եվրոպայում և նրան հարակից տարածքներում, ու նրան անդամակցության ձգտումն էլ խթանում է ժողովրդավարացման գործընթացը: Նրանք առանձնացնում են եվրոպականացման երկու ուղղություն՝ եվրոպականացում անդամ պետություններում և եվրոպականացում անդամակցության հեռանկար չունեցող պետություններում<sup>336</sup>:

Բայց այս մոտեցումն ունի նաև քննադատներ: Մասնավորապես ոմանք պնդում են, որ Միջերկրածովյան տարածաշրջանում ԵՄ-ի ժողովրդավարացման ու ազատականացման ձգտումներն իրականում ուղղված են ընդամենը տեղի ավտորիտար վարչակարգերի «զսպմանն» ու դրանց՝ տարածաշրջանում ԵՄ-ի (աշխարհա)տնտեսական քաղաքականության վրա հնարավոր բացասական ազդեցությունը սահմանափակելուն<sup>337</sup>: Մինչդեռ, ինչպես նկատում են որոշ հետազոտողներ<sup>338</sup>, ԵՀԲ երկրներում արդյունավետ եվրոպականացման հասնելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- Կառավարող քաղաքական ընտրանիների համար եվրոպականացումից ստացած օգուտը պետք է լինի ավելին, քան ստատուս քվոյի պահպանումից:

- Եվրոպականացման օգուտները պետք է ունենան հավանականության բարձր աստիճան և հասանելի լինեն տեսանելի ժամանակահատվածում, այլապես դրանք թույլ խթան կհանդիսանան ներգրավվող երկրի համար:

- Եվրոպականացումը պետք է հրապուրիչ լինի նաև որոշումների ընդունման վրա էական ազդեցություն ունեցող քաղաքական ուժերի գերակշիռ մեծամասնության համար:

<sup>335</sup> Գալստյան, Ն. (2013), Եվրոպական միության հարավկովկասյան քաղաքականության հիմքերն ու առանձնահատկությունները, Ժամանակակից Եվրասիա, եվրասիական խաչմերուկներ. Նոր մարտահրավերներ, Հատոր 2, էջ 114:

<sup>336</sup> Emerson, M. and Noutcheva, G. (2004) Europeanisation as a gravity model of democratisation. Brussels: Centre for European Policy Studies, [http://aei.pitt.edu/6646/1/1175\\_214.pdf](http://aei.pitt.edu/6646/1/1175_214.pdf) [Accessed 29 Sep. 2016]

<sup>337</sup> Գալստյան, Ն. (2013), Եվրոպական միությունը որպես արտաքին քաղաքական նորմատիվային դերակատար, Եվրոպական ակադեմիա գիտական հոդվածների ժողովածու, էջ 176-180:

<sup>338</sup> Գալստյան, Ն. (2013), Եվրոպականացման գործընթացները Հարավային Կովկասում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 4 (12), 2006, էջ 2-4:

• Եվրոպականացումը պետք է ընդունելի լինի տվյալ երկրի վրա էական ազդեցություն ունեցող հիմնական արտաքին ուժերի կողմից:

ԱլԳ բոլոր երկրներում այս հիմնապայմանների բավարարման հարցում եղել են ու կան խնդիրներ: Օրինակ՝ ԵՄ-ին անդամակցության հեռանկար չունեցող երկրների (Ադրբեջան, Բելառուս, Հայաստան) կառավարող վերնախավերի համար ԵՄ-ի կողմից տրամադրվող աջակցությունն այնքան հրապուրիչ չի եղել, որ կարողանար խթանել խորքային բարեփոխումները: Ավելին, առկա ներքաղաքական ստատուս քվոն այդ շրջանակներին ապահովում է երաշխավորված մուտք իշխանական ռեսուրսներին, մինչդեռ եվրոպականացումը կարող է վտանգել նրանց դիրքերը ներքաղաքական մրցապայքարում: Բացի դրանից՝ այդ երկրների վրա էական ազդեցություն ունեցող դերակատարը՝ ՌԴ-ն, ևս չի խրախուսել եվրոպականացումը: Արդյունքում այսպիսի երկրներում եվրոպականացումը չի ունեցել այն արդյունքը, ինչ, օրինակ, ԵՄ-ին անդամակցության պաշտոնական նպատակ ունեցող Մոլդովայում, Վրաստանում և Ուկրաինայում: Եվ դա՝ անգամ խորհրդարանական ուժերի մեծամասնության կողմից եվրոպականացման պաշտոնական օրակարգին տված հավանության պարագայում:

## 2. Արևելյան գործընկերություն. ԵՄ-ի «փափուկ ուժը» և նորմատիվային դերակատարումը գործողության մեջ

Ինչպես նկատում են որոշ հեղինակներ, ԵՄ-ն միջազգային թատերաբեմում ներկայանում է երկու ձևով. ա) որպես «անվտանգության ընկերակցություն»՝ հիմնված իր անդամ երկրների ու քաղաքացիների համար ընդհանուր արժեքների և նորմերի վրա՝ որպես խաղաղության և բարեկեցության տարածություն, որտեղ իրագործվել է կանտյան «ժողովրդավարական խաղաղությունը», բ) ԵՄ-ն գործընկերների հետ իր հարաբերություններում չի օգտագործում «կոշտ ուժին» բնորոշ գործիքակազմ, ինչպես, օրինակ, ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումը: ԵՄ-ն նախընտրում է «փափուկ» մեթոդները՝ «համոզելով» կամ «գայթակղելով» գործընկերներին՝ գործել այս կամ այն կերպ՝ դրա համար կիրառելով ֆինանսատնտեսական խրախուսանքներ և/կամ պատժամիջոցներ<sup>339</sup>:

Թաավի Քերիքմայեի կարծիքով ԵՄ-ի և ԱլԳ մասնակից երկրների միջև սերտ համագործակցությունը ԵՄ-ի արտաքին հարաբերությունների հիմնական բաղադրիչն է<sup>340</sup>: ԵՄ-ի «փափուկ ուժը» և արտաքին քաղա-

<sup>339</sup> Գալստյան Ն. (2012), ԵՄ անվտանգության և պաշտպանության քաղաքականություն, Դասախոսության նյութեր, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն:

<sup>340</sup> Kerikmae T., (2016), Dimensions and Implications of Eastern Partnership Policy: In Kerikmäe, T. and Chochia, A. ed., *Political and Legal Perspectives of the EU Eastern Partnership Policy*, New York, Springer, p. 2.

քականության նորմատիվայնությունը լավագույնս դրսևորվում են ԵՀԲ-ի և հատկապես դրա արևելյան ուղղության՝ ԱլԳ-ի շրջանակներում: 2009 թ. Պրահայի համատեղ հռչակագրի համաձայն՝ ԱլԳ-ն հիմնված է միջազգային իրավունքի սկզբունքների և հիմնարար արժեքների վրա՝ ներառելով ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, ինչպես նաև շուկայական տնտեսությունը, կայուն զարգացումն ու լավ կառավարումը<sup>341</sup>:

Եվ իսկապես, ԱլԳ մասնակից երկրների վարած արտաքին ու ներքին քաղաքականություններում նկատելի է ԵՄ-ի «փափուկ ուժի» դրսևորումը: Օրինակ՝ ԱլԳ երկրների համար նախատեսվող ռազմավարությունների չորս բազմակողմ հարթակների ձևավորումը (ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության, տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին համապատասխանեցման, էներգետիկ անվտանգության), ազատ առևտուրը, վիզային ռեժիմի ազատականացումը ԵՄ-ի կողմից «գայթակղելու», «համոզելու» մեթոդների և «փափուկ ուժի» կիրառման դրսևորումներ են: Այն հանգամանքը, որ ԵՄ-ն խրախուսում է գործընկեր երկրներում իր հիմքում ընկած նորմատիվային արժեքների՝ մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության, օրենքի գերակայության ամրապնդմանը, ևս խոսում է ԵՄ-ի կողմից «փափուկ ուժի» կիրառման մասին: ԱլԳ մասնակից երկրներ Ուկրաինայի, Մոլդովայի և Վրաստանի առումով ակնհայտ է նաև նրանց նկատմամբ ԵՄ-ի քաղաքականության բարձր լեգիտիմությունը (առնվազն՝ կառավարող վերնախավի մոտ), ինչի վառ ապացույցն այդ երկրների՝ ԵՄ-ին անդամակցության պաշտոնական նպատակի առկայությունն է: Ի նշան այդ երկրների կառավարման համակարգերի եվրոպականացման գործում առաջընթացի՝ ԵՄ-ն նրանց հետ կնքեց ազատ առևտրի գոտու պայմանագրեր, արդեն վերացվել է վիզային ռեժիմը Մոլդովայի հետ, այդ շեմին մոտ է նաև Վրաստանը: Եվ չնայած վերոնշյալ երկրներից ոչ մեկը չի ստացել ԵՄ-ին անդամության թեկնածուի կարգավիճակ, այդ նպատակը շարունակում է մնալ այդ երկրների արտաքին քաղաքական օրակարգում:

Այդուհանդերձ, որոշ հեղինակների գնահատմամբ անգամ ԱլԳ-ի պարագայում ոչ միշտ է ԵՄ-ի փափուկ ուժը տալիս սպասված արդյունքներ: Ոմանք ԵՄ-ին չափազանց «փափուկ» ու ոչ պահանջկոտ են համարում՝ նշելով, որ ԵՄ-ն պետք է հստակություն մտցնի իր քաղաքականության մեջ, այլապես անորոշ ազդանշանները չեն կարող համարժեքորեն ընկալ-

<sup>341</sup> Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, May 2009, [http://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_data/docs/pressdata/en/er/107589.pdf](http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/er/107589.pdf).

վել<sup>342</sup>: Խնդիր է նաև այն, որ ԵՄ-ն առայժմ չի կարողացել փոխարինել ՌԴ-ի շուկան ԱԳ այն մասնակից երկրների համար, որոնք վերակողմնորոշել են իրենց արտաքին քաղաքականությունը ՌԴ/ԱՊՀ տարածքից դեպի ԵՄ արդյունքում կրելով տնտեսական որոշակի զրկանքներ:

Նկատենք նաև, որ ԵՄ-ն իր առջև երբեք չի էլ դրել «կոշտ» ու «պահանջկոտ» լինելու խնդիր: ԵՄ-ի արտաքին քաղաքականությունն առանձնանում է հենց նրանով, որ հարևանների հետ հարաբերություններում իր կողմից սպասված արդյունքներին ԵՄ-ն փորձում է հասնել՝ գործելով բացառապես «փափուկ ուժի» դիրքերից և «փափուկ» մեթոդներով:

Արդեն նշել ենք, որ ԵՄ-ը հարևանների հետ հարաբերություններում հանդես է գալիս նաև որպես նորմատիվային դերակատար, իսկ ԱԳ ծրագրում այդ նորմատիվայնությունը գտնում է իր կոնկրետ դրսևորումը՝ միաժամանակ նպատակ ունենալով «արտահանել» այդ նորմերը մասնակից երկրներում՝ դրանք դարձնելով բարեփոխումների հիմքը:

Անդրիյ Բրինը և Ռաֆաելլա Կոլետին նշում են, որ ԵՀԲ շրջանակներում մոտեցումները շարունակում են նորմատիվ մնալ այնքան ժամանակ, քանի դեռ դրանք ընդգծում են օգնության կիրառման անհրաժեշտությունը, համագործակցությունն ու ինտեգրացիան որպես գործիքներ՝ նպաստելու քաղաքական փոփոխություններին ԵՄ-ի ոչ անդամ երկրներում: Նրանց համոզմամբ ԵՄ-ի ԱԲ-ում կարևորվում են թե՛ «նորմատիվ մոտեցումը», թե՛ փափուկ ուժը, որոնցով էլ ԵՄ-ն կառուցում է իր «քաղաքակրթող առաքելությունը»: Հեղինակները նկատում են, որ ԵՀԲ-ն իր գաղափարներով նորմատիվ ուժի օրինակ է՝ կիսելու համընդհանուր (եվրոպական) արժեքները և սկզբունքները, ընդ որում՝ որքան հարևանության երկրներն ընդունեն ընդհանուր նորմերը, այնքան կինտեգրվեն ԵՄ-ին<sup>343</sup>: ԱԳ ծրագրի օրինակով այս պնդումն ունի իր գործնական կիրառությունը, քանի որ ԵՄ-ի նորմատիվ մոտեցումներն իսկապես լուրջ գործիքներ են՝ ԱԳ մասնակից երկրներում անհրաժեշտ փոփոխությունների իրականացման ճանապարհին: Ավելին՝ որքան մեծ են փոփոխությունները մասնակից երկրներում, այնքան մեծանում են ինտեգրման հնարավորությունները:

Այսպես, ԱԳ ծրագրի շրջանակներում մասնակից երկրների և ԵՄ-ի միջև նախատեսվում է կնքել ասոցացման համաձայնագրեր (ԱՀ)<sup>344</sup>, որոնք ենթադրում են այդ երկրների օրենսդրության և ինստիտուտների մոտարկում

<sup>342</sup> Korosteleva, E. (2012). The European Union and its eastern neighbours. Towards a more ambitious partnership? London: Routledge. p. 45.

<sup>343</sup> Coletti, R., Bryn, A. (2015), Global Empires and the European Neighbourhood: In Celata, F. and Coletti, R. ed., *Neighbourhood policy and the construction of the European external borders.*, Rome, p. 180.

<sup>344</sup> 2014 թ. ԵՄ-ն ասոցացման համաձայնագրեր է կնքել Վրաստանի, Մոլդովայի ու Ուկրաինայի հետ:

ԵՄ-ի չափորոշիչներին և նորմերին: ԱՀ-ն ԵՄ-ի նորմատիվ ազդեցության դրսևորման լավագույն օրինակներից է: ԱՀ-ի շրջանակներում կնքվող մասնավորապես խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը (ԽՀԱԱՀ) ենթադրում է ԵՄ-ի և գործընկեր երկրի միջև առևտրի ազատականացում և առևտրին վերաբերող օրենսդրության ներդաշնակեցում ԵՄ-ի չափորոշիչներին և *acquis communautaire*-ին: Բացի այդ՝ նախքան ԱՀ-ի կնքումը տվյալ երկիրը պետք է անդամակցի Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, ինչն իր հերթին ենթադրում է որոշակի նորմերի ու չափորոշիչների համապատասխանեցում<sup>345</sup>: ԱլԳ ծրագրի շրջանակներում մասնակից երկրների և ԵՄ-ի կողմից սահմանված նորմերի ընդունումն ուղիղ համեմատական է այդ երկրների՝ ԵՄ-ին ինտեգրման մակարդակին. Վրաստանն ու Մոլդովան այս հարցում հասել են բավական շոշափելի արդյունքների հենց ԵՄ-ի «արտահանած» նորմերի յուրացման շնորհիվ: Թոնիկե Շարաշենիձեն նկատում է, որ մարդու իրավունքների հարցերը Վրաստանում մեծապես կարգավորվեցին շնորհիվ հենց ԱլԳ-ի<sup>346</sup>: Վրաստանը և Մոլդովան ԹԲԻԽԻում 2016 թ. կազմակերպված գազաթաժողովի ժամանակ Եվրոպական հանձնաժողովի, ՄԱԿ-ի ներկայացուցիչների ու այլ փորձագետների կողմից համարվել են ԱՀ-ի կնքումից հետո առաջընթաց գրանցող երկրներ, իսկ այդ բարեփոխումներն այդ երկրներին էլ ավելի են մոտեցրել Եվրոպային<sup>347</sup>:

Այսպիսով՝ ԵՄ-ն իր արտաքին քաղաքականության կարևորագույն մասեր կազմող «փափուկ ուժն» ու «նորմատիվայնությունը» հստակ կիրառում է ԵՀԲ / ԱլԳ ծրագրերի միջոցով՝ փորձելով այդ կերպ «փոխակերպել», «եվրոպականացնել» մասնակից երկրների ներքին ու արտաքին քաղաքականությունները: Ընդ որում՝ մեր կողմից բերված օրինակները վկայում են, որ այս քաղաքականությունը արդեն իսկ տվել է սպասված արդյունքները, եթե ԱլԳ ոչ բոլոր անդամների, ապա գոնե երեքի դեպքում (Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա): ԵՄ-ի արտաքին քաղաքականության յուրահատկությունները ԱլԳ շրջանակում հենց այդ «փափուկ», «նորմատիվ» և «փոխակերպող» ուժերի կիրառումն ու մասնակից երկրների աստիճանական եվրոպականացումն են: Ինչ վերաբերում է ԵՄ-ի անվտանգային քաղա-

<sup>345</sup> Eastern Partnership - eas - European Commission, Eastern Partnership, 15/06/2016, հասանելի է 26.09.2016, [https://eas.europa.eu/topics/eastern-partnership/419/eastern-partnership\\_en](https://eas.europa.eu/topics/eastern-partnership/419/eastern-partnership_en).

<sup>346</sup> Sharashenidze, T. (2015), The Eastern Partnership: the view from Georgia, ECFR, հասանելի է 26.09.2016 թ., [http://www.ecfr.eu/article/commentary\\_georgia\\_3025](http://www.ecfr.eu/article/commentary_georgia_3025).

<sup>347</sup> enpi-info.eu. (2016). *Georgia and Moldova evaluate progress in food safety and consumer protection after Association Agreements with the EU*. [online] Available at: <http://www.euneighbours.eu/eastportal/news/latest/46017/Georgia-and-Moldova-evaluate-progress-in-food-safety-and-consumer-protection-after-Association-Agreements-with-the-EU> [Accessed 1 Oct. 2016].

քականության համար ԱլԳ–ի նշանակությանը, ապա ԱլԳ–ի նպատակն է ԵՄ–ի արևելյան սահմաններին ձևավորել անվտանգ միջավայր և ստեղծել կայունության գոտի՝ միաժամանակ չեզոքացնելով ԵՄ–ի ու Արևելյան Եվրոպայի միջև բաժանարար գիծը:

### 3. Եվրոպականացում. ԵՄ–ի փոխակերպող ուժը

ԱլԳ շրջանակներում կիրառելով իր նորմատիվային ուժը՝ ԵՄ–ն ձգտում է փափուկ ուժի միջոցով փոխակերպել գործընկեր պետություններին, որի իրականացման գլխավոր մեխանիզմը եվրոպականացումն է: Ելնելով հետազոտության խնդրից՝ մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում Էմերսոնի ու Նուտչևայի ներկայացրած եվրոպականացման երկրորդ ուղղությունը: Հատկանշական է, որ ԵՄ անդամակցության հեռանկար չունեցող երկրներում ԵՄ խրախուսման և պատժամիջոցների մեխանիզմը չունի նույն ազդեցությունը, ինչ այդպիսի հեռանկար ունեցող երկրներում: ԱլԳ մասնակից պետությունների համար եվրոպականացումը ձեռք է բերում առաջնային և կարևորագույն նշանակություն քաղաքական համակարգերի ժողովրդավարական կերպափոխման տեսանկյունից, և այստեղ փոխակերպման «խրախուսական մրցանակ» են ԵՄ–ի զարգացման և խորհրդատվական ծրագրերը, ինչպես նաև ինտեգրման ցածր մակարդակներին մասնակցելը: Հեղինակները գտնում են, որ ԱլԳ երկրներում ԵՄ–ի պահանջած ու առաջարկած պարտավորությունների և խթանների միջև հավասարակշռությունը կարող է վերաճել բարեփոխումներ իրականացնելու հզոր ուժի<sup>348</sup>:

Ստորև, կիրառելով Չեքելի՝ եվրոպականացման գործիքների վերաբերյալ հայեցակարգը, փորձենք վերհանել և գնահատել ԱլԳ տարածքում եվրոպականացման առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով ԵՄ – ՀՀ երկկողմ և բազմակողմ (ԵՀԲ / ԱլԳ) փոխգործակցության շրջանակներում ՀՀ–ում եվրոպականացման ընթացքն ու արդյունքները:

ԵՄ – ՀՀ հարաբերություններում *փոխապայմանավորումը* լավագույնս դրսևորվում է 2006 թ. ԵՀԲ գործողությունների ծրագրում, որով ՀՀ–ն ստանձնեց մի շարք ոլորտներում (արդարադատություն, մարդու իրավունքներ, ներդրումային բարենպաստ միջավայր, վարչարարության և օրենսդրության մոտարկում և այլն) ԵՄ աջակցությամբ բարեփոխումներ իրականացնելու հանձնառություն: Դրա դիմաց ԵՄ–ն առաջարկեց համագործակցության նոր հեռանկարներ, ինչպիսին են՝ առևտրային և տնտե-

<sup>348</sup> Emerson, M. and Noutcheva, G.. (2004) Europeanisation as a gravity model of democratisation. Brussels: Centre for European Policy Studies, pp. 9 [http://aei.pitt.edu/6646/1/1175\\_214.pdf](http://aei.pitt.edu/6646/1/1175_214.pdf) [Accessed 29 Sep. 2016]



սական հարաբերությունների խորացում, նոր ներդրումներ, արտոնյալ առևտրային ռեժիմ, տեխնիկական և ֆինանսական աջակցության ավելացում, ԵՄ երկրների հետ գիտատեխնիկական, կրթամշակութային և բնապահպանական կապերի զարգացմանն ուղղված ծրագրեր, ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորումից հետո՝ հետհակամարտային վերականգնողական ծրագրեր<sup>349</sup>: Հետագայում ԱԳ մասնակից երկրներին առաջարկվեց ստորագրել ԱՀ-ներ, որոնք տարբերակվելու էին՝ ըստ երկրների պահանջների և խնդիրների<sup>350</sup>: Միայն 2011–2013 թթ. ընթացքում ԵՄ ֆինանսական աջակցությունը ՀՀ-ին կազմել է 157,3 մլն եվրո<sup>351</sup>, իսկ 2014–2017 թթ. կկազմի մոտ 140–170 մլն եվրո<sup>352</sup>: Պարտավորությունների կատարման դիմաց ԵՄ-ն ՀՀ-ին առաջարկում էր նաև ազատ առևտրի ռեժիմով մուտք իր ընդհանուր շուկա: Սակայն 2013 թ. ՀՀ «եվրասիական շրջադարձից»<sup>353</sup> հետո այդ հնարավորությունը պետք է փոխարինվի երկկողմ համագործակցության պակաս հավակնոտ ձևաչափով:

ԵՄ-ն կիրառում է նաև *սոցիալականացման* գործիքը: Մասնավորապես Նիկոլաս Սմիթի կարծիքով ԵՀՔ շրջանակներում իրականացվող ծրագրերում մեծ տեղ է տրվում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔԿՀ)<sup>354</sup>: Միայն 2012–2016 թթ. ԵՄ-ն ՀՀ-ում ֆինանսավորել և իրականացրել է ՔՀ զարգացման և հզորացման մեկ տասնյակից ավելի ծրագրեր<sup>355</sup>: Հետխորհրդային երկրներում, որտեղ քաղաքական համակարգերը մեծապես ավտորիտար են, ժողովրդավարության և մարդու իրավունքների ու ազատությունների համար պայքարող ՔԿՀ-ների օգնությամբ ԵՄ-ն կատարում է «ներքևից վերև» փոփոխություն: Սմիթի կարծիքով ակտիվ ՀԿ-ներն այն միջուկն են, որը ԵՄ-ն կարող է օգտագործել որպես խե-

<sup>349</sup> Ավելի մանրամասն տե՛ս EU / Armenia Action Plan, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_enp_ap_final_en.pdf) [Accessed 29 Sep. 2016]

<sup>350</sup> Ավելի մանրամասն տե՛ս Եվրոպական միություն <http://eu.mfa.am/hy/armenia-eu/> [Accessed 29 Sep. 2016]

<sup>351</sup> Ավելի մանրամասն տե՛ս Technical and financial co-operation, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/tech\\_financial\\_cooperation/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/tech_financial_cooperation/index_en.htm) [Accessed 30 Sep. 2016]

<sup>352</sup> Ավելի մանրամասն տե՛ս Political and economic relations, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_en.htm) [Accessed 30 Sep. 2016]

<sup>353</sup> 2010–2013 թթ. ԵՄ-ն և ՀՀ-ն բանակցում էին ԱՀ և ԽՀԱԱԳՀ շուրջ, որոնք պետք է նախաստորագրվեին 2013 թ. նոյեմբերին: Սակայն 2013 թ. սեպտեմբերին ՀՀ-ն հայտարարեց ՄՄ-ին միանալու մտադրության մասին, որի պատճառով ԽՀԱԱԳՀ-ն դարձավ տեխնիկապես անհնար: 2015 թ. Ռիգայի գագաթաժողովում կողմերը համաձայնություն ձեռք բերեցին ՀՀ-ի միջազգային նոր պարտավորությունները հաշվի առնող նոր համաձայնագրի մշակման շուրջ:

<sup>354</sup> Smith, N. R. (2011), Europeanization Through Socialization? The EU's Interaction With Civil Society Organizations in Armenia, *Demokratizatsiya, The Journal of Post-Soviet Democratization*, Vol. 19, N. 4, pp. 391. [https://www.gwu.edu/~ieresgwa/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU\\_DEMO\\_19\\_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf](https://www.gwu.edu/~ieresgwa/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU_DEMO_19_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf) [Accessed 30 Sep. 2016]

<sup>355</sup> Ավելի մանրամասն տե՛ս Grants, [http://eeas.europa.eu/delegations/armenia/grants\\_tenders/grants/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/grants_tenders/grants/index_en.htm) [Accessed 29 Sep. 2016]

լամիտ միջոց եվրոպականացումը տարածելու համար<sup>356</sup>: Սակայն Հրանտ Կոստանյանը գտնում է, որ ի տարբերություն ԵՀՔ այլ երկրների՝ ԵՄ – ՀՀ ԳԾ առավելապես շեշտադրված են ընտրական բարեփոխումները և հակակոռուպցիոն միջոցառումները, իսկ ԲՀԿ բացահայտ ռազմավարությունները բացակայում են: ԵՄ–ն նաև շատ քիչ ուշադրություն է դարձնում քաղաքական իրավունքների և հորիզոնական հաշվետվողականության վրա, որը խնդրահարույց է Հայաստանում<sup>357</sup>:

Ի լրումն փոխայլմանավորման և սոցիալականացման գործիքների՝ ՀՀ–ում կիրառվել է նաև *փորձի կրկնօրինակման* գործիքը: 2011 թ. ՀՀ–ում մեկնարկեց ԵՄ երկամյա «Թվինինգ» ծրագիրը, որը ներառում էր որակի կառավարման, ազգային հաշիվների, բիզնես վիճակագրության և ռեգիստրի, գյուղատնտեսական համատարած հաշվառման, ներդաշնակեցված սպառողական գների ինդեքսի և ՏՀՏ վիճակագրության թեմաները: Հատկանշական է, որ ԵՀՔ 12 երկրներում գործող 100–ից ավել «Թվինինգ» ծրագրերից չորսը 2011 թ. ճանաչվել են հաջողված ծրագրեր, որոնցից մեկը Դանիայի (գլխավոր գործընկեր), Գերմանիայի (կրտսեր գործընկեր), Շվեդիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունների հետ համագործակցությամբ ՀՀ–ում իրականացված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» ծրագիրն էր<sup>358</sup>:

ՀՀ – ԵՄ հարաբերությունների օրակարգում հիմնարար տեղ է գրավում ԵՄ–ի հետ վիզային ռեժիմի ազատականացումը: ԵՄ – Հայաստան վիզային ռեժիմի դյուրացման և հետընդունման համաձայնագրերն ուժի մեջ մտան 2014 թ. հունվարին, ավելի վաղ՝ 2013 թ. հունվարից, ՀՀ–ն վերացրել էր մուտքի վիզայի պահանջը ԵՄ և Շենգեն տարածքի քաղաքացիների համար: Այս գործընթացի հաջորդ քայլը կլինի վիզային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսությունը, որը նախատեսում է հայկական կողմից մի շարք բարեփոխումների իրականացում: Հանդիսանալով ԵՄ փափուկ ուժի կարևոր գործիքներից մեկը՝ առանց վիզայի մուտքի ռեժիմը մեծապես կընդլայնի ԵՄ «փափուկ» ազդեցությունը ՀՀ հանրության մեջ: Այն որոշ հեղինակների գնահատմամբ զգալիորեն կմեծացնի մարդկային շփումները՝ նպաստելով Եվրոպայի ավելի լավ ընկալմանը, կբերի տնտեսական օգուտներ թե՛ Հայաստանի, թե՛ ԵՄ–ի համար՝ ի հաշիվ ընդլայնված տուրիզմի, առևտրի և բիզնեսի նոր հնարավորությունների<sup>359</sup>:

<sup>356</sup> Smith N. R., Նույն տեղում, էջ 390-392:

<sup>357</sup> Kostanyan, H. (2015), Neither Integrated Nor Comprehensive in Substance: Armenia and Georgia, In A. Wetzel, J. Orbie ed., The Substance of EU Democracy Promotion, Concepts and Cases, PALGRAVE MACMILLAN, pp. 148.

<sup>358</sup> Ավելի մարամասն տես Twinning Success Stories 2011, <http://www.armstat.am/file/doc/99470788.pdf> [Accessed 29 Sep. 2016].

<sup>359</sup> Boonstra, J. et al (2013), The Eastern Partnership after Vilnius: stay the course and engage the

2015 թ. ՀՀ-ն միացավ Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակության ծրագրերին (COSME), ինչպես նաև ակնկալվում է 2016 թ. սկսել ընդհանուր ավիացիոն գոտու վերաբերյալ համաձայնագրի շուրջ բանակցությունները<sup>360</sup>: 2016 թ. ՀՀ-ն միացավ նաև հետազոտությունների և նորարարությունների՝ «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրին:

Այժմ փորձենք գնահատել ԱԳ շրջանակներում ՀՀ-ի եվրոպականացման արդյունքները՝ օգտագործելով ժողովրդավարության և քաղաքացիական ազատությունների չափման միջազգային գործակիցները: Չնայած ՀՀ փոխակերպման ընդհանուր գործընթացների համատեքստում դժվար է առանձնացնել կոնկրետ ԵՄ ներդրումը, այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում ժողովրդավարացումը հիմնականում ընթացել է եվրոպականացման համատեքստում, և հիմք ընդունելով եվրոպականացման գործիքների կիրառման վերը կատարված վերլուծության արդյունքները՝ կարելի է վստահորեն պնդել, որ այդ գործում ԵՄ-ն ունեցել է իր որոշիչ դերը:

Տվյալ ժամանակահատվածի համար Freedom House-ի կողմից տրված թե՛ ընդհանուր ժողովրդավարության ինդեքսի և թե՛ ոլորտային ինդեքսների ցուցանիշների<sup>361</sup> դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ-ում ժողովրդավարական գործընթացը այս բոլոր տարիների ընթացքում հիմնականում պահպանել է նույն ցուցանիշը:

Այս դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած ԵՄ-ն 2009-2015 թթ. ՀՀ-ին տրամադրել է ֆինանսական և տեխնիկական մեծ աջակցություն ու գրանցել ոլորտային մի շարք հաջողություններ, այդ ամենը մեծապես չի ազել ՀՀ հասարակական-քաղաքական համակարգի եվրոպականացման վրա:

Փաստորեն, վերջին 7 տարիների ընթացքում ՀՀ ժողովրդավարացման՝ հետևաբար նաև եվրոպականացման գործընթացներն էական առաջընթաց չեն գրանցել: Ու քանի դեռ բացակայում են արդյունավետ եվրոպականացման հասնելու համար անհրաժեշտ պայմանները, քաղաքական համակարգի թերի զարգացվածությունը և քաղաքական վերնախավի դիրքերը կորցնելու վախը սահմանափակելու են եվրոպականացման ազդեցության տարածումը:

People, FRIDE Policy Brief, no. 169, p. 5, [http://fride.org/descarga/PB\\_169\\_The\\_EaP\\_after\\_Vilnius.pdf](http://fride.org/descarga/PB_169_The_EaP_after_Vilnius.pdf) [Accessed 29 Sep. 2016].

<sup>360</sup> ՀՀ ԱԳ նախարար Էվլարդ Նալբանդյանի ելույթը Արևելյան գործընկերության արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը, [http://www.mfa.am/hy/speeches/item/2016/07/11/min\\_eap\\_kyiv/](http://www.mfa.am/hy/speeches/item/2016/07/11/min_eap_kyiv/) [Accessed 29 Sep. 2016].

<sup>361</sup> Ավելի մանրամասն տե՛ս Armenia, Country report, <https://freedomhouse.org/report/nations-transit/2016/armenia> [Accessed 29 Sep. 2016].

Այսպիսով՝ ԵՄ-ն ԱլԳ շրջանակներում ՀՀ-ին տրամադրել է տեխնիկական, փորձագիտական և ֆինանսական աջակցություն, որոնց օգնությամբ բարեփոխվել են արդարադատության, մարդու իրավունքների, հասարակական-քաղաքական մի շարք ոլորտներ: Այդ աջակցության գլխավոր նպատակն է եղել ՀՀ եվրոպականացումը՝ մոտարկումը ԵՄ ժողովրդավարությանը: ՀՀ եվրոպականացման դրսևորում կարելի է համարել նաև հասարակական սեկտորում և դրա միջոցով ԵՄ աջակցությամբ կատարվող բարեփոխումները: Այս մեխանիզմի միջոցով ԵՄ-ն ձգտում է փոխակերպել հասարակությունները, որոնք հետագայում կարող են ազդել կառավարող վերնախավի վրա՝ ընտրելու ժողովրդավարացման եվրոպական մոդելը: Հատկանշական է, որ ՀՀ-ում հաջողությամբ իրականացվել են նաև ԵՄ փորձի կրկնօրինակման ծրագրերը:

Սակայն, չնայած վերջին 7 տարիներին գրանցված այս բոլոր հաջողություններին, ՀՀ-ում եվրոպականացման գործընթացը կիսատ է մնացել: Կարելի է ենթադրել, որ հասարակական սեկտորի եվրոպականացումը (Freedom House-ի ցուցանիշով ամենաբարձրն է) բավականաչափ չէ կառավարող ընտրանու վրա ազդելու համար, որպեսզի ժողովրդավարական ինստիտուտներն ամբողջությամբ փոխակերպվեն և կայանան: Սակայն 2015-2016 թթ. ԵՄ-ի և ՀՀ-ի միջև ստորագրված մի շարք միջկառավարական համաձայնագրեր և պայմանագրեր հույս են ներշնչում, որ եվրոպականացման գործընթացը վերջնականապես չի կանգնեցվել ՀՀ-ում:

## Եզրակացություն

Ամփոփելով վերլուծության վերջնարդյունքներն ըստ սահմանված հետազոտական նպատակների և խնդիրների՝ կարող ենք առաջ քաշել հետևյալ եզրահանգումները.

- ԱլԳ-ն ԵՄ-ի համար առաջնահերթորեն ունի անվտանգային նշանակություն՝ հանդիսանալով իր արևելյան սահմանների մերձավորությամբ լավ կառավարվող, քաղաքականապես և տնտեսապես կայուն ու իր նկատմամբ բարեկամաբար տրամադրված պետությունների գոտու ձևավորման գործիք:

- Այս տարածքում ԵՄ-ի քաղաքականության գլխավոր յուրահատկությունն այն է, որ այստեղ ԵՄ-ն գործում է միաժամանակ որպես փափուկ, նորմատիվային և փոխակերպող ուժ. գործընկեր պետությունների նկատմամբ ԵՄ-ն կիրառում է ազդեցության բացառապես «փափուկ» մեթոդներ՝ խրախուսելով այդ երկրներում համընդհանուր մարդասիրական նորմերի՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի

գերակայության, ինչպես նաև լավ կառավարման սկզբունքների հիման վրա բարեփոխումները:

- ԵՄ-ի փափուկ ուժն ԱԳ տարածքում առավել արդյունավետ է եղել այն երկրների դեպքում, որոնք ունեցել են «Եվրոպական հեռանկար»՝ ԵՄ-ին անդամակցության պաշտոնական նպատակ, մինչդեռ այդպիսի հեռանկար չունեցող երկրներում ԵՄ-ի եվրոպականացման քաղաքականությունը եղել է պակաս արդյունավետ: Սա ևս մի ապացույց է ԱԳ մասնակից երկրների նկատմամբ ԵՄ-ի կողմից տարբերակված մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության՝ հիմք ընդունելով, մի կողմից, ԵԱՌ ընդհանուր նպատակները, իսկ մյուս կողմից՝ գործընկեր պետությունների անհատական կարիքները, հետաքրքրություններն ու կարողությունները:

- Տարբերակված մոտեցումն անխուսափելիորեն հանգեցրել ու հանգեցնելու է այդ երկրներում ԵՄ-ի փոխակերպման-եվրոպականացման քաղաքականության տարբեր արդյունքների: Օրինակ՝ 2009–2016 թթ. ԵՄ-ն ակտիվորեն փորձել է եվրոպականացնել ՀՀ-ն՝ որպես խրախուսման միջոց օգտագործելով արտոնյալ առևտրային ռեժիմը, վիզայի ռեժիմի ազատականացումը՝ դրա վերացման հեռանկարով, ֆինանսատնտեսական և տեխնիկական աջակցության բազմաթիվ ծրագրեր: Այդուհանդերձ, միջազգային վարկանիշային ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում հասարակական-քաղաքական համակարգի լիարժեք եվրոպականացում տեղի չի ունեցել: Ավելին, ՀՀ արտաքին քաղաքականության մեջ ինտեգրման այլ վեկտորի ընտրությունը կարող է դանդաղեցնել եվրոպականացումը, թեև այն ամբողջությամբ չի դադարի՝ շնորհիվ պահպանվող ոլորտային համագործակցության:

## EASTERN PARTNERSHIP IN THE CONTEXT OF THE EU'S SOFT POWER AND TRANSFORMATION POLICY (ON THE EXAMPLE OF EU-ARMENIA COOPERATION)

**ANI YEGHIAZARYAN, RIMA KHALATYAN**

**ACADEMIC ADVISOR<sup>1</sup> NAREK GALSTYAN<sup>362</sup>, ASSOC. PROF, PHD**

### Introduction

The EU enlargement of 2004-2007 changed its used-to-be-safe borders and reached to non-stable regions. This caused serious shifts in foreign policy vector of the EU. For the aim of creation a secure buffer zone, the European Union had to establish good governing social and political systems in the neighboring countries thus decreasing probability of instability at the borders of the EU. European Neighborhood Programme (ENP) with its Europeanization toolbox was devised to restrain the new challenges. Europeanization, i.e. democratization with European standards, was the manifestation of the EU's soft power. Eastern Partnership (EaP) was introduced in 2008 as an additional program for approximation of six post-Soviet countries (Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine) to the EU. Europeanization became priority and most important factor for the EaP member-states from the point of democratic transformation of political systems.

In this context EU-Armenia relations are specific. Unlike Moldova, Ukraine and Georgia, Armenia did not have an objective of accession to the EU but have always actively and comprehensively cooperated with the Union. And unlike Belarus and Azerbaijan, Armenia was preparing itself to sign the agreement on Deep and Comprehensive Free Trade Area (DCFTA), in spite of the absence of common borders. However, the decision of September 3, 2013 to join the Customs Union (CU) brought changes not only in further development of EU-Armenia relations, but also to the EU's eastern policy in general, deeming it necessary to have differentiated foreign policy.

Given above-mentioned the main goals of this study are:

1. Identify the challenges and objectives of EU soft power transformation policy in the frames of the EaP on the example of EU-Armenia cooperation;
2. Determine how much Armenia was Europeanized in the result of EU-Armenia cooperation in the frames of ENP and EaP.

---

<sup>362</sup> Narek Galstyan, PhD in Political Sciences, Associate Professor at the Chair of Political Institutes and processes, Yerevan State University.

To reach these goals the following research objectives are set to identify:

1. The characteristics of EU's foreign policy as soft, normative and transformational power;
2. The significance of EaP for foreign and security policies of the European Union;
3. The features of Europeanization as manifestation of the EU's transformation power in the frames of EaP.
4. The results, objectives and perspectives of the EU's transformation policy (Europeanization) on the example of EU-Armenia cooperation.

The authors used the method of content analysis to reach the first objective, historical-comparative and content analysis methods for the second and third ones, and structured system and content analysis methods for the fourth objective.

The object of the study is the EU's cooperation with EaP member states, and the subject is the features of transformation that is Europeanization policy in this context that have been discussed on the example of Armenia.

## **1. Methodological basis of the study**

Given the multi-dimensionality of the topic, the authors have constructed the study on five methodological approaches that are tightly interwoven with cause-effect linkages, and moreover they do stem from each other. The first is the specialty of the EU foreign policy, its multi-dimensionality, variety of the institutions of development and implementation, as well as applied methods and procedures where the EU is represented as not a simple foreign policy actor but as a special one. The second is the role of norms in the EU foreign policy, in particular the EU as foreign policy actor 'exporting' the norms. The third methodological approach is the soft power of the EU. The fourth one is its transformational power that is the ability of the EU to change the legal, economic and political system of a partner-state. And the last one is the essence of the transformation – the Europeanization.

### **1.1. Special characteristics of the foreign policy of the European Union**

The essence of the EU as a foreign policy actor has been a topic for harshest debates in the academic circles, and Federiga Bindi notes three main points of view on this: a) there is no such thing as a European foreign policy, that there never will be, and more to the point, that there never should be; b) Europe's

foreign policy does not matter much now, but that it should if the states of Europe want to realize their foreign policy goals; c) a European foreign policy does exist but that Europe's leaders often resist using the term for fear that it will frighten their publics or reduce their influence<sup>363</sup>. Sven Biscop and Jan Joel Andersson believe that Europe is not capable of being a single joint subject in the international diplomatic arena. And despite the Common Foreign and Security policy (CFSP) of the EU has achieved certain success in recent years, while the European Union may now rightfully be called a 'real' actor, this does not mean that it is an effective actor<sup>364</sup>.

In any case it is obvious that the European Union is not a traditional actor in foreign policy. In the international arena the behavior of the EU is not similar either to international organizations or to nation states, however at the same time it has common characteristics with both. Particularly, the foreign policy of the EU is wide enough and voluminous. It also embraces the security, foreign policy and cooperation dimensions of its activities (foreign trade policy, trans-European networks, foreign dimensions of energy and educational policies, Schengen zone, migration policy, border protection, enlargement and international cooperation). And despite the core of the EU foreign policy is CFSP, the FP also includes areas of conflict prevention, anti-terrorism, energy diplomacy, environment and climate change, human rights and democracy, migration, nuclear security etc. And according to Knud Erik Jørgensen some people prefer to focus on those areas of the foreign policy of the EU that are under transnational institutions, such as trade, aid for development, enlargement and neighborhood policy, meanwhile the other part concentrate on CFSP and the Common Security and Defense Policy (CSDP) because those areas are close to the type of issues associated with foreign policy<sup>365</sup>. As you might note, the foreign policy of the EU has differentiated institutionalization, i.e. corresponding functions are distributed to different institutions, firstly the Council of the European Union and the Commission. According to Christopher Bickerton, in parallel to the objectives of the member states, the foreign policy of the EU is the result of changes in relationship between three main EU institutions, namely the Council of the European Union, the European

<sup>363</sup> Bindi, F. and Shapiro, J. (2010). EU Foreign Policy: Myth or Reality? In: F. Bindi, ed., *The Foreign Policy of the European Union. Assessing Europe's Role in the world*. Washington, D.C.: Brookings Institution, p 339.

<sup>364</sup> Biscop, S. and Andersson, J. (2008). The ESS and the United States, Conclusion, In: Biscop, S. and Andersson, J. ed., *The EU and the European security strategy. Forging a global Europe*. London: Routledge, p. 167.

<sup>365</sup> Jorgenson, K.E. (2004), European Foreign policy: Conceptualising the Domain. In: Carlsnaes, W., Sjursen, H. and White, B. ed., *Contemporary European foreign policy*. London: Sage, p. 36.



Commission and the European Parliament. Bickerton considers the specialty of the foreign policy of the EU the fact that every institution tries to solidify its role in the decision making mechanism and therefore the foreign policy of the EU is often vividly fruitless because of the internal political struggle<sup>366</sup>. European External Action Service (EEAS) has its special place in the foreign policy of the EU. According to the Treaty of Lisbon, EEAS became main directing body and joint representative of the ambitions of the EU diplomatic and other institutions in Brussels and elsewhere.

The methods and processes of decision making in foreign policy are also differentiated<sup>367</sup>. Thus, the European Council shall identify the Union's strategic interests, determine the objectives of and define general guidelines for the common foreign and security policy, including for matters with defense implications. It shall adopt the necessary decisions (Article 26 of The Lisbon Treaty/Treaty on European Union & comments)<sup>368</sup>. The Treaty of Lisbon stated that CFSP stays as EU policy that is distinct from other actions of the Union. The common foreign and security policy is subject to specific rules and procedures. It shall be defined and implemented by the European Council and the Council acting unanimously, except where the Treaties provide otherwise (Article 24)<sup>369</sup>. The Treaty of Lisbon also defined the necessity of establishment of the EEAS with main functions as strengthening the positions of the EU in the international arena and defending the interests and values of the EU more effectively.

## 1.2. The EU as 'soft power', 'normative actor' and 'transformative power'

One of the specialties of the EU foreign policy is its manifestation as 'soft power', 'normative actor' and 'transformative power' at the same time. As Josef Nye notes, the actions of the 'soft power' have three main 'appeals': a) its culture in the appealing areas; b) its political values if the actor is pursuing upholding them in both domestic and foreign relations; and c) its foreign policy when the

<sup>366</sup> Bickerton, C. (2011). The politics of Performance: Turf Wars in Common Security and Defence Policy. In: *Bickerton, C. ed., European Union foreign policy*. Basingstoke: Palgrave Macmillan., p. 57.

<sup>367</sup> Galstyan N., (2012), EU CSDP. Lecture notes. European Studies center (in Armenian) (hereinafter Galstyan N., CSDP.);

<sup>368</sup> Herlin-Karnell, E. and Konstadinides, T. (2014), EU constitutional principles of housekeeping rules in EU external variable geometry. In: Blockmans S. ed., *Differentiated integration in the EU from the inside looking*, Brussels, p. 46.

<sup>369</sup> The Treaty on the functioning of the European Union, Declaration concerning the common foreign and security policy, 2012, <http://eur-lex.europa.eu/legal-content/en/ALL/?uri=CELEX%3A12012E%2FTXT>.

partners consider it legitimate and regard the actor as having moral authority<sup>370</sup>. In the case of the EU, the usage of the ‘soft power’ is vivid because there is no hard power toolbox in the EU foreign policy the Union prioritizes ‘soft’ methods of persuasion and temptation and in the relations with the partners.

The EU is also seen as normative actor whose foreign policy goals and implementation methods are based on international norms. Natalie Tocci writes that from one side the EU has tendency for normativeness when its relations with third countries are somewhat balanced and developing in the mutually agreed framework, from another side the power, and particularly the relative power, seems to be critical factor to create normative influence<sup>371</sup>.

According to Richard Whitman, the norms and principles defined in the core document are in the basis of the activity of the EU in the international arena, and the normative power of the EU is anchored on refusal of traditional approaches, totalitarianism and statism<sup>372</sup>. The normative objective of the EU is the balanced relationship between the Union and third countries that will have the basis of mutually agreed deal, normative methods, including export and internationalization of those norms and criteria, while the normative result is the transformation of third countries, i.e. ‘Europeanization’, certainly with parallel use of only ‘soft power’.

Several authors have noticed that in the relationship with candidates to the EU, as well as partner-states situated at the far end of the European continent, the Union give more and more significance to ‘export’ of the norms and internationalization. It generally gets manifested in support to Europeanization of the legal, political, governance and economic systems of those countries and thus the EU is also a ‘transformative power’<sup>373</sup>. This policy of transforming the partners, candidates and also state-members is the manifestation the ‘soft power’ of the EU and the transformation is being organized of the normative basis. The links between ‘soft power’, ‘normative actor’ and ‘transformative power’ is reflected in the foreign policy arsenal that includes mostly ‘soft tools’, thus at the international area the EU represents itself as a ‘soft power’. One of the application of that power in the policy of transformation, i.e. transformation

<sup>370</sup> Nye, J. (2004). *Soft power. The means to success in the world politics*. New York: Public Affairs, p. 5.

<sup>371</sup> Tocci, N. (2008), The Interplay between the Three Dimensions of Normative Foreign Policy. In: Tocci, N and Hamilton, D. ed., *Who is a normative foreign policy actor? The European Union and its Global Partners*. Brussels: Centre for European Policy Studies. p. 5-6.

<sup>372</sup> Whitman, R. (2011), Norms, Power and Europe: A New Agenda for Study of the EU and International Relations. In: Richard Whitman R. ed., *Normative power Europe. Empirical and theoretical perspectives*. Houndmills, Basingstoke: Palgrave Macmillan, p. 5.

<sup>373</sup> Galstyan N., CSDP.

of partners. And in the basis of this process are the norms adopted by the European Union.

### 1.3. Europeanization as manifestation of EU's transformative power

Europeanization as EU's transformative power is expressed both internally (as adherence to EU principles by member-states and candidate-countries) and externally (in relations with partner-countries). In the second case the main objective of Europeanization is the establishment of secure zone in the immediate neighborhood of the EU through transformation of social-political systems in the neighboring countries. That primary objective is set even in the European Security Strategy of 2003, 'It is in the European interest that countries on our borders are well-governed. Neighbors who are engaged in violent conflict, weak states where organized crime flourishes, dysfunctional societies or exploding population growth on its borders all pose problems for Europe'<sup>374</sup>.

Europeanization is a complex, comprehensive and multi-layer process that includes normative-legal, economic, political, and most importantly socio-cultural components. As many authors note, Europeanization has three main layers. First one is normative-legal that is the approximation of legal system to standards of European institutions. Second one is the institutional when countries establish institutions to ensure the changes made during the first layer and monitor the implementation. The third one is socio-cultural, i.e. change in public awareness and behavior<sup>375</sup>.

In the academic sources the term 'Europeanization' is generally used to describe the process of 'becoming more European'<sup>376</sup>. Robert Ladrech defines Europeanization more narrowly, underlining the political aspect of the process. He defines Europeanisation simply as "an incremental process of re-orienting the direction and shape of politics to the extent that EC political and economic dynamics become part of the organisational logic of national politics and policy making."<sup>377</sup>

Claudio Radaelli elaborates the definition of Europeanization by adding

<sup>374</sup> A Secure Europe in a Better World - European Security Strategy. Brussels, 12 December 2003, p. 8, <https://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf>

<sup>375</sup> Galstyan N., CSDP.

<sup>376</sup> Harmsen, R. and Wilson, T. (2000). Introduction; Approaches to Europeanization, in R. Harmsen and T. M. Wilson eds. *Europeanization; Institutions, Identities and Citizenship*, Yearbook of European Studies 14, pp. 24

<sup>377</sup> Ladrech, R. (1994), Europeanization of Domestic Politics and Institutions: The Case of France, *Journal of Common Market Studies*, Vol. 32, N. 1, pp. 69

normative-legal, value-based, and institutional-systemic aspects to the political one. According to Radaelli, the Europeanization is ‘a process involving, a) construction, b) diffusion and c) institutionalisation of formal and informal rules, procedures, policy paradigms, styles, ‘ways of doing things’ and shared beliefs and norms which are first defined and consolidated in the EU policy process and then incorporated in the logic of domestic (national and subnational) discourse, political structures and public choices.’<sup>378</sup>.

This definition more corresponds to the goal and objectives of this study more, since it accents the formal and non-formal changes of the political rules and behavior. Hence, the authors have used this given approach in this study to identify how Europeanization have been spread and institutionalized in the Republic of Armenia.

Another approach of three tools of Europeanization is introduced by Frank Schimmelfennig and Ulrich Sedelmeier:

- external incentives, i.e. foreign aid and assistance (financial, technical etc);
- social awareness raising on European values and methods;
- and experience replication when the state independently decides to approximate its national norms to the EU standards<sup>379</sup>.

According to Jeffrey Checkel, Europeanization works with two main mechanisms<sup>380</sup>. First one is conditionality when state has to take certain policy actions and in case of positive results is rewarded whereas deviation from preconditions may lead to sanctions. Second one is socialization which is adoption of European values and methods, as well as close cooperation with European institutions and establishment of political institutions in accordance with European standards<sup>381</sup>.

Socialization in the context of the EU implies “multiple personal and institutional contacts, which inevitably serve as a mechanism of Europeanization”<sup>382</sup>. In this context socialization from logic of consequences transforms to logic of

<sup>378</sup> Radaelli, C. (2003), The Europeanization of Public Policy, in Featherstone K, ed., *The Politics of Europeanization*, Oxford University Press, pp. 31

<sup>379</sup> Schimmelfennig, F. and Sedelmeier, U. (2005). Introduction: Conceptualizing Europeanization of Central and Eastern Europe. In: F. Schimmelfennig and U. Sedelmeier, ed., *The Europeanization of Central and Eastern Europe*. New York: Cornell University Press, pp.8-10.

<sup>380</sup> In this paper we have applied this specific approach to study Armenia’s Europeanization vectors within EU-Armenia cooperation.

<sup>381</sup> Checkel, J. (2000), Compliance and Conditionality, ARENA Working Papers, WP 00/18, [http://www.sv.uio.no/arena/english/research/publications/arena-working-papers/1994-2000/2000/wp00\\_18.htm](http://www.sv.uio.no/arena/english/research/publications/arena-working-papers/1994-2000/2000/wp00_18.htm)

<sup>382</sup> Smith, N. R. (2011), Europeanization through Socialization? The EU’s Interaction With Civil Society Organizations in Armenia, *Demokratizatsiya, The Journal of Post-Soviet Democratization*, p. 388, [https://www.gwu.edu/~ieresgwu/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU\\_DEMO\\_19\\_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf](https://www.gwu.edu/~ieresgwu/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU_DEMO_19_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf) (12,09,16)

reasonability. As Judith Kelley notes, the EU often view ENP as socialization of the Eastern neighbors though more active practice of the EU normative principles<sup>383</sup>.

The above-mentioned makes it obvious that the European Union is more effective in 'soft' exporting of norms that is being manifested as Europeanization i.e. normative transformation of the candidates to EU membership and even sometimes of partner states. As Narek Galstyan underlines in this context the EU is being viewed as a 'transformative power' that is able to change the policies of its member states and especially the candidate countries<sup>384</sup>.

Michael Emerson and Gergana Noutcheva present Europeanization and gravity model of democratization. There are some centres of democratic gravity, meaning some big democracies that are references in the world. Accordingly, the EU is a gravity center for Europe and its neighborhood and the desire for membership is the incentive for democratization process. They specify two tracks of Europeanization: in member-states and those that have no membership prospects<sup>385</sup>.

But this approach has also critics. In particular, some authors claim that the democratization and liberalization aspirations of the EU in the Mediterranean region in reality is aiming only to restraint of local authoritarian regimes and to limit their possible negative influence over (geo)economic policy of the EU in that particular region<sup>386</sup>. Whereas for the successful Europeanization in ENP countries the following conditions are required<sup>387</sup>:

- For the ruling political elite the benefits from Europeanization should exceed those during the status-quo;
- The benefits from Europeanization should have high probability and be reachable in near future, otherwise they will be weak incentive for the given country;
- Europeanization should be appealing also for the majority of the political forces having substantial influence on the decision making;

<sup>383</sup> Kelley, J. (2006). New Wine in Old Wineskins: Promoting Political Reforms through the New European Neighbourhood Policy. *JCMS: Journal of Common Market Studies*, [online] 44(1), p.39. Available at: <http://graduateinstitute.ch/files/live/sites/iheid/files/shared/summer/IA2011/SH1.pdf> [Accessed 28 Sep. 2016].

<sup>384</sup> Galstyan, N. (2013), The Foundations and Specialties of South Caucasus Policy of the EU, *Contemporary Eurasia, Eurasian Crossroads. New Challenges*, Volume 2, p. 114 (in Armenian)

<sup>385</sup> Emerson, M. and Noutcheva, G.. (2004) Europeanisation as a gravity model of democratisation. Brussels: Centre for European Policy Studies, [http://aei.pitt.edu/6646/1/1175\\_214.pdf](http://aei.pitt.edu/6646/1/1175_214.pdf) [Accessed 29 Sep. 2016]

<sup>386</sup> Galstyan, N. (2013), The European Union as Foreign Policy Normative Actor, *European Academy, academic papers*, 176-180 p. (in Armenian)

<sup>387</sup> Galstyan, N. (2013), Europeanization processes in the South Caucasus, *Mkhitar Gosh Scientific-methodological periodical, Social Sciences*, 4 /12/, 2006, 2-4 p. (in Armenian)

- Europeanization should be acceptable for the external powers that have substantial influence over the given country.

In all EaP countries those preconditions were problematic. For example, for the ruling elites of the countries that had no EU membership prospects (Armenia, Azerbaijan, and Belarus) the EU assistance was not that appealing to encourage in-depth reforms. Moreover, the current domestic political status-quo secures benefits to the authorities whereas Europeanization might endanger their positions in the domestic political struggle. Also, the Russian Federation that has considerable influence over those countries did not encourage Europeanization. In the result, Europeanization did not have such results in those countries as it had in the case of Georgia, Moldova and Ukraine that officially had EU membership aspirations. And this is true even in case of official approval of Europeanization agenda by the parliamentary majority.

## 2. Eastern Partnership: The Soft Power and Normative Action of the EU in Work

As several authors note, the EU represents itself on international arena in two formats: a) as ‘security association’ based on the common values and norms of its member-states and citizens, as an area of peace and well-being where the ‘democratic peace’ of Kant is realized; b) the EU does not use ‘hard power’ toolbox (i.e. force or threat of using force) in the relations with its partners. The EU prefers ‘soft’ methods, i.e. acting through ‘persuading’ or ‘tempting’ partners by using financial-economic incentives and/or sanctions<sup>388</sup>.

According to Taavi Kerikmäe, close cooperation between the EU and EaP member-countries is the main component of the EU foreign policy<sup>389</sup>. The ‘soft power’ of the EU and normativeness of its foreign policy are at best manifested in the ENP and especially in its eastern vector – EaP. According to the Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit in 2009 Eastern Partnership is based on commitments to the principles of international law and to fundamental values, including democracy, the rule of law and the respect for human rights and fundamental freedoms, as well as to, market economy, sustainable development and good governance<sup>390</sup>.

<sup>388</sup> Galstyan N., CSDP.

<sup>379</sup> Kerikmae T., (2016), Dimensions and Implications of Eastern Partnership Policy: In Kerikmäe, T. and Chochia, A. ed., Political and Legal Perspectives of the EU Eastern Partnership Policy, New York, Springer, p. 2.

<sup>390</sup> Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, May 2009, [http://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_data/docs/pressdata/en/er/107589.pdf](http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/er/107589.pdf).

And in reality the 'soft power' of the EU is vivid in the foreign and domestic policies of EaP countries. For example, the establishment of four multilateral thematic platform for EaP country strategies (Platform 1. Democracy, good governance & stability; Platform 2. Economic integration & convergence with EU policies; Platform 3. Energy security; Platform 4. People-to-people contacts), free trade, liberalization of visa regime are manifestation of 'tempting', 'persuading', and applying the 'soft power'. Promotion of normative values (human right, democracy, rule of law) in the partner countries also shows the 'soft power' application cases. It is obvious that the policy of the EU towards the EaP member-states Ukraine, Georgia and Moldova is highly legitimate since those countries have declared their official objective of EU membership. As a sign of the progress in the Europeanization of governance systems in those countries, the EU sign DCFTA agreements, already abolished visa regime with Moldova, and will do the same for Georgia in near future. And although any of these countries has not got the status of candidate country for the EU membership, this objective is kept in their foreign policy agendas.

However, according to certain authors, even in the case of the EaP, the soft power of the EU not always gives results. They see the EU as excessively 'soft' and not demanding and consider that the EU should be more precise in policymaking, otherwise blurred signals can be taken inadequately<sup>391</sup>. The main issues is that the EU has not managed to overtake the market from Russia in those EaP countries that have re-oriented their foreign policies from Russia/CIS to the EU, thus being imposed to certain economic difficulties.

Anyway, the EU has never aimed being 'hard' or 'demanding'. Foreign policy of the EU is special for its exclusively 'soft power' methodology in reaching the results with its neighbors.

We have already mentioned that the EU stands for normative policy in its relations with the neighbors, and in EaP this normativeness has its specific manifestation of exporting the norms to become the nasis of reforms in EaP member countries.

Andriy Bryn and Raffaella Coletti write that the approaches in the ENP framework are considered normative as long as they underline the necessity of aid, cooperation and integration and tools to promote political changes in countries that are not the EU members. They believe that the EU foreign policy appreciates both 'normative approach' and 'soft power' and both are used by the EU to construct its 'civilizing mission'. Authors note that ENP is an example

---

<sup>391</sup> Korosteleva, E. (2012). *The European Union and its eastern neighbours. Towards a more ambitious partnership?* London: Routledge. p. 45.

of normative power that carries common (European) values and principles, and the more the neighbor country accepts the common norms, the more integrated it would be to the EU<sup>392</sup>. On the example of EaP, this claim has its practical application since EU normative approaches are really serious tools for implementation of necessary changes in EaP countries. Moreover, the volume of changes in the member-country, increases the possibilities of integration.

Thus, Association Agreements<sup>393</sup> (AA) to-be-signed between EaP countries and the EU are assuming approximation of legislation and institution of those countries to EU criteria and norms. AA is the best showcase of the EU's normative influence. DCFTA that is signed in the framework of AA assumes trade liberalization and synchronization of trade-related legislation with EU criteria and *acquis communautaire* between the EU and partner countries. In addition, before signing of an AA, the given country must become a member of the World Trade Organization which in its turn assumes accordance to specific norms and criteria<sup>394</sup>.

Adherence to EU norms by the EaP participating countries is directly proportional to the level of integration of those countries to the EU. Georgia and Moldova have reached considerable results thanks to the norms 'exported' by the EU. Tornike Sharashenidze finds that human rights issues have been widely addressed thanks to the EaP<sup>395</sup>. During a summit in Tbilisi in 2016, representatives of the European Commission, the UN and other experts called Georgia and Moldova the countries that registered progress after signing EaP agreement and whose reforms approximated the countries to the Europe the most<sup>396</sup>.

Thus, the EU clearly applies the 'soft power' and 'normativeness' principles of its foreign policy through ENP/EaP doing its best to 'transform', 'Europeanize' the domestic and foreign policies of the participating countries. Moreover, the examples brought by us indicate that this policy has already gave results if

<sup>392</sup> Coletti, R., Bryn, A. (2015), *Global Empires and the European Neighbourhood*: In Celata, F. and Coletti, R. ed., *Neighbourhood policy and the construction of the European external borders*, Rome, p. 180.

<sup>393</sup> The EU signed Association Agreements with Georgia, Moldova and Ukraine in 2014.

<sup>394</sup> Eastern Partnership - eas - European Commission, Eastern Partnership, 15/06/2016, accessed 26.09.2016, [https://eeas.europa.eu/topics/eastern-partnership/419/eastern-partnership\\_en](https://eeas.europa.eu/topics/eastern-partnership/419/eastern-partnership_en).

<sup>395</sup> Sharashenidze, T. (2015), *The Eastern Partnership: the view from Georgia*, ECFR, accessed 26.09.2016, [http://www.ecfr.eu/article/commentary\\_georgia3025](http://www.ecfr.eu/article/commentary_georgia3025).

<sup>396</sup> enpi-info.eu. (2016). *Georgia and Moldova evaluate progress in food safety and consumer protection after Association Agreements with the EU*. [online] Available at: <http://www.euneighbours.eu/eastportal/news/latest/46017/Georgia-and-Moldova-evaluate-progress-in-food-safety-and-consumer-protection-after-Association-Agreements-with-the-EU> [Accessed 1 Oct. 2016].



not for the all EaP members but for three cases for sure (Moldova, Georgia, and Ukraine). The specialties of the EU foreign policy are the 'soft', 'normative' and 'transformative' powers applied in the frames of EaP and gradual Europeanization of the participating countries. As for the significance of the EaP for the security policy of the EU, the objective of the EaP is to create a secure environment and a ring of stability in the Eastern borders of the EU and to neutralize the dividing lines between the EU and Eastern Europe.

### 3. Europeanization: the Transformative Power of the EU

The EU, while applying its normative power in the EaP framework, aims to transform the partner-countries through its soft power, and the main mechanism for this is Europeanization. Given the objectives of this study, we are very interested in the second tranck of Europeanization presented by Emerson and Noutcheva. It is indicative that in the countries that have no EU membership perspective the incentives and sanctions of the EU have not the same influence as for those that have EU accession aspirations. For EaP member countries Europeanization has primary and important function for democratic shift of political systems and here as 'encouragement prize' of transformation are the EU development and advisory programmes as well as participation in lower level integrative processes. The authors note that in the EaP countries the balance between obligations and incentives, demanded and offered by the EU, may become powerful enough to have a material impact of reform trends in these states<sup>397</sup>.

Below, we will apply the Checkel paradigm on Europeanization toolbox to identify and evaluate the special characteristics of Europeanization in EaP area taking into account the process and results of Europeanization for Armenia in the framework of EU-Armenia bilateral and multilateral (ENP/EaP) cooperation.

Conditionality in EU-Armenia relations is at best manifested in ENP 2016 Action Plan. Armenia assumed commitment to implement a number of reform with EU support (justice, human rights, improvement of investment climate, good governance and approximation of legislation). In exchange, the EU offered new perspectives for the cooperation: deepening trade and economic relations, new investments, increased financial and technical support, programmes to develop scientific, educational, cultural and environmental ties with the EU countries, support the settlement of the Nagorno-Karabakh conflict including

<sup>397</sup> Emerson, M. and Noutcheva, G.. (2004) Europeanisation as a gravity model of democratisation. Brussels: Centre for European Policy Studies, pp. 9 [http://aei.pitt.edu/6646/1/1175\\_214.pdf](http://aei.pitt.edu/6646/1/1175_214.pdf) [Accessed 29 Sep. 2016]

commitment to post conflict rehabilitation<sup>398</sup>. Afterwards, the participating countries of EaP were offered to sign Association Agreements, differentiated according to demands and objectives<sup>399</sup>. Only in 2011-2013 the EU's financial aid to Armenia was 157.3 mln euros<sup>400</sup>, and the estimation for 2014-2017 is 140-170 mln euros<sup>401</sup>. In exchange of fulfilling the commitments, the EU offered Armenia to enter its market through free trade regime. However, after the Eurasian U-turn<sup>402</sup> of Armenia in 2013 this opportunity should be substituted with less ambitious format of bilateral cooperation.

The EU also applies the socialization tool. Particularly, according to Nicholas Smith, the ENP programmes give large roles to civil society organizations (CSO)<sup>403</sup>. Only in 2012-2016, the EU funded and implemented more than ten programs on development and strengthening of CS<sup>404</sup>. In post-Soviet countries where the political systems are mostly authoritarian, the EU promotes 'bottom up' changes with the support of CSOs that struggle for democracy, human rights and liberties. According to Smith, active NGOs are the nucleus that the EU can use as smart tool in promotion of Europeanization<sup>405</sup>. However, Hrants Kostanyan finds that in contrast with other ENP countries the EU-Armenia Action Plan is mostly focused on election reforms and anti-corruption activities, and CSO overt strategies are absent. The EU also pays little attention to political rights and horizontal accountability, both very problematic for Armenia<sup>406</sup>.

In addition to conditionality and socialization, experience replication tool was also used for Armenia. Two-year EU Twinning program started in Armenian in 2011. It included quality management, national accounts, business statistics

<sup>398</sup> For more see EU / Armenia Action Plan, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_enp_ap_final_en.pdf) [Accessed 29 Sep. 2016]

<sup>399</sup> For more see The EU <http://eu.mfa.am/hy/armenia-eu/> [Accessed 29 Sep. 2016]

<sup>400</sup> For more see Technical and financial co-operation, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/tech\\_financial\\_cooperation/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/tech_financial_cooperation/index_en.htm) [Accessed 30 Sep. 2016]

<sup>401</sup> For more see Political and economic relations, [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_en.htm) [Accessed 30 Sep. 2016]

<sup>402</sup> The EU and Armenia were negotiating the AA and DCFTA in 2010-2013 and should be signing them in November 2013. However, in September 2013 Armenia announced its accession to the Customs Union that made technically impossible to join DCFTA. During Riga summit in 2015, the sides agreed to develop a new agreement that takes into account the new international commitments of Armenia.

<sup>403</sup> Smith, N. R. (2011), Europeanization Through Socialization? The EU's Interaction With Civil Society Organizations in Armenia, *Demokratizatsiya, The Journal of Post-Soviet Democratization*, Vol. 19, N. 4, pp. 391 [https://www.gwu.edu/~ieresgwu/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU\\_DEMO\\_19\\_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf](https://www.gwu.edu/~ieresgwu/assets/docs/demokratizatsiya%20archive/GWASHU_DEMO_19_4/Q2T371318L671113/Q2T371318L671113.pdf) [Accessed 30 Sep. 2016]

<sup>404</sup> For more see Grants, [http://eeas.europa.eu/delegations/armenia/grants\\_tenders/grants/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/grants_tenders/grants/index_en.htm) [Accessed 29 Sep. 2016]

<sup>405</sup> Smith, N. R., *ibid*, pp. 390-392

<sup>406</sup> Kostanyan, H. (2015), Neither Integrated Nor Comprehensive in Substance: Armenia and Georgia, In A. Wetzel, J. Orbie ed., *The Substance of EU Democracy Promotion, Concepts and Cases*, PALGRAVE MACMILLAN, pp 148

and business register, national accounts, agricultural census, harmonized consumer price index (HCPI) and ICT statistics. Four Twinning projects out of 100 launched in 2011 in 12 ENP countries were evaluated as the most successful and one of those fours was 'Support to National Statistical Service of the Republic of Armenia' implemented with statistical services of Denmark (main partner), Germany (junior partner), Sweden, Finland, Latvia and Lithuania<sup>407</sup>.

Visa liberalization is an essential part of EU-Armenia relations. The EU-Armenia Visa Facilitation and Readmission Agreements were signed in January 2014, and earlier in January 2013 Armenia abolished entrance visas for citizens of the EU and Schengen zone. The next step of this process would be dialogue on liberalization of visa regime that envisages several reforms from the Armenian side. Being one of the most important tools of EU's soft power, entrance visa free regime will greatly strengthen the 'soft' influence of the EU on Armenia. According to experts visa-free travel will spur people-to-people contacts, which in turn are likely to benefit the democratisation and Europeanisation of Eastern partners' societies, as well as engender economic benefits such as increased tourism, trade and business opportunities for both sides<sup>408</sup>.

In 2015 Armenia joined to the EU programme for the Competitiveness of Enterprises and SMEs (COSME), and also expects the negotiations on the Common Aviation Area agreement to start in 2016<sup>409</sup>. In 2016 Armenia joined Horizon 2020 programme (for research and innovation), too.

Let us now evaluate the results of Armenia's Europeanization in the frames of EaP by applying the international indexes of measuring democracy and civil liberties. Despite the difficulty to point out the specific EU input in the general transformation process of Armenia, nevertheless taking into account that the democratization of Armenia has been in process in the context of Europeanization and based on the above-mentioned analysis of application of Europeanization toolbox, we can claim with certainty that the EU has had its decisive role.

Hence, study of the data from Freedom House<sup>410</sup> on either overall democracy index or area indexes shows that Armenia did not register any serious shift in

<sup>407</sup> For more see, Twinning Success Stories 2011, <http://www.armstat.am/file/doc/99470788.pdf> [Accessed 29 Sep. 2016]

<sup>408</sup> Boonstra, J. et al (2013), The Eastern Partnership after Vilnius: stay the course and engage the People, FRIDE Policy Brief, no. 169, p. 5, [http://fride.org/descarga/PB\\_169\\_The\\_EaP\\_after\\_Vilnius.pdf](http://fride.org/descarga/PB_169_The_EaP_after_Vilnius.pdf) [Accessed 29 Sep. 2016]

<sup>409</sup> Statement by Edward Nalbandian, Minister of Foreign Affairs of Armenia at the Eastern Partnership Informal Dialogue Meeting of the Foreign Ministers, [http://www.mfa.am/hy/speeches/item/2016/07/11/min\\_eap\\_kyiv/](http://www.mfa.am/hy/speeches/item/2016/07/11/min_eap_kyiv/) [Accessed 29 Sep. 2016]

<sup>410</sup> For more see, Armenia, Country report, <https://freedomhouse.org/report/nations-transit/2016/armenia> [Accessed 29 Sep. 2016]

social-political liberalization during EaP activity timeline (2009-2016).

This observation brings to conclusion that despite EU's financial and technical large-scale support in 2009-2015 and a number of achievements, it did not largely influence the Europeanization of Armenian socio-political system.

In fact, Armenian democratization i.e. Europeanization process has not registered substantial progress in last seven years. And as long as there are no necessary conditions to effectively achieve Europeanization, the underdevelopment of political system and the fear of political elite to lose its positions will limit the promotion of Europeanization and its influence.

Thus, in the framework of EaP, the European Union has provided to Armenia technical, advisory and financial support to implement reforms in justice, human rights and a number of socio-political areas. The main objective of that support was Europeanization of the Republic of Armenia and its approximation to the EU democracy. A demonstrative example of Europeanization of Armenia can be the EU-funded reforms in and through civil society sector. The EU aimed to transform the society through this mechanism in order to influence the ruling elite in choosing the model of European democracy. Indicatively, the programs of EU experience replication were successfully implemented in Armenia.

However, despite all those achievement of the last seven years, the Europeanization process in Armenia is incomplete. Supposedly, Europeanization of the civil society sector in Armenia (it has the highest index in Freedom House report) is not enough to influence the ruling elite to transform the democracy institute fully and sustainably. Yet, a number of intergovernmental agreements signed between the EU and Armenia in 2015-2016 give hope that the Europeanization process in Armenian is not completely stalled.

## Conclusion

Summing up the results of the analysis according to the defined goals and objectives of this study, we put forward the following conclusions:

- In the first place, EaP is important for the EU for security reasons, as a tool of establishing an peripheral ring of Eastern states that are well governed, politically and economically stabile, and friendly.
- The main specialty of the EU foreign policy in this area is the application of soft, normative and transformative powers at once. The EU applies exclusively 'soft' methods towards its partner countries by promoting in those countries universal humanitarian norms of democracy, human rights, rule of law and reforms on the principles of good governance.
- The soft power of the EU was more effective in the EaP zone for

those countries that had ‘European perspective’ like official objective of EU membership, whereas Europeanization policy of the EU was less successful in the countries with no such aspirations. This is yet another evidence that the EU must have differentiated approach to EaP participant countries by taking into account the ESS general objectives from one side, and individual needs, interests and abilities of the partner-states, from another.

- The differentiated approach have inevitably resulted and will result to different outcomes of the EU’s transformative-Europeanization policy in those countries. For example, during 2009-2016 the European Union actively tried to Europeanize Armenia by applying privileged trade regime, visa regime liberalization with abolishment prospect, various programs of financial, economic and technical support. However, international indexes show there has been no full Europeanization of socio-political system in Armenia. Moreover, the preference of a different vector of Armenian foreign policy might slow down Europeanization, although it won’t stop completely, due to ongoing cooperation in few areas.

## ՌԴ – ԵՄ «ՍԱՌԵՑՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՀՀ ԵՎ ԼՂՀ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ՎԻԿՏՈՐՅԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ Բ. Գ. Թ., ԴՈՑԵՆՏ ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ<sup>411</sup>**

Հոդվածում դիտարկված են ՌԴ – ԵՄ, ԵՄ – ՀՀ և ՀՀ – ԼՂՀ հարաբերությունների քաղաքագիտական հիմնախնդիրները: Կարևորելով Հարավային Կովկասի երկրների միջև համագործակցությունը՝ հոդվածում համեմատական վերլուծության է ենթարկված տարածաշրջանային ինտեգրման միտումներն ու մակարդակները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված ՀՀ և ԼՂՀ ինտեգրման անվտանգային տեսանկյուններին, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

### 1. ԵՄ – ՌԴ ռազմավարական գործընկերություն. առասպել, թե՛ իրականություն

ԵՄ – ՌԴ երկկողմ հարաբերությունները հաճախ են «ուղեկցվել» վատատեսական սցենարներով, որի հիմնական պատճառը ՌԴ–ի կողմից ստանձնած եվրոպական պարտավորությունների չկատարումն էր կամ դրանց կատարման հետաձգումը: Ինչն էլ իր հերթին ԵՄ – ՌԴ հարաբերություններում առաջացնում էր անհավասարակշռություն՝ ձևավորելով նոր լարվածություն համաեվրոպական նախագծերի ու ծրագրերի իրականացման շուրջ<sup>412</sup>:

<sup>411</sup> Աշոտ Ալեքսանյան, ք. գ. թ., դոցենտ, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոն, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ:

<sup>412</sup> Այդ մասին տե՛ս Малинова О. Ю., Россия и «Запад» в XX веке: трансформация дискурса о коллективной идентичности. М., 2009, Сутырин С. Ф., Членство в ВТО – новый этап участия России в международной торговой системе [Электронный ресурс] – Режим доступа: [http://wto.ru/docs/Book\\_WTO\\_membership.pdf](http://wto.ru/docs/Book_WTO_membership.pdf) (վերջին մուտք՝ 17.09.2016), Путьлин В. И., Использование интеграционных преимуществ вступления России в ВТО в повышении конкурентоспособности экономики // Известия Санкт-Петербургского Университета Экономики и Финансов, №2. 2013, С. 29-36, Романова Т. А., Энергетическое сотрудничество России и Евросоюза: Основные направления эволюции и современное состояние [Электронный ресурс] – Режим доступа: <http://cyberleninka.ru/article/n/energeticheskoe-sotrudnichestvo-rossii-i-evrosoyuza-osnovnyenapravleniya-evolyutsii-i-sovremennoe-sostoyanie> (վերջին մուտք՝ 17.09.2016):

ԵՄ – ՌԴ հարաբերությունների իրավաքաղաքական առանցքը գործընկերության և համագործակցության պայմանագիրն<sup>413</sup> է, որն ամբողջությամբ ուղղված է՝ զարգացնելու «ռազմավարական գործընկերության» ընթացակարգերը: Վերջիններիս շուրջ երկարատև քննարկումները մինչ օրս էլ բախվում են խոչընդոտների ու տարածայնությունների: Ստեղծված իրավիճակի վատթարացման վրա ազդեցին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, միջազգային ու տարածաշրջանային իրավիճակի լարվածությունը: Սակայն կարծում եմ, որ հիմնական խնդիրն այն էր, որ կողմերը մինչև օրս չկարողացան համաձայնության գալ «ռազմավարական գործընկերության» հիմնարար սկզբունքների հարցի շուրջ: Ակնհայտ է, որ երկկողմ հարաբերությունները վերանայման կարիք ունեն, և դեռևս շարունակվում են խնդրահարույց մնալ դրանց իրականացման հեռանկարները<sup>414</sup>:

«Բրեքսիթը» նոր մարտահրավեր է ԵՄ քաղաքական համակարգի ամբողջականությանը, որը կարող է հետագայում բացասական օրինակ դառնալ ԵՄ անդամ մյուս երկրների համար: Դրա մասին է վկայում ԵՄ անդամ մի շարք երկրների կուսակցությունների և հասարակական-քաղաքական շարժումների հայտարարությունները ԵՄ–ից դուրս գալու մասին:

ԵՄ – Ռուսաստան հարաբերությունների մեկնարկը տրվեց 1999 թ. ԵՄ–ի կողմից ընդունված «Եվրոպական միության կոլեկտիվ ռազմավարությունը Ռուսաստանի նկատմամբ»<sup>415</sup> և «Միջնաժամկետ հեռանկարում Եվրոպական միության հետ Ռուսաստանի Դաշնության հարաբերությունների զարգացման ռազմավարությունը (2000–2010 թթ.)»<sup>416</sup> փաստաթղթերով, որտեղ սահմանվեցին ՌԴ – ԵՄ հարաբերությունների հիմնական նպատակներն ու ակնկալիքները:

<sup>413</sup> Այդ մասին տե՛ս “Соглашение о партнёрстве и сотрудничестве с Россией 1994 г.” (заключённое 24 июня 1994 года - вступило в силу с 1 декабря 1997 года) (комментарий к. ю. н. Калининко П. А.). [Электронный ресурс] – Режим доступа: [http://eulaw.edu.ru/documents/legislation/eea/pca\\_russia.htm](http://eulaw.edu.ru/documents/legislation/eea/pca_russia.htm) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>414</sup> Այդ մասին տե՛ս Гайсумов З. Х., Стратегия партнерства России и Европейского Союза на современном этапе // Вестник Российского экономического университета им. Г. В. Плеханова, 2016, № 1 (85), С. 158-166, Дубровина А. С., Роль энергодиалога Россия - ЕС как формы взаимодействия России и Евросоюза в энергетической сфере // Известия Иркутского государственного университета. Серия: Политология. Религиоведение, 2014, Т. 8. С. 57-64, Куркова И. А., Интеграция России в мировую энергетическую систему // Бизнес. Образование. Право. Вестник Волгоградского института бизнеса. 2013, № 1 (22), С. 233-236, Зиядуллаев Н., Зиядуллаев С., Евразийский Экономический Союз в контексте Российской интеграционной стратегии // Общество и экономика. 2016, № 8, С. 5-16.

<sup>415</sup> Այդ մասին տե՛ս “Коллективная стратегия Европейского Союза по отношению к России” (1999). [Электронный ресурс] – Режим доступа: [http://mgimo.ru/files2/y11\\_2013/243404/4.3.collective\\_eu\\_strategy.htm](http://mgimo.ru/files2/y11_2013/243404/4.3.collective_eu_strategy.htm) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>416</sup> Այդ մասին տե՛ս “Стратегия развития отношений Российской Федерации с Европейским Союзом на среднесрочную перспективу (2000-2010 гг.)”. [Электронный ресурс] – Режим доступа: [http://mgimo.ru/files2/y11\\_2013/243404/4.4.strategy\\_russia\\_relations\\_eu.htm](http://mgimo.ru/files2/y11_2013/243404/4.4.strategy_russia_relations_eu.htm) (վերջին մուտք՝ 17.09.2016):

Վերջիններս ՌԴ համաեվրոպական քաղաքականության մեջ բաժանվում էին հետևյալ ուղղությունների.

1. Անվտանգություն, որը ենթադրում է կոլեկտիվ անվտանգության համաեվրոպական համակարգի ստեղծում:

2. Տնտեսություն, որը ենթադրում է ԵՄ-ի փորձի և ներուժի օգտագործումը Ռուսաստանում սոցիալական ուղղվածությամբ շուկայական տնտեսության ստեղծման ուղղությամբ:

3. Ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ամրապնդում, ժողովրդավարական ինստիտուտների և իրավական պետության կայացում:

ԵՄ-ն իր հերթին համագործակցության նպատակներն ամրագրեց հետևյալ ուղղություններում.

1. Ժողովրդավարություն (Ռուսաստանում ժողովրդավարության ամրապնդում և իրավական պետության սկզբունքների և ինստիտուտների հաստատում),

2. տնտեսություն (Ռուսաստանի ներգրավվումը համաեվրոպական սոցիալ-տնտեսական տարածություն),

3. անվտանգության և արտաքին քաղաքականության համագործակցություն (Եվրոպայի տարածքում և դրանից դուրս կայունության և անվտանգության հաստատման գործում):

Խնդիրն այն է, որ առաջին հայացքից կողմերի համընկնող նպատակները իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական անհամաձայնությունների պատճառներ են: Այլ կերպ, համընկնում են ելակետային նպատակները, այն է՝ ժողովրդավարության ամրապնդում, տնտեսական, ինտեգրացիոն քաղաքականություն և այլն, բայց թե ինչպես են կողմերը մեկնաբանում դրանք և ինչպես են պատկերացնում դրանց իրականացման ուղիները, մնում է բախումնաձին<sup>417</sup>: Ամենավառ օրինակը կարող է լինել ՌԴ քաղաքական համակարգի և վարչակարգի ժողովրդավարական փոխակերպումների հիմնախնդիրը, որը սկզբնական փուլում պետք է նախադրյալներ ստեղծի իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացման համար:

Առաջինի դեպքում ԵՄ-ն Ռուսաստանին կաջակցի պետական իշ-

<sup>417</sup> Այդ մասին տե՛ս Տրեյտեր Է., Россия и Европейский Союз: история и перспективы сотрудничества [Электронный ресурс] // Статьи по праву Европейского Союза МГЮА. – Режим доступа: [http://eulaw.edu.ru/documents/articles/rus\\_es\\_perspect.htm](http://eulaw.edu.ru/documents/articles/rus_es_perspect.htm) (վերջին մուտք՝ 17.09.2016), Стрженева М. В., «Трансправительственные сети» в ЕС [Электронный ресурс] // Международные процессы 2008, Т. 6, № 16. Режим доступа: <http://www.intertrends.ru/sixteenth/016.htm> (վերջին մուտք՝ 17.09.2016), Ушацев И. Г., Социально-экономическое развитие АПК в условиях членства России во Всемирной торговой организации и Евразийском экономическом союзе // Вестник ОрелГАУ, 5 (50), Октябрь 2014, С.3-11:



խանության երեք ճյուղերում սահմանադրաիրավական բարեփոխումների անցկացման, ժամանակակից հանրային ծառայության համակարգի ներդրման գործում: Ինչը նախատեսված է անել ընտրական համակարգի բարեփոխման, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում Ռուսաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման միջոցով:

Ինչ վերաբերում է քաղաքացիական հասարակությանը, ապա ԵՄ-ն հրատապ է համարում Ռուսաստանում հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական միավորումների, ԶԼՄ-ների ազատ ու անկաշկանդ գործունեության համար բարենպաստ նախապայմանների ստեղծումը:

Ազատական-ժողովրդավարական բարեփոխումների եվրոպական նախաձեռնությունները ՌԴ քաղաքական ընտրանու մոտ տարակարծությունների պատճառ դարձավ: Տեղին է նշել, որ ռուսական իշխանամետ քաղաքական գործիչների, փորձագետների և լրատվամիջոցների կարծիքով ԵՄ-ն Ռուսաստանին դիտարկում է որպես օբյեկտ, այլ ոչ թե սուբյեկտ: Դա այն դեպքում, երբ ԵՄ-ի համար Ռուսաստանը բավարար ուժեղ չէ, որպեսզի կարողանար ԵՄ-ի հետ գործընկերային ընթացակարգերով հասնելու սահմանված նպատակների իրականացմանը: Հյուսիսային Կովկասում կայունության և անվտանգության պահպանման նպատակով ՌԴ-ն ԵՄ-ի հարաբերություններում կարևորեց ընդամենը երկու ուղղություն՝ միջազգային ահաբեկչություն և հանցավորության դեմ պայքար<sup>418</sup>: Հետաքրքրական է այն, որ վերջիններս, լինելով նաև առանցքային համաեվրոպական քաղաքականության համար, ունեցել են զգալի հաջողություններ:

ՌԴ – ԵՄ հարաբերություններում առանձնահատուկ նշանակություն ունի նաև ԱՊՀ-ն, որին անդամակցում է Հայաստանը: ՌԴ – ԵՄ տնտեսական հարաբերությունների հաստատման ընթացքում մշտապես արգելք է Ռուսաստանի ագրեսիվ քաղաքականությունը ԱՊՀ անդամ պետությունների նկատմամբ: Դրանով ՌԴ-ն զգալիորեն թուլացրեց և արգելափակեց ԱՊՀ-ի ինստիտուցիոնալ կայացումը՝ միաժամանակ փորձելով սահմանափակել նաև ԵՄ համագործակցությունն ԱՊՀ երկրների հետ: Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության (ԱԷԳ) նախնական փուլում, մի կողմից՝ Ռուսաստանը նպատակ է ունեցել օգտագործել ԵՄ ընթացակարգերն ԱՊՀ տարածքում ինտեգրացիոն գործընթացների «վերակենդանացման» համար, իսկ մյուս կողմից՝ օգտագոր-

<sup>418</sup> Այդ մասին տես Шукшин В. С., Суворов В. Л., Политика противодействия международному терроризму в условиях глобализации. М., 2006, Степанова Е. А., Терроризм в асимметричном конфликте: идеологические и структурные аспекты. М., 2010.

ծել ԵՄ ներուժը ԱՊՀ երկրների հետ միջպետական հարաբերությունների վերականգնման ուղղությամբ: Հետխորհրդային տարածքում եվրախնտեզման գործընթացները ստիպեցին ՌԴ-ին վերանայելու նախկին ԽՍՀՄ անդամ պետությունների հետ հարաբերությունները:

ԵՀԲ նախաձեռնությունից հետո ԵՄ-ի հետ հերթական հակադրման պատճառը ՌԴ-ի համար դարձավ 2009 թ. ԱլԳ, որի շրջանակներում ԵՄ-ի և հետխորհրդային գործընկեր 6 երկրներ՝ Ադրբեջանը, Բելառուսը, Հայաստանը, Մոլդովան, Վրաստանը և Ուկրաինան, ստորագրեցին համաձայնագիր: Եթե գործընկեր երկրների համար ԱլԳ-ը դարձավ եվրոպական քաղաքական և սոցիալ-տնտեսական ինտեգրման նոր ձևաչափ, ապա ՌԴ-ի համար այն դիտարկվեց նոր մարտահրավերների համատեքստում: Դրա վկայություն էր նաև Կոսովոյի ճանաչման շուրջ ՌԴ անհամաձայնությունը<sup>419</sup> և ռուսական էներգատեսուրսների տեղափոխման հիմնախնդիրը, երբ Ռուսաստանը Ուկրաինայի տարածքով անցնող գազի հոսքը պարբերաբար ընդհատեց 2009 թ.<sup>420</sup> հրաժարվելով վավերացնել էներգետիկ պայմանագիրը<sup>421</sup>:

Փաստացի, եթե 1990-ականներին ԵՄ-ն կարևորում էր Ռուսաստանի հետ համագործակցությունը, ապա 2000-ականներից ի վեր ԵՄ-ի առաջնահերթությունը հետխորհրդային երկրների հետ հարաբերությունների հաստատումն ու խորացումն էր: Փաստացի ԵՄ-ն ամրապնդվեց և արտահանման (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Մոլդովա, Տաջիկստան), և ներմուծման ոլորտներում (Ադրբեջան և Ուկրաինա): Դա այն դեպքում, երբ մի կողմից՝ Ռուսաստանը գնալով զիջում էր դիրքերը ԱՊՀ երկրների ֆինանսատնտեսական շուկաներում, որի հիմնական պատճառը ռուսական արտադրանքի մրցակցային չլինելն էր, իսկ մյուս կողմից՝ ԱՊՀ երկրների համար ևս ռուսական շուկան սահմանափակվել է: Այլևս իրականություն է այն, որ ԱՊՀ երկրների համար ԵՄ-ը դառնում է հիմնական շուկա, իսկ Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի համար նախադրյալներ ստեղծում խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱ) կայացման համար: ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի ստորագրմամբ ԽՀԱԱ ընթացակարգերը կբացեն եվրոպական շուկան Վրաստանի, Ուկրաինայի և Մոլ-

<sup>419</sup> Այդ մասին տե՛ս «МИД РФ: Россия не признает независимость Косово» (02.04.2009), Режим доступа: РБК: <http://www.rbc.ru/politics/02/04/2009/5703d2f99a79473dc814d65a> (վերջին մուտք՝ 17.09.2016), Антонова И. А., Международное признание Республики Косово: трансформация позиции России // Terra Humana № 1, 2014, С. 46-50.

<sup>420</sup> Այդ մասին տե՛ս «Взаимоотношения Украины и России в энергетической сфере» // Центр Разумкова. Национальна безпека / Оборона, № 4, 2009, С. 24-27.

<sup>421</sup> Այդ մասին տե՛ս Пашковская И. Г., Энергетическая политика Европейского Союза в отношении России, М.: МГИМО-Университет, 2011 (Аналитические доклады ИМИ; Вып. 5 (29), октябрь 2011).

դովայի համար՝ ապահովելով տնտեսական նոր զարգացումներ և օտարերկրյա ներդրումներ: Սակայն անկախ դրանից Ռուսաստանը փորձեց և դեռևս շարունակում է փորձել պահպանել քաղաքական գերակայությունն ԱՊՀ տարածքում:

Այսպիսով՝ ՌԴ – ԵՄ հարաբերությունները ճգնաժամային են և նույնիսկ հակասական: Դրանց հետագա բարելավումը պայմանավորված կլինի Դոնբասի հակամարտության խաղաղ կարգավորման և Մինսկի պայմանավորվածությունների կատարմամբ, ԱլԳ պետությունների և Կենտրոնական Ասիայի երկրների հետ ԵՄ գործունեության չխոչընդոտմամբ, ԵՄ աշխարհաքաղաքական և էներգետիկ անվտանգությամբ, ՌԴ–ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության չխոչընդոտմամբ:

## **2. ԵՄ – Հայաստան համագործակցությունը ռուսական շահերի գերակայության համատեքստում**

ՌԴ – ԵՄ հարաբերություններում առկա խնդիրները պարբերաբար և անխուսափելիորեն անդրադառնում են հայրենական քաղաքականության վրա՝ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը դարձնելով քաղաքականության ազդեցության ուղղակի և անուղղակի կրող օբյեկտ: Ինչը ՀՀ–ի և ԼՂՀ–ի համար շարունակում են մնալ արտաքին մարտահրավերների շարքում՝ նամանավանդ հաշվի առնելով վերջին իրադարձությունները (ուկրաինական ճգնաժամ և Ղրիմի հարցը, ռուս–ամերիկյան հարաբերությունների վատթարացումը, ՌԴ–ի դեմ ուղղված արևմտյան պատժամիջոցները, ռուսական ռուբլու շարունակաբար արժեզրկումը և այլն): ՌԴ հնարավոր փորձերը կարգավորելու կամ շրջանցելու ուկրաինական ճգնաժամով պայմանավորված խնդիրները պսակվել են և շարունակաբար կպսակվեն անհաջողություններով: Դրա պատճառը ներկա միջազգային հարաբերությունների գլոբալ ուղղվածությունն է:

ՀՀ–ի ցանկացած առնչության ՌԴ – ԵՄ և ՌԴ – ԱՄՆ հարաբերությունների օբյեկտ հանդիսացող հիմնախնդիրներից որևէ մեկին, ինքնըստինքյան հանգեցնում է ՀՀ–ի նկատմամբ համապատասխան հակադարձի: Օրինակ՝ ՌԴ արտաքին քաղաքականությունն Ուկրաինայի և Ղրիմի նկատմամբ ստիպեցին նախ՝ ԱՄՆ–ին, իսկ հետո էլ՝ ԵՄ–ին տնտեսական պատժամիջոցներ կիրառել ՌԴ–ի դեմ, որի պատճառով ՀՀ համագործակցությունը ՌԴ–ի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների հետ հայտնվեց զգալի տնտեսական դժվարությունների մեջ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 1988–2003 թթ. ՀՀ միգրացիոն հոսքերի 75 %-ը ուղղված է եղել

դեպի ՌԴ, և այնտեղ է ՀՀ աշխատանքային միգրանտների 93 %-ը<sup>422</sup>, որը կարող է հանգեցնել ՀՀ տնտեսությունը սնող մասնավոր տրանսֆերտների ծավալի կրճատմանը: Եվ իհարկե, չանտեսելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում Ռուսաստանի ուղղակի ներդրումների ծավալը և կապիտալը մեծ են, ապա այս ոլորտը ևս կունենա լուրջ խնդիրներ («Գազպրոմ», «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ»<sup>423</sup> և այլն): Համաձայն Ասիական զարգացման բանկի տվյալների՝ «Ռուսաստանը Հայաստանի մետաղների և գյուղատնտեսական արտադրանքի հիմնական գնորդն է և Հայաստանի ներմուծման (մատակարարելով իր մեքենաներն ու սարքավորումները) և էներգիայի կարիքների գլխավոր (ներառյալ բնական գազը, նավթը և ատոմային վառելիքը) աղբյուրը»<sup>424</sup>:

ՀՀ ջանքերը՝ պահպանելու ԵՄ-ի և ՌԴ-ի բարիդրացիական հարաբերությունները նույն հարթության վրա՝ փորձելով հնարավորինս լինել շահեկան դիրքերում երկվեկտոր պետական քաղաքականության համատեքստում, նպատակաուղղված են ՀՀ և ԼՂՀ ինքնիշխանության ամրապնդմանը:

Հայ հասարակությունը աշխարհագրական այնպիսի միջավայրում է, որը տալիս է ոչ միայն հնարավորություններ, այլև շատ առումներով «խլում» է դրանք: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ Ադրբեջանի հետ բանակցային գործընթացն անկասկած հեռու է խաղաղ և քաղաքակիրթ լուծում ստանալուց: Զուգահեռաբար ՀՀ-ը և ԼՂՀ-ը բախվում են Թուրքիայի ցեղասպան քաղաքականությանը, որի նպատակն է աջակցել Ադրբեջանի ահաբեկչական գործողություններն ընդդեմ Լեռնային Ղարաբաղի<sup>425</sup>: Մյուս կողմից՝ հայ-վրացական և հայ-իրանական մեծ ներուժ ու հեռանկարներ ունեցող, բայց սահմանափակ հարաբերությունները: Եթե եվրոպական ինտեգրման սկզբնական փուլում ԵՄ-ը փորձում էր կարգավորել Հայաստան – Թուրքիա հարաբերությունները, ապա դա անհնար դարձավ հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացի սառեցումից հետո: «Արաբական զարնան» և սիրիական ճգնաժամին հաջորդած պատերազմական իրադարձությունները նոր մարտահրավեր առաջացրին ԵՄ-ի համար:

<sup>422</sup> Տե՛ս Թորոսյան Գ., Վերահնտեգրացիա. հին երևույթ, նոր մոտեցումներ, Եր., 2014, էջ 27:

<sup>423</sup> Այդ մասին տե՛ս «Հայաստանում գործող «Առէկսիմբանկ - Գազպրոմբանկ»-ը ներառվել է ԱՄՆ-ի պատժամիջոցների ցուցակում» (04.09.2016) // <http://www.aravot.am/2016/09/04/731968> (վերջին մուտք՝ 17.09.2016), «ՌԴ-ի դեմ պատժամիջոցների պատճառով հնարավոր է՝ ՀՀ-ում գազի գինն աճի» (10.09.2016) // <http://www.aravot.am/2016/09/10/733814> (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>424</sup> Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ), «Երկրի գործընկերության ռազմավարություն. Հայաստան, 2014-2018», էջ 9 // <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ea-hy.pdf> (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>425</sup> Այդ մասին տե՛ս Aleksanyan A., The Impact of the Armenian Genocide on the Formation of National Statehood and Political Identity // Հայագիտության հարցեր, հանդես 2 (8), 2016, էջ 22-43:

ԵՄ – Հայաստանի համագործակցության խորացման համատեքստում կարծում են՝ պետք է ուշադրություն դարձնել հետևյալ երևույթների վրա.

- արտաքին կախվածություն,
- ժողովրդավարության ցածր մակարդակ:

Միջպետական հարաբերություններում արտաքին կախվածությունը կարող է հանգեցնել մի շարք սոցիալ-տնտեսական սահմանափակումների: Հայաստանը տնտեսապես զարգացող երկիր է, որտեղ բարձր է գործազրկության մակարդակը: Փաստացի 2016 թ. առաջին և երկրորդ եռամսյակների վիճակագրական տվյալներով գործազրկությունը համապատասխանաբար կազմել է 18,2 % և 18,4 %<sup>426</sup>: Բացի այդ՝ ՀՀ-ում ծայրահեղ աղքատությունը 2014 թ. կազմել է 2,3 %, իսկ աղքատությունը՝ 30 %<sup>427</sup>:

Ռուսաստանը շարունակում է առաջատար լինել՝ ըստ 2011–2014 թթ. ՀՀ ներմուծման մեջ տեսակարար կշիռի, որն աճելով՝ 2014 թ. հասել է 25,4 %<sup>428</sup>: Ռուսաստանը գլխավորում է ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների և օտարերկրյա ուղղակի ներդրումների երկրների ցանկը<sup>429</sup> մինչև 2043 թ. ունենալով նաև Հայաստանին գագի վաճառքի մենաշնորհ<sup>430</sup>: Տնտեսական քաղաքականության ռուսական վեկտորն ավելի կուժեղանա 2015 թ. Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) ՀՀ անդամակցությամբ:

ԽՍՀՄ փլուզումից ի վեր ՀՀ-ում տեղի են ունենում ժողովրդավարական փոխակերպումներ, որոնք միտված են ժողովրդավարության հաստատմանը և ամրապնդմանը: Տեղին է նշել, որ ԽՍՀՄ փլուզմամբ նորանկախ երկրներում պահպանվեց հետխորհրդային կառավարման ժառանգությունը, որն արմատավորվեց նույնիսկ մի շարք հետխորհրդային երկրների քաղաքական մշակույթներում: ՀՀ-ում այն առավելապես խոչընդոտում է քաղաքացիական հասարակության ձևավորման, օրենքի գերակայության, մամուլի ազատության, կոռուպցիայի դեմ պայքարի, մենաշնորհների վերացման գործընթացում՝ բացասաբար ազդելով ժողովուրդ-պետական փոխվստահության հաստատմանը:

<sup>426</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թ. հունվար-օգոստոսին», էջ 45 // [http://www.armstat.am/file/article/sv\\_08\\_16a\\_141.pdf](http://www.armstat.am/file/article/sv_08_16a_141.pdf) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>427</sup> Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015» // <http://www.armstat.am/file/doc/99493608.pdf> (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>428</sup> Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015» // <http://www.armstat.am/file/doc/99493858.pdf> (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>429</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>430</sup> Ավելի մանրամասն տե՛ս «ՀՀ ԱԺ հինգերորդ գումարման արտահերթ նստաշրջան, Սղագրություն, N 1, 20-ը դեկտեմբերի, 2013, // <http://www.parliament.am/transcript.php?day=20&month=12&year=2013&lang=arm> (վերջին մուտք՝ 17.09.2016), Սաֆարյան Ա., Ինչո՞ւ և ինչպե՞ս են «գազային պայմանագրերը» հակասում ՀՀ Սահմանադրությանը (23.12.2013) // <http://hetq.am/arm/news/31586/inchu-ev-inchpes-en-gazayin-paymanagryery-hakasum-hh-sahmanadrutyany.html> (վերջին մուտք՝ 17.09.2016), «Ռ. Քոչարյանի նոր հարցազրույցը» // <http://2rd.am/hy/robert-kocharyani-nor-harczrucy-1389597983> (վերջին մուտք՝ 17.09.2016):

Այս առումով կարևոր է ՀՀ ներգրավվածությունը եվրոպական ինտեգրման գործընթացին՝ ստանձնելով ու կատարելով ժողովրդավարական բարեփոխումների պարտավորությունները: Ժողովրդավարությունը երաշխիք է տնտեսության զարգացման համար, բայց և այնպես ժողովրդավարությունը շուկայական տնտեսության և տնտեսական համակարգի արդիականացման ուղին է: Այն միջազգային և եվրոպական նոր շուկաների պահանջներին առավելագույնս համապատասխանելու բանալին է: Ինչը հնարավորություն կտա ՀՀ-ում ներդնելու արդյունավետ կառավարման միջազգային լավագույն փորձը՝ ապահովելով օտարերկրյա ներդրումների բարենպաստ միջավայր և մրցակցային դաշտ:

Դեռևս 2014 թ. թվում էր, թե Հայաստանը ունի բոլոր հնարավորությունները՝ կայացնելու արևմտաեվրոպական ժողովրդավարության մոդելը, նվազեցնելով Ռուսաստանից կախվածությունը և թևակոխելով ժողովրդավարական զարգացման նոր փուլ՝ հետևելով Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի օրինակին: Սակայն Հայաստանը չստորագրեց ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիրը և նախընտրեց անդամակցել ԵՏՄ-ին: Չնայած այդ որոշմանը՝ «Հայաստանը և ԵՄ-ը շարունակում են քաղաքական և առևտրային երկխոսությունն այն ոլորտներում, որտեղ այս երկխոսությունը համադրելի է Հայաստանի՝ ԵՏՄ-ի հանդեպ նոր պարտավորությունների հետ»<sup>431</sup>:

ԵՏՄ արդյունավետության հետ կապված՝ բազմաթիվ են ՀՀ ակնկալիքները, սակայն կարծում են՝ Հայաստանն ապավինել է մի կազմակերպության, որը կարող է դառնալ հերթական «ֆորմալ» միավորումը՝ փորձելով բացասաբար ազդել մեր երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների վրա:

2015 թ. նոր համաձայնագրի շուրջ ԵՄ-ը նախաձեռնեց բանակցություններ Հայաստանի հետ, որը «կփոխարինի գործող ԵՄ – Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագրին»<sup>432</sup>: ԵՄ գործունեությունը Հայաստանում հուսադրում է, որ հնարավոր է գտնել համագործակցության նոր ուղիներ, բայց կարծում են՝ Հայաստանի՝ ԵՏՄ կողմնորոշումը կարող է «սառեցնել» առկա գործընթացը:

### **3. Եվրասիական տնտեսական միության ապահովագրացիոն քաղաքականությունը**

Ժամանակակից պայմաններում ԵՏՄ-ը Ռուսաստանի հակաարձա-

<sup>431</sup> Տե՛ս «Քաղաքական և տնտեսական հարաբերություններ» // [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/political\\_relations/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/political_relations/index_hy.htm) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>432</sup> Տե՛ս նույն տեղում:

գանքն է եվրոպական ինտեգրման գործընթացներին և ԵՄ տարածական քաղաքականությանը: ԵՄ գործունեությունը միտված է պաշտպանելու Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը և վերականգնելու նախկին հավասարակշռությունը: Բանն այն է, որ դեռևս 2004 թ. Ուկրաինայում տեղի ունեցած «Նարնջագույն» հեղափոխությունը Ռուսաստանը որակեց որպես Արևմտյան միջնորդության և ազդեցության արգասիք: Դրան անմիջապես հաջորդեցին Վրաստանի և Ուկրաինայի նախապատրաստական քայլերը՝ համալրելու ՆԱՏՕ-ի շարքերը: Հետագայում ՆԱՏՕ-ի հետ ինտեգրման որոշման վրա ազդեց 2008 թ. վրաց-ռուսական հնգօրյա պատերազմը, որն ավարտվեց «ՌԴ և մի քանի այլ երկրների կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչմամբ, ինչպես նաև այդ հանրապետություններում ռուսական ռազմական ներկայության ամրապնդմամբ»<sup>433</sup>:

ԵՄ ԵՀԲ և ԱԼԳ նախաձեռնությունները Ռուսաստանի համար վերջնականապես ձևավորեցին հետխորհրդային տարածաշրջանում ուժերի դասավորվածության ժամանակակից պատկերը: Դրա համաձայն՝ Արևմուտքը առաջատար դիրքերում է թե՛ ժողովրդավարական տարածման և ամրապնդման, թե՛ տարածաշրջանային ազդեցության տեսանկյունից: Քանի որ այս ամենն ազդակ էր Ռուսաստանի համար, որ արևմտաեվրոպական արժեհամակարգը տարածաշրջանային շահերով և քաղաքական փիլիսոփայությամբ գրանցում է լուրջ հաջողություններ:

ԵՄ ձևավորման հենց սկզբից «թիրախավորեցին» բոլոր այն երկրները<sup>434</sup>, որոնք ԵՄ արևելյան քաղաքականության սուբյեկտ էին և անդամակցում էին ԱԼԳ-ին: ԵՄ կազմավորումից ի վեր Ռուսաստանը ջանում է ձևավորել տնտեսական միասնական գոտի հնարավորինս շատ երկրների հետ՝ հայտարարելով, որ այն բաց է ոչ միայն հետխորհրդային, այլև ասիական և արևմտյան երկրների համար: Ցանկացած նոր երկրի հավանական մուտքը ԵՄ կենթադրի դրա հավանական հեռացումը ԵՄ ազդեցության դաշտից: Ակնհայտ է, որ ԵՄ-ն, առաջարկելով տարածաշրջանային երկրների տնտեսական զարգացման սեփական տեսլականը, հավանական անդամ պետություններին կփորձի տանել տնտեսական զարգացման այնպիսի ուղով, որ այս կամ այն կերպ կհակազդի ԵՄ-ը: Այդպիսով՝ ստանալով ապահովագրացման առաջին «պտուղները»:

<sup>433</sup> «2008 թ. օգոստոսի 8-ին սկսվեց ռուս-վրացական պատերազմը» (08.08.2013) // <http://razm.info/17366> (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>434</sup> Այդ մասին տե՛ս Ելիսեև Ա., ԵԱՅՏ և ԵՏ: սходства и различия // Евразийское обозрение, № 2, 2014, С. 2-10, Сивичкий А., Царик Ю., Беларусь в ЕАЭС: год спустя (неутешительные итоги и сомнительные перспективы), Минск, 2016, «ЕС и Восток в 2030 году: Четыре сценария развития отношений между ЕС, Российской Федерацией и общими соседями». Берлин, 2014:

Միջազգային առաջադեմ փորձը վկայում է, որ ցանկացած տնտեսական միավորում ենթադրում է, որ դրա շրջանակներում առավելապես շահեկան դիրքում է այն երկիրը, որն ունի տնտեսական զարգացած և կայուն համակարգ, մինչդեռ անմրցունակ տնտեսությունները միմիայն տուժում են:

ԵՏՄ–ը տնտեսական այնպիսի միավորում է, որտեղ կարող են գտնել տնտեսական տարբեր մակարդակի երկրներ՝ «ինքնաբավ» և չզարգացած տնտեսությունից մինչև զարգացող և անմրցունակ տնտեսություն: Նման տնտեսական մոդելի հետ ՀՀ և ԵՏՄ մյուս անդամ պետությունների աներդաշնակ վիճակը թույլ է տալիս կարծելու, որ կարևորագույն որոշումների կայացման ժամանակ դա հանգեցնելու է ակնհայտ անհամաձայնությունների: Ռուսաստանի նկատմամբ կիրառված տնտեսական պատժամիջոցները ստիպեցին Ղազախստանին և Բելառուսին կասկածի տակ դնել ԵՏՄ կայունության հարցը<sup>435</sup>: Բացի այդ՝ ԵՏՄ կազմակերպչական աշխատանքներում ևս պարբերաբար նկատվում են անհամաձայնություններ Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի և Ղրղզստանի միջև<sup>436</sup>: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանը արգելք դրեց բելառուսական թվով 23 կազմակերպությունների վրա՝ պատճառաբանելով, որ վերջիններս չեն հետևում սննդի սանիտարական կանոններին: Պատահական չէ, որ Բելառուսի քաղաքացիական հասարակության շրջանակներում արդեն իսկ հասունանում է մտավախություն, որ ԵՏՄ–ը վտանգում է երկրի ինքնիշխանությունը<sup>437</sup>: Ղազախստանը ցանկանում էր ԵՏՄ տեսնել բացառապես տնտեսական գործառույթներ իրականացնող կառույց՝ փորձելով ԵՏՄ միջոցով ապահովել ղազախական բիզնեսի մուտքը ԵՏՄ ողջ տարածք: Եթե Ռուսաստանը կարողանա ապագայում հարթել ԱՄՆ–ի և ԵՄ–ի հետ տարածայնությունները, հաղթահարել պատժամիջոցների բացասական ազդեցությունները և հասնել նավթի գների շուկայի կայունացմանը, ապա կարծում եմ՝ դրանից հետո հնարավոր կլինի խոսել ԵՏՄ հեռանկարների մասին:

<sup>435</sup> Այդ մասին տե՛ս Ibragimova G., Does the Eurasian Economic Union have a future? (09.04.2015) // <http://www.russia-direct.org/debates/does-eurasian-economic-union-have-future> (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>436</sup> Այդ մասին տե՛ս Волхонский М., Россия и Армения: интеграция на фоне глобального кризиса. М., 2014, Семенов Е., Единое валютное пространство: анализ мнений о концепциях и инструментах политических и бизнес-элит стран ЕАЭС, БРИКС, ЕС. М., 2015,

<sup>437</sup> Այդ մասին տե՛ս Astapenia R., Belarus and the Eurasian Economic Union: The view from Minsk (07.01.2015) // [http://www.ecfr.eu/article/commentary\\_belarus\\_and\\_the\\_eurasian\\_economic\\_union\\_the\\_view\\_from\\_minsk](http://www.ecfr.eu/article/commentary_belarus_and_the_eurasian_economic_union_the_view_from_minsk) (վերջին մուտք՝ 17.09.2016):



#### 4. ՀՀ և ԼՂՀ ինտեգրման անվտանգային հիմնահարցերը. ՆԱՏՕ և ՀԱՊԿ

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, անկախացան՝ ընտրելով արտաքին քաղաքականության նոր վեկտորներ: Դրանցում պետք է արտացոլվեին արևմտաեվրոպական և ռուսական աշխարհաքաղաքական մոտեցումները, որոնք վերաբերում էին Հարավային Կովկասի երկրների տնտեսական, քաղաքական, անվտանգային և քաղաքականության այլ ոլորտների: Այս առումով կարևոր նշանակություն ունեն ՀՀ և ԼՂՀ միջազգային ինտեգրումը, մասնակցությունը կառավարական կազմակերպություններին և անվտանգության դաշինքների աշխատանքներին: Կարևոր է այն, որ մեկնարկել է ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացը՝ մի շարք երկրներում ձևավորելով համապատասխան ներկայացուցչություններ: Զգալի է ՀՀ դերակատարությունը ԼՂՀ անկախ պետականության ամրապնդման և զարգացման հիմնահարցում: Ավելին՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշված է, որ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առանցքային խնդիրն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը»<sup>438</sup>:

Անկախացումից ի վեր՝ ՀՀ իշխանությունները կրել են ինտեգրացիոն տարբեր բլոկներին միանալու ծանր բեռը<sup>439</sup>: Եվ ռուսական, և՛ եվրոպական կողմը Հարավային Կովկասում մշտապես պայքար են մղել՝ տարածաշրջանում ազդեցության գոտի հաստատելու համար՝ առաջարկելով համագործակցություն տնտեսական, քաղաքական և անվտանգության ոլորտներում: 1992 թ. ՀՀ ստորագրեց հավաքական անվտանգության պայմանագիրը (ՀԱՊԿ)<sup>440</sup>, որը 2002 թ. վերանվանվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)<sup>441</sup>: 1993 թ. ՀԱՊ-ին միացան նաև Ադրբեջանը, Վրաստանը և Բելառուսը<sup>442</sup>: Եթե Հայաստանի համար ՀԱՊ-ը

<sup>438</sup> Տե՛ս «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» (Հավանության է արժանացել ՀՀ նախագահին արդյթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում) // [http://www.mfa.am/u\\_files/file/doctrine/Doctrinarm.pdf](http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>439</sup> Սյր մափին տե՛ս Ալեքսանյ Ա. Տ., Современные вызовы интеграционным процессам на Южном Кавказе: Европейское и Евразийское измерения, // Центральная Азия и Кавказ, Том 17, Выпуск 3, 2014, էջ 31-44:

<sup>440</sup> Տե՛ս “Договор о коллективной безопасности от 15 мая 1992 года” (с изменениями, внесенными Протоколом о внесении изменений в Договор о коллективной безопасности от 15 мая 1992 года, подписанным 10 декабря 2010 года) // [http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT\\_ID=126](http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>441</sup> Տե՛ս “Устав Организации договора о коллективной безопасности от 7 октября 2002 года” (с изменениями, внесенными Протоколом о внесении изменений в Устав Организации Договора о коллективной безопасности от 7 октября 2002 года, подписанным 10 декабря 2010 года) // [http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT\\_ID=124](http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=124) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>442</sup> Տե՛ս “Организация Договора о коллективной безопасности (ОДКБ)” (15.05.2012) // <https://>

տարածաշրջանում սպառազինությունների շարունակվող մրցավազքի զսպման ընթացակարգ էր<sup>443</sup>, ապա Ադրբեջանի համար՝ պատերազմական գործողությունների վերսկսման պարագայում «չեզոքություն»: Շոշափելի առաջընթաց չգրանցելով ո՛չ հակամարտության և ո՛չ էլ մեծ հաշվով բանակցային գործընթացում՝ Ադրբեջանը հրաժարվեց Ռուսաստանի կողմից առաջարկվող ՀԱՊԿ համագործակցությունից: Հենց այստեղ է, որ ԼՂՀ հիմնախնդիրը որոշիչ է դառնում Հայաստանի՝ ՀԱՊԿ-ին միանալու հարցում: ՀԱՊԿ կանոնադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են իրականացնել համատեղ միջոցառումներ անվտանգության սպառնալիքների առաջացման դեպքում<sup>444</sup>: Այդուհանդերձ, ՀԱՊԿ-ը ՀՀ անդամակցությունը չխոչընդոտեց ՀՀ – ՆԱՏՕ հարաբերությունների հետագա զարգացմանը («Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիր, ՀՀ խաղաղապահ ուժերի միացումը Կոսովոյի և Աֆղանստանի առաքելությանը և այլն)<sup>445</sup>:

ՀԱՊԿ անդամակցության համատեքստում ՀՀ – ՆԱՏՕ համագործակցության դինամիկան նշանակալի է անվտանգության «դիվերսիֆիկացիայի» տեսանկյունից, սակայն հնարավոր է այնքանով, որքանով չի սպառնում Ռուսաստանի տարածաշրջանային շահերին<sup>446</sup>: Տեղին է նշել, որ Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմաբազան<sup>447</sup> և հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) նոր համակարգերը զսպիչ դեր են կատարում տարածաշրջանում կայունության ապահովման համար, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանին թույլ են տալիս առավել ինքնավստահ դիրքերից հանդես գալ որպես Հարավային Կովկասում անվտանգության երաշխավոր:

Ներկայիս պայմաններում հարց է առաջանում, թե որքանով է իրատեսական ՆԱՏՕ – ՀԱՊԿ բախումը Հարավկովկասյան տարածաշրջանում: Արևմտաեվրոպական երկրների և Ռուսաստանի միջև խորացող առճակա-

ria.ru/spravka/20120515/648945336.html (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>443</sup> Այդ մասին տես Մինսայան Ս., Խաղաղության պահպանման մեխանիզմը Ղարաբաղյան հակամարտությունում. զսպման տեսությունը սպառազինությունների ափսեմտրիկ մրցավազքի պայմաններում (21.10.2010) // [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5082](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5082) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>444</sup> Տես նույն տեղում:

<sup>445</sup> Ավելի մանրամասն տես «Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն» // <http://www.mfa.am/hy/international-organisations/NATO> (վերջին մուտք՝ 17.09.2016), «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր 2014-2016» // [http://www.mfa.am/u\\_files/file/NATO/ԱՆՀԱՍԱԿԱՆ%20ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ%20ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ%20ԾՐԱԳԻՐ%202014-2016.pdf](http://www.mfa.am/u_files/file/NATO/ԱՆՀԱՍԱԿԱՆ%20ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ%20ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ%20ԾՐԱԳԻՐ%202014-2016.pdf) (վերջին մուտք՝ 17.09.2016), Relations with Armenia (07.04.2016), [http://www.nato.int/cps/en/natohq/topics\\_48893.htm?selectedLocale=en](http://www.nato.int/cps/en/natohq/topics_48893.htm?selectedLocale=en) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>446</sup> Տես «Концепция внешней политики Российской Федерации» (Утверждена Президентом Российской Федерации В. В. Путиным 12 февраля 2013 г. // [http://archive.mid.ru/BRP\\_4.NSF/0/6D84DDEDEDBF7DA644257B160051BF7F](http://archive.mid.ru/BRP_4.NSF/0/6D84DDEDEDBF7DA644257B160051BF7F) (վերջին մուտք՝ 17.09.2016):

<sup>447</sup> Տես «102-րդ ռուսական ռազմաբազան Թուրքիայի բանակին հակազդելու համար չէ. Բորյոմա» (12.02.2016) // <http://news.am/arm/news/311272.html> (վերջին մուտք՝ 17.09.2016):

տումը դրսևորվում է ուկրաինական և սիրիական ճգնաժամերի շրջանակներում: Ուշագրավ է ՌԴ ՊՆ պաշտոնական ներկայացուցիչ Ի. Կոնաշենկովի ՋԼՄ-ներին հայտարարությունը սիրիական բանակին հարվածելու պարագայում համարժեք պատասխանի մասին<sup>448</sup>:

### 5. ՀՀ և ԼՂՀ սեղմված չավարտված պատերազմի և չհայտարարված խաղաղության միջև

Thanks to the potential of the Armenian bodies in Diaspora and their efforts two Armenian states have had considerable achievements in security sphere. Such activity makes the voice of Artsakh people audible to the international community<sup>511</sup>. For example, the activity of the NKR representative office<sup>512</sup> in the USA makes the independence of Artsakh and its right for recognition more substantial<sup>513</sup>.

The further development of the independent statehood of NKR is legitimate from the aspect of international law. An agreement on mutual military assistance between Armenia and NKR would be very important and will make the cooperation between the two Armenian states more institutional<sup>514</sup>. NKR as a component of the security and stability system in the South Caucasus must have an opportunity to participate in regional processes. This will solve the issue of integration and international recognition from one side, and will make possible the peaceful resolution of the conflict from another side.

Comparing the integration processes of Armenian and Azerbaijan, we see that although the hydrocarbon resources of Azerbaijan are its main factors of integration and moving force of state-building, at the same time they are 'slowdown signals' of the integration processes. In particular, for the objective of suspension of pluralism and liberalism the government of Azerbaijan funds civil society organizations thus limiting their cooperation with international organizations. This hinders the establishment and development of a liberal environment, and at the same time strengthens the positions of Aliyev's clan in the country. The clan not only has seized the main state functions, but also

<sup>511</sup> See Bako Sahakyan: Motherland-Diaspora conference is a practical mechanism to strengthen the trinity of Armenia-Artsakh-Diaspora, <http://old1.hayernaysor.am/1316421864> (Accessed 17.09.2016), Adoption of such documents bring the international recognition of Artsakh: Davit Babayan comments on declaration by Uruguay (06.09.16), <http://www.tert.am/am/news/2016/09/06/Davit-babayan/2125292> (Accessed 17.09.2016):

<sup>512</sup> See The Nagorno-Karabakh Republic Office in the USA, [http://www.nkrusa.org/nk\\_conflict/prospects\\_peace.shtml](http://www.nkrusa.org/nk_conflict/prospects_peace.shtml) (Accessed 17.09.2016).

<sup>513</sup> See California State Senate recognizes Artsakh independence, (28.08.2014), <http://www.panarmenian.net/arm/news/181958> (Accessed 17.09.2016), Denver city in the U.S. recognizes Artsakh independence (10.07.2016) <http://www.1in.am/2023741.html> (Accessed 17.09.2016), We call to recognize the independence of Artsakh: members of US Congress (03.09.2016), <http://yerkirmedia.am/1political/artsakh-ankakhutyun-kongresakanner> (Accessed 17.09.2016):

<sup>514</sup> See The President of the Republic of Armenia announced signing an agreement on mutual military assistance between Armenia and NKR (02.04.2016) // <https://artsakhpress.am/arm/news/41633/hh-nakhagahy-haytararel-e-hh-ev-lxh-mijev-razmakan-pokhognutyay-paymanagir-knqelu-masin.html> (Accessed 17.09.2016), Legislative bodies of Armenia and NKR are ready to sign bilateral cooperation agreement between defense structures, <http://www.artsakhtert.com/arm/politics/item/2283-hh-n-tyl-lrh-n-ortensutqorrn-n-yayaturayut-n-yayazuyayanyakany-qbrayatnuyurayonunnterh-mhghetl-kyntel-terlykqrd-m-hamafqordawayguyayay-n-yaymanagirknqelu-masin.html> (Accessed 17.09.2016), The National Assembly will discuss the agreement on mutual assistance between Armenia and NKR (13.09.2016), <http://www.panarmenian.net/arm/news/220670/> (Accessed 17.09.2016) (all in Armenian).

fully manages and controls social-economic and political attitudes. Meanwhile, the isolation of Azerbaijan deepens and the military expenses, militaristic propaganda and sentiments increase in parallel. From that point of view, the military-technical rearmament of Armenia aims at restoring the military balance in the region, thus decreasing the probability of hostilities provoked by Azerbaijan.

NKR develops procedures for parliamentary diplomacy by establishing links with parliaments of different countries<sup>515</sup>. In this regards, creation of inter-parliamentary groups is significant<sup>516</sup>.

---

<sup>515</sup> See “Интервью председателя НС НКР Ашота Гуляна журналу “Международные отношения: Армянский мир””, <http://www.nankr.am/ru/1836> (Accessed 17.09.2016).

<sup>516</sup> See “Межпарламентские Связи” // <http://www.nankr.am/ru/14> (Accessed 17.09.2016).

**ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱ-  
ԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱ-  
ՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ՍԱԹԵՆԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ Ք. Գ. Թ.,  
ԴՈՑԵՆՏ ՄԵՆՈՒԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ<sup>517</sup>**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

2013 թ. սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվա կատարած պաշտոնական այցի ընթացքում հայտարարում է Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության որոշման և այդ նպատակով անհրաժեշտ կատարելիք քայլերը ձեռնարկելու մասին, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) ձևավորմանը մասնակցելու վերաբերյալ<sup>518</sup>: Վերոնշյալ հայտարարությունը հանդիսացավ ՀՀ-ի ԵՏՄ-ին անդամակցման սկզբնակետ և միառժամանակ չեղարկեց Եվրոպական միության (ԵՄ) Արևելյան գործընկերության ծրագրի կողմից նախաձեռնած տնտեսական համագործակցության համաձայնագրի նախաստորագրումը, որի շուրջ բանակցություններն ընթանում էին 2010 թ. ի վեր<sup>519</sup>, ինչպես նաև անորոշ դարձրեց Արևելյան գործընկերության ծրագրի հետագա գործունեությունը ՀՀ-ում:

Սարգսյանի մոսկովյան հայտարարությամբ և դրան հաջորդող գործընթացներով կտրուկ փոխվեց Հայաստանի արտաքին քաղաքական վեկտորը:

Իսկ ինչո՞վ էր պայմանավորված նման որոշումը: Սովորաբար պետություններն արտաքին քաղաքական որոշում կայացնելիս առաջնորդվում են որոշակի հանգամանքներով՝ արտաքին միջավայր, ռազմավարական նպատակներ և խնդիրներ, պետական / ազգային շահ, տնտեսական շահ, ներքին իրավիճակ և այլն: Արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում դեր են խաղում նաև քաղաքական էլիտայում և հանրային շրջանակ-

<sup>517</sup> Մենուա Սողոմոնյան, պ. գ. թ., ԵՊՀ գիտական քարտուղար, քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ:

<sup>518</sup> ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը և ՌԴ նախագահ Վ. Պուտինը ստորագրել են համատեղ հայտարարություններ, 03.09.2013, <http://www.president.am/hy/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/> (23.08.2016):

<sup>519</sup> 2013 թ. նոյեմբերի 29-ին Վիլյուսում կայանալիք Արևելյան գործընկերության 3-րդ գագաթաժողովի ընթացքում նախատեսվում էր ասոցացման համաձայնագրի նախաստորագրումը Հայաստանի և ԵՄ-ի միջև:

ներում առկա ընկալումները: Սակայն ընկալումների դերակատարությունը կամ ազդեցությունը արտաքին քաղաքական որոշումների ընդունման հարցում վիճարկելի է, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է այնպիսի փոքր պետության, ինչպիսին Հայաստանն է: Ըստ քաղաքագետ Քեննեթ Ուոլցի՝ փոքր պետությունների արտաքին քաղաքականությունը կառուցվում է միջազգային հարաբերությունների հզոր դերակատարների վարած քաղաքականությանը համապատասխան, իսկ պետության ներքին գործոնների (ներառյալ՝ էլիտայի և հանրության ընկալումները) ազդեցությունը իջեցված է նվազագույնի<sup>520</sup>: Միջազգային իրավիճակն ու հզոր դերակատարներն իհարկե անհերքելի գործոն են, սակայն ամբողջապես անտեսել պետության քաղաքական էլիտայի և հանրության ընկալումները նույնպես սխալ է:

Սույն հետազոտության նպատակն է վեր հանել քաղաքական էլիտայի և հանրային շրջանակներում առկա Արևմուտքի և Հյուսիսի ընկալումները Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների համատեքստում:

Հետազոտության նպատակի իրագործման համար առաջադրված են հետևյալ խնդիրները՝

- վեր հանել Հայաստանի քաղաքական էլիտայում առկա ընկալումները Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների համատեքստում,
- պարզել Հայաստանի հանրային շրջանակներում առկա ընկալումները Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների համատեքստում,
- բացահայտել, թե հանրությունն ու էլիտան ում են դիտարկում ՀՀ բարեկամ պետություն,
- հասկանալ, թե ինչպես են ընկալվում ՀՀ հիմնական գործընկերները:

Հետազոտության մեջ կիրառվել են ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկ մեթոդներ: Վերլուծական մեթոդով առանձին-առանձին դիտարկվել են քաղաքական էլիտայի ներկայացուցիչների տեսակետներն ու մոտեցումները, հանրային շրջանակներում առկա տրամադրությունները, վերլուծվել են հանրության շրջանակներում իրականացված սոցիալական հարցումները և այլն: Հետազոտության էմպիրիկ նյութը քաղաքական կուսակցությունների պաշտոնական դիրքորոշումներն են, քաղաքական գործիչների հարցազրույցները, տարբեր կառույցների կողմից իրականացված սոցիալոգիաները:

*Արևմուտքի և Հյուսիսի ընկալումները քաղաքական էլիտայի շրջանակներում Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների համատեքստում*

<sup>520</sup> Kenneth N. Waltz, *Theory of International Politics* (Addison-Wesley Publishing Company, 1979), pp. 184-5, 195.

Արտաքին քաղաքական կողմնորոշման կտրուկ փոփոխությունը բուռն քննարկման առարկա հանդիսացավ պետական և քաղաքական գործիչների շրջանակում: Իշխող կուսակցության՝ Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ)<sup>521</sup> տեսակետը լավագույնս արտահայտված էր կուսակցության և միաժամանակ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի ելույթի մեջ սեպտեմբերի 3-ի ՀՀ և ՌԴ նախագահների մամլո ասուլիսի ընթացքում, որում մասնավորապես ասվում էր. «Մենք հանգամանալից քննարկում անցկացրինք եվրասիական ինտեգրացիայի հարցերի վերաբերյալ, և ես հաստատեցի Հայաստանի ցանկությունը՝ միանալու Մաքսայիի միությանը և ներգրավվելու Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացում: 20 տարի առաջ Հայաստանը Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների հետ գործընկերությամբ ձևավորեց իր ռազմական անվտանգության համակարգը հավաքական անվտանգության պայմանագրի ձևաչափում: Այս տասնամյակների ընթացքում համակարգն ապացուցել է իր կենսունակությունը և արդյունավետությունը: Այժմ ՀԱՊԿ-ի մեր գործընկերները ձևավորում են տնտեսական փոխգործակցության նոր հարթակ: Ես քանիցս ասել եմ, որ գտնվելով ռազմական անվտանգության մի համակարգում՝ անհնար է և անարդյունավետ մեկուսանալ համապատասխան աշխարհատնտեսական տարածքից»<sup>522</sup>:

Նախագահի հայտարարությունից ակնհայտ է դառնում, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցումը պայմանավորված է շատ ավելի անվտանգության և ռազմական հարցերով, քան տնտեսական: ԵՏՄ-ն, որը Հյուսիսն է, փաստորեն ՀՀ իշխող կուսակցության և երկրի նախագահի կողմից ընկալվում է որպես ռազմական գործընկեր և անվտանգության երաշխիք և հետո՝ նոր տնտեսական գործընկեր:

Նախագահը, ով նաև արտահայտում էր իշխող կուսակցության տեսակետը, գտնում էր, որ նման որոշումը չի բացառում եվրոպական կառույցների հետ ՀՀ-ի երկխոսությունը. «Սա ռացիոնալ որոշում է, այս որոշումը բխում է Հայաստանի ազգային շահերից: Այս որոշումը եվրոպական կառույցների հետ մեր երկխոսությունից հրաժարում չէ: Այս տարիների ընթացքում Հայաստանը եվրոպական գործընկերների աջակցությամբ անցկացրել է լուրջ ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Եվ այսօրվա Հայաստանը այս իմաստով շատ ավելի արդյունավետ և մրցակցային պետություն է,

<sup>521</sup> ՀՀ 5-րդ գումարման Ազգային ժողովում (131 պատգամավոր) «Հայաստանի հանրապետական կուսակցություն» խմբակցությունը ներկայացված է 69 պատգամավորով, <http://www.parliament.am/parliament.php?id=parliament> (24.08.2016):

<sup>522</sup> ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ բանակցությունների արդյունքների վերաբերյալ մամլո ասուլիսի ժամանակ, 03.09.2013, <http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-press-conference-working-visit-to-Russian-Federation/> (24.08.2016):

քան տարիներ առաջ: Մենք մտադիր ենք ապագայում ևս շարունակելու բարեփոխումները»<sup>523</sup>: Ավելի ուշ Հանրապետական կուսակցության քարտուղար Հովհաննես Սահակյանն իր հարցազրույցներից մեկում հաստատում է նախագահի խոսքերն առ այն, որ Հայաստանի մուտքը Մաքսային միություն չի խոչընդոտում Եվրոպայի հետ համագործակցությանը, և ՀՀ-ն պատրաստ է շարունակելու համագործակցությունը այն ձևաչափով, որը կառաջարկի Եվրոպան<sup>524</sup>:

«Կոմպլեմենտարիզմի»<sup>525</sup> քաղաքականությունը որդեգրած ՀՀԿ-ն՝ Արևմուտքը, ի դեմս Եվրոպայի, փաստացի դիտարկում է որպես ինստիտուցիոնալ բարեփոխումների հիմնական խթան:

Եթե ՀՀԿ-ի դեպքում կուսակցության անդամները միանշանակորեն կիսում էին նախագահի տեսակետը, ապա «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ)<sup>526</sup> խմբակցության անդամների տեսակետներն Հայաստանի արտաքին կողմնորոշման հարցում տարանջատվում էին: Օրինակ՝ կուսակցության ներկայիս նախագահ Նաիրա Զոհրաբյանը<sup>527</sup>, ով նաև Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է, Հայաստանի եվրաինտեգրման գործընթացի կողմնակիցներից է և շահագրգռված էր ԵՄ-ի հետ երկխոսության շարունակմանն ու ամրապնդմանը<sup>528</sup>: Աժ նախկին պատգամավոր ԲՀԿ խմբակցության անդամ<sup>529</sup>, նախկին ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը (1998–2008 թթ.) նույնպես առանձնանում է իր արևմտամետությամբ և գտնում էր, որ Մաքսային միության հարցում Հայաստանը շտապել է: Իսկ ԲՀԿ նախկին նա-

<sup>523</sup> ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ բանակցությունների արդյունքների վերաբերյալ մամուլ ասուլիսի ժամանակ, 03.09.2013, <http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-press-conference-working-visit-to-Russian-Federation/> (24.08.2016):

<sup>524</sup> Ованнес Саакян: Полупрезидентская форма правления при некоторых преобразованиях является идеальной для Армении, 02.10.2013, <http://www.arminfo.am/index.cfm?objectid=780973B0-2B45-11E3-B9440EB7C0D21663> (26.08.2016):

<sup>525</sup> «Կոմպլեմենտարիզմ» տերմինի գործածությունը կապված է 1998-2008 թթ. Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի անվան հետ: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի որդեգրած արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգն է, որի նպատակն է պահպանել հավասարակշռություն տարածաշրջանում շահեր հետապնդող պետությունների և գերտերությունների միջև:

<sup>526</sup> ՀՀ 5-րդ գումարման Ազգային ժողովում (131 պատգամավոր) «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը ներկայացված է 37 պատգամավորով, <http://www.parliament.am/parliament.php?id=parliament> (24.08.2016):

<sup>527</sup> Նաիրա Զոհրաբյանը 2015 թ. մարտի 5-ին ԲՀԿ 8-րդ արտահերթ համագումարում ընտրվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ, իսկ նույն թվականի մարտի 19-ին՝ կուսակցության խմբակցության ղեկավար, <http://www.bhk.am/hy/kensagrutyan> (24.08.2016):

<sup>528</sup> Հայաստանը կորցրեց իր իմիջը՝ որպես վստահելի գործընկեր. Նաիրա Զոհրաբյան, 13.09.2013, <http://www.1in.am/214072.html> (24.08.2016):

<sup>529</sup> Վ. Օսկանյանը 2015 թ. մարտի 5-ին դադարեցրել է իր անդամակցությունը «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը:



խագահ Գագիկ Ծառուկյանը, որ զբաղեցնում էր այդ պաշտոնը մինչև 2015 թ., դեռևս 2012 թ. իր հարցազրույցներից մեկում նշել էր, որ ողջունում է Եվրասիական տնտեսական միություն ստեղծելու Պուտինի գաղափարը և պատրաստ է ակտիվորեն աշխատելու այդ գաղափարի տարածման ուղղությամբ<sup>530</sup>: Ավելի ուշ խմբակցության մամուլի քարտուղար Տիգրան Ուրիխանյանը նույնպես ողջունում է ԵՏՄ-ի ստեղծման գաղափարը և նշում, որ հավաքական անվտանգության պայմանագիրն ու երկկողմ մի շարք այլ պայմանագրեր հիմք են Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցության համար<sup>531</sup>: Այնուամենայնիվ, կուսակցության ներքին տարակարծությունները չխոչընդոտեցին, որպեսզի կուսակցությունը միասնական դիրքորոշում արտահայտի ԵՏՄ-ի առնչությամբ. այն է, որ Հայաստանը Ռուսաստանի հետ պետք է բարձր մակարդակի և հնարավորինս խոր տնտեսական հարաբերություններ ունենա<sup>532</sup>:

Ռուսաստանի հետ բարձր մակարդակի և հնարավորինս խոր տնտեսական հարաբերություններ ունենալու կողմնակիցներից էր նաև «Օրինաց երկիր» խմբակցությունը (ՕԵԿ), ով ներկայացված է Ազգային ժողովում 6 պատգամավորով: «Հայաստանին և ԵՏՄ անդամ երկրներին միավորում է հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը՝ որպես ռազմաքաղաքական կարևորագույն դաշինք, որը ՀՀ անվտանգության ապահովման գործում ունի առանցքային դերակատարում: Մյուս կողմից՝ այսօր մեր տնտեսությունը բազմաթիվ թելերով կապված է ԵՏՄ անդամ երկրների տնտեսությունների հետ: Միաժամանակ, մենք Արևելյան գործընկերության միակ երկիրն ենք, որ անդամակցում ենք ԵՏՄ-ին: Իսկ դա նշանակում է, որ խելամիտ քաղաքականության պարագայում ՀՀ-ն կարող է դառնալ պատուհան ԵՏՄ-ի և ԵՄ-ի երկրների միջև»,— խմբակցության դիրքորոշումը ներկայացնելիս նշել է խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանը<sup>533</sup>:

ՕԵԿ-ի գրեթե նույն դիրքորոշումն է արտահայտել նաև «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ) խմբակցությունը (ԱԺ-ում ներկայացված է 5 պատգամավորով): Հայ-ռուսական հարաբերությունների նոր փուլը կամ ԵՏՄ-ին անդամակցումը խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանը

<sup>530</sup> Интервью с Гагиком Царукяном, Весна надежд, Российской газета, 26.04.2012, <https://rg.ru/2012/04/26/armeniya.html> (24.08.2016).

<sup>531</sup> “Прозвевая Армения” за создание конфедеративного государства с Россией, Вестник Кавказа, 19.07.2012, <http://www.vestikavkaza.ru/news/Protsvetayushchaya-Armeniya-za-sozdanie-konfederativnogo-gosudarstva-s-Rossiey.html> (26.08.2016).

<sup>532</sup> «Բարգավաճն» ընդդիմադիր չդարձավ, CivilnetTV, 15.02.2014, <https://www.youtube.com/watch?v=MgC6O0oPytE> (26.08.2016):

<sup>533</sup> Հայաստանի խորհրդարանը վավերացրեց ԵՏՄ-ին անդամակցելու պայմանագիրը, <http://www.parliamentmonitoring.am/news/377.html#.V8QcWf97ct> (29.08.2016).

դիտարկել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության համատեքստում՝ գտնելով, որ անդամակցմամբ Հայաստանը լուծում է իր լինելիության խնդիրը<sup>534</sup>:

Ազգային ժողովում ներկայացված մյուս քաղաքական ուժը՝ «Հայ ազգային կոնգրես» խմբակցությունը (ԱԺ-ում ներկայացված է 7 պատգամավորով), չնայած որոշ ներքին տարակարծությունների և անհամաձայնությունների, այնուամենայնիվ 2014 թ. դեկտեմբերի 4-ին նույնպես կողմ է քվեարկում Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու մասին պայմանագրին, դեմ է քվեարկում միայն խմբակցության պատգամավոր Նիկոլ Փաշինյանը: Ըստ Փաշինյանի, քանի դեռ չի կարգավորվել Լեռնային Ղարաբաղի խնդիրը, Հայաստանը չպետք է դիտարկի ոչ Եվրոպական միությանը, ոչ Եվրասիական միությանն անդամագրվելու հարցը<sup>535</sup>:

ԵՏՄ-ին անդամակցմանը դեմ էին նաև «Ժառանգություն» խմբակցության պատգամավորները (ԱԺ-ում ներկայացված է 5 պատգամավորով), ովքեր ԵՏՄ-ն ընկալում են որպես Հայաստանի ինքնիշխանության հիմնական սպառնալիք և ավտորիտար ռեժիմի հիմնական աջակից: ԵՏՄ-ին անդամակցմանը դեմ էին նաև ԱԺ անկախ պատգամավորներ Էդմոն Մարությանն ու Խաչատուր Քոքոբեյլյանը:

Չնայած ներքին թեթև հակասություններին ու տարածայնություններին՝ Հայաստանի քաղաքական էլիտայում գրեթե միաձայն արտահայտվեցին ԵՏՄ-ին անդամակցման օգտին՝ հիմք ընդունելով հիմնականում ՀԱՊԿ պայմանագրի առկայությունն ու ՀՀ և ԼՂՀ անվտանգությունը: Քաղաքական էլիտայի ներկայացուցիչների ելույթներից և գործողություններից կարելի է եզրակացնել, որ Արևմուտքը, մասնավորապես Եվրոպական միությունը հիմնականում ընկալվում է որպես արժեքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների հիմնական խթան և ժողովրդավարական արժեքների տարածող, իսկ Հյուսիսը՝ ի դեմս ԵՏՄ-ի՝ անվտանգության հիմնական երաշխիք, ռազմավարական գործընկեր, սպառազինությունների մատակարար և վերջապես տնտեսական առաջնային գործընկեր: Միաժամանակ հարկ է նշել, որ Հյուսիսն ընկալվում է նաև որպես ինքնավարության սպառնալիք և ավտորիտար ռեժիմի հովանավոր:

*Արևմուտքի և Հյուսիսի ընկալումները հանրային շրջանակներում Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների համալրեքստում*

<sup>534</sup> Լինել, թե՛ ավելի լինել, 18.09.2013, <http://www.1in.am/215231.html> (01.09.2016).

<sup>535</sup> Նիկոլ Փաշինյանը Մաքսային միության մասին, 12.09.2013, <http://168.am/2013/09/12/274699.html> (30.08.2016):

«Վանդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը ռազմավարական լայնածավալ գործընթաց է և առնչվում է հանրության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներին: Զարմանալի չէ, որ հանրության շրջանակում ևս ակտիվորեն քննարկվում էին Հյուսիսի և Արևմուտքի առավելություններն ու թերությունները Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման համատեքստում: Սակայն հանրային շրջանակներում տրամադրությունների բացահայտումը շատ ավելի բարդ գործընթաց է, քանզի ի տարբերություն քաղաքական էլիտայի՝ հանրային շրջանակներում առկա է տեղեկացվածության և գիտելիքի պակաս: Ընդ որում՝ տեղեկատվության պակաս կար ինչպես ԵՏԲ-ի առնչությամբ (ինչը բնական է, քանզի կառույցը դեռևս ձևավորման փուլում է), այնպես էլ արդեն կայացած և գործող կառույցների՝ ՀԱՊԿ-ի, ԵՄ-ի և հետևաբար նաև Արևելյան գործընկերության կողմից նախաձեռնած ասոցացման համաձայնագրի առնչությամբ: Հետաքրքրական է, բայց հարցումները ցույց են տվել, որ երևանցիների շուրջ 80 %-ը համոզված է, որ տեղեկացված է ԵՄ-ի մասին, իսկ հարցվածների ավելի քան 38 %-ը ՀՀ-ին համարում է ԵՄ-ի անդամ<sup>536</sup>: Միաժամանակ շատ ավելի զարմանալի է, բայց հասարակության մի մեծ զանգված գաղափար չունի ինչպես ՀԱՊԿ-ի մասին, այնպես էլ այն մասին, որ Հայաստանը ՀԱՊԿ հիմնադիր անդամ է (շուրջ 50 %)<sup>537</sup>: Թեև հարցումներն իրականացվել էին միայն Երևանում, բայց դա էլ բավարար ցուցանիշ է, որպեսզի ընդհանուր գաղափար ձևավորվի հասարակության տեղեկացվածության մակարդակի վերաբերյալ: Հանրային շրջանակներում սխալ կարծիք էր ձևավորվել նաև ասոցացման համաձայնագրի առնչությամբ: Հաճախ կարելի էր լսել և կարդալ ինչպես մամուլում, այնպես էլ կենցաղային խոսակցություններում այն մասին, որ Հայաստանը պատրաստվում է անդամակցելու Եվրոպական միությանը ասոցացման համաձայնագրի միջոցով: Նմանատիպ խոսակցություններում գրեթե երբեք չէր խոսվում համաձայնագրի տնտեսական բաղադրիչի մասին, ինչն իհարկե նույնպես բացատրվում է տեղեկատվության պակասով: Գիտելիքի սակավությունը վերաբերում էր նաև ՆԱՏՕ – Հայաստան և ՀԱՊԿ – Հայաստան հարաբերություններին:

Թերևս տեղեկացվածության պակասն է այն հիմնական պատճառը, որ Արևմուտքն ու իր կառույցները ոչ միանշանակ են ընկալվում հասարակության կողմից: Հասարակության մի զգալի հատված արևմտյան արժեքներն

<sup>536</sup> Արմանք-գարմանք. երևանցիների շուրջ 40 %-ը կարծում է, թե Հայաստանը ԵՄ-ի անդամ է, Բարոմետր, 11.07.2015, <http://www.barometer.am/news/real-politics/20150611/2633/> (02.09.2016):

<sup>537</sup> Երևանցիների մոտ 50 %-ը տեղյակ չէ, որ ՀՀ-ն ՀԱՊԿ անդամ է, այն էլ հիմնադիր անդամ, Բարոմետր, 06.07.2015, <http://www.barometer.am/news/real-politics/20150706/3680/> (02.09.2016):

ընկալում է խեղաթյուրված կերպով<sup>538</sup> մթազնելով իսկական ժողովրդավարական արժեքներն ու կառույցները: Այնուամենայնիվ, հարցումները ցույց են տվել, որ Հայաստանի բնակչության մի ստվար հատված էլ (ավելի քան 47 %-ը) հենց Արևմուտքի հետ է կապում գիտության և կրթության զարգացումը, մարդու իրավունքների ինստիտուտի կայացումը (ավելի քան 52 %-ը)<sup>539</sup>, ինչպես նաև կոռուպցիայի հաղթահարումը:

Ինչ վերաբերում է Հյուսիսին՝ ի դեմս Ռուսաստանի, ապա այն հիմնականում ընկալվում է որպես ռազմավարական գործընկեր և անառարկելի անվտանգության երաշխիք թե՛ Հայաստանի և թե՛ Լեռնային Ղարաբաղի համար: Ավելին՝ ՀՀ քաղաքացիների շուրջ 77 %-ը Հայաստանի բարեկամ երկիր է համարում հենց Ռուսաստանին (տես Աղյուսակ 1<sup>540</sup>):

### Աղյուսակ 1

<b>Ռուսաստան</b>	<b>77 %</b>
<b>Ֆրանսիա</b>	<b>9 %</b>
<b>Բոլոր երկրները</b>	<b>5 %</b>
<b>Ոչ մի երկիր</b>	<b>4 %</b>
<b>Այլ երկիր</b>	<b>2 %</b>
<b>ԱՄՆ</b>	<b>2 %</b>
<b>Վրաստան</b>	<b>2 %</b>

Պետք է արձանագրել նաև այն, որ ՀՀ բնակչության միայն 11 %-ն է բարեկամ դիտարկում Արևմուտքին՝ ի դեմս Ֆրանսիայի և մասամբ էլ ԱՄՆ-ի, իսկ հարևան երկրներից միայն Վրաստանն է ներկայացված իբրև բարեկամ երկիր (ընդամենը՝ 2 %): Հյուսիսի բարեկամ երկրի կարգավիճակը պայմանավորված է ոչ միայն ռազմավարական գործընկերությամբ և անվտանգության գործոնով, այլ նաև սոցիալ-մշակութային հարցերով, մասնավորապես ռուսաց լեզվի իմացության բավականին բարձր մակարդակով:

<sup>538</sup> ՀՀ բնակչության մի զգալի հատված Եվրոպան դիտարկում է իբրև միասեռականների իրավունքների պաշտպան և աջակից, իսկ հարցումները ցույց են տվել, որ ՀՀ բնակչության 96 %-ը բացասական է վերաբերվում միասեռական ամուսնություններին:

Отношение армянского общества к евразийской и европейской интеграции, Фонд Нора-ванк, 2013, [http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN\\_PARAMETER\\_VALUE.pdf](http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf), էջ 27:

<sup>539</sup> Отношение армянского общества к евразийской и европейской интеграции, Фонд Нора-ванк, 2013, [http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN\\_PARAMETER\\_VALUE.pdf](http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf), сс. 27-28:

<sup>540</sup> Biggest friend of the country, Caucasus Research Resource Centers (CRRC), 2012, [http://caucasusbarometer.org/en/cb2012am/FRNDCNTR/\(02.09.2016\)](http://caucasusbarometer.org/en/cb2012am/FRNDCNTR/(02.09.2016)):

կով<sup>541</sup>, <sup>542</sup>: Թերևս հենց վերոնշյալ գործոններն են, որ ԵՄ–ին թե՛ ԵՏՄ–ին անդամակցման վերաբերյալ հարցումներում առավելություն են տվել հենց ԵՏՄ–ին (տե՛ս Աղյուսակ 2<sup>543</sup>):

### Աղյուսակ 2

Ինչպե՞ս եք վերաբերվում ՀՀ անդամակցմանը ԵՏՄ–ին կամ ԵՄ–ին	ԵՏՄ / %	ԵՄ / %
<b>Բոլորովին չեմ աջակցում</b>	<b>5</b>	<b>10</b>
<b>Ավելի շուտ չեմ աջակցում</b>	<b>7</b>	<b>12</b>
<b>Ե՛վ աջակցում եմ, ն՛ ոչ</b>	<b>23</b>	<b>27</b>
<b>Ավելի շուտ աջակցում եմ</b>	<b>36</b>	<b>30</b>
<b>Լիովին աջակցում եմ</b>	<b>19</b>	<b>9</b>
<b>Այլ</b>	<b>10</b>	<b>12</b>

Ընդհանրացնելով ցուցանիշները՝ կարող ենք ասել, որ շուրջ ՀՀ բնակչության 55 %-ը աջակցում է Հայաստանի՝ ԵՏՄ–ին անդամակցմանը, և միայն 39 %-ն է, որ կողմ է ԵՄ–ին անդամակցմանը:

Հարկ է նշել, որ Հյուսիսի՝ բարեկամի կարգավիճակը բացարձակ ու անփոփոխ արժեք չէ, և ժամանակ առ ժամանակ որոշ իրադարձությունների հետևանքով հանրության և քաղաքական էլիտայի շրջանակներում բարեկամի ընկալումը «վարկաբեկվում» է: Տարբեր տարիների հարցումները ցույց են տալիս, որ 2011–2015 թթ. Ռուսաստանի բարեկամ պետության կարգավիճակը ենթարկվել է փոփոխությունների՝ նվազելով մինչև 75 % (տե՛ս Աղյուսակ 3<sup>544</sup>):

<sup>541</sup> Отношение армянского общества к евразийской и европейской интеграции, Фонд Нораванк, 2013, [http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN\\_PARAMETER\\_VALUE.pdf](http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf), cc. 24-26.

<sup>542</sup> ՀՀ բնակչության ավելի քան 54 %-ը բավարար մակարդակով տիրապետում է ռուսերենին, <http://www.caucasusbarometer.org/en/cb2015am/KNOWRUS/>, 25.09.16:

<sup>543</sup> Support of Country's membership, Caucasus Research Resource Centers (CRRC), 2015 <http://www.caucasusbarometer.org/en/cb2015am/EUSUPP/>, <http://www.caucasusbarometer.org/en/cb2015am/EECSUPPA/>

<sup>544</sup> Main friend of the country, Caucasus Research Resource Centers (CRRC), 2011, 2012, 2013, 2015.

### Աղյուսակ 3

	2011	2012	2013	2015	փոփոխություն
<b>Ռուսաստան</b>	<b>81</b>	<b>77</b>	<b>83</b>	<b>75</b>	<b>-6</b>
<b>Ֆրանսիա</b>	<b>7</b>	<b>9</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>-2</b>
<b>Վրաստան</b>	<b>4</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>&lt;5</b>	<b>&lt;5</b>
<b>Ոչ ոք</b>	<b>4</b>	<b>4</b>	<b>4</b>	<b>11</b>	<b>+7</b>

Ռուսաստանի վարկանիշի անկումը պայմանավորվում է տարբեր գործոններով և իրադարձություններով: Օրինակ՝ 2015 թ. հունվարի 12-ի Գյումրու աղետալի դեպքը<sup>545</sup>, որը բուռն արձագանք առաջացրեց հասարակության շրջանակներում, մեծ վնաս հասցրեց Ռուսաստանի բարեկամ պետության վարկանիշին: Ռուսաստանը բարեկամի կարգավիճակից անմիջապես վերածվեց պետության ինքնիշխանության սպառնալիքի, իսկ ռուս սահմանապահները, որ մինչ այդ համարվում էին անվտանգության երաշխավորողներ, հանրության համար դարձան վախի ու վտանգի պատճառ:

Հյուսիսի «անբասիր բարեկամ» ընկալման հաջորդ փորձությունը ռուսական զենքի վաճառքն է Ադրբեջանին: Թեև Ռուսաստանը պարբերաբար զենք է վաճառում Ադրբեջանին, բայց ինչպես հասարակության, այնպես էլ քաղաքական էլիտայի շրջանակներում ամենից բուռն արձագանքն այդ առնչությամբ եղավ քառօրյա պատերազմի ընթացքում և հետևանքով: Միֆը, թե Հյուսիսն է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի անվտանգության հովանավորը, հօդս ցնդեց:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ դիտարկելով քաղաքական էլիտայի ներկայացուցիչների տեսակետները և հանրային շրջանակներում առկա տրամադրությունները՝ կարող ենք արձանագրել.

Արևմուտքը թե՛ քաղաքական էլիտայի և թե՛ հանրային շրջանակներում միանշանակ ընկալվում է որպես ինստիտուցիոնալ բարեփոխումների խթան, ժողովրդավարական / եվրոպական արժեքների տարածող, գիտության և կրթության զարգացման հովանավոր, մարդու իրավունքների պաշտպան և մասամբ էլ տնտեսական բարեփոխումների և նոր հնարավոր

<sup>545</sup> Ավետիսյանների ընտանիքի սպանություն Գյումրիում, տեղի է ունեցել 2015 թ. հունվարի 12-ին: Սպանվել են տանը գտնվող ընտանիքի բոլոր 7 անդամները: Սպանության գործով ցմահ ազատազրկման է ենթարկվել Գյումրիում տեղակայված 102-րդ ռուսական ռազմաբազայի ժամկետային զինծառայող Վալերի Պերմյակովը:

րությունների գրավական: Արևմուտքը հանրային շրջանակներում ընկալվում է նաև իբրև կոռուպցիայի դեմ պայքարի աջակից:

Հյուսիսը, ի դեմս Ռուսաստանի, սովորաբար ընկալվում է որպես ռազմավարական գործընկեր, անվտանգության երաշխիք և հիմնական տնտեսական գործընկեր: Ընդ որում՝ Հայաստանի բնակչության մեծամասնությունը (շուրջ 75 % 2015 թ. դրությամբ) բարեկամ երկիր է դիտարկում հենց Ռուսաստանին: Սակայն ի տարբերություն Արևմուտքի՝ Հյուսիսի ընկալումը և՛ քաղաքական էլիտայում, և՛ հատկապես հանրային շրջանակներում ժամանակ առ ժամանակ ենթարկվում է փոփոխությունների՝ կախված այս կամ այն իրադարձություններից կամ գործոններից: Այդ է պատճառը, որ Հյուսիսը բարեկամի կարգավիճակից անմիջապես վեր է ածվում ինքնավարության սպառնալիքի, ավտորիտար ռեժիմի և կոռուպցիայի հովանավորի:

## THE PERCEPTION OF THE WEST AND THE NORTH IN THE POLITICAL ELITE AND THE SOCIETAL CIRCLES IN THE CONTEXT OF ARMENIAN FOREIGN POLICY ORIENTATIONS

**SATENIK BARSEGHYAN**

**ACADEMIC ADVISOR MENUA SOGHOMONYAN<sup>546</sup>, PH.D, ASSOC. PROF.**

### Introduction

On September 3, 2013, the President of the Republic of Armenia Serzh Sargsyan during his official visit to Moscow announced Armenia's decision to join the Customs Union and according necessary steps, and its following participation to the establishment of the EAEU<sup>547</sup>. The above-mentioned announcement became the starting point of Armenian membership to the EAEU and at the same time cancelled the pre-signing of the agreement on economic cooperation initiated by EaP, negotiated since 2010<sup>548</sup>, as well as blurred the future of EaP programs with Armenia.

The Moscow announcement of Sargsyan and the following steps drastically shifted the foreign policy vector of Armenia.

What was the reason of this decision? Generally, states when making foreign policy decisions are led by certain factors, like environment, military objectives and issues, national interests, economic benefits, domestic situation etc. The perceptions of political elite and society also play a role in foreign policy orientation. However, influence of perceptions on foreign policy decision-making is questionable especially in the case of such small states as Armenia. According to political scientists Kenneth Waltz, foreign policy of small states is constructed according to the international policy of powerful states, whereas the domestic factors like perceptions of political elite and society are at minimum<sup>549</sup>. Certainly, international situation and powerful actors are irrefutable factors, but complete neglect of the perceptions of the national political elite and the society is also wrong.

<sup>546</sup> Menua Soghomonian, PhD in History, Associate Professor at the Chair of Political Institutes and processes and the Scientific Secretary of Yerevan State University.

<sup>547</sup> President of Armenia Serzh Sargsyan and President of the Russian Federation Vladimir Putin signed joint statements, 03.09.2013, <http://www.president.am/en/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/>, (23.08.2016)

<sup>548</sup> Armenia and the EU planned to pre-sign the AA during the third EaP summit in Vilnius on November 29, 2013.

<sup>549</sup> Kenneth N. Waltz, *Theory of International Politics* (Addison-Wesley Publishing Company, 1979), pp. 184-5, 195



The objective of this paper is to expose the perceptions of the political elite and the society regarding the West and the North in the context of Armenian foreign policy orientation.

The following tasks will contribute to reaching the objective:

- To expose the current perceptions of the Armenian political elite in the context of Armenian foreign policy orientation;
- To reveal the current perceptions of the Armenian society in the context of Armenian foreign policy orientation.
- To make known what nation is considered as friendly by the society and the elite;
- Understand how the main partners of the Republic of Armenia are perceived.

The study uses both theoretical and empirical methods. Theoretical-analytical method was used for a case-by-case study of the approaches and points of view of the representatives of the political elite, current moods in the society, sociological polls etc. The objects for the empiric study were the official standpoints of political parties, interview with politicians, and surveys conducted by different organizations.

*The perceptions of the political elite regarding the West and the North in the context of Armenian foreign policy orientation*

The drastic shift of foreign policy orientation became a subject of fervent debates among politicians. The standpoint of the ruling Republican Party of Armenia (RPA)<sup>550</sup> is at best represented in the statement of the chairman of RPA and at the same time the President of Armenia S.Sargsyan made during the press conference of the presidents of Armenia and Russia on September 3: “We have had a detailed discussion regarding Eurasian integration, and I confirmed the intention of Armenia to join the Customs Union and be involved in the process of the establishment of the Eurasian Economic Union. Twenty years ago Armenia, in partnership with Russia and other countries from CIS, founded a military security system in the format of the CSTO. During decades that organization proved its sustainability and effectiveness. Now, our CSTO partners form a new platform for economic cooperation. I have stated for multiple times that while being in a military security system one it is impossible and ineffective to get isolated a from that respective geo-economic area”<sup>551</sup>.

<sup>550</sup> RPA has 69 MPs at the fifth convocation of the NA (131 total), <http://www.parliament.am/parliament.php?id=parliament> (24.08.2016)

<sup>551</sup> The RA President Serzh Sraghsyan remarks at the press conference on the results of the negotiations with the RF president Vladimir Putin, 03.09.2013, <http://www.president.am/en/interviews-and-press-conferences/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-press-conference-working-visit-to-Russian-Federation/> (24.08.2016)

The statement of the President clearly mentions that the membership to the EAEU is reasoned more by security and military issues, rather than economic. EAEU, i.e. the North, in fact is perceived by the ruling party in Armenia and the President of the country firstly as a military partner and a guarantor of security, and only secondly as an economic partner.

The President who also expressed the view of the ruling party, finds that such a decision does not exclude the dialogue between Armenia and the European institutions: “This is a rational decision coming from the national interests of Armenia. This decision is not a refusal from our dialogue with the European institutions. Throughout these years Armenia with the support of the European partners, has implemented serious institutional reforms. And Armenia of today, in this sense, is a more efficient and competitive state than it used to be years ago. We are going to continue these reforms in future as well”<sup>552</sup>. Later the secretary of RPA Hovhannes Sahakyan confirmed in one of his interviews the words of the President that the entrance of Armenia to the Customs Union is not impeding the cooperation with Europe and that Armenia is ready to continue cooperation with a format to be offered by Europe<sup>553</sup>.

RPA that adopted the policy of ‘complementarianism’<sup>554</sup> in fact views the West on behalf of Europe as main incentive for institutional reforms.

If in case of RPA the members are fully agree with the opinion of the chairman, the points of view of the party members of the Prosperous Armenia party (PAP)<sup>555</sup> regarding the foreign policy orientation of Armenia do differ. For example, the current chairwoman of the party Naira Zohrabyan, who is also the head of the permanent commission on European integration affairs at the National Assembly (NA) is one of the proponents of Eurointegration process of Armenia and was motivated in continued and strengthened dialogue with the EU<sup>556</sup>. Vardan Oskanyan, ex-member of the parliament<sup>557</sup> from PAP fraction and ex-minister of foreign affairs of Armenia (1998-2008), is also known for his Western orientation and have stated that Armenia did rush with the Customs Union. Whereas the previous chairman of PAP Gagik Tsarukyan, who held

<sup>552</sup> Ibid.

<sup>553</sup> Ованнес Саакян: Полупрезидентская форма правления при некоторых преобразованиях является идеальной для Армении, 02.10.2013, <http://www.arminfo.am/index.cfm?objectid=780973B0-2B45-11E3-B9440EB7C0D21663> (26.08.2016)

<sup>554</sup> The use of the term ‘complementarianism’ is connected with the minister of foreign affairs of Armenia in 1998-2008 Vardan Oskanyan. After the collapse of the USSR, it was the main foreign policy framework of Armenia aiming to keep balanced position among the interests of the states and superpowers in the region.

<sup>555</sup> PAP has 37 MPs at the fifth convocation of the NA (131 total), <http://www.parliament.am/parliament.php?id=parliament> (24.08.2016).

<sup>556</sup> Armenia lost its image of a credible partner. Naira Zohrabyan, 13.09.2013 <http://www.1in.am/214072.html> (24.08.2016) (in Armenian).

<sup>557</sup> V. Oskanyan suspended his membership to PAP on March 5, 2015.

that position since 2005, stated in one of his interviews back in 2012 that he supports the idea of Putin to create Eurasian Economic Union and is ready to be actively involved in spreading that idea<sup>558</sup>. Later, the secretary of the fraction Tigran Urikhanyan also welcomed the idea of the establishment of the EAEU and noted that CSTO and few other bilateral agreements are a foundation for Armenia's membership to the EAEU<sup>559</sup>. Anyway, internal disagreements in the party did not obstruct having a joint statement regarding the EAEU affirming that Armenia should have high level and the deepest possible economic relations with Russia<sup>560</sup>.

The party Rule of Law (RoL) that is represented at the NA with six MPs, also was in favor of high level and deepest possible economic relations with Russia. The head of the parliamentary fraction of RoL Heghine Bisharyan shared the standpoint of the fraction saying: "Armenia and EAEU countries are joined in CSTO as the most important strategic coalition that has pivotal role in the security of Armenia. From another point, today our economy is linked to the economies of the EAEU countries by a number of threads. At the same time, we are the only EaP country that is a member of the EAEU. This means that in case of a wise policy Armenian can become a window between the EAEU and the EU member states"<sup>561</sup>.

Nearly the same position was voiced also by the Armenian Revolutionary Federation (ARF) that is represented at the NA with five MPs. The head of the fraction Armen Rustamyan commented on the new phase of Armenian-Russian relations or the EAEU membership in the context of the security of Armenia and Nagorno-Karabakh, emphasizing that the membership solves the issue of existence of Armenia<sup>562</sup>.

Another power represented at the NA is Armenian National Congress (ANC) with seven MPs. Despite certain internal disagreements, on December 4, 2014, ANC also votes in favor of the treaty on joining to the EAEU, with exception of only Nikol Pashinyan, voting against. According to the latter, as long as the Nagorno-Karabakh issue is not solved, Armenian should not consider either the EU or the EAEU membership<sup>563</sup>.

<sup>558</sup> Интервью с Гагиком Царукяном, Весна надежд, *Российской газета*, 26.04.2012, <https://rg.ru/2012/04/26/armeniya.html> (24.08.2016)

<sup>559</sup> "Прцветающая Армения" за создание конфедеративного государства с Россией, *Вестник Кавказа*, 19.07.2012, <http://www.vestikavkaza.ru/news/Protsvetayushchaya-Armeniya-za-sozdanie-konfederativnogo-gosudarstva-s-Rossiey.html> (26.08.2016)

<sup>560</sup> PAP did not become opposition, *CivilnetTV*, 15.02.2014, <https://www.youtube.com/watch?v=MgC6OOoPytE> (26.08.2016) (in Armenian)

<sup>561</sup> Armenian parliament ratified the treaty to of the EAEU membership, <http://www.parliamentmonitoring.am/news/377.html#.V8QcWft97ct> (29.08.2016) (in Armenian)

<sup>562</sup> To be or to be more?, 18.09.2013, <http://www.1in.am/215231.html> (01.09.2016) (in Armenian)

<sup>563</sup> Nikol Pashinyan about the Customs Union, 12.09.2013, <http://168.am/2013/09/12/274699.html>

All the five MPs of Heritage party were also against, defining the EAEU as the main threat to the independence of Armenia and the main supporter to the authoritarian regime. Independent MPs Edmon Marukyan and Khachatur Kokobelyan were also against the EAEU membership.

Notwithstanding minor internal disagreement, the political elite of Armenia almost unanimously sided in favor of EAEU membership, mostly referring to the CSTO agreement and the security of Armenia and NKR. The statements and actions of the representatives of the political elite lead to a conclusion that the West and the EU in particular is perceived as the main incentive for institutional reforms and democratic reforms, whereas the North represented by the EAEU is the main guarantor of security, the strategic partner, the arms provider and the primary economic partner. At the same time, though, the North is perceived as a threat to the independence and the patron of the authoritarian regime.

*The perceptions of the society regarding the West and the North in the context of Armenian foreign policy orientation*

The membership of Armenia is a large-scale strategic process and concerns almost all strata of the society. It's not surprising that different circles of the society also actively discussed the pros and cons of the Northern of Western foreign policy orientation of Armenia. However, study of societal moods is much more complex process since in contrast with the political elite, there is lack of information and knowledge. Moreover, there is a shortage of information not only regarding the EAEU as a newly-founded organization, but also well-established and functioning bodies like CSTO, the EU, EaP with its Association Agreement. Interestingly, surveys show that around 88 per cent of the inhabitants of Yerevan are informed about the EU, and more than 38 per cent consider Armenia a member of the EU<sup>564</sup>. At the same time it is more surprising that a considerable part of the society has no idea about the CSTO and that Armenia is a founding member of that organization (around 50 per cent)<sup>565</sup>. Although the survey was conducted only in Yerevan, it is still enough to form opinion regarding the overall level of knowledge of the society. The society has formed a wrong opinion about the Association Agreement (AA) as well. People often talked and the media wrote that Armenian was going to join the EU through the AA, and the economic component of the agreement was almost never mentioned that is also a sign of low level of being informed. Shortage of

---

(30.08.2016) (in Armenian)

<sup>564</sup> The surprise: Around 40% of Yerevan inhabitants think that Armenia is a EU member, *Barometer*, 11.07.2015 <http://www.barometer.am/news/real-politics/20150611/2633/> (02.09.2016) (in Armenian)

<sup>565</sup> Around 50% of Yerevan inhabitants have no idea that Armenian is a CSTO member, and even the founding member, *Barometer*, 06.07.2015, <http://www.barometer.am/news/real-politics/20150706/3680/> (02.09.2016) (in Armenian)

knowledge concerned also NATO-Armenia and CSTO-Armenia relations.

Perhaps the lack of knowledge is the main reason that the society has dubious perception regarding the West and its institutions. A considerable part of the society views the Western values in distorted way<sup>566</sup>, obscuring the true democratic values and institutions. At the same time, the surveys showed that a large part of the Armenian population (more than 47 percent) links the development of science and education, strengthening of the human rights institute (more than 52 percent)<sup>567</sup> and fight against corruption with the West.

As for the North represented by Russia it is mostly perceived as a strategic partner and unquestionable guarantor of security for both Armenia and Nagorno-Karabakh. Moreover, around 77 percent of Armenians consider Russia as a friend of Armenia See Table 1<sup>568</sup>.

**Table 1**

<b>Russia</b>	<b>77 %</b>
<b>France</b>	<b>9 %</b>
<b>All countries</b>	<b>5 %</b>
<b>No country</b>	<b>4 %</b>
<b>Other country</b>	<b>2 %</b>
<b>USA</b>	<b>2 %</b>
<b>Georgia</b>	<b>2 %</b>

Only 11 percent of Armenian population regard the West represented by France and partially by the USA as a friend, and neighboring Georgia has only 2 percent in that list. The status of the Northern friendly nation is conditioned not only by strategic partnership and security factor, but also social-cultural aspect, in particular significantly high proficiency of Russian language among the population<sup>569</sup>. Perhaps these above mentioned factors influenced the priorities

<sup>566</sup> A considerable part of Armenian population views Europe as a defender and supporter of LGBTI rights, and surveys show that 96% of Armenians have negative stance towards gay marriages. *Отношение армянского общества к евразийской и европейской интеграции, Фонд Нораванк*, 2013, [http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN\\_PARAMETER\\_VALUE.pdf](http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf), էջ 27.

<sup>567</sup> *Отношение армянского общества к евразийской и европейской интеграции, Фонд Нораванк*, 2013, [http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN\\_PARAMETER\\_VALUE.pdf](http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf), сс. 27-28.

<sup>568</sup> Biggest friend of the country, *Caucasus Research Resource Centers (CRRC)*, 2012, [http://caucasusbarometer.org/en/cb2012am/FRNDCNTR/\(02.09.2016\)](http://caucasusbarometer.org/en/cb2012am/FRNDCNTR/(02.09.2016)).

<sup>569</sup> *Отношение армянского общества к евразийской и европейской интеграции, Фонд Нораванк*, 2013, [http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN\\_PARAMETER\\_VALUE.pdf](http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf), сс. 24-26; More than 54% of RA population have fluent command of Russian, <http://www.>

over the EU and the EAEU reflected in the survey presented below (see Table 2<sup>570</sup>).

**Table 2**

How do you relate to the membership of Armenia to the EAEU or the EU?	EAEU/%	EU/%
Do not support at all	5	10
I rather not support	7	12
Both support and against	23	27
I rather support	36	30
I fully support	19	9
Other	10	12

Summarizing the survey, we can claim that around 55 percent of the population in Armenia support its membership to the EAEU, and only 39 percent are in favor of the EU option.

It is worth to mention that the status of the North as a friendly nation is not an absolute and unchanging value, and time to time the perception of the ‘friend’ was discredited within the society and the political elite because of certain events. Surveys from different years show that during 2011-2015 the status of a friendly nation of Russia was modified decreasing up to 75 percent (See Table 3<sup>571</sup>).

**Table 3**

	2011	2012	2013	2015	Change
<b>Russia</b>	81	77	83	75	-6
<b>France</b>	7	9	5	5	-2
<b>Georgia</b>	4	2	2	<5	<5
<b>No country</b>	4	4	4	11	+7

There are different factors and events that have brought to the drop in

caucasusbarometer.org/en/cb2015am/KNOWRUS/ 25.09.16

<sup>570</sup> Support of Country’s membership, *Caucasus Research Resource Centers (CRRC)*, 2015 <http://www.caucasusbarometer.org/en/cb2015am/EUSUPP/>, <http://www.caucasusbarometer.org/en/cb2015am/EECSUPPA/>

<sup>571</sup> Main friend of the country, *Caucasus Research Resource Centers (CRRC)*, 2011, 2012, 2013, 2015.

Russia's rating. For example, the tragic incident<sup>572</sup> in Gyumri on January 12, 2015 that created a strong reaction in the society and caused a lot of damage to the 'main friend' ranking of Russia. The 'friend' status of Russia promptly turned into a 'threat to independence', and the Russian border-guards that were previously considered security guarantors turned into a source of fear and threat for the society.

Another test for the perception of the Northern 'faultless friend' was the sale of the Russian arms to Azerbaijan. Although Russia does sell arms to Azerbaijan periodically, however, both the society and the political elite reacted very fervently mostly during the four-day war and because of it. The myth of the North being the protector of the security of Armenia and Nagorno-Karabakh vanished.

## Conclusion

Thus, this study of the viewpoints of the representatives of the political elite and present moods of the society revealed the following.

Both the political elite and the society unequivocally perceive the West as an incentive for institutional reforms, an advocate for democracy and European values, a protector of science and education, a defender of human rights and partially as a guarantee for economic reforms and new opportunities. The society views the West also as a supporter in the fight against corruption.

The North represented by Russia is generally perceived as a strategic partner, a guarantor of security and the main economic partner. Moreover, most of the population of Armenia (around 75 percent in 2015) identify Russia as a friendly state. However, in contrast to the West, both the political elite and the society from time to time perceive the North differently, depending on certain incidents or factors. This is the reason that the North turns from the status of 'the friend' to a threat to independence, the sponsor of authoritarian regime and corruption.

---

<sup>572</sup> The murder of Avetisyan family took place in Gyumri on January 12, 2015. All seven members of the family were killed at their home. The murderer Valeri Permyakov, a draftee at 102<sup>nd</sup> Russian military base in Gyumri, is serving a life-sentence.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
 Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր  
 .  
 1  
 2 0 1 6

Էջադրումը՝  
 Սրբագրիչ՝

Ժագ Թոփալազյանի  
 Նարինե Ղուկասյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x92 1/16:  
 Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 15,5 տպ. մամուլ:

«Վերնատուն» հրատարակչություն  
[www.vernatun.am](http://www.vernatun.am)  
 Էլ. փոստ՝ [info@vernatun.am](mailto:info@vernatun.am)